

715


716

717

82

9-76

2011





**ՎԵՔՓԻԼԴԻ ԵՐԷՅԸ**

1849 11 14 1849

82

9-75

47

# ՎԷՔՓԸԼԻԸ ԵՐԷՅ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ՀԵՂԻՆԱԿ

ՕՐԻՎԵՐ ԶՕՐԳՍՄԻՐԻ ԳՈՐՆԷ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ԼԵՁՈՒՅ ԱՇԽԱՏԱՌՈՒԹԵԱՄԲ



1865

ՄՈՍԿՈՒԱ.

ТИПОГРАФИЯ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ (А. МАМОНТОВЪ).

1865.

1\*

СН

149

Дозволено цензурою. С.-Петербургъ, 16 февраля 1865 г.



3342  
47 8

## ՀԵՂԻՆԱԿԻ ԺԱՆՈՒՅՈՒՄԸ.

Այս աշխատասիրութեան մէջ հարիւրաւոր պակասութիւններ կան, բայց և հարիւր բանով կարելի էր ապացուցանել թէ՛ այդ պակասութիւնները նոյնպէս գեղեցկութիւն են, եթէ չլինէր այդ անօգուտ աշխատանք: Մի գէրք կարող է լինել բաւական զբօսեցուցիչ, թէև ունենար շատ թիրութիւններ, նոյնպէս և մահու չտի ձանձրալի, առանց պարունակելու իւր մէջ որ և է անպատահութիւն: Այս վիպասանութեան հերոսը պատկերացնում է իւր մէջ մարդուս երեք շքեղ պայմանները, այսինքն՝ նա քահանայ է, երկրագործ է և հայր ընտանեաց: Նա երևում է այս տեղ նոյնչափ պատրաստ պատուիրելու, որչափ պատրաստ և հնազանդելու. այնքան պարզ և միամիտ ճոխութեան մէջ, որքան և մեծարոյ աղէտքի մէջ: Ում կարէր հաճոյ լինել մի այդպիսի բարբը յղփութեամբ և խորամանկութեամբ վարակված դարուս մէջ: Որոնք սիրահարված են աշխարհի մեծամեծութեան կեանքին, կարհամարհեն սորա զիւղական տան անպաճոյճ պարութիւնը, որոնք անառակութիւնը զուարճութեան տեղ են ընդունում, աղ չեն գտնիլ սորա անմեղ խօսակցութիւնների մէջ և որոնք սովորել են կրօնը պարսաւել, կրճաղընն այն մարդուն՝ որ բոլոր իւր միտթարութեան գանձը ապագայ կեանքից է բղխեցնում:



# ՎԷՔՓԻԼԴԻ ԵՐԷՅԸ

## ԳԼՈՒԽ Ի.

ՎԷՔՓԻԼԴԻ ԸՆՏԱՆՆՍՅ ԵՎԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԸ և ՆՈՐԱՆԳ ՄԷՋ ԲԱՐՔԻ և ԿԵՐԱՐԱՐԱՆՔԻ ՄԵԾ  
ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԸ:

Եւ միշտ այն կարծիքը ունէի թէ՛ պատուաւոր մարդը՝ որ  
ամուսնանում է և սնուցանում է մի մեծ ընտանութիւն, ա-  
ւելի մեծ ծառայութիւն է անում հասարակութեան, քանթէ  
այն մարդը՝ որ ամուրի (անպսակ) է մնում և միայն քարոզու-  
թիւններ է անում մարդկանց աճելութեան մասին: Հազիւ  
մէկ տարի անցած իմ կարգ ստանալուց յետոյ, սկսեցի սաստիկ  
մըտածել ամուսնութեանս մասին և ընտրեցի իմ համար կին  
այնպէս, որպէս կինս ընտրեց իւր պսակի շորերը, ոչ թէ փառա-  
ւոր և փայլուն կերպասից, այլ որ՝ չըմանշվելու երկարութիւն կին  
խոստանում: Իրաւունք եմ համարում ասել թէ՛ կինս ազնիւ  
բնութիւն ունէր և նորա կրթութիւնը և դաստիարակութիւնը  
զիւղական սնունդ առած կանանց մէջ՝ շատերից աւելի էր. նա  
անզլիարէն կարգում էր համարեա՛ առանց հեղելու. բայց ո՞վ  
կարէր նորա պէս զանազան բաներ քացախ դնել, քաղցրեղէն  
շինել և կերակուր եփել: Մեծ ջանք էր անում նա նամանապէս  
անղնակ երեխլ և անտեսութեան արուեստին, թէ և ես երբէք  
չըկարողացայ նկատել որ՝ նորա ծախքերի հանձարեղ հաշիւները  
ինձ առաւել հարստացրած լինէին:

Ինչ և իցէ, բայց մենք փափկութեամբ սիրում էինք միմեանց և այս սիրոյ զգացմունքը տարիից տարի աւելի աճում էր: Ճշմարիտ է որ՝ մենք պատճառ չ'ունէինք միմեանց ասելու և ոչ մէկս միւսից անբաւական լինելու: Մնասկում էինք մենք մի գեղեցիկ տան մէջ, վայելուչ երկրում, լաւ լաւ դրացիներով շրջապատած: Բոլոր տարին անցնում էր զիւղական զուարճութեանց մէջ, հոգւոյ և մարմնոյ համար օգտակար զբաղմանց մէջ, մեր հարուստ դրացիներին այցելութիւն անելով և աղքատների կարօտութիւնը թեթեւացնելով: Աչինչ յեղափոխութեան վտանգից երկիւղ չ'ունէինք և ոչ մի այնպիսի տաժանաւոր աշխատութիւն կար, որ չըկարողանայինք տանել: Մեր բոլոր դէպքերը անցնում էին տան տաք անկիւնում և մեր շատ հեռաւոր գաղթութիւնները կապուտ ննջարանից թուխ ննջարանն էր:

Որովհետեւ մենք ճանապարհից մօտ էինք բնակում, ճամփորդ և օտարական շատ անգամ էր դալիս մեզ մօտ մի բաժակ զինի խմելու. մեր զինիի լաւութիւնը հռչակուած էր մեր շրջակայքում տանն մղոն հեռաւորութեամբ, և ես պատմաբանի կատարեալ ճշմարտասիրութեամբ հաստատում եմ թէ՛ երբէք չեմ տեսած որ՝ մեր հիւրերից մինը պարսաւէր մեր զինին: Մեր ազգականները մինչի չորբորդ աստիճանը (պորտ) միտներն էին բերում իւրեանց ազգակցութիւնը մեզ հետ, առանց տեղեկութիւն ստանալու ազգարանութեան պաշտօնատանից և շուտ շուտ դալիս էին մեզ տեսնելու: Այս ազգակիցներից մի քանիսը մեծ պատիւ չէին բերում մեզ իւրեանց այցելութիւնով, որովհետեւ կոյր, կաղ և մուրացիկ էին. բայց կինս միշտ հաստատում էր թէ՛ մեզ հետ մի և նոյն մարմնից և արիւնից լինելով, պիտի տեղեւունան մեր սեղանի վերայ. այսպէս եթէ մեր սեղանը շուրջ պատող բարեկամները շատ հարուստներից չէին, կարենք ասել՝ շատ բարեբաղդներից էին, որովհետեւ բոլոր մեր կեանքի մէջ ճշմարտանում է այն նկատողութիւնը թէ՛ որքան աւելի աղքատ լինի հիւրը, այնքան աւելի է բաւական լինում, երբ լաւ բնութենով թիւն է գտնում: Աւելինպէս մի տեսակ մարդիկ կան՝ որոնք հիացմամբ են գնում կակաչի պիւր գոյները կամ թիթեռնի գոյնը գոյն թեւերը, այսպէս ևս իմ մասին կարող եմ ասել թէ՛ ի բնէ ուրախ դէմքերի սիրող էի: Վայց եթէ մեր ազգակիցների մէջ պաւ-

տահում էր վատ բնութիւնով հիւր՝ որ մեզ նեղացնում էր և որից մենք ցանկանում էինք ազատուել, այդպիսի հոգսերը արդէն ես էի յանձն առնում և նորանց հրաժարուելու ժամանակը փոխ էի տալիս նորանց մի վերաբերու, կամ զոյգ կօշիկ, երբեմն ևս մի ա- ժանազին ձի և բաւական էի լինում որ՝ սորանք կրկին չէին գա- լիս փոխ առած բաները վերադարձնելու: Այսպէս մեր տունը ա- զատվում էր այն մարդկերանցից՝ որոնց մասին հոգս չունէինք և ոչ որ չէր ատում երբէք թէ՛ Վէրֆիլդի ընտանիքը որ և է ճամ- փորդին կամ աղքատ ազգակցին իւրեանց տանից դուրս արեցին:

Այսպէս ապրեցինք մենք շատ տարիներ մեծ բարեբախտու- թեամբ. բայց չէ՛ թէ երբեմն չէին պատահում մեզ այն փոքրիկ վիշտերը՝ որ Նախախնամութիւնը ուղարկում է իւր տուած պար- դեների դիրը աւելացնելու համար, երբեմն աշակերտներն էին իմ մրգանոցը (քօֆօն) կողպատում, կամ կատունները և երեխերքն էին հաւասար բաժանում իւրեանց մէջ կնոջս սերը (շոյֆոլ), կամ մեր կալուածատէրն էր եկեղեցում քնում իմ քարոզի իսկ և իսկ ազդու և զօրեղ տեղում և կամ նորա ազնիւ կողակցը կնոջս դէպի նա քաղաքավարութիւններին պատասխանում էր մի թե- թե գլուխ շարժելով. բայց մենք շուտով էինք յաղթում այդ գիպ- ուածներէից եկած նեղութիւններին և երեք-չորս օր չ'անցած՝ զար- մանում էինք որ՝ այդպիսի բաները կարող էին մեզ նեղացնել:

Իմ երեխերքը, մեր բարեխառն բնութեան և մեր անթոյլ գաստիարակութեան շնորհիւ, — առողջ էին և բարեկազմ, որ- դէքս ուժեղ և գործունեայ, դասերքս զեղեցիկ և առոյգ: Եւ տանգամ շուրջ պատված սորանցով, որոնք խոստանում էին նե- ցուկ լինել իմ ծերութեանը, միտս էի բերում Աոմս Եքեմս- բերդի մի հոյակապ գործը: Սա շէնրիկոս Արկրորդի Վերման- նիայում ճանապարհորդութիւն անելու ժամանակը, մինչ միւս փաղաքուհները յառաջ էին գալիս իւրեանց գանձերով, — բերեց իւր երեսուն և երկու երեխերքին և ներկայացրուց իւր վեհապե- տին, իբրև մի մեծագին ընծայ: Այսպէս և ես, թէ և միայն վեց զաւակ ունէի, կարծում էի թէ՛ շատ զեղեցիկ ընծայ էր այն իմ հայրենիքին, որին այս պատճառով ինձ պարտաւոր էի համա- բուծ: Անդրանիկ որդիս կոչվում էր Վեդրդ, իւր այն հօրեղբոր անունով, որ մեզ համար կտակով թողել էր տասն հազար լիար

սթերընն, երկրորդ զաւակս աղջիկ էր որին ևս մտադիր էի մկրտաւթեան ժամանակը Պարիզել անուն աալ ինչպէս կոչվումէր իւր մօրաքոյրը, բայց կինս՝ որ իւր յղութեան ժամանակը ուօմաններ էր կարգել, անշուշտ կամեցաւ որ նա Օլիվիա կոչվի: Մի տարի չանցած մի դուստր ևս ծնաւ. այս անգամ՝ վճռել էի արգէն աշունքը Պարիզել դնել, բայց մի հարուստ ազգակից կին, չըզխտեմ ի՞նչ ցնորք էր մտել դուստր որ՝ կամեցել էր կնքամայր լինել, կոչեց այս աղջկա Մոխիա: Այսպէս երկու վիպասանական անուններ կային իմ ընտանեաց մէջ. բայց ևս յայտնում եմ թէ՛ այդ բանում ամենեկն անմեղ եմ: Եւ առ չանցած՝ ծնաւ Մովսէս որդիս, որից յետոյ տասներկու տարի անցկացաւ և յետոյ ծնան այլ ևս երկու որդիք:

Ի՞նչ փոյթ է ինձ ուրանալ իմ մեծամիտ ուրախութիւնը. մինչ շրջապատված էի մեծ և փոքր ընտանիքով, բայց սնապարծութիւնով և ինքնազուհութիւնով կինս ինձնից դեր ի վերոյ էր: Երբ որ մեզ այցելութիւն անողները ասում էին՝ «Շաւատացէք» տիկին Փրիմրոյ, ձեր երեխերքը բոլոր նահանգի երեխերքից լաւ են»: «Եւհ, դրացի, պատասխանում էր կինս, այնպէս ևս, ինչպէս Աստուած ստեղծել է նորանց. լաւ են եթէ բարի են, որովհետեւ լաւը նա է, որ բարի է»: Յետոյ հրամայում էր աղջկաւանցը ուղիղ կենալ, գլուխները բարձր պահել և ևս, ոչինչ չըծածկելու համար միայն, պիտի ասեմ որ յիրաւի դեղեցիկ էին նորա: Արտաքին տեսքը իմ համար այնպէս փոքր նշանակութիւն ունի որ՝ հազիւ կրմտածէի խօսել նորա վերայ, եթէ սա չըլինէր մեր երկրի խօսակցութեան ընդհանուր առարկան: Օլիվիա դուստրըս, տանն և ութ տարեկան հասակում, այնպիսի պերճ զուարթութիւն ունէր, որն որ նկարիչքը տալիս ևս չէրէին, այսինքն՝ զուարթ, առոյգ և շքեղ նկարագիր: Մոխիա դատերս դժագրութիւնքը այնքան չէին պրանչացնում առաջին անգամ տեսնելուս, բայց նոցա արդիւնաւոր ազգեցութիւնը անկասկած էր, որովհետեւ նորա դժագրութիւնքը քաղցր, պարկեշտ և հրապուրիչ էին: Մինը կարէր առաջի իսկ անգամում նուաճել տեսնողի սիրտը, իսկ միւսը բարեբաղդ և շարունակ ջանքով:

Առջ ընատուր բարքը յարարերութիւն ունի նորա դէմքի հետ, գէթ այսպէս էր իմ աղջկերանց մէջ: Օլիվիան ցանկանում

էր շատ զարմացողներ ունենալ, Սոփիան ուզում էր միայն մինը․  
բայց անկասկած: Օլիվիան յօժար էր բռնութեամբ հաճոյ լինել,  
Սոփիան շատ անգամ թաքուցանում էր իւր զերպզանցութիւնը,  
որ ոչօքի չլսիլը արէ: Մինը զուարճացնում էր իւր եռանդով,  
մինչ ես ուրախ էի, խսկ միւսը կախարդում էր ինձ իւր ողջմտու-  
թիւնով, մինչ ես հանդարտ և ծանր էի, բայց՝ այս պարագայքը  
երբէք առաւելութիւն չէին ստանում ոչ մինի և ոչ միւսի մէջ:

Ինձ պատահում էր նկատել նորանց բնութիւնների փոփոխ-  
վելը մի օրուայ մէջ. մի սև շորերը բաւական էին որ՝ իմ նազե-  
լին իւր պչրանքից դէպի պարկեշտութիւն անցնի և մի ժապաւէնի  
զարդարանքը նորա քրոջը կարէր աւելի առոյգութիւն տալ:

Մեզրանիկ որդիս Գեորգը՝ որ գիտնական պաշտօն էր ստա-  
նալու, դաստիարակվում էր Ռ.քսֆորթի համալսարանում: Արկ-  
րորդ որդիս Մովսէսը, որին ես վաճառականութեան էի նշանա-  
կում, խառն դաստիարակութիւն էր ստանում տանը, բայց անօ-  
գուտ է փորձել այն երկխելքի առանձին դիմախարութիւնների  
նկարագրութիւնը, որոնք դեռ ևս ոչինչ անգեկութիւն չ'ունէին  
աշխարհից: Պարձ ասեմ որ՝ ամենքի մէջ փոքր ի շատն նմանու-  
թիւն կար, և յիբաւի ամենքը ունէին բնատուր բարք հաւասար-  
բապէս ազնիւ, դիւրահաւան, պարզ և անվնաս:

## ԳԼՈՒԽ 2.

Ընտանեաց դժբաղգութիւնք . յաջողութեան կորուստը աւելացնում է բարի մարդկանց ազնուութիւնը:

Գերդաստանի նիւթական գործերը գլխաւորապէս կառավարում էր իմ կինը . իսկ բոլոր հոգեւոր և բարոյական ուղղութիւնը ես էի յանձն առել : Մեր թեմի եկեղեցականների այրիններին և որբերին ես տուել էի իմ ժողովրդապետական պաշտօնի բոլոր արդէւնքը, որ կարելի էր հաշուել մինչև երեսուն և հինգ լուի : Այսելելով իմ փոքրիկ ժառանգութիւնը, ես հոգս չէի անում պատահական եկամուտի մասին և մի զաղանի ուրախութիւն էի զգում, պարտականութիւնս անվարձ կատարելով : Արմանապէս վճռել էի բնաւ տեղապահ չունենալ և իմ թեմի ամեն բնակիչին անձամբ ճանաչել : Ամուսնացած մարդկանց յորդորում էի դէպի չափաւորութիւն և ժուժկալութիւն, ամուրիներին դէպի ամուսնութիւն, այնպէս որ՝ իբրև առակ էին պատմում թէ՛՝ Ա էքՖիլզում երեք տարօրինակ պակասութիւններ կան, այսինքն՝ քահանայի մէջ հպարտութիւն չըկայ, կին չունեցող Չահլի մարդիկ չըկան, պանդոկներում յաճախորդներ (գնացող-եկողներ) չըկան :

Ամուսնութիւնը միշտ իմ սիրած առարկաներից մինն էր և ես շատ քարոզութիւններ էի արել սորա օգուտը ցոյց տալու համար . բայց մի յատուկ կրօնական կարգ կար, որը ես պատիւ էի համարում պաշտպանել : Ա իթսօնի հետ միաբան, ես հաստա-

տու՛մ էի թէ՛ սպօրէն է Անգլիական եկեղեցւոյ քահանային երկրորդ անգամ կին առնուլ, առաջինի մահից յետոյ: Մի խօսքով՝ ես զրգոված էի դէպի ձիշդ պաշտպանութիւնը միակնութեան կամ միամունսնութեան:

Շատուց արդէն ես ինձ նուիրել էի այդ ծանրակշիւ խրնդրին՝ որոյ մասին մեծ աշխատութիւնով այնքան հասա հասա զբեր էին զրոված: Այս եւս մի քանի տեսրակներ էի հրատարակել այդ մասին եւ որովհետեւ սորանք շատ փոքր էին ծախում, այս պատճառով ես ինձ մխիթարում էի թէ՛ փոքրթիւ ընտրեալների ձեռն են ընկած: Իմ բարեկամներս ասում էին թէ՛ այդ իմ թերի կողմն էր, բայց, աւա՛ղ, նորանք իմ պէս երկար մտածութեան առարկայ չէին արել այդ բանը: Արքան աւելի էի խորհում սորա վերայ, այնքան աւելի ծանրակշիւ էր երևում նա ինձ: Իմ դաւանական կարծեաց մէջ սորա մասին, ես գերազանցել էի Ա իթսօնից. նա իւր կնոջ գերեզմանաքարի վերայ քանդակել էր՝ «Այստեղ հանգչում է Ա իլիամ Ա իթսօնի միակ կինը», Այս իմ կնոջ համար նոյն գերեզմանագիրն էի պատրաստել, բայց զեռ եւս նորա կենդանութեան ժամանակը եւ այդ գերեզմանագրի մէջ գովել էի նորա խոհեմութիւնը, անտեսութիւնը եւ հնազանդութիւնը մինչ իւր մահը: Այս արձանագիրը պատեցի գեղեցիկ շքանակով եւ դնել տուի մի բաց անդում, ուր նա առաւել յաջող կերպիւ բովանդակում էր իւր մէջ զանազան բարոյական դիտաւորութիւններ: Ան յիշեցում էր իմ կնոջը իւր պարտաւորութիւնները դէպի ինձ եւ նոյն ժամայն վկայում էր եւ իմ ամուսնական հաւատարմութիւնը՝ ազդում էր նորան բարի համբաւի ցանկութիւն եւ անդադար նորա յիշատակի մէջ նորոգում էր նորա երկրաւոր վախճանի միաբը:

Գուցէ՛ ամուսնութեան վերայ սաստիկ հրապարակախօսութիւնների պատճառով էր որ՝ իմ անդրանիկ որդին համարսարանից դուրս եկած, իսկոյն սիրահարված երեւց մեր մի մօտաբնակ եկեղեցականի դստերը, մի աւագերեցի՝ որոյ դրութիւնը ներումէր իւր աղջկան գեղեցիկ օժիտ տալ. բայց հարստութիւնը մի չնչին առաւելութիւն էր Արարելւա Ա իլիթի բարեմասնութիւնների մէջ: Ամենքը, բաց ի երկու դստերըս, համաձայն էին թէ՛ հարսնացուն բաւական սիրուն էր: Աորա ջահլութիւնը, զուարթութիւնը, նու-

րա անկեղծաւոր դէմքը երեսի թափանցիկ գոյնից և դճաղրութիւնի երջանիկ սիրելութիւնից այնքան առաւելացած էին, մինչև ծեր մարդիկը անգամ չէին կարում անտարբերութեամբ նայել նորան: Արովհետև Պ. Վ. իրճիթը գիտէր որ՝ ես կարող եմ իմ որդուն պատշաճապէս կարգել, վասն որոյ և չէր երբէք ընդդիմանում այդ ամուսնութեան, և երկու գերգաստանքը ասլրում էին այն պիտի քաղցր միաբանութեամբ, որ հասարակօրէն յառաջնութաց է լինում յուսացած և ցանկացած միաւորութեան: Արովհետև փորձով համոզուած էի թէ՛ այս եռանդազին հողսրի և քնքուշ ակնկալութիւնների օրերը, բոլոր կեանքի մէջ ամեներջանիկ օրերն են, վասն որոյ և ուզում էի երկարացնել նորանց ընթացքը:

Չանագանակերպ զբօսանքը, որ միասին կատարում էին ջաշիւնները, աճեցնում էր նոցա սէրը: Առաւօտները մեզ զարթեցնումէր երաժշտութիւնը և եթէ օրը լաւ էր լինում, որսի գնալու էինք պատրաստվում: Այն ժամերը՝ որ անցնումէին նախաձաշիկի և ձաշի մէջ՝ տիկիները նուիրում էին զարդարանքի և ուսման: Սոփորաբար յառաջ մի քանի սող կարդում էին, յետոյ մտիկ էին տալիս հայերում, որ, փիլիսոփաների կարծիքներով ևս, կանանց կարգալու ամենագեղեցիկ էջն է: Ճաշի վերայ կինս սեղանի գլխումն էր նստում և միշտ հետևումէր ինքը կոտորել կերակուրը, որովհետև նորա մայրը ևս նոյնպէս էր վարվել. այս գիպուածով ամեն մի կերակուրը մի պատմական առարկայ էր լինում մեզ համար: Ճաշը աւարտած՝ հրամայումէի սեղանը շուտով ժողովել, այն պատճառով որ՝ տիկնայքը չըհեռանան. երբեմն ևս երաժշտապետի օգնութեամբ մեր դասերքը դաշնակաւոր նուագածութիւն էին ներկայացնում, որ բաւական զուարթացուցիչ էր: Օրուայ մնացորդ մասը անցնումէր զբօսանքի, թէյ խմելու և կաքաւելու մէջ, առանց կարօտութիւն ունենալու կարթ խաղալուն, որոյ ամենայն առակքը ինձ ստեղծ էին, բաց ի բակկամմօնը, ուրին երբեմն իմ հին բարեկամը և ես պատահաբար կնխարկում էինք մեր երկուսուն: Այստեղ պիտի յիշեմ մի չարագուշակ պարագայ՝ որ պատահեց ինձ Վ. իրճիթի հետ վերջին անգամ խաղալուս. ինձ մի չորսանոց էր հարկաւոր որ՝ խաղը տանեմ և ես հինգ անգամ հետևաբար զոյգ սս (2-ի-ր-տ) գուրս բերեցի:

Սի քանի ամիս անցան սրնութացարար, մինչև որ վերջա-

պէս վճռեցինք նշանակել հարսանիքի օրը, որին մեր ջահիլները կարծես թէ անհամբերութեամբ էին սպասում: Այս կրնկարագրէի իմ կնոջ զբաղված և ծանր դէմքը, կամ աղջկերքիս զաղանի հաս-  
 յեացները, եթէ այն միջոցում իմ ուշադրութիւնը դէպի ինքը  
 ձգած չըլինէր մի այլ առարկայ, եւ վերջացնումէի մի տնտրակի,  
 որ շուտով հրատարակելու էի, իմ սիրած սկզբունքին մի նոր յե-  
 ցուկ տալու համար: Այս կտոր բանին նայումէի իբրև մի գլխաւոր  
 գործի, թէ նորա հաւանական սրտածառների կողմանէ և թէ ո՞՞ր  
 զօրաւորութեան կողմանէ չըխարողացայ եւ սրտիս վերուածու-  
 թեան մէջ զգուշանալ այդ բանը իմ հին բարեկամ Ալիմթիին  
 ցոյց տալուց և անտարակոյս էի նորա հաւանութեան մնալին:  
 Շատ ժամանակից յետոյ միայն, ինձ յայտնի եղաւ որ՝ նա բռ-  
 լորովին հակառակ կարծիք էր սեփականել իւրեան և այս մի աղ-  
 նիւ պատճառով, այսինքն՝ նա արդէն սկսել էր հրապոյրներ գործ  
 ածել դէպի իւր չորրորդ կնկացուն: Այս դիպուածքը, ինչպէս  
 պիտի կարծել, պատճառ եղաւ վիճարանութեան՝ որ զուրկ չէր  
 մի փոքր գժտութենէ ևս: Աշանակած միաւորութիւնը քիչ մնաց  
 որ քանդվում էր, բայց մէկը խօսք տուեցինք միմեանց, հարսա-  
 նիքի արարողութիւնից մի օր առաջ խոր քննութիւն անել մեր  
 անմիաբանութեան պատճառի վերայ:

Մեր հակառակութիւնը երկու կողմից ևս տուեց հաւասար  
 սասակութեամբ, նա հաստատումէր թէ՛ եւ այլևս իրօն եմ, իսկ  
 եւ իւրն էի դարձնում նոյն զրպարտութիւնը, նա պատասխա-  
 նեց, եւ հակառակեցի, վէճը շատ տաքացած ժամանակին, աղ-  
 զականներիցս մինը ինձ կանչեց: «Աս մտ եկաւ իւր ձգված կեր-  
 պարանքով և խորհուրդ տուեց ինձ թոյլ տալ այդ ծեր պարու-  
 նին չորրորդ անգամ ամուսնանալ, եթէ նորան հաճելի էր այդ  
 և վիճարանութիւնից հրաժարվել, զո՞նէ մինչև որդուս ամուս-  
 նութիւնը կատարվիլը:

«Վ՛նչ, աղաղակեցի եւ, անփոյթ առնել ճշմարտութիւնը և  
 թոյլ տալ նորան կրկին ամուսնանալ, մինչ նորա ամեն պատ-  
 ճառարանութիւնները բոլորովին հերքել եմ. այդ միևնոյն է,  
 եթէ եւ իմ հարստութիւնից հրաժարվէի»: — Վո հարստու-  
 թիւնը, միջահասակ ազգականս, ցաւումեմ որ պիտի քեզ ի-  
 մացնեմ, համարեալ թէ ոչնչացած է, վաճառականը՝ որին դու

Հաւատացել էիր քո փողերի գումարը, փախել է՝ իւր հաշուէկշիւոր չըցուցանելու համար և կարծում են թէ՛ հազիւ հարիւրին մին թողած լինի իւր պարտատէրներին: Այս դժուարանում էի այդ լուրը քեզ յայտնել, յառաջ քան որդուդ ամուսնութիւնը, բայց գուցէ այդ դիպուածը կըչափաւորէ քո վիճելու եռանդը: Այս կարծում եմ թէ՛ քո խոհանութիւնը քեզ կըցուցանէ այդ բանի ծածուկ պահելու կարեւորութիւնը, դէթ մինչ այն ժամանակ, երբ որդիդ օրինաւոր տէր կըլինի որպէս ջահել օրիորդին, նոյնպէս և նորա օժիտին: — «Էրաշալի բան, միջահաւեցի ես, եթէ ինչ որ դու ինձ ասում ես ճշմարիտ է և ես ստիպված եմ մուրացիկ լինել, — գոնէ չեմ լինիլ ես ստահակ, գող կամ աւաղակ և ամենայն ինչ անդոր է իմ սկզբունքը ինձ ուրանալ տալու: Առաջին քայլս այս խիկ բոսէին լինելու է գնալ իմ հրաւիրականներին ծանուցանել այդ պարագայքը. խիկ որ ինչ վերաբերում է իմ խնդրին, ես յետ եմ առնում և այն փոքր շնորհը, որ ցուցել էի իմ հակառակորդին և հաստատում եմ բոլորի դէմ և բոլորի առաջն թէ՛ նա չէ կարող ոչ իրաւամբ և ոչ գործով ամուսին լինել, այդ բառի որ և է նշանակութեամբ»:

Խօսքս չէր վերջանալու, եթէ կամենայի նկարագրել երկու ընտանեաց զանազան զգացմունքը, երբ յայտնեցի նորանց մեր դժբաղդութիւնը. բայց ինչ որ զգացին միւսները, ոչինչ էր խեղճ սիրահարներին անձկութեան առաջն: Այս դժբաղդութեան հարուածը վճռեց Վ իրօթի կամքը, որ արդէն հակում էր դէպի դըստեր ամուսնութեան զեղծումը, որովհետեւ նա գերազանցօրէն սեփականում էր իրան միայն մի առաքինութիւն, այսինքն՝ զգուշութիւն, որ շատ անգամ է մեր մէջ մինչև եօթամասուն երկու տարեկան հասակը:



էր որ՝ իմ ընտանեաց մեծամտութիւնը փոքր ինչ խոնարհեցնեմ՝ դէպի հաւասարութիւն մեր հանդամանքի հետ, որովհետեւ քաջ զիտէի թէ՛ մեծամիտ աղքատութիւնը ամեն թշուառութիւն ներկից չարագոյնն է:

«Չեղ անյայտ չէ, սիրելի զաւակունք, ասացի ես, որ մեր խոհեմութեան բոլոր ջանքը անկարող եղան դարձնել այն զրգարողութիւնը, որի հարուածը մենք զգացինք. բայց նոյն խոհեմութիւնը կարող է փոփոխել այդ չարի հետեանքը և այս արդէն բաւական է: Մենք ահա աղքատ ենք, սիրելիք, և իմաստութիւնը պահանջում է որ՝ յարմարեցնենք մեզ մեր նկուն վեճակին: Ըրաժարվինք առանց արտունջի այդ շուքից և փառքից, որոնց մէջ շատերը երջանկութիւն չեն գտել, և որոնք մի աւելի համեստ գրութեան մէջ հոգւոյ խաղաղութիւնը, որոյ մէջ է իսկական երջանկութիւնը: Արթուները և չքաւորները բաւականութեամբ են վարվում առանց մեր օգնութեան, ուրեմն ինչո՞ւ համար մենք ևս չենք կարող սովորել առանց այլոց օգնութեան ապրել: Այո՛, սիրելի զաւակունք, հարկ է մեզ այսօրից թողնել որ և իցէ կարգի աւագութիւնը կամ նախամեծարութիւնը. մենք դեռ ևս բաւական գոյք ունինք երջանիկ լինելու համար, եթէ իմաստութեամբ կրվարվինք. ջանք անենք ուրեմն մեր վեճակից դո՛հ լինելով, վարձատրել մեզ այն բաների փոխանակ, որ հարատւութեան հետ կորուսինք:

Որովհետեւ անդրանիկ որդիս կրթութիւն էր ստացել զիտանական պաշտօնի համար, ուստի ես վճռեցի ուղարկել նորան Աճնդօն, ուր նորա քանքարը կարէր ձեռնտու լինել նորան դէպի յաջողութիւն և մեզ ևս օգտակար լինել: Բարեկամների և ընտանեաց միմեանցից բաժանումը առաւել ցաւալի դէպք է աղքատութեան մէջ. շատ շուտ եկաւ այն օրը, երբ առաջին անգամ պէտք էր միմեանցից հրաժարվէինք: Վէորզը մնաս բարեւ ասաց իւր մօրը և քուրերին, որոնք զրկախառնվելով արտասուք էին թափում և յետոյ եկաւ իմ օրհնութիւնը խնդրելու: Աստուի նորան այդ օրհնութիւնը ի բոլոր սրտէ, նոյնպէս և հինգ լիար ստերլինը, որ իմ ստացուածքի մնացորդն էր և որ կարող էի գործ ածել իմ կամքով:

«Դու գնումես Աճնդօն հետի (ոտով) աղաս, ասացի ես

նորան. զնումեն այնպէս, որպէս իւր ժամանակին զնաց մեր նախնի Զօքերըր: Առ ուրեմն իմ ձեռնից նոյն ձին, որ նորան տուեց բարեխիտ ժէվիլ կախկոպոսը, այսինքն՝ այս գաւազանը. առ և այս զիբքը, որ ևս ճանապարհորդութեան մէջ կարող էի մխիթարութիւն տալ քեզ: Այս երկու տողը արժեն բոլոր մի Միլթօնի»:

«Աս ջահիլ էի, այժմ ծեր եմ, բայց երբէք չըտեսի մի խկապէս անօգնական և ոչ նորա յետնորդներին, որ կտոր հաց մուրանում լինէին: Այս խօսքերը թո՛ղ զօրացնեն քո հոգին ճանապարհում, զնա՛, որդիս, և ի՛նչ բարեբաղդութեան հանդիպես, այնպէս արա՛ որ՝ մենք քեզ տեսնեք տարին մի անգամ. քաջասիրտ եղի՛ր. զնաս բարով»:

Իմ որդու պատուի և անարատութեան առատութիւնը փարատում էր իմ բոլոր տարակուսութիւնը, թէ և ձգում էի նորան մերկ աշխարհի թաարոնի մէջ, որովհետեւ իմանում էի թէ՛ յաղթած կամ յաղթված՝ նա իւր զերը արժանապէս էր խաղալու:

Նորա դուրս գալը մի քանի օր առաջ եղաւ մեր դուրս գալուց: Զրաժարվելով մեր այժմու բնակութեան տեղից, ուր այնքան խաղաղ և երջանիկ ժամեր էինք անցուցել, մեր հոգու բոլոր զօրութիւնը չըկարաց արդելիլ այն արտասուքի հեղեղը, որ մենք թափեցինք:

Այն ևս պիտի ասել որ՝ մի ճանապարհորդութիւն եօթանասուն մղոն տարածութեամբ, այնպիսի ընտանեաց համար, որոնք տասն մղոն չէին հեռացել իւրեանց տանից, յերաւի ահարկու բան էր. մեր հեաքից եկող խեղճերի աղաղակը առաւել ևս սաստկացնումէր այդ թախիծը:

Առաջին օրը երեկոյին ողջ և առողջ եկանք մի զիւզ, որից մինչի մեր նշանակեալ նպատակը երեսուն մղոն էր մնում, և այս տեղ կանգ առինք՝ զիշերը անցնելու մի զիւզական աղքատիկ պանդոկում: Այն ինչ կարգել սարքել էինք մեր սնեակը, ևս ըստ սովորութեանս խնդրեցի պանդոկի տիրոջը մեզ ընկերութիւն անել, որ և նա ընդունեց աւելի յօժարութեամբ, այն պատճառով որ՝ նորա կերած խմածը մեր վաղեան ծախսետու սակն էր մեծացնելու: Նորան ծանօթ էր բոլոր երկիրը, ուր

մենք բնակելու էինք և առաւել մեր ապագայ երկրատէր արնիւ-  
թօսոնհիլը, որ մեր բնակատեղեց մի քանի մղոն հեռի էր կե-  
նում: «Աս մեզ նկարագրեց այդ ջահիլ արնուականին, իբրև թէ  
նա աշխարհում միայն իւր բաւականութիւնքը և հաճոյքն էր  
սիրում, և նշանաւոր էր առաւելապէս իւր սիրով զէպի գեղե-  
ցիկ սեօր. «Աս աւելացրուց թէ՛՝ դեռ ևս չի եղել այնպիսի  
առաքինութիւն, որ կարեցած լինէր զէմ՝ կենալ նորա յաջո-  
ղութեան և հրապուրանքին, ինչպէս կարեն վկայել տասն մղոն  
չըջակայքում վարձակալներն բոլոր աղջկունքը, որոնց հետ նա  
եղել է փոփոխաբար յաջող և նենգաւոր: Այս մանրամասնու-  
թիւնքը ինձ արտմեջրին. բայց իմ աղջկերքի վերայ ուրիշ աղ-  
ղեցութիւն արին. նոցա զէմքի գծագրութիւնքը կենդանա-  
գործվեցին, սպասելով մի մօտակայ յաղթութեան: Եւ կինը  
նոյնչափ բաւական էր և վատահ զէպի իւր աղջկերանց գեղեց-  
կութիւնը և առաքինութիւնը: Մինչ դեռ մեր մտածմունքը  
այսպէս զանազան կերպիւ զբաղված էին, պանդոկատիրոջ կինը  
մտաւ մեզ մօտ և յայտնեց իւր ամուսնին թէ՛՝ այն տարօրինակ  
անձը, որ նորանց մօտ երկու օր կացել է, փող չունի և չէկա-  
րում հատուցանել իւր ծախքը:

«Աս փող չունի, աղաղակեց տան տէրը, անկարելի է. և  
րեկ չէր արգիօք, որ նա երեք զինէ, տուեց մի սպասաւորի, այն  
ծեր զինւորին խնայելու համար, որին պիտէր թակէին քաղաքի  
մէջում մի շուն գողանալու պատճառով»:

Մինչ դեռ կինը հաստատումէր իւր խօսքը, ամուսինը պատ-  
րաստվումէր սննեակից դուրս գալ, երգուելով թէ՛՝ որպէս և  
իցէ կըհարկադրէ նորան հատուցանել: Այս միջոցում ես  
խնդրեցի տան տիրոջը ներկայացնել ինձ այդ մարդատէր օտաւ,  
բականին. նա չըթողեց որ ես աւելի խնդրեմ և իսկոյն ներս  
բերեց մեր սննեակը մի մարդու, որ մօտ երեսուն տարեկան էր  
և որի հագուստը հին էր, թէ և ցոյց էր տալիս թէ՛՝ երբեմն  
ասղնագործութեամբ զարդարած է եղել: «Նորեկը վայելուչ զէմք  
ունէր և գծագրութիւնքը մտախոհ սովորութիւններ էին գու-  
շակում, նորա մօտենալուց երևումէր որ՝ պաճուճանք և երկա-  
րաբանութիւն սիրող չէր. կարծես թէ՛՝ կամ չէր հասկանում  
և կամ արհամարհումէր արարողութեանց սովորութիւնը:

Արք որ տան տէրը դուրս եկաւ մեր սենեակից, ես հարկ համարեցի յայտնել օտարականին այն ներդուլթիւնը, որ ես զգում էի տեսանելով մի այնպիսի երեւելի մարդու վարանքի մէջ, և առաջարկեցի իմ քսակը, տան տիրոջ պահանջմունքը դոհացուցանելոյ համար: «Աւրախութեամբ ընդունումեմ, պատասխանեց նա, և զոհ եմ իմ անզգուշութիւնով, որ թէ և հարկադրեց ինձ բոլոր պատրաստի (շուրթ) փողս տալ ուրիշին, բայց և ապացոյց տուեց ինձ այսօր թէ՛ կան դեռ ևս այս աշխարհում այնպիսի մարդիկ, որպիսի դուք էք. միայն խնդրումեմ ձեզ նախ և առաջ յայտնել ինձ իմ բարերարի անունը և հասցէն, որպէս զի որքան կարելի է շուտով հասուցանեմ իմ պարտքը»: Այս կատարելագէս դոհացուցի նորան և ոչ միայն ասացի իմ անունը, այլ և պատմեցի այն ձախորդութիւնը, որ ինձ հանդիպել էր և թէ՛ ուր էինք գնում այժմ: «Առաւել երջանիկ եմ ես, քան թէ կարծումէի, դանչեց նա. ուղիղ և ես նոյն ճանապարհն եմ գնում և երկու օր այս տեղ մնալու պատճառը այն էր որ՝ սպասումէիք ջրերի փոքր ինչ նուազելուն. յոյս ունիմ որ վաղը կարելի կը լինի անցանել»:

Այս վկայեցի իմ բաւականութիւնը մեր միասին ճանապարհորդութեան մասին, իսկ կինս և աղջկունքս միաւորեցին իւրեանց աղաչանքը իմի հետ, որ նա հաճի մեզ հետ ընթրիք անել: «Նորա հաճելի և կրթողական խօսակցութիւնը հարկադրումէր ինձ ցանկալ այդ զրոյցի երկարութեանը, բայց արդէն ժամանակն էր հրաժարվելու և փոքր ինչ հանդիստ առնելով վաղուեան աշխատութեան համար պատրաստվելու:

Առաւօտը ամենքս միասին դուրս եկանք նորա հետ. կինս և աղջկունքս ձի էին հեծել, իսկ մեր ընկեր պարոն Ռուբէնը հետի գնումէր ճանապարհից մօտ շաւիղով և ժպտալով նկատումէր որ՝ ընտանիքս այնպիսի վատ ձիեր էին հեծած, որ ամենեւին մեծանձնութիւն չէր լինիլ նորա կողմանէ, եթէ նորանց իւր յետնից թողնէր: Ճանապարհը դեռ ևս մի քանի տեղ ջուր կոխած լինելով, հարկադրված եղանք մի ուղեցոյց վարձել, որ մեր առաջքից գնար: Ռուբէնը և ես ամենքի յետնից էինք գնում, թեթեւացնելով մեր խոնջութիւնը զանազան փիլիսոփայական վիճմունքով, որոնք, կարծես թէ հաճելի էին նորան

և որոնց մէջ նա բաւական յաջողակ էր. բայց ինձ այն էր առաւել զարմացնում որ՝ նա չէր մտածում թէ իմ պարտապանն էր, և իւր կարծիքները այնպիսի յամառութեամբ էր պաշտպանում, իբրև թէ, ընդ հակառակն, ևս էի նորան պարտաւորված: Դամանակ առ ժամանակ նա ինձ ծանօթացնումէր թէ՛ ում սեփականութիւն էին այն սպարանքը, որ մենք տեսնում էինք: Նա մասնով ցոյց տուեց ինձ մի փառաւոր տուն, մեզ նից փոքր ինչ հետի և ասաց՝ «Այս պալատը պատկանում է Ջահիլ ազնուական պարսն թօռնհելին, որ վայելում է մի մեծ հարստութիւն, իւր հօրեղբայր Ալի Ալիխամ թօռնհելի շնորհիւ: Աս փոքրով զոհ լինելով, թողել է իւր եղբորորդուն մնացորդի վայելչութիւնը և ինքը համարեան միշտ բնակում է մայրաքաղաքում»:

— Այն թէ, աղալակեցի ես, իմ ապագայ երկրատէրը այն մարդու եղբոր որդին է, որի առաքինութիւնը, առատաձեռնութիւնը և այլանդակութիւնը հանրահռչակ են: Աս լսել եմ Ալիխամ թօռնհելի վարք ու բարքի նկարագրութիւնը, որից երևում է որ՝ նա մի ամենաուստ և ամենայլանդակ մարդ է, բայց և ասում են թէ՛ նորա բարեգործութիւնը անչափ է:

«Վուրջէ անխոհեմ ևս, պատասխանեց Բուրչիլը: Իւր պատանեկութեան հոսակում այդ առաքինութիւնը նա հասցրել էր անչափութեան. նորա յօժարութիւնքը սաստիկ էին և որովհետև ուղղված էին միշտ զէպի բարին, ուստի և բորբոքեցին նորա մէջ մի անմիտ և առասպելական հուանդ: Գահիլուց նա ուշադիր էր եղել այն հանգամանքներին, որոնք յատկացնում են կամ զինուորականի և կամ զխանականի վասն որոյ շուտով մեծ անուն ստացաւ զօրքի մէջ և մեծահամբաւ զխանականի՝ երեւի անձանց կարգում: Փաղաքշանքը միշտ փառասէրների քամակից է գնում, որովհետև սքրա են յատկապէս ողբանաց սիրողքն: Շուրջ պատած այնպիսի մարդկանց բազմութիւնով, որոնք իւրեանց բնատուր բարքի միայն մի կողմն էին ցոյց տալիս, նա սկսեց զոհել իւր անձնական օգուտը ընդհանուր և անխտիր համակրութիւն ստանալու համար: Նա սիրումէր բոլոր մարդկային ազգը, որովհետև նորա հարստութիւնը արգելումէր նորան խմանալ թէ՛ մարդկանց մէջ կային անարդ և

ստուհակ (չար) անձինք: Բժիշկները ասում են թէ՛ կայ այնպիսի հիւանդութիւն, որոյ մէջ մարմինը այնքան զգայուն է դառնում, որ մի թեթեւ շոշափումը սաստիկ ցաւ է պատճառում: Ինչ որ ուրիշները ֆիզիքապէս են ստացել, այս մարդը բարոյապէս էր փորձել. մի փոքրիկ դժբաղդութիւնը ճշմարիտ կամ ստայօղ, սաստիկ շարժումէր նորա գութը և նորա հոգին ճարակ լինելով մի հիւանդոտ խանդաղատութեան, անդադար չարչարվումէր ուրիշների տառապանքից»:

«Այսպէս միշտ պատրաստ դէպի տալը, դիւրաւ կարելի է երեւակայել թէ՛ որքան խնդրողների էր նա հանդիպելու: Առաջ առատաձեռնութիւնը սկսեց արդէն նուազեցնել նորա հարստութիւնը, բայց ոչ նորա բնատուր բարութիւնը, որ ընդհակառակն, նոյն չափով աճումէր և զօրանում, որչափ որ նորա օգնականութեան աղբիւրն էր նուազում: Այնքան առաւել անզգոյշ էր դառնում նա, որքան առաւել աղքատանումէր. և թէ և խօսում է իբրև խնաստուն մարդ, բայց գործերը անմտութիւն էին ցոյց տալիս: Այսպէս միշտ շեջապատած տաղտկացուցիչ անձներով և անկարող բոլոր խնդիրները կատարելու, փողե պակասութիւնը հարկադրումէր նորան խոստումներ տալ: Այս էր միայն մնացել տալու և նա այնքան քաջարտութիւն չունէր որ՝ կարենար ում և իցէ մերժելով տրամեցնել»:

«Մորա բոլորտէքը ժողովեցան հացկատակներ, որոնց յոյսը ի դերև էր հանում (խաբումէր), թէ և պատրաստ էր թեթեւացնել նոցա կարօտութիւնը. սորանք մի ժամանակ խուճապեցին նորա հետքից, յետոյ թողեցին, ծանրաբեռնելով նորան զանազան կշտամբանքով և արհամարհանքով, որոնց արժանի էին համարում: Անարգված այլոց առաջև՝ նա իւր կարծիքի մէջ ևս կորցրուց իւր յարգը. նորա միտքը և հոգին հանդատանում էին այլոց փաղաքշանքից և այս յիցուկը պակասելով, նա չէր կարում զուարճանալ իւր սրտի ծափահարութեամբ. աշխարհը արդէն փոխել էր նորա համար իւր կերպարանքը: Աճոյակատարների պաճուճազարգ փաղաքշանքը փոխվել էին դէպի լոկ հաւանութիւն, որ նմանապէս շուտով մի դաժան կարծիքի կերպարանք ստացաւ. կարծիքից եկան դէպի յանդիմանութիւն, յետոյ, յանդիմանութիւնքը մերժված՝ դէպի նա-

խատինք և այսպէս նա նկատեց որ՝ բարերարութիւնից հրապուրված բարեկամքը բնաւ պատուի արժանաւորութիւն չունէին և թէ՛ մի մարդու սիրտը զբաւելու համար, պէտք էր իւրը զոհել: Տեսայ ես այն ժամանակ որ . . . Մոռացայ՝ ինչ էի ուզում ասել: Արք՝ ասեմ, նա վճռեց վերջապէս իւր յարգը պաշտպանել և մտածեց իւր խարխալված հարստութիւնը վերականգնել: Այս դիտաւորութեան մէջ, համաձայն իւր պլանդակ սովորութեանցը, նա մի երկարատե ճանապարհորդութիւն արեց, շրջադայելով (ման-դալ) բոլոր Աւրոպան հետի և թէև այժմ հազիւ երեսուն տարեկան է, նորա հարստութիւնը, աւելի մեծ է, քան երբ և իցէ: «Նորա բարեգործութիւնքը այժմ առաւել շրջանկատ են և չափաւոր, քան առաջ, բայց նորա բարքը միշտ անհիթիթ է և նա այնպիսի առանձնակամ առաքինութեանց մէջ է ուրախութիւն գտնում, որոնք սովորութիւնից դուրս են»:

Իմ ուշադրութիւնը այնպէս դրաւել էր Ռուբինը իւր պատմութիւնով որ՝ հազիւ էի նայում իմ առաջքը, մինչ յանկարծ շփոթված ընտանեացս աղաղակից, գլուխ բարձրացրի և տեսայ որ՝ փոքրիկ դուստրս ձիւց վեր ընկած սաստիկ հեղեղի մէջ, յորձանքի դէմ մարտունակք. երկու անգամ արդէն ջրի տակն էր ընկել և ես չէի կարում ժամանակին հասանել նորան փրկելու. բայց եթէ կարողացած ևս լինէի, իմ սաստիկ զարհուրանքը արդելելու էր ինձ: Անշուշտ կրկորչէր նա, եթէ իմ ուղեկիցը, վտանգը տեսնելով, չէր ձգել իւրեան ջրի մէջ. սաստիկ դժուարութիւնով նա հանեց դատերս ընդդիմակաց ավր: Յորձանքի վերին կողմում մնացած ընտանիքս անց կացան ողջ և առողջ և մենք կարող էինք արդէն ամենքս մեր եռանդագին գոհութիւնը մատուցանել Աստուծոյ: Սոփիախ երախտագիտութիւնը աւելի հեշտ է երեւակայել, քան թէ նկարագրել. նա իւր փրկչին հայեացքով աւելի էր ասում իւր շնորհակալութիւնը, քան թէ խօսքով և նորա բազուկին (ձեռք) յեցված՝ կարծես թէ մի առանձին բաւականութիւն էր զգում նորանէ օգնութիւն ստանալուց: Այնու նմանապէս յուսով էր որ՝ տանը մի օր իւր շնորհակալութիւնը կը յայանէ նորան:

Մտակայ պանդոկում փոքր ինչ հանգստանալուց և միա-

սին ճաշելուց յետոյ, Պ. Բուրչելը, որ այլ ճանապարհով պիտի գնար, մեզինց հրաժարական ընդունեց, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհորդութիւնը: Այս միջոցում կինս ասում էր թէ՛ օտարականը նորան շատ դուր էր գալիս (հաճելի էր) և եթէ ազնուաճնունդ և հարուստ լինէր, ի հարկէ իրաւունք կ'ունենար մեզ հետ ընտանի դասնալու, իբրև բոլորովին արժանաւոր անձն: Ժպիտը խաղաց շրթունքիս վերայ կնոջս այս վրասեմ ոճր լսելով. այս յղփացած ամբարտաւանի բարբառը այնպիսի մարդու բերանում, որ համարեան մուրացիութեան էր մօտենում, յիրաւի կարէր ծաղը գրգռել վատաբարոյ մարդկանց մէջ, բայց ես անտեղի էի համարում պարսաւել այն անմեղ ցնորքը, որոնցից մենք աւելի դժբաղդ չէինք լինելու:

#### ԳԼՈՒԽ 4.

Որ ապացուցութիւն է տալիս թէ՛ շատ դժուճ վիճակի մէջ ևս կարելի է ունենալ բարեբաղդութիւն , որ կախում ունի ոչ թէ պարագայից , այլ մարդու բնատուր բարբեց :

Մեր նոր առանձնակեցութեան վիճակը մի փոքրիկ հասարակութիւն էր , բաղկացած քանի մի վարձկալիներից , որոնք իւրեանց հողը իրանք էին մշակում . սորանք հաւասարապէս հեռի էին երկու ընդդիմակաց ծայրերից ևս , այսինքն՝ ճոխութենից և աղքատութենից : Ահանքի ամենակարեւոր բաները իւրեանց մօտ ունենալով , սակաւ երբեմն հարկադրված էին քաղաք դնալու , աւելորդ ինչ խնդրելու պատճառով : Բարբի սկզբնական պարզութիւնը պահպանել էր սորանց անուշակաւ նութեան մանրամասն նրբութիւններից և սորանց պարկեշտ սովորութիւնները զուրկ էին այն հասկացողութիւնից թէ՛ չափաւորութիւնը նմանապէս մի առաքինութիւն է : Չուարթ հողով աշխատում էին իւրեանց գործի օրերը , պաշտում էին տօները իրրեւ միջոց հանգիստ և զբօսանք ունենալու , և չէին մոռանում այսպիսի տօները հողէն երգելով պատուել : Մեր դալու մասին տեղեկութիւն ստացած՝ բոլոր ժողովուրդը , գիւղական սրինգը և թմբուկը առաջ քցած՝ եկել էին իւրեանց քահանայի առաջը , որ նմանապէս իւր լաւ շորերն էր հագել : Բնդունելութեան հացկերութիւնը վայելցնիք ուրախութեամբ և մեր խօսակցութեան մէջ եթէ հանձարը պակաս էր , գոնէ զուարճութիւնը բաւական էր :

Մեր բնակարանը մի բլուրի ստորոտումն էր . յետքից ունէր ծայրերը հաւասարահաստ անտառ և առաջից մի փոքրիկ

գետ, որ վազկելով կարկաչումէր, իսկ միւս երկու կողմից մարդագետիկնք էին և դալարի վայր: Ազարակը բազկանումէր քսան օրավար ընտիր հողեց, որի հոգածութեան համար նախկին վարձակալին հարիւր լուի էի հատուցել: Հանկապատների մարտութիւնը գերազանց էր և կնձնիների և ցանկերի գեղեցկութիւնը զարմանալի: Մեր տունը մի գատիկոնից էր, ծածկված խողանով, որ նորան գեղջկական տեսք էր տալիս. ներսի օրմունքը սուաղած էին կրով ձիւնի սպիտակութեամբ, որոնք զատերցս հոգացողութեամբ զարդարվեցան նկարներով և պատկերներով. մի և նոյն սենեակը մեր սրահն էր և խոհանոցը, որ այս պատճառաւ աւելի տաք էր լինելու. բայց որովհետև նա խիստ մաքուր էր և պնակները, սկաւառակները, սղնձեայ սանիրը լաւ շփած և կարգով շարած փայլում էին, այս պատճառով շքեղ կահքերով զարդարած սենեակի տեսարան էր ներկայացնում: Արեք այլ ևս սենեակներ կային տան մէջ, որոնց մինը իմ և կնոջս համար էր, միւսը աղջկերանցս համար, իսկ երրորդը երկու մահճակալներով երեխերքի ննջելու համար:

Փոքրիկ հասարակութիւնը, որի հրամանատարը (ռէկլամ-բօք) ես էի, վարվումէր հետեւալ կերպիւ. արեգակը բարձրացած՝ ամենքս ժողովվում էինք հասարակաց սենեակը, ուր վաղուց արդէն կրակը վառած էր լինում: Միմեանց բարովելուց և պատշաճաւոր ակնածութեամբ բարի օր ցանկալուց յետոյ (ես միշտ այնպէս եմ կարծել թէ՛ մտերմութեան մէջ ևս, լաւ է պահպանել ազնուականութեան այդ արտաքին ձևերը, առանց որոնց ազատութիւնը վերջապէս կարող է կործանել սիրոյ արդիւնքը) ծունր դնելով զոհանումէինք Աստուծուց այն նոր օրի համար, որ մեզ տուել էր: Այս պարտականութիւնը կատարած՝ ես և որդիս գնում էինք դաշտ աշխատելու, մինչդեռ կինս և զատերքս կրպատրաստէին նախաձաշկը, որ միշտ նշանակած ժամին էր լինում: Պորա համար ես գործ էի անում կէս ժամ, իսկ ճաշի համար մի ժամ. այս փոքր ժամանակը կինս և աղջկունքս անցուցանում էին անմեղ զուարճախօսութիւնների մէջ, իսկ ես և որդիս փիլիսոփայական քննութիւնների մէջ:

Արովհետև մենք քնից վեր էինք կենում արեգակի ծագման հետ, ուստի և աշխատութիւններս վերջացնում էինք արե-

գալիք մեր մտնելու: Տուն վերագարձած, ուր ընտանիքս սպասում էին, մեզ ընդունում էր նոյա ուրախութեան ժպիտը, ընտանութեան կենտրոնը և մի բոցարձակ վառարան: «Գատա՛հում էին մեզ մօտ և կոչնականք, երբեմն վարձակալ Ալեմբօրօ-Պը՝ մեր ամենից մերձակայ զբայցին, և կոյր փողահարը մեզ այցելութիւն էին անում և խոնում էին մեր զինին, որի պատասխանութեան կանոնները մենք չէինք կորուսել և որ միշտ նոյն լաւ համբաւը ունէր: Այս բարի մարդիկը շատ հնարներ ունէին մեզ հաճելի լինելու. մինչ դեռ մինը իւր փողն էր փչում, միւսը սրտաշարժ բանաստեղծութիւններ էր կրգում, զորօրինակ վերջին ոչ ջոյն ժօն Արժարժնի կամ Բանակալ Ալեմնի անգլիսիներ: Արեկոն վերջանում էր այնպէս, ինչպէս սխալում էր առաւօտը. մանր երեխերքս հանապազօրեայ աղօթքն էին կարգում փոփոխաբար և որը աւելի բարձրաձայն, որոշ և լաւ էր կարգում, կիւրակի օրը մի զբամ էր ստանում աղքատաց գանձանակը քցելու համար:

Արբ որ կիւրակէի հանդիսաւոր տօնի օրը գալիս էր, ընտանիքս փայլում էին զարդարանքի ճոխութիւնով, որ իմ մեծապայծառ հրամանները և խրատները դեռ ևս չէին կարողացել ճնշելու: Որքան և յոյսս պարարում էի թէ՛ իմ քարոզութիւնները հպարտութեան մասին աղջկերանցս ունայնասիրութիւնը պիտէր նուաճէին, այնու ամենայնիւ միշտ տեսնում էի նորանց ծածկաբար կապված սնապարծութեան հետ: «Առքա դեռ ևս սիրում էին ասղնագործ բաները, ժապաւէնները, սե և սպիտակ մարգարիտը: «Նոյն ինքն կինս սիրահարված էր իւր կարմրերանդ կերպասին, այն օրից որ՝ ես անզգուշութիւն էի ունեցել նորան միանգամ ասելու թէ՛ կարմիր գոյնը նորան լաւ էր գալիս:

Առաջին կիւրակէին մանաւանդ նորանց վարմուկները ինձ մեծապէս կսկծեցրուց. երեկոյին խնդրել էի աղջկերանցս հեռու ելալ օրը փաթը ինչ վաղ հագնել իւրեանց շորերը և նոքա ճրջափա կատարել էին այդ հրամանը, որովհետեւ գիտէին թէ՛ ես սիրում էի եկեղեցի գալ ժողովուրդիցս շատ առաջ. բայց այն բոպէին որ՝ պիտէր ժողովէինք նախաձաշիկ անելու, տեսի նորանց, մօր հետ միասին, պճնազարդված նոյն հետազոտու-

Թեամբ, որպէս առաջ, գլխի մազերը գանդուրացրած և անուշահոտ խզով օծած, երեսներին պիտակ (խւլ) կպցրած և շորերի յետին քղանցքը խուրձած և բարձրացրած, այնպէս որ՝ ամեն մի շարժում անելու ժամանակը լսվումէր՝ Ֆրո՛ւ Ֆրո՛ւ: Չըկարողացայ ես ծիծաղը զպել այդ սնտախ պճնասիրութիւնը տեսնելով, մանաւանդ կնոջս կողմանէ, որից առաւել համեստութիւն էի սպասում:

Ի՞նչ պիտէր անելի ես մի այդպիսի անպատեհ դիպուածում, եթէ ոչ՝ հրամայել որդուս, կարևորացոյց կերպարանօք, զնալ և մի կառք վարձել: Աղջկունքս զարմացան այդ հրամանի վերայ, բայց ես կրկնեցի հրամանը առաւել հանդիսաւորութեամբ:

«Մի գուցէ ծաղրածութիւն է այդ, սիրելի, ասաց կինս, մենք շատ լաւ կարող ենք հետի (ոտով) զնալ, ուրիմն ի՞նչ պիտոյ է մեզ կառքը: — Խտարվում ես, սիրելի, կրկնեցի ես, մեզ կառք հարկաւոր է, որովհետեւ եթէ մենք այս կազմուածքով հետի գնանք եկեղեցի, ժողովուրդի երկխնդրը ևս չեն դազարեցնել իւրեանց ծաղրական շփուներ մեր քամակից: —

«Արդարեւ, պատասխանեց կինս, ես իրաւունք ունեի միշտ կարծելու թէ՛ իմ Ասուլտը սիրումէ իւր երկխնդրին մաքուր և լաւ հագնւած տեսնել»:

— Մաքուր եղևք այնքան, որքան հաճելի է ձեզ, ասացի ես. սորա համար ես ձեզ առաւել կըսիրեմ, բայց ինչ որ ես տեսնումեմ՝ մաքրութիւն չէ, այլ սնապարծ պճնասիրութիւն է: Չեր բոլոր զարդարանքը միայն այն արժանաւորութիւնը ունին որ՝ կարող են բոլոր մեր դրացի կանանց ատելութիւնը շարժել դէպի մեզ: Չէ, չէ, սիրելիք, շարունակեցի ես առաւել ծանրակշիւ դէմքով, ձեր շորերը պիտի ձևվին առաւել համեստութեամբ. զարդարանքը և պաճուճանքը անպատեհ են նորանց, որոնք հազիւ հնար ունին որ և իցէ պատշաճութեամբ ապրելու: Չըզխտեմ դեռ ևս՝ պատշաճ էին արդեօք և հարուստներին այդ ծոպերը և զգեստի խառնիխուռն յօրինուածութիւնները, մանաւանդ, եթէ մտածելու լինենք թէ՛ որքան և փոքր հաշուէինք այդ ունայն աւելորդութիւնքը, այնու ամենայնիւ սոքա կարող էին ծածկել մի աղքատի մերկութիւնը»:

Այս յուշագրութիւնները իմ սպասած արդիւնքը ունեցան. աղջկունքս և կինս կատարեալ խաղաղութեամբ խփոյն գրնացին և իւրեանց հազուսար փոխեցին. իսկ հետեւալ օրը նոյնպէս գոհ էի եւ տեսնելով որ՝ նորանք լիովն հաճութեամբ սկսեցին ձեռնել իւրեանց շորերը այլ կերպիւ, որ մեծ մխիթարութիւն էր իմ համար, մանաւանդ թէ՛ և շորերը այդ փոփոխութիւններից յետոյ աւելի վայելուչ էին երևում:

## ԳԼՈՒԽ 5.

Մի նոր և նշանաւոր ծանօթութիւն : — Այն բանը, որի վերայ մենք աւելի յոյս ենք կապում, առհասարակ լինում է մեզ համար առաւել կորստաբեր :

Մեր տանից փոքր ինչ հեռի, ինձնից առաջ կեցողը մի հովանոց էր շինել, որի վերայ ստուեր էին տարածում ըսպիտակ դժնիկի և Արիքովի վարդի ծառերը. երբ որ եղանակը լաւ էր լինում և մեր աշխատանաց գործերը վաղ էինք վերջացնում, զալիս էինք այս տեղ նստելու և զեղեցկավայրերի տեսքը և երեկոյի խաղաղութիւնը վայելելու. այն տեղ նամանապէս թէյ (չ) էինք խմում, որ մեզ համար մի նորօրինակ արքայավայել խմիչք էր եղել : Արովհետեւ թէյը յաճախ չէինք գործ ածում մենք, այնու համար, սա մեր վայելչութեան առաւելութիւնն էր դարձել, մանաւանդ որ՝ և սորա պատրաստութիւնը առանց շփոթի կամ առանձին արարողութեանց էր կատարվում : Այսպիսի շքեղ զիպուածներում, մանր երեխերքը բարձր ձայնով կարգում էին. մենք մեր թէյը վերջացնելուց յետոյ՝ նորանց ևս տալիս էինք կարգով մի մի բաժակ. երբեմն ևս մեր զուարճութիւնը զանազանակերպելու համար՝ աղջկունքս երդում էին և փանդիւն (կիսուսայ) էին ածում :

Մինչ դեռ նորանք այդ դաշնակաւոր նուագածութիւնն էին կազմում, ես և կինս զբօսնում էինք զառիվայրի մարդագետնի վերայ. այս տեղ վայրենի յակինթը իւր կապոյտ ծաղկունքով, մանր վարդերանգ տերեփուկը, լերդախտար և այլ հարիւրաւոր ծաղիկունք զուարճալի տեսարան էին ներկայացնում. մենք խօսում էինք հիացմամբ մեր երեխերքի վերայ և

չնչում էինք օղի զովարար սիւքը, որ մեզ առողջութիւն և վայելչութիւն էր պատճառում:

Այսպէս մենք սկսեցինք մտածել թէ՛ մարդոյ կիսնքի մէջ չըկայ այնպիսի վիճակ, որ չունենար որ և է բաւականութիւններ: Առաւօտը մեզ հրաւիրումէր դէպի աշխատութիւն, իսկ երեկոն հարիւրապատիկ վարձատրումէր մեր վաստակը՝ հանգիստ և ընտանեաց մէջ ուրախութիւն հասուցանելով:

Աչնան սկզբումը մի հանդիսաւոր օր (ես ծիշդ երկիւղածութեամբ պահպանումէի այդ բարեպաշտական տօնախմբութիւնները), ասրեցի ես իմ ընտանիքին մեր սիրած հովանոցը և մեր ջահիլ նուագածուքը սկսեցին իւրեանց դաշնակութիւնը յանկարծ մի եղջերու (սուսու) ոտոստելով եկաւ կանգնեց քսան քայլ հեռաւորութեամբ այն տեղից, ուր մենք նստած էինք: «Նորա վաղելու սրբնթացութիւնից և թուշելու կերպից երեւում էր որ՝ խեղճ կենդանին որսորդի հետապնդութիւնից էր ստիպված:

Այն ինչ սկսել էինք մենք խնայել նորա դառն վիճակը, մարդիկ և շուներ բոլոր զօրութեամբ յարձակվեցին (վրայ վաղել) նորա հետից: Այս առաջադրեցի ընտանեացս առն վերադառնալ, բայց չըզխտեմ՝ քննասիրութիւնից էր, թէ զարմանքից և կամ ուրիշ ծածկեալ պատճառներից որ՝ ոչ կինս և ոչ աղջկունքս տեղից չըշարժեցան: Արսորդը, որ միւսներից առաջ էր արշաւեցնում (վազեցնումէր) իւր ձին, մեր առջևից անցաւ սրբնթացութեամբ և նորա հետքից չորս հինգ այլ ձիաւորներ, որոնք կարծես անմասն չէին նորա եռանդին: Ա՛րջապէս՝ մի ջահիլ մարդ, միւսներից առաւել լաւ արտաքին տեսքով, մի բոպէի չափ մեզ նկատելով, փոխանակ իւր որսի հետքից գնալուն, կանգնեց իւր տեղում. յետոյ ձգեց ձիու ասնձը (քէ-ը-քէն) իւր ծառային, որ նորա հետ էր, ցած եկաւ ձիուց և մօտեցաւ դէպի մեզ աներկբայ դերպանցութեան դէմքով: Արծես թէ՛ նա կարօտութիւն չունէր առաջնորդի, և անձամբ մօտ եկաւ աշկերանցս դրկելու, իբրև ապահովուած իւր բարի գաղտեան մասին, բայց իմ դատելքս, փսփք Աստուծոյ, վաղ ուրեմն ուսել էին մի այդպիսի անպատշաճութիւնից չըշփոթվիլ:

«Նորեկ պարոնը այն ժամանակ մեզ ասաց թէ՛ նորա ա-

նունը Թոռնհիլ է և թէ՛ նա մեր շրջակայ հողերի տէրն է։ Արստութեան և լաւ շորերի ազդեցութիւնը այնպէս է որ՝ մինչ նա կրկնեց իւր ողջոյնը ընտանեացս կանացի սեւին, երկրորդ մերժումի փորձը չառաւ։ Նորա համարձակ, բայց և մեծամիտ սովորութիւնները օգնեցին նորա հետ հեշտ վարվելուն։ Արաժշտութեան գործիքը տեսնելով բազմոցի վերայ, նա խրնդրեց, իբրև շնորհ, մի բան երգել նորա համար։ Այս շատ հեւի էի որ և է անհաւասար միաւորութեան կապը քաջալերելուց, ուստի և աչքով արեցի աղջկերանցս, կամելով հասկացնել նուրանց թէ՛ չքովտի ընդունեն այդ խնդիրը։ Բայց իմ յուշարարութիւնը ընդդիմութեան հանդիպեց նոցա մօր կողմանէ և դրստաբար սկսեցին շատ բարեհաճ՝ դէմքով երգել մեր սիրած երգերից մինը։ Պ. Թոռնհիլը հիացած էր երևում, որպէս երգելուց, նոյնպէս և այդ կտոր բանը ընտրելուց։ նա վեր առեց իսկոյն փանդիւրը և սկսաւ անել, բայց բաւական վատ. այնուամենայնիւ անդրանիկ դուստրս առաւելութեամբ ծախահարեց (գովեց), հաւատացնելով նորան թէ՛ այդ երաժշտութիւնը աւելի քաղցր էր, քան թէ այն ուսուցչներ, որից ինքը ուսել էր։ Թոռնհիլը խոնարհեցաւ այդ գովեստի առաջև, իսկ դուստրս իւր մեծարանաց նշանը գործ անեց։ Պարոնք գովեց օրիորդի վեմ՝ Ծանաչողութիւնը, իսկ սա նորա անաչառ վճիտը։

Մի տարու ընթացքում ունեցած ծանօթութիւնը չէր կարող սորանց աւելի լաւ մօտեցնել միմեանց։ Թեթևամիտ մայրը, նոյն չափ ուրախագէտ, որչափ և իւր դստերքը, թախանձանօք ինդրումէր պարոնին, որ բարեհաճի մաննել մեր աուն՝ մի բաժակ զինի խմելու։ Քոյրը ընտանիքս կարծես թէ զբաւված էին ցանկութիւնով հաճելի լինել նորան։ Աղջկունքս փորձեցին խօսակցել նորա հետ այն առարկաների վերայ, որոնք ժամանակի պատշաճաւորութիւնը ունէին. իսկ Մովսէս որդիս, ընդհակառակն, մի երկու խնդիր առաջարկեց նախնի Առնայեցոց և Յունաց մասին, որոնք աւելի քան ծաղրածութեան արժանաւորութիւնը չունեցան։ Փոքրիկ երեխայքս պակաս զբաղված չէին նորեկ հիւրովը և նորա մօտ նստած՝ տեղից չէին շարժում։ Քույր իմ ջանքը անզօր եղան արգելելու նորանց որ՝ իւրեանց կեղտոտ մատներով չըջոջափեն նորա շորերի ասղնագործութիւնը։

քը, կամ իւրեանց թաթերը դուրս բերն նորա գրասննելից, ուր կամէին տեսնել թէ ի՞նչ կար: Արեկոյի մօտ նա հրաժարվեց մեզնից, հրաման խնդրելով կրկնել իւր այցելութիւնը, որ և շնորհեցին նորան խսկոյն, որովհետեւ իբրեւ երկրաատէր նա ունէր այդ իրաւունքը:

Այն ինչ հեռացել էր նա մեզնից, կինս սկսեց զանազան խորհրդածութիւններ անել այն օրուայ եղելութեանց մասին, նա կարծումէր թէ՛ շատ բարեյաջող զխալուած էր այդ, և թէ տեսնելով ինչ առաւել տարապայման բաներ, որոնք յաջող հեռանք են ունեցել. նա յոյս ունէր դու ևս երկար ապրելու և չէր երկրայում թէ՛ մի օր քիթը բարձրացրած բողբաւորների կարգն է անցնելու վերջապէս վճռեց թէ՛ որովհետեւ Ափսոսքի օրիորդները հարուստ ամուսիններ դտան, ինչո՞ւ ուրեմն և նորա դստերը նոյն բողբիւն չեն հանդիպելու: Աստ որում այդ վերջին պատճառարանութիւնը գէպի ինձ էր դարձուցած, ևս հակառակեցի նորան և ասացի թէ՛ նորա բերած օրինակը նոյնչափ ապացոյց է իւր յուսոյ կատարման, որչափ և այն թէ՛ ինչո՞ւ:

Պ. Բնականաբար վիճակահանութեան մէջ տասն հազար լիար ստերլին տարեց, իսկ մեր տոմսակը դատարկ դուրս եկաւ:

«Ի՞նչ մարդ ես եղած դու, Աարդոս, աղաղակեց կինս. քո մոլեգին սովորութիւնն է միշտ արամեցնել աղջկերանցս և ինձ, եթէ փոքր ինչ ուրախ ես տեսնում մեզ: Եսս ինձ, Սովիա, իմ սրտիկս, ի՞նչ ես մտածում դու մեր նոր ծանօթի մասին: Ա՞յ ապաքէն նա քեզ երեւեց սիրելի և բարեբարոյ»:

— Չափազանց սիրելի, մայրիկ, պատասխանեց Սովիան. ևս կարծումեմ թէ՛ նա շատ բան ունի ասելու զանազան առարկաների վերայ և բնաւ չի դժուարանում խօսելում. որքան թիթեւ է առարկան, այնքան ճարտար է երևում նորա վերայ խօսելում: Բայց ինչ և իցէ, յիրաւի շատ զեղեցիկ է նա: —

— Այո՛, աւելացրուց Օլիվիան, իբրեւ տղամարդ՝ զեղեցիկ է, բայց, որ ինձ է վերաբերում, կարեմ ասել թէ՛ հաճելի է ինձ, որովհետեւ շատ յանդուգն է և ընդելատէր, իսկ փանջիւ ածելում անհանդուրժելի է:

Այս այս խօսքերը մեկնեցի բոլորովին հակառակ նշանակութիւնով. այսինքն թէ՛ Սովիան ներքուստ նոյնչափ ատումէր

այն պարոնին, որքան Օլիվիան ծածկաբար հիանումէր նորա վերայ:

«Ինչ և լինի ձեր կարծիքը այդ աղնուականի մասին, սիրելիք, պատասխանեցի ես, բայց ճշմարիտ եմ ասում որ՝ նա դէպի իւր օգուտը նախազգեցութիւն չարեց իմ վերայ: Տարապայման բարեկամութիւնների հետեանքը միշտ դառնութիւն է. որքան և մարդասէր էր նորա դէմքը, այնու ամենայնիւ կատարելապէս զգացնումէր այն տարածութիւնը, որ մեզ նորանից բաժանում է: Հաւատացէք ինձ, պատշաճազոյն է մեզ ընկերութիւն անել այն մարդկանց հետ, որոնք մեզ հետ կեանքի հաւասար պայմանների մէջ են: Չըկայ ոչ մի մարդու համար աւելի անարդ դեր (rôle, part), քան բազդի և հարստութեան քամակից վազելու դերը և ես չեմ կարում իմանալ թէ՛ ինչո՞ւ համար ազգկան առաւել ներելի է մի այդպիսի դերը»:

«Ուրեմն՝ եթէ թոյլ տանք թէ՛ նա պատուաւոր նպատակ ունի, այնու ամենայնիւ վատանունութիւնը մեզ է վիճակելու: Իսկ եթէ այլապէս է, միայն այդ միտքը ինձ սարսափեցնում է: Ճշմարիտ է, ես բնաւ տարակուսութիւն չունիմ իմ զաւակաց ընթացքի և բարքի մասին. բայց այդ մարդու համբաւը իմացած լինելով՝ չեմ կարում նոյնը ասել և նորա բարքի մասին»:

Մինչ ես խօսքս շարունակում էի, յանկարծ միջահատեց ինձ երկրատիրոջ ծառան, որ իւր պարոնից մեզ ողջոյն էր բերել և մի քառորդ մասը որսած էրէի, նոյնպէս և նորա խոստումը թէ՛ մի քանի օրից յետոյ մեզ մօտ ճաշելու պիտի գայ: Այս ընծայի ստանալը մի յաջող դիպումած էր նորան զօրաւորապէս պաշտպանելու համար և առաւել արդիւնք ունեցաւ, քան բոլոր իմ պատճառաբանութիւնները նորա դէմ: Այս լուսմնացի, գոհ լինելով որ՝ զո՞նէ վտանգը երեւում է և նոցա խոհեմութիւնը թողի հոգալ այդ վտանգից խուսափելը: «Այն առաքինութիւնը, որ կարօտութիւն ունի անդադար պահպանելու՝ չարժէ պահպանութեան»:

## ԳԼՈՒԽ 6.

Ընտանեկան տար անկիւնի երջանկութիւնը:

Արովհետեւ հակաճառութիւնը քանի գնումներ սաստկանում էր, մեր միաբանութիւնը հաստատելու համար, համակամ հաւանութեամբ վճռեցինք էրէի մի մասը ընթրիքի համար խորովել: Ղստերքս ուրախութեամբ սկսեցին այդ պատրաստութիւնը: «Ափսո՛ս որ, գոչեցի ես, մենք չունինք ոչ զբացի և ոչ մի հիւր, որ մասնակից լինէր մեր հացկերութիւն: Հիւրընկալութիւնը ազնուացնում է և երկպառակում է խնջոյքի ուրախութիւնը»:

«Ահա, Աստուծոյ ողորմութեամբ, կրկնեց կինա, զալիս է այն ազնիւ Պ. Բուրչեղը, որ մեր Սոփիային ազատեց և որ քեզ հետ հակաճառելուս իւր հետեակը դամա է հանում»:

— Իւր հետեակը դամա է հանում, աղաղակեցի ես. սաստիկ սխալումես, չեմ կարծում թէ՛ շատ մարդու տուած լինի այդ կարողութիւնը: Աս չեմ ուրանում որ՝ դու առաջին կինն ես աշխարհում սաղից կարկանդակ շինելումը, բայց որ ինչ վերաբերում է վիճարանութեան, այդ իմ գործն է, և ես քեզ խնդրումեմ չըխառնվել սորա մէջ: Խօսքս դեռ ևս շարունակում էի, խեղճ Բուրչեղը ներս մտաւ: Բոլոր ընտանիքս ջերմ սիրով ընդունեցին նորան և նա ինքը կարգով ամենքին ողջունեց, իսկ փոքրիկ Գիկը մարդասիրութեամբ մի աթոռ քաշեց նորա համար:

Այս խեղճ մարդու բարեկամութիւնը ինձ շատ հաճելի էր երկու պատճառով. նախ որ՝ ես զիտէի թէ՛ նա կարօտութիւն ունի իմ բարեկամութեան, և երկրորդ՝ ես նորան հա-

ճոյակատար էի գտնու՛մ զէպի մեզ ամեն բանու՛մ: Վե՛ն ևս երեսուն տարեկան էր նա, բայց մեր շրջակայքում հռչակված էր արդէն իբրև մի խեղճ ազնուական, որ իւր ջահիլութիւնը չէր կարացել մի լաւ բանի մէջ գործ ածել: Շատ անգամ խօսուե՛կէր նա մե՛ծ իմաստութեամբ, բայց առ հասարակ զեր ի վերոյ էր համարու՛մ երեխերքի ընկերութիւնը որոնց սովորաբար կոչուե՛կէր «անմեղ փոքրիկ մարդիկ»:

Նորա համար մե՛ծ բաւականութիւն էր բանաստեղծութիւններ երգել և զանազան անցքեր պատմել այդ երեխերքին և սակաւ կրպատահէր որ, ուր և է գնալուս, չունենար սորանց համար իւր գրպանում մի կտոր շաքարեղէն կամ մի կօպէկանոց սուլակ: Ամեն տարի նա դալիս էր մի քանի օրով մեր շրջակայքը և ապրումէր բնակչաց հիւրընկալութիւնով: Նա մնաց մեզ մօտ ընթրիք անելու և կինս չըխնայեց նորա համար իւր համբաւաւոր զինին: Պատմութիւնները և երգերը առատութեամբ պատմեցին մեզ, մինչև որ մեր աքաղաղը, որ սովորութիւն ունէր տասն ու մի ժամուն խօսել, մեզ հասկացրուց թէ՛ քնելու ժամանակն է արդէն. բայց և այս տեղ մի անակնկալ դժուարութիւն առաջ եկաւ. մենք տեղ չունէինք օտարականին քնեցնելու, որովհետև բոլոր անկողինքը իւրեանց տէրերը ունէին և մօտակայ պանդոկից մի անկողինք փոխ առնելու արդէն բաւական ուշ էր: Այս տարակուսութեան մէջ, փոքրիկ Վիկը առաջարկեց իւր անկողինքի կէսը, եթէ նորա եղբայր Մովսէսը իւր անկողինքից մասն կրտար իրան:

«Աս ևս, աղաղակեց միւս փոքրիկս, խմի կէսը կրտամ Պ. Բուրչեղին, եթէ քուրիս ինձ վեր կ'առնեն իւրեանց մօտ»:

— Շատ լաւ, սիրելիք, ասացի ես. հիւրասիրութիւնը քրիստոնէի պարտականութիւններից մինն է: Ննասունը քաշվում է իւր որջը, թռչունը՝ իւր բոյնը, իսկ անպատասպարան մարդը միայն իւր նմանների մէջ կարէ գտնել իջևան: Ամենամեծ հիւրը այս աշխարհում Նա էր, Որ եկաւ աշխարհը փրկելու: Նա տուն չունէր, կարծես թէ այնու համար, որ տնան է թէ՛ ո՛րքան հիւրընկալութիւն է մնացել մեր մէջ: Միրելի Վեբօրա, ասացի կնոջս, այս երեխերքին մի մի կտոր շաքար տուր, բայց մե՛ծ կտորը տուր Վիկ որդուս, որովհետև նա առաջին խօսողն էր:

Միւս օրը կանուխ առաւօտուն, բոլոր խումբը եւ կանչեցի դաշար երկրորդ անգամ բուսած ստերը հ'նձելու և մեր հիւրը, որ իւր օգնութիւնը չէր զւացել, միւսների հետ եկաւ: Մեր աշխատութիւնը առաջ էր գնում զուարճութեամբ. խտտի բոլոր շարքերը սիւռում էինք զէպի հողմը դարձրնելով: Եւ գնումէի առաջքից, իսկ միւսները կարգով իմ հետքից էին գալիս: Այս միջոցին նկատեցի որ՝ Պ. Բուրչելը մեծ փոյթեռանդութեամբ էր օգնում իմ զուտոր Սոփիային նորա աշխատանքի մասը կատարելում, և մտերմական խօսակցութիւն էր սկսել նորա հետ: Աս շատ լաւ գործիք ունէի Սոփիայի դատողութեան մասին և համոզված էի թէ՛ նորա զգաստութիւնը պատճառ չի տալ ինձ անհանդիստ լինելու մի աղքատացած մարդու դեգերանքի մասին:

Մեր օրական գործը վերջացնելուց յետոյ, Պ. Բուրչելին հրաւիրեցինք, ինչպէս և յառաջնութաց օրը, գիշերը մեզ մօտ մնալ, բայց նա չբոժարեց ասելով թէ՛ պիտէր մի սուլակ տանէր մեր դրացու երեխայի համար, և նրանց մօտ էր այս գիշեր քնելու: Նորա գուրս գալուց յետոյ, երիկնահացի վերայ, մեր զրոյցի առարկան բնականաբար այդ դժբաղդ հիւրն էր:

«Այս խեղճ մարդը, ասացի ես, ի՞նչ զարմանալի օրինակ է տալիս այն թշուառութեանց, որոնք հետեանք են պատանկուութիւնը անառակութեանց և ցանկութեանց մէջ կորուսած լինելուն: Խելքը պակաս չէ սորա մէջ, և սորանով է նա առաւել մեղադրելի իւր անցեալ յիմարութեանց մասին: Խեղճ և անօգնական մարդ... Ո՛ւր են այժմ նորա զբօսանքի ընկերները, նորա փողպաշանքը, նորա ողորջները, որոնց համար սորա անձնահաճութիւնը օրէնք է համարվում եղել: Վառցէ՛ այժմ նորանք շրջապատել են մի այլ թշուառականի, որ առաջ սորա մօլի կամակատարն է եղել, և հարստացել է սորա անմտութիւններից: Մի ժամանակ սորան էին գովաբանում, այժմ նորան են ծափահարում, որ սորան մերկացրել և աղքատացրել է: Այն եռանդը ուրախութեան, որ սորա մէջ գրգռում է եղել հանձարամտութիւնից, փոխվել է այժմ զէպի հեղնութիւն իւր յիմարութեանց վերայ: Սա խեղճ է, բայց և զուցէ արժանի է այդ խրոջճութեան, որովհետեւ չունի այժմ որպէս արժանաւորութեան

զգացմունք անկախ լինելու, նոյնպէս և քանքար օգտաւէտ լինելու»:

Այս դասն նկատողութիւնները արեցի ևս, ստիպված մի քանի ծածկեալ պատճառներից: Սովիա դուստրս հեղութեամբ ինձ պատասխանեց՝ «Ի՛նչ և լինէին սորա առաջին բարք և վարքը, հայրիկ, բայց այն պարագայքը որոնց մէջ այժմ է նա, պարտաւորում են մեզ ապահովիլ նորան մեր քննութիւններից: Նորա այժմեան չքաւորութիւնը բաւական մեծ պատիժ է անցեալ անառակութեանց: Ա՛յ ապաքէն դու ինքդ, հայրիկ, քարողումես թէ՛ հորի չէ մեզ մի աւելի հարուստ տալ այն զոհին, որի վերայ Նախախնամութիւնը իւր բարկութեան զաւազանք արդէն շարժել է»: — Իրաւունք ունիս այդպէս խօսելու, աղաղակեց Մոփսէս որդիս. հին մարդիկից մինը շատ լաւ է համեմատել այսպիսի վարքի անգթութիւնը այն այլանդակ շինականի անգթութեան հետ, որ ջանք է անում մորթել Մարտիասին, որոյ կաշին, ինչպէս առակը ասումէ, արդէն քերթել է Ապօլոնը: Բայց ես դեռ ևս չըզիտեմ, արդեօք այդ խեղճ մարդու վիճակը այնպէս վատ է, որպէս երեակայումէ հայրս: Մենք չըպիտի դասներ այլոց զգացմունքը նորանով, որ ինչ մենք կրգզայինք նորանց տեղում: Արքան և մութն երեւի մեզ խլուրդի բնակարանը, այնու ամենայնիւ այդ կենդանին իւր տունը համարումէ բաւականապէս լուսաւորած: Աւղիլը ասեմ՝ այդ մարդու միտքը ինձ երևումէ բոլորովին յարմարացրած իւր վիճակին, որովհետեւ երբէք չեմ լսած մի աւելի զուարթ և ոգևորված խօսակցութիւն, քան նորա այսօրվայ խօսակցութիւնը Սովիայի հետ:

Այս խօսքը, որ առանց որ և է դիտաւորութեան էր ասած, կարմրութիւն գրգռեց դատերս դէմքի վերայ, թէ և նա ջանք էր անում ծածկել այդ կեղծ ծիծաղով և հաստատելով թէ՛ հազիւ ուշադիր էր դէպի Բուրչելի խոսածը: Բայց և այսպէս՝ Սովիա դուստրս կարծուակ էր թէ՛ այդ մարդը կարող է եղել մի ժամանակ լաւ ընկերութիւն ունենալ: Նորա եռանդազին ջանքը իւրեան արգարացնելու համար, նորա դէմքի կարմրութիւնը մի այնպիսի նշաններ էին, որ անհանգստութիւնից չէին ապահովում ինձ: Բայց ես կարճ կտրեցի իմ կասկածանքը:

Մեր երկրատիրոջ այցելութիւնը արդէն յայտնի լինելով վաղեման համար, կինս դնաց էրէի մնաց կարկանդակ պատրաստելու: Մովսէս որդիս ձեռքը առաւ մի զիւրք, մինչ դեռ ես դաս էի տալիս փոքր զսեւկացս: զստերքս նմանապէս մեծ հողսի մէջ էին երեւում և ես տեսի նորանց երկար միջոց կրակի մօտ զբաղված մի բան եփելով: Ահիզըը ես կարծեցի թէ՛ սոքա խւրհանց մօրն են օգնում: բայց իմ փոքրիկ Վիկը հծծեց աւանջումն թէ՛ նոքա ջուր էին պատրաստում խւրհանց երեսը լուանալու:

Ես ատելով ատումէի զեղեցկութեան համար գործ ածելու ամեն տեսակ զեղիւրը, որովհետեւ լաւ իմանումէի որ՝ սոքա փոխանակ զեղեցկացնելու՝ խանդարումն երեսի գոյնը: Փոքր առ փոքր և զգուշութեամբ մօտեցրի իմ աթոռը դէպի կրակարանը, վեր առեցի ունելիքը (սակս) հուրը արծարծելու համար իբր պատահաբար տապալեցի բոլոր շինած զեղը: Երդէն ուշ էր մի նոր այգալիսի բան պատրաստելը:

ԳԼՈՒԽ 7.

Մայրաքաղաքի հանճարեղ ոգին: — Սաստիկ թանձրամիտ մարդիկը մի կամ երկու կարող են զուարճացուցիչ լինել:

Այլը որ եկաւ հասաւ այն մեծ օրուայ առաւօտը, որ պիտէր մեր ջահիլ երկրատիրոջը հացկերոյթ տայինք, ոչ աշխատութիւն և ոչ ծախք չէին խնայել փառաւոր դէմք ունենալու համար: Աինա և դատերքս, հեշտ է ենթադրել, այդ դիպուածում զործածեցին իւրեանց ամենաշքեղ զարդարանքը: Պ. Թօունհիլը եկաւ իւր երկու բարեկամների հետ, որոնց մինը նորա խոստովանահայրն էր, իսկ միւսը նորա պքաղաղ պահողը: «Նա հրամայեց իւր բաղմաթիւ ծառաներին զնայ մօտակայ պանդոկը, բայց կինս անբարտաւանացած իւր սրտում, թախանձեց թոյլ տալ ամենքին ընդունել իւր մօտ, որ, հարեանցօրէն խօսելով, պատճառեց մեզ երկու շարթուայ պահեցողութիւն: Պ. Բուրչիլը յառաջընթաց օրը յայտնել էր թէ՛ Թօունհիլը ամուսնութեան առաջարկութիւն է անում Ալիմօթ օրիորդին, այսինքն Վէորդ որդուս նախկին հարսնացուին:

Այս լուրը չանցաւ առանց նուազեցնելու մեր ընդունելութեան մտերմութիւնը, բայց մի դիպուած փոքր ինչ փարատեց այդ տարակուսութիւնը, որովհետեւ երբ որ ժողովականներից մինը օրիորդ Ալիմօթի անունը տուեց, Պ. Թօունհիլը երգմամբ հաստատեց թէ՛ մի այլանդակ բան էր երևում նորան այդ զեղեցիկութեան համբաւը, որ տարածված է Ալիմօթ օրիորդի մասին, որ ոչ միայն ազեղ է, այլ և իսկապէս անհեթեթ: «Թող ես մի հրէշ լինիմ, ասաց նա, եթէ առաւել հաճելի չէ ինձ հարս ընտրել իմ համար սուրբ Վիւնսթանի մեծ ժամաւ:

ցուցի լուսաւոր հրատարակում, քան թէ այդ աղջկան»։ Յետոյ նա սկսեց սաստիկ ծիծաղել և մենք նոյնպէս։ Հարուստների կատակաբանութիւնքը միշտ յաջողակ են լինում։ Օլիվիա դուստրըս չըկարաց չըմբնջնել կիսաձայն, բայց այնպէս, որ դժուար չէր լսելը, թէ Պ. Քոռոնհիլը զուարճութեան անսպաս աղբիւր էր։

Ղաշեց յետոյ, ես բոտ սովորութեանս, մի բաժակ գինի խմեցի եկեղեցւոյ բարեյաջողութիւնը ցանկալով։ Վահանան ինձնից շնորհակալ եղաւ, ասելով թէ՛ եկեղեցին նորա հոգու միակ տիկինն է։ «Հապա, Պրանի, ասաց երկրպագեալ իւր սովորական անամօթութեամբ, խօսի՛ր անկեղծօրէն. դեցու՛ք թէ մի կողմից կանգնած է եկեղեցին, քո այժմեան տարփածուն, սև շորերով, բարակ կաւի օղիկներով, իսկ միւս կողմից Սոփիա օրիորդը առանց զգեստի և քօղի, որի՞ն կրնարես դու»։

— Ենչուչտ երկուսին ևս, պատասխանեց քահանան։

«Եւ յիրաւի իսկ, ասաց ազնուականը, թող այս գինիի բաժակը ինձ հեղձուցանէ, եթէ մի այդպիսի գեղեցիկ աղջկը մենակ չարժէ բոլոր քահանայից խումբին։ Չիր տասանորդքը, ձեր պչրանքը այնպիսի ծաղրածութիւններ են և գատապարտկե նենգութիւններ, որ ես կարող եմ ինքս յայտնի ապացուցանել»։ — Ացանկալի լսել ձեր յապացուցութիւնքը, միջահատեց Մովսէս օրդիս, ես յոյս ունիմ թէ՛ կարող եմ ձեզ հակառակել։ — «Հրաշալե՛, աղաղակեց ազնուականը, որ հասկանալով թէ ո՛ւմ հետ էր լինելու նորա գործը, աչքով արեց իւր կոչնակիցներին, որ պատրաստվին ծաղրելու։ Աթէ՛ դուք յօժար էք սկսել մի հանդարտ վիճարանութիւն այդ առարկայի վերայ, ես պատրաստ եմ ասպարէզ գալ։ Կախ և առաջ՝ ի՛նչպէս էք պատշաճ համարում խօսակցել սորա վերայ, նմանարանօրէ՛ն, թէ բանակցօրէ՛ն»։

— Ես կամուսնեմ խօսակցել մտացի քննութեամբ, ասաց օրդիս զուարճանալով որ՝ մի խնդիր էր պաշտպանելու։

«Հրաշալե՛, կրկնեց ազնուականը. այս բանը յառաջ տանելու համար և սկզբեց սկսելու համար, ես յոյս ունիմ որ նախ՝ դուք չէք մերժելու թէ՛ որ ինչ կայ—կայ։ Աթէ՛ դուք այս կէտը ինձ չէք շնորհիլ, ես ահա յայտնուսնեմ որ՝ չեմ կարող մեր վէճը շարունակել»։ — Բարի է, ասաց Մովսէսը, կարծեմ թէ

ես կարող եմ շնորհել ձեզ այդ և նոյն ժամանակ ինքս խակ օգուտ քաղել նորանէ: —

«Յոյս ունիմ նմանապէս, շարունակեց միւսը, որ դուք կը համաձայնիք թէ՛ մասը փոքր է քան բոլորը»:

— *Concedo* (համաձայն եմ), ասաց Մովսէսը, արդար և իրաւացի է այդ: —

«Դուք չէք մերժիլ նմանապէս, գոչեց երկրատէրը, որ մի եռանկիւնի երկու անկիւնները հաւասար են երկու ուղղակի անկիւններին: — Բոլորովին պարզ է այդ: —

— Արովհետեւ իմ ընդհանուր յառաջադիրքը դուք ընդունումէք, շարունակեց երկրատէրը արագախօս բարբառով, ես հաստատում եմ թէ՛ բուն էութիւնների կապակցութիւնը ծագելով փոխադարձութեամբ նոցա հեռաւորութեամբ երկպատիկ պատճառից, հարկաւ յառաջացնում է մի անյայտ խօսակցութիւն, որ ապացոյց է տալիս թէ՛ հոգեւորի էութիւնը կարելի է տալ երկրորդ ասելիքին: —

— Ասցէք, կացէք, միջահատեց Մովսէսը. ես այդ մերժում եմ, և ի՛նչպէս էի կարող առանց հակառակելու թոյլ տալ մի այդպիսի աղանդաւոր կարծիքը:

«Ի՛նչպէս, գոչեց երկրատէրը, կերպարանքով իբր թէ բարկացած էր. դուք մերժումէք, որ ինչ ակներև է. պատասխանեցէք ուրեմն միայն մի հարցմանս, Արիտոտիւր իրաւունք ունէ՞ր հաստատելու թէ՛ «Յարաբերելի բաները գոյակցութեան պատճառով յարաբերութիւն ունին»»: — Անտարակոյս: — Այժմ այդպէս է պատասխանեցէք ուղղակի իմ առաջադրութեանը, այսինքն՝ իմ կարծառօտ ձեռնարկութեան առաջին մասի լուծական քննութիւնը անբաւական էք համարում *secundum quo ad, ou quo ad minus*. Տուէք ինձ շուտով ձեր հակառակութեան պատճառները:

— Ես վկայում եմ, ասաց Մովսէսը, որ լաւ չեմ հասկանում ձեր քննութեանց էութիւնը և եթէ դուք նորանց մի պարզ առաջադրութեան մէջ բովանդակէիք՝ զուցէ կարող էի ձեզ պատասխանել: — «Պրան տեսէք, պատասխանեց երկրատէրը, աս ուզում է որ ես իւրեան փոխ տամ ոչ միայն պատճառներ, այլև նորանց հասկանալու կարողութիւն և ընդունակութիւն».

չէ՛ պարոն, եթէ այսպէս է, ես պատրաստ եմ յայտնել թէ՛ չափազանց հզօր էք իմ համար»:

Այս բարբառնջանքը դարձրուց ծաղրածուներին խեղճ Մովսիսի դէմ, որ ցնծալից խումբի մէջ մնաց վարատված և տրտուած և բերանը չբացեց այլ ևս բոլոր խնջոյքի ժամանակը:

Թէ և այս ծաղրաբանութիւնները բնաւ իմ ճաշակի բաներ չէին, բայց Օլիվիա դուստրս այլպէս էր համարում և այդ կատակները հանձարի տեղ էր ընդունում: Մի մարդ, որ կարող էր այսպիսի դիւրութեամբ ծաղր անել, նորան երեւումէր կատարեալ անձն և եթէ մտածէինք առանձնապէս թէ՛ մի դեղնցիկ կերպարանք, շքիղ հաղուստով, մեծ հարստութիւնով, ինչ նշանակութիւն էր ունենալու մի մարդու համբաւի մէջ, դիւրաւ կարենք ներել Օլիվիային: Արքան և տգէտ լինելը թօռնհիլը, բայց խօսելումը յաջողակ էր և ճառարանումէր երկարօրէն խօսակցութեան հասարակ առարկաների վերայ: Աւրեմն հարկ է արդեօք զարմանալ որ՝ այդպիսի տաղանտները կուրացրին մի ջահիլ օրիորդի, որ, ինչպէս իւր դաստիարակութիւնով, նոյնպէս և բնութիւնով, սովոր էր իւր մէջ իսկ մեծապէս պաշտել արտաքին բարեմասնութիւնները, ուրեմն և իրաւունք ունէր ուրիշներինը ևս մեծ բան համարել:

Մեր հիւրը հրաժարվելուց յետոյ, նոր վէճ բացվեց նորա արժանաւորութեանց մասին: Օլիվիան յայտնի առարկայ էր եղած նորա գաղաւէկ նայեացքներին և ուշազրութեանը և արդէն տարակուսութիւն չըկար որ՝ այս հռչակաւոր այցելուին նա էր ձգել դէպի մեզ: Օլիվիան չէր պաշտպանում իրան իւր կըօր և քրոջ անմեղ կատակների դէմ այդ մասին, իսկ կինս, Վեբօրան, ինքը կարծես թէ մասնակից էր այն օրուայ պատուին և պարծենումէր իւր դասեր յաղթութիւնովը, որպէս թէ իւրը լինէր այն:

— Աւրեմն, սիրելի, ասաց կինս, դառնալով դէպի ինձ, բացարձակ խոտտովանումեմ որ՝ ես եմ իրախուսել աղջկերանցս չըմերժել ջահիլ երկրատիրոջ առաջին քայլերը. ես միշտ փառասէր եմ եղած և դու ահա տեսնում ես որ՝ մի մեծ յանցանք չեմ գործել, որովհետեւ ո՞վ դիտէ թէ՛ ինչ կատարած կ'ունենայ այդ բանը:

«Յիրաւի ո՞վ գիտէ, պատասխանեցի եւ ժպտալով: Իմ կողմանէ կարեմ ասել թէ՛ հաճոյ չէ ինձ այդ: Առաւել կրցանկայի ես, եթէ իմ դասեր ամուսինը լինէր մի խեղճ և պատուաւոր մարդ, քան այդ գեղեցիկ անուականը, բոլոր իւր հարստութիւնով և իւր անկրօնութիւնով. ուրեմն պիտի վստահ լինիս որ՝ կրօնատեսացը չի ստանալ ո՛չ մի զուակիս:»

— Յիրաւի, հայր, դուք շատ հեռի էք տարածում ձեր խստութիւնը, ասաց Մովսէսը: Աստուած չի դատապարտիլ նորան ասածի համար, այլ գործածի համար: Ամեն մարդ իւր մէջ պարունակում է հազար չար միտքեր, որոնցից փարատելու համար նա տկար է: Արեւի է որ՝ անկրօնութիւնը այդ մարդու մէջ մի ակամայ մոլորութիւն է և եթէ թոյլ տանք թէ՛ նորա զգացմունքը մոլոր են, բայց նա իւր գործքը չի միաբանում զգացմանց հետ, ուրեմն նորան նոյնպէս կարելի էր մեղադրել իւր մոլորութեանց համար, որպէս մի բայ քաղաքի կառավարչին, որ պաշտպանելու հնար չունենալուց, թոյլ էր տուել թրշնամեաց քաղաքը մտնել:

«Ղշմարիտ է, որդի, պատասխանեցի ես, բայց եթէ կառավարիչը թշնամիներին ներս է կանչում, ո՞չ ապաքէն յանցաւոր է նա արդէն. այսպէս են միշտ և նորանք, որոնք զրկում են մոլորութիւնը: Այնքան չար չէ, եթէ մենք հաւանում ենք այն փորձը, որին ականատես ենք, որքան մինչ կամաւ կուրանում ենք դէպի բազմութիւ այլ փորձեր. այնպէս որ՝ թէ և մեր կարծիքը իւրեանց սկզբում լինէին ակամայ, այնու ամենայնիւ նորանց ընդունելութիւնը առաւել անհոգութեամբ պիտի եղած լինի, քան թէ բարբի ապականութեամբ կամ մոլորութեամբ: Ասմ մեր մոլորութիւնն է պատժելի և կամ մեր թեթեւամտութիւնը պարտաւելի:»

Մինս շարունակեց այդ խօսակցութիւնը, բայց չըվիճեց. նա իբր թէ ճանաչում էր շատ արժանաւոր մարդիկ, որոնց կրօնատեսաց էին համարում, բայց և այնպէս գերազանց ամուսիններ էին: Նա չէր վարանելու այնպիսի աղջկունք զանկում, որոնք իմաստ և գիտութիւն ունենալով, դարձուցել էին իւրեանց ամուսիններին դէպի զգաստութիւն: «Ո՞վ գիտէ, սիրելի, ասաց նա վերջապէս, ի՞նչ յաջողակութիւն կ'ունենայ Օլիվիան: Նա

չառ բան կարող է ասել զանազան առարկաների վերայ և որքան ինձ յայսնի է, բաւական հզօր է և վիճարանութեան մէջ:»

— Եւ, սիրելի, պատասխանեցի ես, ի՞նչ է կարգել նա վիճման մասին. իմ միտս չի գալիս բնաւ որ՝ նորա ձեռք տուած լինիմ այս տեսակ գրքեր. անշուշտ դու աւելացնում ես նորա արժանաւորութիւնները:

«Ա՛յ, ո՛չ, հայրիկ, ասաց Օլիվիան, մայրս չի սխալում. ես կարդացել եմ Թովակէնսի և Սկուէրի վիճումը, Ռօբինզօն Արուզօէի և վայրագ Ռւբբաթի պայքարը և այժմ իսկ կարդում եմ մի ճառ սիրոյ կրօնի մասին:»

— Եւրաշալի՛, ասացի ես, տեսնում եմ, որդեակ, որ դու դարձի բերելու ամեն ձիրքը ունիս. ուրեմն դնա՛ք մօրը օգնիր հաղարջեց կտաս պ շինելում:

## ԳԼՈՒԽ 8.

Սերժ որ բազմի յաջողութիւն փոքր է խոստանում և որ երբեմն դէպ  
բարին է գառնում,

Հետեւեալ օրը կրկին մեզ այցելութիւն արեց Ռուբէնը.  
Թէ և մի քանի յայտնի պատճառներով սորա ղեզերանքը ինձ  
հաճելի չէին, բայց չէի կարող զլանալ իմ ընկերութիւնը, որ  
նա վարձատրումէր բարի սպասաւորութիւնով: Նա մի չքնադ  
եռանդով աշխատումէր դաշտում կամ երկանում, և միշտ առա-  
ջինն էր գործի մէջ. նմանապէս մեր աշխատութիւնը թեթեւաց-  
նելու համար պատմումէր զանազան զուարթարար բաներ, փո-  
փոխարար երեւելով մեզ երբեմն անհետեւ, երբեմն խելացի,  
այնպէս որ՝ ես չէի կարում նորան սիրելուց ազատ մնալ, կամ  
կատակել նորան և դժկամակել նորանից: Իմ միակ ընդդիմու-  
թեան պատճառը նորա սերն էր դէպի իմ դուստրը: Նա իբր  
թէ զուարճախօսելով կոչումէր աղջկաս իւր փոքրիկ իշխանուհի  
և եթէ մի զարդ էր առնում նորա կամ քրոջ համար, Մոսիա-  
ինը միշտ առաւել ղեղեցիկ էր լինում: Չեմ իմանում ինչպէս,  
բայց երեւումէր որ՝ օրէ օր նա ինձ աւելի սիրելի էր դառնում.  
Նորա միաքր ճոխանումէր և նորա պարզութիւնը ստանումէր  
պերճութեան և իմաստութեան կերպարանք:

Ռոբըր ընտանեօք մենք ճաշակեցինք մարգագետնի վերայ,  
ուր սիւռել էինք սեղանի ծածկոյթը և շրջապատել էինք, նստո-  
տած կամ լաւ ևս ասել՝ ընկղմանած չորարեկ ուտելիքի բոլոր-  
աիքը: Այստեղ Ռուբէնը իւր ուրախութեամբ զրդուումէր և  
մեր զուարճութիւնը: Խրախճանութիւնը կատարեալգործելու  
համար, երկու կեռնեխ (թռչուն) միմեանց դէմ երգում էին

երկու մացառից և ընդերացրած կարմրալանջը գալիս էր իւր կտուցով ժողովելու մեր սեղանի վշշանքը: Սորանց երգերի իւրաքանչիւր հնչիւնը կարծես թէ արձագանք էր երջանկութեան և խաղաղութեան:

«Այսպէս հանգստանալու ժամանակը, ասաց Սովիան, երբէք չէ պատահում որ՝ ես չըմտածեմ այն երկու սիրահարների վերայ, որոնց սքանչելապէս նկարագրել է Աէյը և որոնք մահակործան են եղել միմեանց հետ գրկած ժամանակը: Այնքան խանդաղական է այդ նկարագրութիւնը, որ հարիւր անգամ ես կարգացել եմ և ամեն անգամ նոր զարմացմամբ»:

— Իմ կարծեօք, պատասխանեց որդիս, այդ վիպասանութեան ամենագեղեցիկ հատուածը շատ ստոր են Օվիգիոսի Ալկիս և Գալաթիէից: Ատախնացի բանաստեղծը առաւել լաւ է հասկանում առարկաների դիմագրութիւնը և այս ձևի ճարտար գործածութենէն է կախ սրտաշարժութեան բոլոր զօրութիւնը:

«Յիշատակելու արժանի է, ասաց Բուրչէյը, որ այս երկու բանաստեղծքը, որոնց վերայ դուք խօսումէք, հաւասարապէս ձեռնտու են եղել մի պատիր ճաշակ ձգելու իւրեանց զանազան երկիրների գրականութեան մէջ, բեռնաւորելով իւրեանց քերթուածները դատարկ վերագիրներիով: Միջակ հանձարի տէր մարդիկ հեշտ են համարել նմանապէս այդ անպտուղ առատութեան գործածութիւնը և անգլիական բանաստեղծութիւնը, որպէս և վերջին դարերու հռոմէականը, ո՛չ այլ ինչ են, եթէ ոչ պերճ նկարագիրների զիզուած, մի շար անխորհուրդ և անկասկ վերագիրների, որոնք գգուումն ականջները, ամենեւին իմաստ չըտալով մտքին: Բայց դուցէ՛ դուք մտածէք, տիկնայք, թէ որովհետեւ ես ինձ թոյլ եմ տալիս քննադատել ուրիշներին, իրաւացի կրլինէր որ՝ նորանց մի փոխարինութիւն տայի, և եթէ ձշմարիտը ասելու լինիմ, այս յիշատակութիւնը արեցի ես միայն իբրև նախապատրաստութիւն դէպի մի բանաստեղծութիւն, որ թէ և շատ պակասութիւններ ունի, բայց գոնէ չունի, ինչպէս ես կարծումեմ, այն պակասութիւնները, որ ես նկատեցի:

«Ա՛յ դէպի իմ ձայնը, ձորերի քաջ անապատական, ուղղիւր իմ մենակեաց քայլերը դէպի լոյսը, որ այն տեղ զուարթացնում է լեւանց խոռոչքը հիւրընկալ ճառագայթով:

«Այս թախսուում եմ այս տեղ մենակ, մոլորված, ոտներս գողգոջուն և դանդաղ, չորս կողմն անբնակ ամայի, որ տարածվում է, որքան յառաջ եմ գնում:

Կացիւր, որդի, գոչեց անապատականը, մի դէմ գնա այդ վտանգաւոր աղջամղջին. նենգաւոր նշոյլը, որ փայլում է հեռուից, հրապուրիչ է, նա կրկորցնէ քեզ:

«Անպատասպարան չքաւորի համար իմ դուռը միշտ բաց է և եթէ չորարեկ է իմ օրուայ հացը, գո՛նէ մտադիւրութեամբ եմ նուիրում:

«Մնացիւր այս երեկոյ և ստացիւր քո մասը այն բարութիւնից, որ պարունակում է իւր մէջ իմ խուցը, իմ պրտեայ ծածկոյթը, իմ անշուք ընթրիքը, իմ օրհնութիւնը և հանգիստը:

«Այս չեմ գոհում իմ ոչխարներին, որոնք ազատօրէն թափառում են հովիտների վերայ: Ամենակարողը, որ խղճում է ինձ, դիտեմ որ՝ խղճալու է և նորանց:

«Սարի պտղաբեր ծոցից ես ստանում եմ իմ անպաճոյճ ձառք, իմ խրճիթը լե է կանաչեղէնով և միրգերով. իմ ըմպիլքը աղբիւրի ջուրն է:

«Ա՛յ ուրեմն, պանդուխտ, քո տաղտկութիւնը փարատելու: Այս կեանքի բոլոր հոգսը չարժէ որ նորանով չարչարվին. մարդս շատ փոքր բանի կարօտութիւն ունի այս աշխարհում և մի կարճ ժամանակի համար:

«Այս քաղցր ձայնը ցած էր գալիս, ինչպէս ցօղ կրկնից: Պարկեշտ օտարականը յօժարեցաւ և գնաց նորա խուցը:

«Փոքր ինչ հեռի, մի մութ և անբնակ տեղում ծածկված էր մենակեացի բնակարանը, մտակայ խեղճերի և մոլորված ճանապարհորդների պատասպարանը:

«Այս աղքատիկ հիւղի մէջ չեկայ որ և է պերճութիւն, որ պահանջէ տիրոջ հսկողութիւնը. գոնափակը տեղի է ապիս,

դուռը բացվում է և ընդունում է պարզամիտ զոյզը (ջս-խ) :

«Այն ժամին, երբ բազմահոգ ամբոխը հրաժարվում է և ընկոյցեան հանդիստ ճաշակիլու, մենակեացը արծարծում է (վառում է) իւր կրակը, որ մոխրի տակ էր ծածկած և ջանք է աւնում ուրախացնել մտախոհ հիւրին :

«Աստիւծում է հիւրի առաջը զիւղական կոշուկը, խրնդրում է ժպտալով, կախարդում է նորա կրկար ժամերի ընթացքը հանձարեղ և հրաշալի պատմութիւններով :

«Համակրական ուրախութեամբ ոգևորված, փոքրիկ կատուն վաղվզում է և խաղում . ծղրիղը երգում է կրակարանում, խուրճը շառաչում է և փայլատակում :

«Բայց չըկայ և ոչ մի հմայեակ (Խեհ), որ կարենար հալածել օտարականի արամութիւնը . վեշտը ծանրանում է նորա հոգու վերայ և նորա արտասուքը սկսում են թափվել :

«Մենակեացը տեսնում է այդ, և եղբայրական հոգսը յուզում է նորան : «Ինչից է, ասում է նա, խեղճ ջահիլ, քու սրտի նեղութիւնը :

«Արջանիկ բնակութիւնից պքսորած՝ դու թափառում ես արդեօք ակամայ . ողբում ես արդեօք այն բարեկամութիւնը, որ ուրացել են, կամ քո սէրը, որ մերժել են :

«Աւաղ, ուրախութիւնը, որ ստացվում է հարստութիւնից ունայն է և կորստական և ողբ յարվում են այսպիսի սնտախ բաւութիւններին, առաւել սնտախ են, քան բարութիւնը :

«Ի՞նչ է բարեկամութիւնը . մի անուն, մի հրապոյր, որ ուղքում է և քնացնում . մի ստուեր, որ փառքի և հարստութեան քամակից է գնում, թողնելով դժբաղդներին լաց ու արտասուքի մէջ :

«Մէրը մի խօսք է առաւել ևս թափուր, մեր այժմու գեղեցկութիւնների խաղալէքը, անտեսանելի այս երկրի վերայ . նա երբեմն իջանում է միայն տատարակի բունը տաքցնելու համար :

«Հաւատան ինձ, անմիտ պատանի, կարճեցրո՛ւր քո հեծութիւնքը, արհամարհիր այդ յոգողող սևօր : Մինչ մենակեացը խօսում էր այսպէս, մի յանկարծադէպ կարմրութիւն արդէն մատնում էր խռոված հիւրին :

«Օ, արմացած մենակեացը տեսաւ որ՝ նոր նոր գեղեց-

կութիւններ մի առ մի յայտնվում էին նորա գէմքի վերայ, ինչպէս առաւօտեան գոյներ կրկնքի վերայ, նոյնպէս փայլուն և նոյնպէս վաղանցուկ:

«Այս տարտամ հայեացքը, նորա ստինքի ելևէջքը, փոփոխաբար շփոթումէն մենակեացին, նա տեսնումէ հաստատապէս որ՝ գեղեցիկ օտարականը մի մատաղ աղջիկ է հազար հըրապուրանքով լին:

«Այն աղաղակեց աղջիկը, ներքի՛ր օտարականիս, անօգնական խղճուկիս, որ իւր ներկայութիւնով պղծել է այն անղբ ուր բնակում են երկինքը և դու:

«Խղճիր մի աղջկայ, որին սէրը հարկադրում է թափանակ, որ ամեն տեղ որոնում է հանգիստ և որին ուղեկից է միայն յուսահատութիւնը:

«Իմ հայրը բնակումէր Թէյնի ափի վերայ, նա մի հարուստ և հզօր երկրատէր էր և նորա բոլոր բարութիւնքը ինձ էին մնալու, որովհետև նորա միակ ժառանգն էի:

«Նորա գորովից ինձ յափշտակելու համար, վաղեցին և կան բազմութիւ ցանկացողներ, ամենքը միմեանց նախանձու գովում էին իմ կախարդիչ գեղեցկութիւնը և զգում էին կամ կեղծում էին զգալ սիրոյ անշէջ բորբոք:

«Նորազար այդ վարձկան ամբոխը կովումէր հարստութեան և բնծաների համար. Երբեք սորանց մէջ էր և միայն սա էր խօսում իւր սիրոյ մասին:

«Անպաճոյճ և պարկեշտ շորեր հագած, նա ոչ կարողութիւն ունէր, ոչ հարստութիւն. նորա գանձը իմաստութիւնն էր և առաքինութիւնը և սորանք էին իմ բոլոր երջանկութիւնը:

«Իմ մօտ կեցած հովտի վերայ, նա միմնջումէր սիրոյ երգեր. նորա շունչը անոյշ հոտ էր տալիս սիւքին և գեղգեղանք անտառներին:

«Առաւօտեան լացված վարդը, կամ երկինքի մաքուր ցօղը կ'ոտխէին նորա հոգու մաքրութեան հետ:

«Քայց ցօղը կամ ճիւղի վերայ վարդը գեղեցկութիւն ունեն անցաւոր. Լքվինը սորանց հրապոյրը ունէր, իսկ ես, զբժրադգաբար, սորանց անհաստատութիւնը:

«Յողդողդ և նագկի, սրտիս շըռուածքի բոլոր ճարտա-

բութիւնը սպառեցի. որքան աւելի նորա սէրը շարժումէր իմ սիրտը, այնքան աւելի պարծումէի եւ նորա նեղութիւնով:

«Խիստ ծանրացած իմ քամահանքով, նա ինձ թողեց իմ ամբարտաւանութեանը և զնայ մեռաւ միայնակութեան մէջ ծածկարար:

«Ինձ ցաւք և հեծութիւնք, ինձ յանցանք և չարութիւնք որոնց կեանքս չի կարելու ապաշխարել: Աս զնումեմ որոնելով նորա թաքուստը, այն տեղ կրտարածվիմ, ուր նա հանդէլ է:

«Այն տեղ մենակ և թաքուցված, իմ յուսահատութեան մէջ, կրննջեմ մեռնելով: Ինչ որ Աշգվինը իմ համար արեց, եւ կաննմ նորա համար:

«Արկիւնքը մեզ պահպանեց սորանից, աղաղակեց մենակեացը, սեղմելով աղջկան իւր սրտին: Սիրունը զարհուրած դարձաւ և կանչեց՝ սա ինքը Աշգվինն է, որ ինձ դրկած պահում է:

«Հրեշտակուհի, իմ քաղցրիկ, դու իմ հոգու զեղեցիկութիւն, նայիր, տես քո երկարակորոյս Աշգվինին, որ այսօր նորէն ծնանում է սիրոյ համար և քեզ համար:

«Այ, թող տուր ինձ պահել քեզ այսպէս սրտիս վերայ, բոլոր հոգսը նորա մէջից հալածելու համար. յաւիտեան, յաւիտեան այլ ևս մին մինից չենք բաժանվելու. դու՝ իմ կեանք, իմ բոլոր երջանկութիւն:

«Այո, այս ժամից սկսած՝ մենք կ'ապրինք միմեանց սիրելու համար, այնպիսի ճշմարիտ սիրով որ՝ վերջին հառաչը, որ կործանելու է քո անկեղծ սիրտը, կրկործանէ նոյնպէս և քո Աշգվինի սիրտը»:

Մինչ Ատիիա դուստրս հաւանութեան քնքուշ դէմքով լսումէր այդ բանաստեղծութիւնը, յանկարծ մեր խաղաղութիւնը վրդովվեցաւ մեզ մօտ արձակած հրացանի թնդիւնից և նոյն ժամայն մի մարդ մացառը շտապով ձեզքելով եկաւ իւր որսը վերցնելու: Արտորդը ոչ այլ ոք էր, եթէ ոչ երկրատիրոջ քահանան, որ արդէն իսկ հրացանը (Բւճառ) արձակելով սպանել էր կեռնկններէց մինին, որի երզը մեզ այնպիսի քաղցրութեամբ զուարճացնումէր:

Մի այդպիսի սաստիկ և յանկարծ աղմուկը զարհուրեցրուց աղջկերանցս և եւ նկատեցի որ՝ Ատիիան Բուրչեկի գիրկն

էր ընկել նորա մօտ պատասպարան դռնելու համար: Քահանան առաջ եկաւ, ներողութիւն խնդրելու, որ մեզ շփոթել էր և հաստատելով թէ՛ չըզխտէր մեր այնքան մօտ լինելը: «Ես նրա տաւ Սոփիայի մօտ և նորան առաջադրեց իւր առաւօտեան որսը. դուստրս կամուձէր մերժել, բայց իւր մօր հայեացքից ազդեցութիւն ստանալով այդ սխալանքի մասին, ընդունեց ընծան փոքր ինչ դժկամակութեամբ: Աինս իւր սովորութեամբ, վտիպեց իւր հպարտութիւնից, փչելով ականջուձն թէ՛ Սոփիան արդէն զրաւել է քահանային, որպէս և նորա քոյրը երկրատիրոջը: Աս աւելի հաւանականութեամբ կարծուձէի թէ՛ ջահիլ աղջկայ սէրը դրաւժած էր մի այլ կողմից:

Քահանան մեզ տեղեկութիւն տուեց թէ՛ Պ. Թօռնհիլը երաժիշտներ և զովացուցիչ ըմպելիք պատրաստած՝ կամուձէ այս իսկ երեկոյին լուսինը փայլելուս մի խնջոյք տալ ջահիլ աղջկերանցը մեր տան առաջև կանաչ տափի վերայ:

«Չեմ կարող ուրանալ, շարունակեց նա, թէ ամենից առաջ այս լուրը ձեզ հասուցանելով, մի առանձին շահախնդրութիւն չունէի, որովհետև իբր իմ աշխատանաց վարձատրութիւն ևս խնդրուձեմ օրիորդ Սոփիային առաջին պարը իմ հետ խաղալ»:

Սոփիան պատասխանեց թէ՛ յօժարակամ կրնդունէր այդ, եթէ սորանով ընդդէմ խղճմտանաց չըդործէր. բայց ահա, պարոն, աւելացրուց նա, նայելով Բուրչելին, սա է եղիլ իմ ընկերը բոլոր օրուայ աշխատանացս մէջ, ուրիմն և իրաւացի է որ՝ առաջինը իմ զըօսանացս հաղորդ լինելումը նմանապէս սա լինի:

Բուրչելը շնորհակալ եղաւ Սոփիայի գեղեցիկ ուշադրութենէն և իւր իրաւունքը շնորհեց քահանային, ասելով թէ՛ ինքը այն երեկոյին գնալու է հինգ մղոն հեռի հնձուորների ընթրիքին մասնակից լինելու: Ինձ օտար երևեց նորա հրաժարումը և ևս դժուար էի հասկանում թէ՛ մի այնպիսի խելօք անձն, որպիսի իմ ջահիլ դուստրն էր, կարէր առաւել նախաձեռնութիւն տալ աղքատացած մարդուն, քան մի ցանկացողն, որ գեռ ևս մեծամեծ յոյսեր ունէր:

Բայց ինչպէս տղամարդիկ առաւել լաւ գնահատող են կա-

նանց արժանաւորութեանց, նոյնպէս և կանայք առաւել ողջա-  
 միտ դատողութիւն ունին տղամարդկերանց մասին: Արարծես թէ  
 երկու սեռը փոխադարձօրէն զննումն միմեանց և ստացել են  
 այլ և այլ ընդունակութիւններ՝ հրաշալի կերպիւ պատշաճե-  
 ցուցած այդ երկակողմանի տեղեկութեանը:

## ԳԼՈՒԽ 9.

Երկու երեւելի տիկիներ՝ — Լաւ գգեստը կարծիք է տալիս լաւ դաստիարակութեան:

Ըսյն ինչ Պ. Բուրչելը մեզնից հրաժարվել էր և Սոփիան հաւանութիւն էր շնորհել քահանայի հետ պար գալու, փոքր երեխայքը վազէ վազ եկան մեզ ասելու թէ՛ երկրատէրը եկել է բազմաթիւ ընկերներով: Յիրաւի մենք նորան գտանք տանը, յուղարկաւորված երկու գծուծ ազնուականներով և երկու շքեղազարդ ջահիլ տիկիներով, որոնց մեզ ներկայացրուց, իբրև պատուաւոր կանանց և իբր թէ՛ սոքա մայրաքաղաքի մէջ ևս մեծ համարումն ունէին:

Մենք այդքան բազմութեան համար չունէինք բաւական աթոռներ և Պ. Թօռնհիլը իսկոյն առաջարկեց որ՝ ամեն ազնուականները իւրեանց ծունկերի վերայ առնեն մի մի տիկին. այս բանին ևս յայտնապէս ընդդիմացայ, թէ և կնոջս հայեացքը դէպի ինձ տհաճութիւն էին ցոյց տալիս: Սովսէս որդիս աճապարեց դէպի դրացիքը մի զոյգ աթոռ փոխ առնելու և որովհետև պար եկող կանանց պակասութիւն կար, երկու ազնուականքը նմանապէս նորա հետ գնացին իւրեանց համար ընկեր որոնելու: Արպէս աթոռները, նոյնպէս և պար եկող կանայքը շուտով գտնուցին: Իմ դրացի Ֆլիմբորօֆի դատերքը փառաւորապէս մտան մեզ մօտ, զարդարված ժապաւէնի ծոպերով այնպէս կարմրագոյն, ինչպէս նորանց թուշերը:

Բայց մենք չէինք նախատեսած մի ձախող հանգամանք. Ֆլիմբորօֆի օրիորդքը թէ և համարվում էին մեր վիճակում ընտիր պար եկողներ և գիւղական պարերը շատ լաւ էին իմա-

նում, այնու ամենայնիւ մեր թեթե կաբար ամենեւին չէին հասկանում: Այս բանը սկզբում դժկամակիւն էր, բայց փոքր ինչ քաշքշվիւոց և ճնշվիւոց յետոյ, պատշաճաւորվեցին միմեանց ուրախութեամբ: Արաժշտութիւնը բաղկանումէր երկու չորեքաղեան քնարից, մի սրնգից և մի թմբուկից: Առաինը փայլումէր իւր բոլոր պայծառութիւնով: Պ. Թօռնհիլը և իմ անդրանիկ դուստրը խնջոյքը սկսեցին, զարմանք գրգռելով բոլոր հանդիսատեսների մէջ, որոնք այդ խրախմանութիւնը իմացած՝ բազմութեամբ ժողովել էին և շարվել մեր կարգում: Օլիվիաի շարժմունքը կաբարի մէջ գեղեցիկ էին և կայտառ, կինս չըկարելով իւր պարծանաց զգացումը պահպանել, ինձ հաւատացնումէր թէ՛ մեր կայտառ փոքրիկը լաւ կերպարանք ունէր այն պատճառով որ՝ բոլոր պար գալու քայլերը օրինակել էր նորա քայլերից:

Մայրաքաղաքի տիկիւնները սնտախ ջանք էին անում հաւասարվել նորա հետ, պչրական դէմք ընդունելով և փոփոխաբար իւրեանց գնացքը կազմելով՝ երբեմն թալիացած, երբեմն ապստամբ, բայց և այսպէս ամենեւին չընմանեցին Օլիվիային, թէ և հայեցողները համաձայն էին թէ՛ շատ գեղեցիկ էր նորանց պարը, բայց մեր զբայի Ալեմբորօթը նկատումէր թէ՛ օրիորդ Ալիվի (Օլիվիայի) ոտները պարի մէջ այնպէս համահաւասար էին երաժշտութեանը, իբրև թէ՛ նորա արձագանքն էին:

Խնջոյքը տեւեց մինչև գիշերուայ մի ժամը և այս միջոցին երկու տիկիւնները, որոնք վախում էին որ՝ հարբուխ չըստանան, առաջարկեցին մնալ այս տեղ: Սորանցից մինը այս պատճառով յայտնեց, բաւական անպատշաճ խօսքերով թէ՛ իսկապէս հպովել է իւր հիւթի մէջ: Արբ որ մտանք տուն, մի վայելուչ ընթրիք էր պատրաստած, սառն կերակուրներից, որ Թօռնհիլն էր բերել տուել: Խօսակցութիւնը աւելի զգաստ եղաւ, քան առաջ:

Արուն տիկիւնները պարծանօք ցոյց տուեցին իւրեանց գերազանցութիւնը սղջկերանցս առաջև, նորանք խօսում էին միայն շքեղ ժողովների, վսեմ ընկերութիւնների, նկարների, լաւ ճանաչողութեան ճաշակի, Շակապիլի, նուազածութեան և այլ այնպիսի բաների վերայ, որոնք նոյն ժամանակի սովորութեանց

մէջ էին: Յիրաւի մեզ կսկծելի էր որ՝ նորանք մի կամ երկու անգամ անտեղի հայհոյանք արտաբերեցին, բայց այս իմ աչքում մի առաւել հաւաստի նշան էր նոցա արեւութեանը (ես սորանից յետոյ միայն իմացայ որ՝ հայհոյութիւնը վայելուչ ընկերութեանց սովորութիւններից բոլորովին պարտւած էր): Իսկ այս և այսպէս՝ նորանց շքեղ զգեստները մի տեսակ քօղ էին խօսքերի տմարդութեանը: Ազգիկերքս կարծես թէ նախանձում էին այդ հազուադիւս կատարելութեանցը, և ինչ որ մեզ օտար էր երեւում, նորանք սեփականում էին խորին պատշաճաձեւութեանց, իսկ նորանց ներողականութիւնը գերազանցումէր այլ ամենայն արժանաւորութիւններից: Տիկիներուց մինը նկատեց թէ՛ օրիորդ Օլիվիան, եթէ մի փոքր ժամանակ լաւ ընկերութեան մէջ դանդաղէր, մեծ արժանաւորութիւն կարէր ստանալ. միւսը աւելացրուց թէ քաղաքում անցուցած մի ձմեռը օրիորդ Մոլիախն ուրիշ անձն կրկազմէր: Աինս սաստիկ եռանդով հաւանեց այդ բանը և հաւատացրուց նորանց թէ՛ ամեն բանից աւելի կրցանկար որ՝ իւր արջկուկները մի ձմեռ մայրաքաղաքի ընկերութեանց մէջ անցուցանէին: Կնձ անհնար էր չըպատասխանել թէ՛ արջկերանցս կրթութիւնը արդէն դեր է վերց էր իւրանց դրութիւնից և թէ՛ դաստիարակութեան առաւել նրբութիւնը կարէր միայն ծաղրելի շինել նորանց խղճութիւնը և հաղորդել նորանց անհասանելի հաճոյքների ճաշակ:

«Ինչ հաճոյք են, ազազակեց թօռնհիլը, որ արդելված պիտէր լինէին նորանց համար, որոնք կարեն նոյնպէս այլոց կրջանկութեան պատճառ լինել: Ար ինչ ինձ է վերաբերում, շարունակեց նա, ես բաւական հարուստ եմ. իմ խորհրդաւոր խօսքս է՝ սէր, ազատութիւն և հաճոյք. բայց եթէ իմ ստացուածքի մի մասը կարէր հաճելի լինել շքնաղ Օլիվիային, թող պատուհասվէի ես, եթէ չստաջարկէի այդ նորան: Միակ շնորհք, որ փոխարէն խնդրելու էի նորանից, կը լինէր այն որ՝ ինձ ևս ընդունէր ստացուածքիս հետ»:

Աս այնքան անտեղեակ չէի աշխարհի գործերին, որ չիմանայի թէ՛ այդ շարվազի փաղաքշանքի տակ ծածկված էր մի անթափ առաջարկութեան յանդգնութիւն. բայց ես ջանք արեցի զսպել իմ բարկութիւնը: «Պարոն, ստացի ես այդ ըն-

տանկըրը, որոնք դու արժանացնումես քո այցելութեանցը, սրն վաճ են նոյնպէս պատուի զգացողութեանց մէջ, որպէս և դու ինքդ. այդ պատիւը յափշտակելու որ և է փորձը կարէ վտանգաւոր հետեանք ունենալ: «Պատիւը, պարոն, այսօր մեր միակ հարստութիւնն է և մենք չափազանց հսկողութիւն ունինք մեր այդ ճնաշխարհիկ գանձի վերայ»:

Մինչդեռ զգումէի ես իմ դժգոհութիւնը այնքան եռանդով խօսելուս մասին, պատանին սեղմեց իմ ձեռքը, երգուելով թէ՛ գովելի է իմ եռանդը և մերժելով իմ կասկածը: «Որ ինչ վերաբերումէ ձեր այժմու կասկածանաց, ասաց նա, ես երգուումեմ որ՝ մի այդպիսի միտքը ամեն բանից առաւել հեռի է իմ սրտից: Չէ, պարոն, ամեն հրապուրիչ բաներից, միայն առաքինութիւնը, որին կանոնաւորութեամբ պիտէր պաշարել, իմ ճաշակի բան չէ. իմ ամեն տրփանքը եղել են արկարծական ձեռնարկութիւնք»:

Երկու տիկիները, որոնք մինչև այժմ ցոյց էին տալիս, իբր թէ ոչինչ չէին հասկանում, սաստիկ վշտացած դէմք երևեցրին այդ վերջին անառակութենէն և սկսեցին բարոյական բանակցութիւն անել առաքինութեան մասին. կինս, քահանան և ես ձայնակից եղանք նորանց և երկրատէրը ինքը վերջապէս խօստովանեց իւր զղջումը խօսած անառակութիւններէն: Այնուհետև խօսք բաց արեցինք հաճոյքների չափաւորութեան վերայ և այն մարդկանց հոգեւոր խաղաղութեան վերայ, որոնք մոլութիւններով աղտոտված չեն: Պահուանակութիւնը ինձ այնպէս տիրել էր, որ թոյլ տուեցի երեխերքին մի ժամ ուշ քնելու զնալ, որպէս զի լիօրէն լռէին այդ կենսաբեր խօսակցութիւնը. բայց Պ. Թօնհիլը աւելի ևս դործեց, հարցանելով ինձ թէ՛ ընդդիմանալու չէ՞ր արդեօք, եթէ սկսէին աղօթք անել: Աւրախութեամբ ընդունեցի ես, և այդ երեկոն անցաւ բոլորովին պաաշաճաւոր կերպիւ, մինչև որ հանդիսականքը պատրաստվեցան զնալու:

Երեւումէր որ՝ տիկիները ակամայ էին բաժանվում իմ աղջկերանցից, որոնց մասին նորա մի առանձին սէր էին յղացել. անձկանօք խնդրեցին ինձ թոյլ տալ նորանց ուղեկից լինել մինչև ապարանքը: Պ. Թօնհիլը պնդումէր նոյն առաջարկու-

Թիւնք. կինս աւելացրուց իւր Թախանձանքը և դատերքս նայուս  
 էին ինձ այնպէս, որպէս Թէ զնալու ցանկութիւնից մեռանում  
 էին: Այդպիսի վարանմանց մէջ ես առաջ բերեցի մի քանի պատ-  
 ճառներ նորանց Թոյլ չքտալու համար, բայց աղջկունքս իսկոյն  
 ջրեցին այդ պատճառները, այնպէս որ՝ ես պարտաւորվեցի մի  
 որոշ կերպիւ մերժել յիշեալ առաջարկութիւնք: Այս իրողու-  
 Թիւնք պատճառ եղաւ որ՝ հետեւեալ օրը նկատումէի աղջկերան-  
 ցրս ծածկամիտ զէմքերը և չոր պատասխանները:

## ԳԼՈՒԽ 10.

Ընտանիքը փորձում են մրցել երանցից գերազանցների հետ. խեղճի թշուառութիւնը ուզում իւր դրութենէն բարձր երևել:

Այս միջոցում ես սկսեցի նկատել որ՝ իմ երկար և բազմ աշխատ քարոզութիւնները չափաւորութեան, պարզութեան և հոգու գոհունակութեան մասին, բնաւ չէին գրաւում իմ ընտանեաց ուշադրութիւնը: Այն պատիւը, որ մեզնից շատ հարուստները պատշաճ էին համարել մեզ ցոյց տալու, յարուցել էր նորանց մէջ մի ամբարտաւանութիւն, որը եւ թմրացրել էի, բայց բողբոջին չէի ջնջել: Պատուհանների վերայ առաջվայ պէս շարվեցին ջրով լեքը շեշերը պարանոցի և երեսի համար. դրսումը արեգակիցն էին վախում, որ իբր նորանց կաշիի թշնամին էր, ներսումը կրակիցն զարհուրում, իբր թէ՛ սպականումէր նորանց երեսի գոյնը: Աինս ինձ առաջարկեց նկատելու թէ՛ առաւօտը շատ վաղ վեր կենալը ձանձրացնումէ մեր աղջկերանց աչքերը և թէ ճաշից յետ աշխատելը կարմրեցնումէ նորանց քիթերը. նա հաստատումէր թէ՛ նորանց ձեռքերը երբէք այնպէս սպիտակ չեն լինում, որպէս մինչ նոքա ոչինչ չեն գործում: Փոխանակ խեղճ Պէտրոզի շապիկները վերջացնելուն, հարց ու խնդիր էր միայն կամ հին շղաշատեւր նորոգելու կամ փանդիւր յարդարելու: Այլնբօրօքի գատերքը, որոնք առաջ նոցա խնդակից ընկերներն էին, կրքաղ էին թողած, իբրև գծուծ ծանօթներ և խօսակցութիւնը արդէն պտուտումէր շքեղ ժողովի անձանց, նկարների, ճանաչողութեան ճաշակի, Շակապիրի և նուազածութեանց վերայ:

Բոլոր այդ բաները դեռ ևս կարելի էր տանել, եթէ մի թափառական կին, զանազան անցքերի պատմիչ, չէր եկել մեր յոյսը սքանչելի շողջողանքով բորբոքելու: Հագիւ արևակէզ Աբելյան երևել էր, աղջկերքս վաղեցին գէպի ինձ մի շէնքի:

խնդրելու, որով պիտէր նորանց ձեռների մէջ խաչաձև նշաններ անէր: Ճշմարիտ ասեմ՝ ես արդէն տաղտկացած էի միշտ զգաստ լինելուց և չըկարողացայ ինձ պահպանել նորանց խնդրուածքը կատարելուց և այս միայն այնու համար որ՝ նորանց երջանկու- կութիւնը տեսնելու շնորհը ունենամ: Ամենին մի մի շելլինդ տուի, թէ և հարկ է նկատել ի պատիւ մեր ընտանեաց որ՝ նո- բանք անփող չէին, որովհետև կինս առատաստութեամբ թող- էր տուել նորանց մի զինէ ունենալ իւրեանց գրպանում, բայց այնպիսի յատուկ պայմանով որ՝ բնաւ չըփոխեն մանր փողի:

Արկար միջոց մնացին նոքա փակված թափառական կնոջ հետ և երբ որ դուրս եկան, նորանց աչքերի մէջ կարգացի որ սա- բեր և հրաշքներ էր խոստացել նորանց: «Ն՞չպէս է ձեր վիճակը, ասացի ես. կախարդուհին մի բան տուեց քեզ, Ալվի, որ քո փողի արժէքը ունենար:»

— Նաւատացնում եմ ձեզ, հայրիկ, ասաց Օլիվիան, որ իմ կարծեօք նա դիւթերի ընկեր պիտի լինի, որովհետև հաս- տատութեամբ ինձ յայտնեց թէ՛ տարի չանցած, մի երկրատէր կ'ամուսնանայ ինձ հետ:

«Իսկ դու, Մոխիա, որպիսի ամուսին ես ունենալու:»

— Ա՞ն, հայրիկ. ես ամուսնանալու եմ մի նախարարի հետ, քրոջս ամուսնութիւնից փոքր ինչ յետոյ:

«Այսքան էր միայն, գոչեցի ես, ձեր ստացածը երկու շելլինգի փոխարէն: Մի նախարար և մի երկրատէր, — վերջա- ցաւ գնաց: Յիմարնե՛ր, ես ձեզ կըխոստանայի մի իշխան, մի նարբար այդ դումարի կէսի փոխարէն:»

Բայց աղջկերանցս այս տեսակ աւելորդ քննասիրութիւնը շատ խնայելի արդիւնք ունեցաւ, որովհետև մենք սկսեցինք կարծել թէ մեր աստղը նշանակիլ էր մեզ մի շքեղ վիճակի համար և մեր փառաւոր ապագայքը արդէն մեր միտքը յափրշ- տակուումէր:

Շատ անգամ ասված է և մի անգամ ևս ասում եմ թէ՛ այն ժամերը, որ մենք անցուցանում ենք ուրախութեամբ ըս- պասելու մէջ, առաւել հաճիլի են, քան թէ՛ երբ մեր յոյսերը պակիլի են կատարեալ յաջողութեամբ: Առաջինի մէջ մենք այն ձաշակն ենք տալիս կերակուրին, որն որ պահանջում է

մեր ախորժանքը, իսկ երկրորդի մէջ, լաւը կամ վատը բնութիւնն է պատրաստում մեզ համար: Անհարկ է նկարագրել այն սքանչելի մտախոհութիւնների հետեանքը, որոնց մէջ մենք անցուցանում էինք մեր ժամանակը. Մենք կարծում էինք թէ՛ մեր ճոխութիւնը և հարստութիւնը նորոգվելու վերայ է. վեճակի բոլոր ժողովուրդը հաստատում էր թէ՛ երկրատէրը սիրահարված է իմ աղջկան, այս պատճառով և աղջիկս ինքը վերջապէս սիրեց նորան, որովհետև հաւատացնում էին նորան թէ՛ աստիկ սէր էր վառված նորա սրտի մէջ:

Այս միջոցում կինս ամեն օր երջանիկ երազներ էր տեսնում և ամեն առաւօտ պատմում էր մեզ մեծ հանդիսաւորութեամբ և ճշգրտութեամբ: Մի գիշեր նա տեսել էր երազում գազազ լի խաչաձև ոսկորներիով, որ անշուշանշան էր մի մտակայ ամուսնութեան: Միւս անգամ նա տեսել էր իւր դստեր զբոսանները լցված մանր փողերով, որ գուշակում էր թէ՛ շուտով լցվելու էին ոսկիներով:

Աղջկունքս նմանապէս գուշակութիւններ էին անում. երբեմն քնած ժամանակը զգում էին իւրեանց շրթունքի վերայ մի անսովոր համբոյրի խողտանք. երբեմն մատանի էին տեսնում ճրարագի մէջ, քսակներ, որ կրակի մէջ շառաչում էին, սիրոյ ծովակներ, որ ծածկված էին թէ՛ յի բաժակի տակում:

Շաբաթի վերջում մենք մի տոմսակ ստացանք քաղաքի տիկիներէից, որոնք իւրեանք ողջոյնը մեզ ուղարկելով, ասում էին թէ՛ յոյս ունեն մեր բոլոր բնտանիքին կիւրակէ օրը եկեղեցում տեսնել: Շաբաթ առաւօտուն ևս նկատեցի որ՝ կինս և աղջկունքս խորհրդակցութիւններ էին անում: Ժամանակ առ ժամանակ նորանք այնպիսի հայեացք էին ձգում դէպի ինձ, որ մատնում էր նորանց ծածկեալ միաբանութիւնը: Այս սասակապէս տարակուսումէի թէ մի գուցէ նորանք ցնորամիտ խորհուրդ են յօրինում հեռեեալ օրը փայլուն երեւելու համար: «Աոյն երեկոյին նորանց կանոնաւոր պաշարումը ևս զգացի և կինս սկսեց յարձակումը: Թէ՛ յից յետոյ, մինչ ևս ուրախ էի երեւում, «Այս երեւակայումէմ, սիրելի Աարօլոս, ասաց նա, թէ՛ ի՞նչ գեղեցիկ և բազմաթիւ ընկերութիւն կ'ունենանք վաղը եկեղեցում»:

«Շատ կարելի է, պատասխանեցի ևս, բայց անհանդիսա մի եղևք, ընկերութիւն լինի չըլինի՝ քարոզը միշտ մի է:

— Այդ իսկ է և իմ կարծիքը, ասաց կինս, բայց ես մտածումեմ, սիրելի, որ մենք պիտի երևինք այն տեղ, որքան կարելի է պատշաճապէս, որովհետեւ ո՞վ գիտէ ինչ կը պատահէ:

«Աս բողբոջին համաձայն եմ այդ զխառնորութեան հետ և բացի գովելը, ոչինչ չեմ կարող ասել, պատասխանեցի ես. պարկեշտ շորերը և զգաստ բարքը եկեղեցում սիրելի բաներ են իմ համար. մենք պիտի լինենք այն տեղ խոնարհ և բարեպաշտ, զուարթ և խաղաղ: Այո՛, այո՛, աղաղակեց կինս, ես գիտեմ այդ, բայց կամու՛մեմ ասել թէ՛ մենք պիտի յայտնվինք այն տեղ փոքր ինչ վայելուչ կերպիւ, այլ ո՛չ որպէս շքակայ շինականքը: — Աստարեալ իրաւունք ունիս, սիրելի, ասացի ես. ես ահա՛նայն առաջադրութիւնն էի կամում ձեզ անել: Այն տեղ յայտնվելու վայելուչ կերպը վաղ գնայն է, որպէս զի ժամանակ ունենանք մտածութիւն անելու, յառաջ քան թէ պատարագը սկսվել էր: — Բարեբա՛ր Աստուած, միջահասակ կինս, Անթուս, այդ ամենայն շատ ճշմարիտ է, բայց իմ մտքս այդ չէ. ես կամումեմ ասել թէ՛ պիտի երթանք այն տեղ իբրև վայելչադէմ անձինք, այլ ոչ իբրև խաժամուժ: Վու գիտես որ՝ եկեղեցին երկու մղոն հեռի է այս տեղից, ինձ համար անտանելի է մտածելը թէ՛ աղջկունքս պիտի ամբողջ ձեզ քնն մինչև իւրեանց բաղմոցները, բողբոջին շնչասպառելո՞ւ, կարմրած երկար գնացքից, և այնպիսի դէմքով, որ միայն գիւղական կնանիքին էր ներելի: Աւրեմն, սիրելի, ահա՛ ինչ եմ առաջարկում ես. մենք ունինք երկու ձիանք արօրի, մի մատակը, որ ինն տարի է տանը նա պահումենք և միւսը նորա ընկեր Բշակբերին, որ մի ամիս է գրեթէ ոչինչ չէ գործում. սոքա ծուլութիւնից գերանումեն. ինչո՞ւ չը պիտի սորանք աշխատեն նոյնպէս, որպէս մենք. հաւատացնումեմ քեզ, կթէ Մովսէս սորանց փոքր ինչ քերթով յարդարէր, շատ լաւ անք կարէին ունենալ»:

Աս հակառակեցի թէ՛ ասանապատիկ վայելուչ կը լինէր հետի գնալը, քան այդպիսի անհեթեթ ձիանքով, որովհետեւ Բշակբերին մի աչքով կոյր է, իսկ մատակ ձին ազի (պոչ) չունի. ո՛չ մինը և ո՛չ միւսը մարզված չեն հիծելու համար, և յոսի են այնպէս որ՝ հարիւր դարձուածներ անել կրտան մեզ, վերջապէս ասացի թէ՛ բոլոր մեր տան մէջ ունինք միայն մի թամբ կանանց: Բայց այդ ընդդիմաբանութիւնքը մերժեցին այնպէս որ՝ ես հարկադրված եղայ թոյլ տալ:

Միւս օրը առաւօտուն տեսի որ՝ ամենքը ահագին զրազմանց մէջ էին, մտադրած գործի հարկաւոր նիւթեր պատրաստելով. բայց որովհետեւ այդ պատրաստութիւնները երկար էին տւելու, եւ մենակ ճանապարհ ընկայ դէպի եկեղեցին, խնդրելով նորանց — շուտով իմ յեռքից դալ : Մի ժամի չափ սպասեցի եւ գրքակալի առաջև, բայց տեսնելով որ՝ նորանք չեն դալիս, հարկադրված էի սկսել ժամնասացութիւնը, բաւական անհանգստութեամբ նորանց ուշանալու մասին : Իմ նեղութիւնը առաւել սաստկացաւ, երբ որ պատարագը վերջացած՝ ընտանիքս դեռ ևս չէին երևում :

Ա երազաննարուս կառքի ճանապարհով դնացի, թէպէտ սա երկք մղանի չափ երկար էր, քան հետի դնացողներինը. ճանապարհի կէսը անցած՝ նկատեցի մի հանդիսաւոր յուզարկաւորութիւն, որ ծանր և մեծավայելուչ փառքով ուղղվումը դէպի եկեղեցին : Մովսէսը, կինս և երկու փոքրիկ որդիքս մի ձիու վերայ էին նստած, իսկ դատերքս միւսի վերայ : Աս հարցրի սորանց ուշանալու պատճառը, բայց նորանց արտում՝ դէմքերը ինձ ցոյց էին տալիս թէ՛ շատ ձախորդութիւններ էին ունեցել : Առաջ ձիանքն էին հրաժարվել գնալուց, և դորան առաջև յամսուումեն եղել անշարժութեան մէջ, մինչև որ՝ Պ. Բուրչելը իւր սովորական մարդասիրութեամբ և իւր գաւազանի օգնականութեամբ նորանց ստիպել էր գնալու : Յետոյ կնոջս թամբի թոկերն էին կարվել, որով և հարկադրվել էին ցած գալու, չարարադրութիւնը հալածելու համար : Փոքր ինչ յետոյ ձիանքից մինի գլխին մտել էր կարճ կապել ու կանգնել իւր տեղում. ոչ ազաւանք և ոչ սպասնալէք չէին կարացել նորան մի քայլ տեղից շարժելու : Այս տագնապանքի վերջումը եւ նորանց հանդիպելի և մինչ տեսի որ՝ ամենքը ողջ և առողջ են : Ղշմարիտ ասեմ, նորանց վիշտը ոչ միայն ինձ չտրամեցրուց, այլև մի օգտաւէտ դիպումս էր ապագայում նորանց համեստութեան և խոնարհութեան խրատներ տալու համար :

## ՔԼՈՒԹ ԻԻ.

Ընտանիքը յամադուսն գլուխները միշտ բարձր պահելուն:

Արո՛վհետև հետևեալ օրը կազանդի յառաջընթաց օրն էր, վարձակալ Պլեմբորօֆը մեզ հրաւիրել էր իւրեանց մօտ կաղիններ կոտրելու և զանազան խաղեր խաղալու: Ի հարկէ, մենք արհամարհանօք մերժած կըլինէինք այդ հրաւերը, եթէ վերջին անյաջողութիւնը մեզ խոնարհացրած չըլինէր, այս պատճառով առաջարկութիւնը ընդունեցինք: Մեր պատուելի դրացիի սազը և ֆլեյթնէն շատ ազնիւ էին և զարեջուրը ընտիր. այս մասին կինս իսկ, իբրև այդ բաները լաւ ճանաչող, վկայումէր: Քշմարիտ է՝ տանուտիրոջ պատմելու կերպը բոլորովին անմեղադրելու չէր. նորա երկար ծանր և մթին պատմութիւնները միայն իւր վերայ, — բայց մենք առաջ ևս տասն անգամ ծիծաղել էինք սորա պատճառով. ուրեմն ներողամտութիւն ունեցանք մի անգամ ևս ծիծաղելու:

Պ. Բ. ուրչելը, որ մեր հետ էր և սիրումէր միշտ որ և է անմեղ զբօսանքով ուրախութիւն գրգռել, աչքսփիփի խաղ առաջարկեց ջահիլներին: Անոջս հաւանեցրին թոյլ տալ իւր աչքերը կապելու և այս զիպվածը ինձ համար ուրախառիթ ապացոյց էր թէ՛ կինս գեռ ևս շատ պառաւ չէր: Այս և իմ դրացին նայում էինք և ծիծաղում էինք նորանց յաջողակութեան վերայ, պարծելով և մեր ջահիլ ժամանակուայ ճարտարութիւնովը: Սորանից յետոյ երեխները այլ և այլ խաղեր խաղացին և վերջապէս Սալաթ խաղը: Արովհետև ընթերցողը կարէ չեմանալ այդ հինուցուայ ժամանցումը, ուստի հարկաւոր է նորան տեղեկութիւն տալ թէ՛ այս խաղը համար ընկերութիւնը շրջան է կազմում գեանի վերայ նստած,

բացի մի անձնից, որ մնումէ կանգնած մէջ տեղում և որ պարտաւորված է բռնել այն մուծակը, որ շրջան կազմողները ձեռնից ձեռն են անցուցանում ծնկան տակից, ինչպէս մի կտաւազործի կկոց: Անհնար է շրջանի մէջ կանգնած մարդուն ամենքին միասին դիմակաց լինել և խաղի զուարճութիւնը այն է որ՝ այդ մարդուն մի հարուած ասն կօշկի կրունկով այն կողմից, ուր նորա համար պաշտպանութիւնը այնքան հեշտ չէր: Մինչ դեռ անդրանիկ զուարս այսպէս պաշարված և ծնծված, շնչառութիւնը սպառվելուց կարմրած, աղաղակումէր այնպիսի ձայնով, որին կրնախանձէին փողոցի երգիչ կանայքը, անդէն, վայ մեր գլխուն, մտան մեր սննեակը քաղաքի երկու ծանօթ տիկիները, Ռլարնի և Քարօլինա-Ալիշիլմինա-Վմալիա Ալիքը: Անհնար էր նկարագրել մեր վիճակը և ես չեմ փորձելու որ և է գաղափար տալ մեր նոր վշտագրութեանը: Ո՞վ երկինք, այսպիսի երեւիլի կանայք յանկարծ մեզ տեսնեն այդ խուժական գրութեան մէջ: Այլ ի՞նչ պիտէր սպասել մի այդպիսի խաղից, որ Պլեմբորօֆն էր մեզ առաջարկել: Մենք մնացինք կոր կործանված և իբր քարայած մեր սաղութիւնից:

Տիկիները զնայած են եղել տուն մեզ տեսնելու, և ոչ որ չըզտած, եկել էին այս տեղ, կամելով տեղեկանալ թէ՛ ի՞նչ դիպում էր արդեիլ մեզ յառաջնութայ օրը եկեղեցի գնալուց: Օլիվիան յանձն առեց պատասխանելու ամենքի փոխարէն և հեռուումէր կարծ խօսել: «Նա ասաց թէ՛ քոյրը ձիուց վեր էր ընկել, տիկիները շատ նեղացան այդ խօսքից, բայց մինչ տեղեկացան թէ՛ ոչ որ չէր վնասվել, բոլորովին գոհ եղան. երբ որ դրստերքս աւելացրին թէ՛ փոքր մնաց որ վախից մեռնէին, տիկիները կրկին տազնապանաց մէջ ընկան, բայց մինչ իմացան թէ՛ զիշերը շատ լաւ էին անցուցել, նորէն և աւելի ևս գոհ մնացին:

Նորանց յօժարակամ մեծարանքը երեւակայել չէր կարելի, իսկ վիսյարանութիւնքը թէ՛ ինձոյքի երեկոն կատարեալ ուրախութեամբ էին անցուցել, արդէն եռանդագին էին դարձել: Ինչպէս երեւումէր, նորանց գիտաւորութիւնն էր աւելի մտերիմ բարեկամութիւն անել մերայնոց հետ:

Տիկին Ռլարնիը ամենից աւելի կախարդված էր երեւում Օլիվիայից, իսկ Քարօլինա-Ալիշիլմինա-Վմալիա Ալիքը (սիրում

հմ անունը բոլոր երկարութիւնով յիշել) իւր ճաշակին առաւել  
հաճելի էր համարում Սոփիային: Խօսակցութիւնը բոլորովին  
այս երկու տիկինների մէջն էր, իսկ աղջկունքս լռութեամբ լսում  
էին և զարմանում նորանց վայելչաձեւութեան վերայ: Բայց որով  
հետեւ ամեն ընթերցող, որքան և զճուժ լինէր նորա վիճակը,  
սիրում է սովորաբար մեծերի բանակցութիւնները, ըրէրէ՛, շը-  
քեղ տիկինների և Ծո՞րակո՞ւկ սասկունների առաձները, այս պատ-  
ճառով ևս համարձակումեմ առաջարկել այս տեղ նորանց խօ-  
սակցութիւնի մի փոքրիկ փորձը:

« Ենչ որ ևս զիտեմ պատմութիւնից, դոչեց օրիորդ Ալիքը,  
այն է թէ՛ այդ կարէ ճշմարիտ կամ սուտ լինել, բայց հաւա-  
տացնումեմ ձեզ թէ՛ բոլոր ժողովը մեծ զարմացման մէջ էր:  
Ըօրդը այս պատճառով քանիցս անգամ երեսի գոյնը փոփոխեց,  
նորա տիկինը ուշաթափ կղաւ, իսկ արհուսական Ար Թօմ Գէներ  
հանեց իւր սուրը և երգուեց թէ՛ մինչև ի մահ նորան հաւատա-  
րիմ է մնալու:

— Ե՛յսպէս ուրեմն, պատասխանեց մեր աստնակալ տիկինը,  
ևս կարեմ տեղ միայն թէ՛ դքսուհին բերանը չբացեց իմ հետ  
և ևս կարծու՞մեմ թէ՛ Նորին Բարձրութիւնը ինձանից ծածկեալ  
բան չունի, միայն մի բան, որի մասին դուք կարէք փաստ լինել,  
այն է որ՝ դուքսը հետեւեալ օրը առաւօտուն, երեք անգամ աղա-  
ղակեց զէպի իւր սպասաւորը՝ Ժերնիզան, Ժերնիզան, Ժերնի-  
զան, բեր իմ ճերտակաւները:

Ես առաջ պիտէր խօսէի Պ. Բուրչեկի անբաղաքաւար ըն-  
թացքի մասին. սա բոլոր այդ խօսակցութեան ժամանակը, կը-  
րակի առաջև նստած՝ նորանց իւրաքանչիւր ասացումի քամու-  
կից աւերացնումէր իւր արհամարհական վայր. այս խօսքը մեզ  
աստիկ տհաճելի էր և անգաղար արդեւք էր լինում խօսակցու-  
թեան թօնչքին:

— Բայի սորանից, շարունակեց աստնակալ տիկինը, այս  
մասին յիշատակութիւն ևս չկայ այն քերթուածի մէջ, որ դօք-  
թօր Բիւրդօքը յօրինել է յիշեալ առարկայի վերայ: — Այ՛ն:

« Յիրաւի ևս զարմանումեմ դօրա վերայ, դոչեց օրիորդ  
Ալիքը, պատճառ որ՝ որովհետև նա գրում էր զբոսանքի համար,  
սակաւ կը պատահէ որ՝ զանցառու լինի որ և է պարագայի մա-

սին: Ապրեմ, տիրուհի, շնորհ ունենալ այդ քերթուածը տեսնելու»:

— Գուրք երեակայումէք, սիրելի, թէ ես մօտս եմ պահում այդ բաները. բայց յիրաւի քերթուածը շատ զեղեցիկ է և ես պարծումեմ այդպիսի բաների ճաշակովս, գոնէ իմանումեմ, ինչ որ ինձ հաճելի է: Գօթթօր Բիւրգօթի բոլոր մանր քերթուածները մեծ արժանաւորութիւն ունին իմ համար և բացի նորա և մեր զեղեցիկ կոմսուհիի հատուածները Հաննօվէր-Վքուերում, ոչինչ չէ հրատարակում, որ կարգալու աշխատանքի արժէքը ունենայ, յուութիւնների շեղք և ո՛չ մի բան, որ լաւ ընկերութան ճաշակ արտադրէր: — Վայ:

«Տիրուհի, դուք մոռանումէք ձեր հրատարակածը տիկնական օրագրի մէջ, ասաց միւսը. յուսամ որ՝ դուք կըհամաձայնէք թէ՛ նորա մէջ չըկայ որ և է դիւրագին բան: Բայց այդ շնորհը նորոգվելու չէ՞ արդեօք: — Վայ»:

— Մի՞թէ դուք չգիտէք, սիրելի, պատասխանեց մեծաշուք տիկինը, որ իմ ընկերակից օրիորդը՝ նոյն և իմ ընկերուհին, թողեց ինձ քափիթան Սօսիսի հետ ամուսնանալուց յետոյ, և որովհետեւ իմ խեղճ աչքերը չեն ներում ինձ զիր գրել, այնուհամար վաղուց արդէն որոնումեմ մի այլ ընկերուհի: Բայց մի պատշաճ անձն գտնելը հեշտ բան չէ. յիրաւի և երեսուն լուի տարեկան թոշակը փոքրիկ վարձ է մի բարեհունեւոյ աղջկայ համար, որ լաւ կարգալ գրել գիտենայ և ընկերութեան մէջ նստել վերկենալ իմանայ. եթէ քաղաքի միւս աղջկերանց վերայ ուզէինք խօսել, սորանց անհնար է մեզ մօտ պահել: Վայ:

«Ո՞ւմ էք ասում այդ, աղաղակեց օրիորդ Ալիքը. ես փորձառութեամբ գիտեմ այդ, վեց ամսի մէջ օրիորդներկեց, որոնց առեւ էի ինձ ընկերակցութեան համար, մինը չըյօժարեց օրը մի ժամ կար կարել, երկրորդը Ֆիլարեց (արհամարհեց) քսան և հինգ զինէ տարեկան թոշակի դէմ. իսկ երրորդին պարտաւորված էի ինքս հրաժարեցնել, որովհետեւ կարծումէի թէ՛ դազանի սէր էր զգում դէպի իմ քահանան: Առաքինութիւնը, սիրելի տիկին Բլարնեյ, շատ մեծ գնով ստանալու բան չէ, բայց ի՞նչ տեղ գրանելը նորան: — Վայ»:

Ահնս սաստիկ ուշադրութեամբ լսումէր այդ բանակցու-

Թիւնը. բայց սորա վերջին մասը առաւել զարմացրուց նորան: Տարին երեսուն լուի և քսան և հինգ զինէ ճիշտ հաշուով անում էին յիսուն և վեց լիար սթերլին. ի՛նչպէս հեշտ էր ստանալ այդ գումարը, միայն թէ աշխատ լինէին խնդրելու: «Նա սկսեց իմ հայեացքի մէջ որոնել այդ կարծիքի հուանութիւնը, և ճշմարիտը ասելով, ես համարում էի թէ՛ այդ երկու պաշտօնը կատարելապէս պատշաճ էին մեր աղջկերանցը: — Եւ կթէ՞ Պ. Թօռն. հիւ խկապէս սէր էր զգում դէպի անդրանիկս, այդ մի լաւ հնար էր սորա համար կատարելագործվելու և պատրաստվելու դէպի իւր գերագոյն երջանկութիւնը: Ահնս վճռական դիտաւորութիւն ունենալով ձեռքից բաց չըթողնել այդ մեծ յաջողութիւնը անտեղի երկչոտութեամբ, երկար և ձիգ խօսակցութիւն բաց արեց իւր ընտանեաց վերայ: «Յոյս ունեմ, ասաց նա, ձեր ազնուութիւնքը կրնե՛րն իմ համարձակութիւնը: Յիրաւի մենք իրաւունք չունենք մեծամեծ շնորհ պահանջելու, բայց բնական բան է որ՝ ես ցանկանում եմ աղջկերանցս վիճակը բարեկարգել և կարեմ ասել թէ՛ նորանք բաւական լաւ դաստիարակութիւն են ստացել և ընդունակութիւնէ զուրկ չեն. թո՛ղ գտնեն մեր երկրի բոլոր աղջկերանց մէջ նորանցից լաւ ուսածներին: Աորանք զիտան կարգալ, զրել և հաշուել, զանազան ասղնագործութիւններ. անդրանիկս շատ զեղեցիկ ծոպեր է շինում, իսկ փոքրիկը կարթի ջատուկութիւնով լաւ բղձապատմութիւններ է անում:»

Ես զեղեցիկախօս ճառարանութիւնից յետոյ, որ մի շնչառութեան միջոցումն էր ասված, երկու տիկինները միմեանց նայեցին ծանր և տարակուսական գէմքով:

Ա կրճապէս օրիորդ Վարօլինա-Վ իյհելիինա-Մամլեա Ակիբը արժան համարեց յայտնել թէ՛ այն կարծիքը, որ կարէր ստանալ մի այդպիսի թեթե տեղեկութիւններից, իրաւունք են տալիս նորան կատարելապէս պատշաճ համարել մեր ջահիլ օրիորդներին: «Բայց մի այս տեսակ յանձնառութիւնը, ասաց նա, զառնալով դէպի իմ կինը, պահանջում է նորանց բնատուր բարքի առաւել խորին քննութիւն և երկուստեք կատարեալ ծանօթութիւն: Չրկարծէք թէ՛ շարունակեց նա, ես ամենափոքր երկբայութիւն ունիմ նորանց առաքինութեան, խոհանութեան

և պարկեշտութեան մասին, բայց ամեն բանում, սիրելի տիկին, քննելու ձևերը պիտի պահպանել» : — Այն :

Աինս հաւանեց այդ զգուշութիւնը, ասելով թէ՛ ինքը ևս շատ կասկածոտ է, բայց իւր ազնկերանց բարի համբաւի մասին ոչինչ երկիւղ չունի, եթէ բոլոր դրացիներէից տեղեկութիւն խնդրելու լինէին : Մեր ատենակալ տիկինը չբոժարեց դիմել դէպի այդ անօգուտ տեղեկութիւնները, ասելով թէ՛ նորա համար բոլորովն բաւական է իւր ազգակից Պ. Թօսոնճիլի կարծիքը :

Մեր խնդրվածքը մնաց այս վիճակում :

## ԳԼՈՒԽ 12.

Պատահարը կարծես թէ խոնարհեցնումն Աւերփելիքի ընտանիքին : — Մանր նեղութիւնները շատ անգամ առաւել նեղուցիչ են, քան խեղճան դժբաղդութիւնները :

Տուն վերադարձած՝ բոլոր երեկոն մենք նուիրեցինք զանազան խորհրդածութեանց ապագայ յաղթութիւնների մասին : Ահնա սկսեց խորագիտութեամբ իւր կարծիքը յօրինել, թէ կրկու աղջկերանցից ո՞րը աւելի լաւ պաշտօն կըստանայ և միջոց կ'ունենայ վայելուչ ընկերութիւն տեսնելու : «Պ. Թօննհիլի գովարանութիւնը օգնելու էր մեզ այդ բանում. նա մեզ բաւական ապացուցութիւններ էր տուել իւր մտերիմ բարեկամութեան մասին, որոյ պատճառով և այս դիպուածում երկբայելու տեղիք չունէինք :

Անկողնքի մէջ ևս կինս շարունակեց իւր սովորական զըազմունքը : « Զաւատն ինձ, սիրելի Աարոյրս, մենք այսօր — մեր մէջ եմ ասում — լաւ բան ենք տեսել : Այստ չէ, ասացի ես, չըզիտելով ի՞նչ պատասխանեմ : — Ի՞նչպէս վատ չէ, կրկնեց նա, ինձ թուի թէ՛ պիտէր ասել՝ « Եստ լաւ է » : Անտարակոյս մեր երկու աղջկունքը քաղաքում լաւ լաւ ծանօթներ են ունենայու. ես շատ անգամ լսել եմ որ՝ Ա՛ճնդօնը բոլոր աշխարհում առաջին քաղաքն է՝ ամեն տեսակ ամուսինների գտնելու համար : Բացի սուրանից, սիրելի, ո՞րքան արտաքոյ կարգի բաներ ենք տեսնում մենք ամեն օր : Այժմ մեծապատիւ տիկիները այդքան սիրահարված են մեր աղջկերանցը, ի՞նչ են անելու ուրեմն տղամարդիկը : Մեր մէջ մնա. ես վկայումեմ որ՝ անչափ սիրուամ տիկին Բլաբնայի քաղցրութիւնը և մարդասիրութիւնը. բայց միւս կողմից, օրիորդ

Վարօլինա-Վիլհելմինա-Ամալիա Ալիքը նոյնպէս գրաւել է իմ սիրտը: Երբ որ նորա սկսեցին խօսել, դու տեսա՞ր, ինչպէս բռնեցի ես գնտակը (հօփ) թռչելումը: Չես կարծում որ՝ այս բանում ես մի կատարեալ երախտիք եմ ցուցել իմ զաւակաց: — Այո՛, այո՛, պատասխանեցի ես, չգիտեիր ի՞նչ ասեմ, Աստուած տար որ՝ երեք ամսից յետոյ նորանց համար լաւ լինէր, քան այժմ:

Այս մի այնպիսի նկատումն էր, որ ես սովորաբար անուձէի, կնոջս մէջ իմ մասին մի խորադիտութեան կարծիք պահպանելու համար, որովհետեւ եթէ աղջկերանցս կը յաջողէր, սա կը լինէր մի բարեպաշտ բաղձանքի կատարումն. իսկ եթէ բանը դէպի վատը կը դառնար, ես ինձ այնպէս ձեացրած կը լինէի, իբր թէ մարգարէութիւնն էի արել: Բայց և այսպէս՝ այդ խօսակցութիւնը յառաջարանութիւնն էր մի այլ խորհուրդի, որ ես կանխաւ արդէն զգացել էի: Խորհուրդը վերաբերումէր մի թեթեւ բանի, այսինքն՝ մեր վիճակը աւելի բարեկարգելու համար, վաճառել մտակայ տօնավաճառում մեր ձին, որ արդէն պառաւուձէր և գնել մի ուրիշը, որի վերայ, հարկաւոր եղած ժամանակը, երկու անձինք կարէին նստել, և ամօթ չէր լինել նորա վերայ եկեղեցի դնալ կամ այցելութիւններ կատարել: Աս աստիկ հակառակեցի այդ դիտաւորութեանը, բայց կինս նոյնպէս աստիկ յամառութեամբ պաշտպանումէր: Որքան ես նուազում էի, այնքան իմ հակառակորդքս զօրանում էին, այնպէս որ՝ վերջապէս վճռեցինք խեղճ անասունին վաճառել:

Որովհետեւ տօնավաճառը սկսվումէր հետեւեալ օրը, ես միտք արեցի ինքս գնալ, բայց կինս հաւատացրօց թէ՛ ես հարբուխ ունէի, և չըթողեց ինձ: «Չէ՛, չէ՛, սիրելի, ասումէր նա, մեր Մովսէսը խելօք տղայ է, նա շատ լաւ գնել վաճառել գիտէ. քեզ յայանի է որ՝ մեր լաւ գնած բաները նորանն են. նա իրան պինդ է պահում, սակարկութեան ձեւը գիտէ և բաղմադիմի հակառակութիւններից յետոյ, համոզումէ գէպի իւր գինը»:

Ըստ որում ես ինքս բաւական լաւ կարծիք ունէի որդուս խոհեմութեան մասին, այնու համար շատ չ'ընդդիմացայ զործը նորան յանձնելուն: Միւս օրը առաւօտուն քուերքը աստիկ ըզբաղված էին իւրեանց եղբօր տօնավաճառ գնալու պատրաստու-

Թիւնով մինը սանդուղքներ նորա մազերը, իսկ միւսը մաքրումէր նորա զանգուղները և գտակը, որ աւելի փայլուն երևէին: Չար-դարանքի ծանրակշիւ գործը վերջացած՝ մենք գոհ էինք արդէն որ՝ նա նստաւ պստաւ ձիու վերայ և դրեց իւր առջևը մի եղև-նեայ արկղիկ, որի մէջում զանազան պաշարներ էր բերելու: Առ-բա զգեստը երկգունեայ չուխայից (ժահագէտ) էր, որ թէպէտ փոքր ինչ կարճ էր, բայց դեռ ևս այնքան լաւ էր որ՝ չէր կարելի մեր-ժել. բաձկոնակը կանաչ թռչունի գոյն ունէր. քուկըքը նորա զլեւի մազերը կապել էին լայն և սև ծոպերով: Մենք ամենքս նո-րա յառից նայում էինք, դռնից մի քանի քայլ առաջ կանգ-նած, և բոլոր զօրութեամբ գոչում էինք նորան՝ յաջողութիւն, մինչև որ նա բոլորովին անհետացաւ մեր աչքից:

Ես ինչ Մովսէսը հրաժարվել էր մեզնից, Թոննհիլի տըն-տեսը եկաւ մեր բարեբաղդութիւնը շնորհաւորելու: «Նա իւր ջա-հիլ տիրոջից լսել էր մեծամեծ գովեստներ մեր մասին: Բաղդը երբեմն մենակ չէ գալիս, ահա մի այլ ծառայ ևս, որ անտեսի հե-տեւիցն էր եկել, աղջկերանցս տուեց մի փոքրիկ նամակ, որի մէջ երկու տիկնայքը յայտնումէին թէ՛ Պ. Թոննհիլը մի այնպիսի գովելի վկայութիւն էր տուել նորանց մասին որ՝ նորանից յետ, մի քանի նախակարգ տեղիկութիւնները բաւական էին արդէն նո-րանց ամեն կերպով գոհացուցանելու համար: «Ա՛յ, աղաղակեց կինս, ես տեսնումեմ այժմ, մեծերի կարգը անցնելը հեշտ բան չէ, բայց եթէ նորանց մէջում խարխախտ արդէն ձգած է, ինչպէս ասում է մեր Մովսէսը, այնուհետև կարելի է քնել կատարեալ անհողութեամբ: Ես հանձարեղ խօսքը, ըստ որում կինս կար-ծումէր թէ հանձարաւոր խօսակցութեան իրաւունք ունի, որո-տաձայն ծիծաղով ողջունեցին դատերքս. կարճ ասեմ՝ կինս այն-քան գոհ էր պատգամաւորից որ՝ ձեռքը տարեց դէպի գրպանը և տանն և հինգ «-» տուեց զիր բերողին, իբրև վարձ նորա աշխա-տանաց:

Այցելութիւնները չրպակասեցին մեզնից այս օրուայ մէջ. Պ. Բուրչիլը եկաւ, ուղիղ աստվածաւորից և մեր փոքր երեխներքի համար բերեց քաղցրեղենով պատրաստած հաց, որ արժէր մի սու և որ կինս վեր առեց պահելու, խոստանալով ժամանակ առ-ժամանակ մի մի կտոր նորանց տալ, եթէ լաւ կրկարդային: «Նը-

մանապէս աղջկերանցս համար բերեց մի զոյգ տուփ, որոնց մէջ նորանք կարող էին պահել թուղթ, կնքելու նշխարներ, քթախոտ, երեսին դնելու «ո՛ր կամ փող ևս, եթէ ունենային: Աինս շատ սիրումէր սքիսի կաշիից շինած տուփեր, իբր թէ այդ խորհրդաւոր նշան էր յաջողութեան, թո՛ղ հարեանցորէն յիշված լինի այդ: Թէ և Պ. Բուրչելի տարօրինակ վարքը, իւր վերջին այցելութեան ժամանակը, մեզ ընդդէմ էր, այնու ամենայնիւ մենք նորան յարգում էինք և չէինք կարող չըհաղորդել նորան մեր բարեբաղդութիւնը և չըհարցանել նորա կարծիքը: Մենք սովորութիւն չունէինք հետեւել այլոց խորհուրդին, թէև միշտ հարցանում էինք երկու տիկիներէ ինձանկարագից յետոյ, Բուրչելը գլուխը շարժեց և ասաց թէ՛ այս տեսակ բանը պահանջում է ամենամեծ զգուշութիւն: Այս երկմտութեան կերպարանքը վշտացրուց կնոջս:

«Աս երբէք չեմ երկրայում, պարոն, ձեր եռանդի մասին, որով դուք միշտ զենվումէք ընդդէմ իմ և աղջկերանցս: Պուք աւելի զգուշութիւն ունիք, քան թէ հարկաւոր էր ունենալ: Բայց ես կարծումեմ թէ՛ մի բարի խորհուրդ խնդրելու ժամանակը, աւելի լաւ կրգործենք մենք, դիմելով դէպի այնպիսի մարդիկը, որոնք խորհուրդներէ տեղեկութիւնը փորձառութեամբ են ստացել»:

— Արպիսի և լինէր իմ անձնական բարքը, տիկին, խօսքը ամենեին սորա վերայ չէ, եթէ ես չեմ կարացել կատարել այն բարի խորհուրդները, որ ինձ տուել են, այս դեռ ևս մի պատճառ չէ որ՝ և ես զլանայի նորանց, որոնք խորհուրդ են խնդրում ինձնից»: Ատխելով որ՝ այդ պատասխանին մի նոր և աւելի թշնամալից, քան թէ հանձարեղ խօսք չյառաջացնէ, ես փոխեցի խօսակցութեան նիւթը, զարմանալով թէ՛ ի՞նչ պիտէր այդպէս երկար պահէր մեր որդուն տօնավաճառում, որովհետեւ արդէն բոլորովին գիշեր էր:

«Անհանգիստ մի եղևք Մովսէսի մասին, աղադակից կինս, նա դիտէ իւր գործը: Այս երաշխաւոր եմ լինում ձեզ որ՝ նա իւր հաւերը անձրեային օրը չի տանիլ վաճառելու: Այս նորան տեսել եմ այնպիսի վաճառներ սրած, որոնք առաւել խորամանկներին ևս կրգարմացնեն: Այս մասին ես կրպատմեմ ձեզ մի անցք,

որ ծիծաղելուց աչքեր կրպատուեցնէ, բայց կհանքս վկայ որ, ահա նա գալիս է, առանց ձիու, և արկղիկը շարկում»:

Մինչ կինս խօսումէր, Մովսէսը ծանր ծանր մտանումէր տոով, քրտնած արկղի ծանրութիւնից, որ մի թոկով կապել էր իւր մէջքի վերայ, ինչպէս ապրանք շրջեցնողներն են անում:

«Բարի երեկոյ. գալդ բարի, Մովսէս. ապա, տղաս, ի՞նչ ես բերում մեզ համար տօնավաճառից»:

— Այս ինձ եմ բերում, ասաց Մովսէսը, աչքով անելով և արկղը պաշարապահի վերայ դնելով:

«Ա՛յդ մենք լաւ գիտենք, Մովսէս, ասաց կինս, բայց ո՛ւր է ձին»:

— Ա՛ւճառուցի նորան երեք լուխ, հինգ շելլինկի և չորս ... է, պատասխանեց Մովսէսը:

«Ա՛րաշախ, քաջ տղաս, ես լաւ խնայում էի որ՝ քեզ խաբել չէին կարելու: Մեր մէջ մնաց, երեք լուխ, հինգ շելլինկ և չորս սու վատ օրուայ աշխատանք չեն: Աւրեմն շուտ արա, տուր ինձ»:

— Բայց ես փողը չեմ բերել, այլ գործ եմ անել մի մեծագին բանի: Ա՛ս հանեց ծոցից մի ծրար. — Ահա, սա տասներկու սարք կանաչ ակնոցներ է արծաթի կազմածքով և ջորիի կաշից շինած պատկնով: — «Աննաչ ակնոցներ, աղաղակից կինս, նուազած ձայնով: ձին ծախեցիր որ՝ նորա փոխարէն մեզ համար բերես անպիտան կանաչ ակնոցներ»:

— Միրելի մնայր, պատասխանեց պատանին, ուշադրութիւն արած դէպի պատճառը. սա մի ոսկեզէն վաճառք է, որ ես համարեմ չեչին գնով եմ ստացել. արծաթի կազմուածքը միայն իմ տուածիս երկպատիկը արժեն: — Անիծա ծ լինի քո արծաթի կազմածքը, աղաղակից կինս զայրացած, ես խօսք եմ տալիս որ՝ կէս գնի վաճառել չէ կարելի, եթէ հաշուենք հին արծաթի գինը ունկին հինգ շելլինգով: — Ահա ևս շատ տառապելու ես կազմածքը վաճառելու մասին, ասացի ես, որովհետեւ ես նկատումեմ որ՝ նա արծաթաջրած պղնձից է և հազիւ տասն սու արժէ: «Ի՛նչ, արծաթ չէ ասացիր» գոչեց կինը: — Չէ, պատասխանեցի ես, արծաթ չէ այնպէս, ինչպէս քո կաթասները (շաշն) արծաթ չեն: «Աւրեմն, պատասխանեց նա, մենք պիտի ձիուց զրկվինք և նորա տեղ ստանանք կանանչ ակ-

նոցներ՝ պղնձի կազմածքով, ջորիի կաշից պատենով: Սատանան տանի այսպիսի վաճառքը. յիմարը խարվել է: Պարտաւոր չէր նա արդեօք լաւ ճանաչել ում հետ էր նորա բանը»: — Ոհ, սիրելի ասացի ես, այս բանում դու ես մեղաւոր, նա պիտէր ամենեւին չըճանաչէր այդ մարդկերանցը: — «Անիճա՛ ծ լինի անխելքը, ասաց կինս, որ այս անպիտան բանը բերեց իմ համար. եթէ ձեռումս ունենայի՝ կրտիր կըձգէի: — Առաւել ևս կըմեղանչէիր, սիրելի, կրկնեցի ես, թէ և պղնձի է ակնոցը, այնու ամենայնիւ, գիտես որ՝ աւելի արժէ, քան թէ ոչինչը: —

Այս անգամ խեղճ Մովսէսը յիրաւի խարվել էր: «Նա պարզապէս տեսնումէր որ՝ խաղալիք է եղել խորամանկ դաւաճաններին, որոնք նորա դէմքից, նորա շարժուածքից հօտ էին առել թէ՛ հեշտ որս էր լինելու իւրեանց համար: Այս խնդրեցի պատմել այս անցքի մանրամասնութիւնքը, որոնցից երևումէր որ ձին վաճառել էր և շատ անցուդարձ էր արել տօնավաճառում մի այլ ձի գտնելու համար, մինչև որ՝ մի պատուաւոր մարդ մօտեցել նորան և հրաւիրել էր իւր վրանի տակ, իբր թէ ձի ունէր վաճառելու: «Այս տեղ, շարունակեց Մովսէսը, մենք հանդիպեցինք մի այլ մարդու՝ լաւ շորեր հագած, որ քսան լուի փոխ էր խնդրում ակնոցները զբաւ տալով և ասումէր թէ՛ փողի կարօտութիւն ունի և թէ նա կարող է վճարել այդ պարտքը ակնոցների արժէքի երրորդ մասնովը, իսկ այն մարդը, որ իւրեան ինձ բարեկամ էր ձեացնում, փչեց ականջներումս գնել ակնոցները և ձեռից չըթողնել մի այդպիսի յաջող դիպումաճը: Այս հրաւիրեցի իմ մօտ Պ. Պլեմբորօնին, որի առաջև նոյնպէս սկսեցին նորանք մեծամեծ և գեղեցիկ ճառախօսութիւններ անել, այնպէս որ վերջապէս մենք համոզվեցանք ակնոցները գնել»:

## ԳԼՈՒԽ 13.

Պ. Բուրչեղին համարումն թշնամի, սրովհետև համարձակումն անհաճոյ  
խորհուրդներ առաւ:

Այսպէս անհաճաւ փորձեր արեցինք մենք շքեղ ընկերու-  
թիւնների կարգը անցնելու համար և ամեն անգամ մի անակրն-  
կալ արկածք կործանումէր մեր դիտաւորութիւնները: Այս ջանք  
էի անում օգուտ քաղել ամեն մի խաբված յոյսից, որպէս զի ի-  
մացինք իմաստութիւն գտնէին այն տեղ, ուր նոցա մեծամտու-  
թիւնը վնասովել էր: «Վուք տեսնումէք, սիրելի զուակուներ, ա-  
սացի ես, թէ ի՞նչ է պատահում, երբ որ կամումն աշխարհը  
զարմացնել և մրցել իւրեանցից բարձրագոյների հետ: Խեղճերը  
երբ որ վազումն հարուստների քամակից, ատելի են դառնում  
նորանց, որոնցից բաժանվում են և անարգվում են նորանցից,  
որոնց հետամուտ են լինում: Անհաւասար միաւորութիւնները  
միշտ վնասակար են նուաստներին. հարուստները ունին ամենայն  
զուարճութիւնք, իսկ խեղճերը ամենայն դժուարութիւնք: Ա՛յ  
այս տեղ, Վիկ որդի իմ, և պատմիր, մեր ժողովը խրատելու հա-  
մար, այն առակը, որ դու այսօր կարդացիր»:

— Մի անգամ, ասաց երեխան, շահան և թճուկը բարե-  
կամ եղան և միմեանցից չէին հեռանում: Մորանք դաշն հաստա-  
տեցին՝ երբէք մինը միւսին չըթողնել և գնացին բազմ որոնելու:  
Առաջին նուագում նորանց հանդիպեց պատերազմել երկու Ս-  
տեղանցի հետ և թճուկը, որ շատ քաջասիրտ էր, կատաղե հար-  
ուած տուեց ըմբիշներից մինին. Ստեղանցիներն շատ չորրգուղեցաւ  
սորանից, բարձրացրուց իւր սուրը և տակից կարեց խեղճ թճուկի  
մի կուռը, որ և այսպէս թշուառ վիճակի մէջ ընկաւ, բայց շու-  
կան եկաւ նորան օգնելու և երկու թշնամիներին ևս տարածեց  
գետնի վերայ. թճուկը սրտի զայրութից (ընկրու) մեռած թշնա-

միի դուրսը կտրեց: Եւ արունակելով իւրեանց ճանապարհը, շատ չ'անցաւ որ՝ նորա հանդիպեցին երեք չար այծամարդերի, որոնք մի տառապեալ աղջիկ էին փախցնում: Թողուկը առաջուայ պէս բողբոլին եռուն չէր, բայց առաջին հարուածը նմանապէս սատուեց և փոխարէն ստացաւ մի այնպիսի սաստիկը, որից նորա մի աչքը գլխից դուրս թռաւ. շտան շտապեց և եթէ այծամարդիկը չէին փախել՝ անշուշտ ամենքին սպանելու էր: Այս յաղթութիւնը ընդհանուր ուրախութիւն պատճառեց, և օրիորդը, որ փորձանքից ազատվել էր, սիրահարվեց շտանին և ամուսնացաւ նոր հետ: Արկին յառաջ գնացին նորանք շատ հեռի, այնքան հեռի որ՝ չեմ կարող ասել և հանդիպեցին մի խումբ գողերի: Այս անգամ շտան էր ամենքի առաջում, բայց և թողուկը հեռի չէր նորա քամակում. պատերազմը խստութեամբ երկարեց. ուր որ շտան դալն էր՝ այն տեղ ամենքը յաղթվում էին. քանիցս անգամ Թողուկը հազիւ հաղ ազատվեց սպանվելուց: Աւերջապէս յաղթութիւնը մնաց մեր բաղդախնդիրներին կողմում, բայց Թողուկը մի ոտը ևս կորցրուց և այսպէս նորան պակասումէր արդէն մի կուռը, մի ոտը և մի աչքը, մինչ նորա բարեկամ շտան և ոչ մի վէքը ունէր վերան: Վարձաւ հսկան դէպի իւր ընկերը և ասաց՝ «Փոքրիկ հերոս, ահա մի փառաւոր ժամանեցումն, մի նոր յաղթութիւն ևս, և մենք կրտսանանք անմահական շուք և պատիւ»: — Չէ, ասաց Թողուկը, որ այս փորձանքների մէջ իմաստացի էր արդէն. չէ, ևս հրապարակաւ յայտնումեմ որ՝ պատերազմելու կամք չունիմ այլ ևս, որովհետեւ, ինչպէս տեսնումեմ, ամեն դիպուածում դու ստանումես բոլոր փառքը և օգուտը, իսկ ևս բոլոր հարուածները:

Այն ինչ ևս պատրաստվումէի բարոյական մեկնութիւն տալ այդ խրատական առակին, յանկարծ իմ ուշադրութիւնը դարձրուց մի սաստիկ հակաճառութիւն, որ բարձրացել էր կնոջս և Պ. Բուրչելի մէջ, աղջկերանցս քաղաք ճանապարհորդելու դատաւորութեան մասին: Այն սաստիկ հաստատումէր աղջկերանցս գնալու օգուտը, իսկ Պ. Բուրչելը, ընդ հակառակն, ահագին եռանդով հակառակումէր. ևս մնացել էի չէզոք: Բուրչելն այժմեան վէճը, ինչպէս երևումէր, շարունակութիւնն էր այն վէճի, որ դեռ ևս առաւօտուն այնքան դժկամակութիւն էր պատճառել:

Առիւր տաքանումէր, խեղճ Ղևերօրան, փոխանակ առաւել իրաւացի պատճառներ մէջ բերելու, աղաղակումէր առաւել սաստկութեամբ, կարծելով թէ՛ իւր տկարութիւնը կը ծածկէր սորանով: Աւերջապէս նա այնպիսի խօսքերով որոտաց, որոնք ամենքիս տաղտկալն էին: «Նա ստումէր թէ ճանաչումէ այն մարդկերանցը, որոնք ծածկեալ պատճառներ ունին այդպիսի խորհուրդներ տալ այրոց և թէ՛ իւր կողմից, նա առաւել կը քանակար որ՝ այդպիսի մարդիկը դադարէին այնուհետև ոտ դնել իւր ամեր:

«Տիկին, պատասխանեց Քուրչերը խաղաղ դէմքով, — որ առաւել ևս բորբոքումէր նորա հակառակորդին, — որ ինչ վերաբերումէ ծածկեալ պատճառներին, յիրաւի ևս ունիմ ծածկեալ պատճառներ, որ ձեզ պատմել չեմ կարող, որովհետև դուք չէք կարում պատասխանել ձեզնից չըթագուցածներին ևս: Բայց ևս տեսնումեմ որ՝ իմ այցելութիւնքը ձեզ մօտ արդէն ձանձրալի են եղել, այսուհետև ևս հրաժարվումեմ և գուցէ՛ կը վերադառնամ միայն վերջին մնաք բարովս ասելու, երբ այս երկրից բոլորովին հեռանալու կը լինիմ:

Այս խօսքից յետոյ վեր առաւ իւր գտակը և բոլոր ջանքը Սոխային, որ իւր հայեացքով մեղադրումէր նորա շտապեցողութիւնը, չըկարացին կանգնեցնել նորան:

Արբ որ նա հեռացաւ, մենք մի քանի բողբոջ շարունակ շըփոթված նայումէինք միմեանց: Աինս դիտէր թէ՛ ամենայն պատճառը ինքն էր, և փորձեց ծածկել իւր շփոթը բռնի ժպիտով, որ ևս չըկամեցայ արդէն համբերել: Այդ ի՞նչ է, կի՛ն, աղաղակեցի ևս, այս կերպ պիտի մենք վարվինք օտարականների հետ. այս կերպ պիտի հատուցանենք մենք բարութիւն փոխարէն նորանց բարութեան: Դմացի՛ր, սիրելի, որ քո բերանից դուրս եկած բոլոր խօսքերը դառն էին և ինձ շատ անհաճոյ: — «Կնչո՞ւ էր նա ինձ զրգոռում, պատասխանեց կինս: Բայց ևս գիտեմ նորա խորհուրդների պատճառները, նա կամումէր արգելել իմ աղջկերանց քաղաք գնալը այն պատճառով որ՝ իւր համար պատրաստէ այս տեղ իմ տանը մի գուարձութիւն փոքրիկ դասերս ընկերութիւնովը, բայց ի՛նչ և պատահելու լինի, դուստրս պիտի ընտրէ այլ ընկերութիւն, և ոչ այնպիսի ստորին կարգի մարդկանց մէջ, որպիսի այդ պարոնը ինքն է: — Ստորին կարգի՞, սասցիւր, սիրելի. շատ

կարելի է որ՝ մենք խաբւիւումենք այդ մարդու մասին. մի քանի դիպուածներում նա ինձ երևեց այնպիսի կատարեալ ազնուական, որպիսիքը շատ սակաւ եմ ճանաչել : Ասա՛ ինձ, Սոփիա, արդեօք որ և է ծածուկ ապացուցութիւն տուե՞լ է նա քեզ, իւր քեզնով զբաղված լինելու մասին :

— «Մորա խօսակցութիւնը իմ հետ, պատասխանեց Սոփիան, եղել է միշտ ազդու, զգոյշ և վայելուչ, իսկ որ ինչ այլ բանի մասին է, ո՛չ և երբէք : Մի անգամ միայն, միտս է գալիս որ՝ նա ինձ ասաց թէ՛ իւր կենաց մէջ երբէք չէ պատահել այնպիսի կնոջ, որ խեղճ մարդու մէջ արժանաւորութիւն գտած լինէր :

«Ա՛հա, սիրելի, ասացի ես, այս է բոլորովին դժբաղդ և դատարկ խօսքը, բայց ես յոյս ունիմ որ՝ դու ուսել ես առողջ դատազութիւն ունենալ այդպիսի մարդկանց մասին և յիրաւի յիմարութիւն կր լինէր բազդի ակնկալութիւն ունենալ այն մարդուց, որ իւրը անխնայաբար է գործ ածել : Աս և քո մայրը առաւել բարձր դիտմունք ունինք քո մասին : Մօտակայ ձմեռուայ մէջ, որ դուք կարծեմ՝ անցուցանելու էք քաղաքում, դիպուածք չեն պակսել մի առաւել խոհեմամիտ ընտրութիւն անելու համար» :

Չբզիանմ ի՞նչ մտածողութիւն էր անում Սոփիան այդ պարագայի մէջ, բայց ես ինքս ինձ դժգոհ չէի, որ ազատովի էի մի հիւրից, որից սաստիկ վախումէի : շիւրասիրութեան պակասութիւնը փոքր ինչ շփոթումէր իմ խղճմտա՛քը. բայց այդ սողրտանքը ես թեթեւացրի մի քանի հաւանեցուցիչ պատճառներով, որոնք ինձ հաշտեցնում էին իմ հետ : Խղճմտանքի կշտամբանքը այն մարդու մէջ, որ արդէն չարը գործել է, շուտով են վերջանում : Խղճմտանքը թոյլ է վարվում և սակաւ է պատահում նորան այնքան արդարութիւն ունենալ որ՝ մեղադրէր իրան այն յանցանքների մասին, որոնց առաջքը առնելու համար նա ոյժ չի ունեցել :

ԳԼՈՒԽ 14.

Նորանոր վիշտը, որոնք ապացուցանում են թե՛ կարծեալ թշուառութիւնները կարեն լինել խկական բարերազդութիւն:

Մեր աղջկերանց դէպի քաղաք ճանապարհորդութիւնը արդէն վճուված՝ Պ.ԹօռնՏիլը մարդասիրութեամբ խոստացաւ մեզ անձամբ հսկել նորանց բարբի վերայ և մեզ տեղեկութիւն տալ իւր նամակներով: Մենք անհրաժեշտ համարեցինք նորանց արտաքին տեսքը համեմատելնել մեր շքեղ ակնկալութեանցը, որ առանց ծախքի կատարելու բան չէր: Շատ վիճաբանեցինք բոլոր ժողովով թե՛ ի՞նչ հնարով պիտէր փող ձարէինք, կամ լաւ ևս ասել թե՛ ի՞նչ բան ունինք աւելի յարմար վաճառելու: Խորհրդակցութիւնը շուտով վերջացաւ. պարզ բան էր որ՝ մեզ մօտ մնացած մի ձին չըկարէր արօրը քաշել առանց իւր ընկերին և որովհետեւ նորա մի աչքը կոյր էր, հեծնելու համար ևս պիտանի չէր: Այս պատճառով վճռեցինք մօտակայ տօնավաճառում նորան ձեռաց հանել և մի նոր խաբեբայութեան առաջքը առնելու համար, ես յօժարեցայ ինքս տանել նորան: Թէ և այս առաջին առևտրական գործն էր, որ ես յանձնառու էի լինում կատարելու, այնու ամենայնիւ յուսով էի որ՝ պատուով դուրս կրգամ նորա մէջից: Այն կարծիքը, որ մարդ յօրինումէ իւր սեփական խոհեմութեան մասին, իւրեան շրջապատող անձանց կարծիքով է չափվում, և որովհետեւ ես համարեան դուրս չէի գալիս իմ ընտանեաց շրջանից, այնու համար հոյակապ կարծիք ունէի իմ աշխարհային իմաստութեան մասին. բայց և այսպէս հետեւեալ օրը առաւօտուն, այն բոպէին, որ պիտէր գնայի և հազիւ մեր դռնից մի քանի քայլ յառաջ էի գնացել, կինս կանչեց ինձ և կասաց ականջումս խորհուրդ տուեց աչքերս բաց պահել:

Տօնավաճառը հասած, ինչպէս որ սովորութիւն է, ձիուն զանազան խաղացք անել տուի, բայց ի դուր, ոչ ոք չէր մօտենում

առնելու. վերջապէս մի առնող եկաւ և երկար միջոց քննելից և շջշրջելից յետոյ, նկատեց որ ձին մի աչքով կոյր էր և ոչնչ զին չըտուեց. յետոյ միւսը եկաւ և իբր թէ ձիու գլխումը ուռոյցք կար, ասաց թէ՛ Բախուր տանելու աշխատանքին չարժէ. երրորդը նկատելով որ՝ ձին ծանրաշունչ էր, ասաց թէ իւր կաշիի զինը չարժէր. չորրորդ աչքերից իմացաւ որ՝ որդունք ունէր. հինգերորդը հարցրեց թէ՛ ի՞նչ է գլխումն մտել տօնավաճառ բերելու այդ կոյր, կաղ և կարկամ կենդանուն, որ աղբեքը տանելու միայն է պիտանի: Այսպէս ես սկսեցի խորին արհամարհանք ըզգալ դէպի խեղճ կենդանին և արդէն ամաչում էի, եթէ մի նոր առնող էր մօտենում, որովհետեւ, եթէ բոլորովին չըհաւատայի ես ինչ որ ասում էին, այնու ամենայնիւ մտածում էի թէ՛ այդ բազմաթիւ վկայութիւնները ապացոյց էին ճշմարտութեան, որ և սուրբն Պրիգոր հաստատում է բարի դորձքերի վերայ ասած ճառի մէջ:

Մինչ այս ամօթալի վիճակի մէջն էի ես, իմ վիճակակից եկեղեցականներից մինը, որ հին ծանօթս էր և որ նմանապէս տօնավաճառում գործ ունէր, մօտ եկաւ ինձ և ձեռք մեկնելով առաջարկեց մերձակայ սրանդոկը մտանել մի բաժակ որ և է խմելքը ընդունելու. կամաւ յօժարեցի այդ առաջարկութեանը և նորա քամակից մտի պանդոկը: Մեզ տարեցին փոքրիկ յեանասնեակը, ուր ոչ ոք չըկար, բացի մի պատուելի ծերունուց, որ բոլորովին ընկղմված էր մի մեծ գրքի ընթերցման մէջ: Միայն կեանքիս մէջ չէի տեսած այդպիսի մարդասիրական կերպարանք. արծաթեանդ մազերը ծածկել էին նորա մօրուարձակքը և նորա դարար ծերութիւնը երևում էր որ՝ առողջութեան և բարեսիրութեան արգասիք էր: Նորա ներկայութիւնից մենք չըմիջահատեցինք մեր խօսակցութիւնը. այլ շարունակեցինք մեր խօսք ու զըրոյցը բարդի զանազանակերպ փոփոխութեանց մասին, յետոյ քննութեան տակ ձգեցինք Ալիսթօնի հակաճառութիւնը, իմ վերջին տետրակը, սարկաւազապետի պատասխանին և այն խրատութիւնները, որոնցով ինձ դատապարտում էին:

Յանկարծ մեր ուշադրութիւնը դարձուց մի ջահիլ մարդ, որ ներս մտաւ և յարգանօք մերձեցալով դէպի ծերունի օտարականը, մի քանի խօսք ասաց նորան կիսաձայն: «Մի մեղադրիր

քեզ, որդի, ասաց ծերունին, բարի գործերը մի պարտք է, որ մենք յանձն ենք առել հատուցանել մեր նմաններին. վեր առահան, կրցանկանայի որ աւելի լինէր, բայց հինգ լուին կրթութեացնեն քո վիշտը, և դու կարող ես գործ ածել ինչպէս քո կամքն է»:

Համեստ երիտասարդը թափեց իւր շնորհակալութեան արտասուքը, բայց այդ շնորհակալութիւնը հազիւ թէ հաւասար վումբէր խմի հետ: Այս պատրաստ էի գրկախառնվել բարի ծերունու հետ, այնքան սիրահար էի նորա ողորմածութեանը: Նա շարունակեց իւր ընթերցումը, իսկ մենք նորոգեցինք մեր խօսակցութիւնը, մինչև որ՝ իմ ընկերը միտը բերեց թէ՛ գործեր ունէր վերջացնելու և խոստացաւ ինձ շուտով վերադառնալ, որովհետև ինչպէս ասում էր, Փրիմրօզ վարդապետի ընկերութիւնը նորա համար մի առանձին վայելչութիւն էր: Այս խօսքում ծերունի ազնուականը գլուխը բարձրացրուց և ուշադրութեամբ քննեց ինձ: Այն ինչ բարեկամն դուրս էր եկել, հարցրուց նա ինձ պատկանելի մեծարանօք, արդեօք մօտ կամ հեռաւոր կապակցութիւն ունէ՞ի ես Մեծն Փրիմրօզի հետ, միակնութեան քաջ պաշտպանի հետ, որ եկեղեցու ամուր պատուարն է համարվում: Արբէք իմ սիրտը այնպիսի անկեղծ զմայլումն չէր զգացել, որպէս այս բոպէում: «Պարոն, ասացի ես, մի ձեզ պէս ազնիւ մարդու հաւանութիւնը առաւելացնում է այն բաղդը, որ ձեր բարեսրտութիւնը արդէն ինձ ճաշակել տուեց: Վուք ձեր առաջև տեսնում էք Փրիմրօզ վարդապետին, միակնութեան պաշտպանին, որին դուք հաճեցիք մեծ կոչել: Վուք տեսնում էք ձեր առաջև այն թշուառ աստուածաբանին, որ երկար ժամանակ (բայց ինձ պատշաճ չէր ասել, որպիսի յաջողութեամբ) ոգորել է (կռուել) դարուս երկամուտութեան դէմ:— «Պարոն, գոչեց նա գրաված յարգանքից, ես վախումեմ որ՝ մեծ համարձակութիւն արած չըլինիմ, բայց դուք կընտրէք իմ քննասիրութիւնը, որոյ մասին թողութիւն եմ խնդրում»:

Այս բռնեցի նորա ձեռը և ասացի. «Այդ ազատութիւնը այնքան հեռի է ինձ դժկամակութիւն պատճառելուց որ՝ ես խնդրում եմ ձեզ ընդունել իմ բարեկամութիւնը այնպէս որպէս արդէն գրաւել էք իմ մեծարանօքը»:

— Գահութեամբ ընդունումեմ այդ մեծագին շնորհք, ա-  
սաց նա, սաստիկ սեղմելով իմ ձեռք:

«Ո՞վ դու փառաւոր յիցուկ անյողողող ուղղափառու-  
թեան. մի՞թէ ես յիրաւի նորան եմ տեսնում. . .»

Այս սեղ ես պարտաւոր համարեցի ինձ միջահատել նորա  
խօսքը, ըստ որում, թէ և ինձ, իբրև հեղինակի, փաղաքշանքի  
մեծ բաժինն էր առաջարկվում մարսելու, այնու ամենայնիւ  
իմ համեստութիւնը չէր կարում այլ ևս համբերել: Արբէք որ  
և է վէպքի հերոսները մի քանի ժամի մէջ չէին կապակցվել  
միմեանց հետ այսպիսի մտերմութեամբ: Մենք խօսակցութիւն  
արեցինք զանազան առարկաների վերայ. սկզբում նա ինձ երե-  
ւեց առաւել բարեպաշտ, քան թէ դիտուն և ես մտածում էի  
թէ՛ նա արհամարհելու էր բոլոր մարդկային վարդապետու-  
թիւնները, իբրև ունայն խօսքեր, բայց սորանով իմ մեծարանքը  
դէպի նա չէին պակասում. որովհետև ես ինքս երբեմն գաղա-  
նաբար պարարում էի մի նոյն օրինակ կարծիք: Այս պատճա-  
ռով ես առաջարկեցի իմ նկատողութիւնը թէ՛ աշխարհս ընդ-  
հանրապէս մի պարսաւելի անտարբերութիւն է ցոյց տալիս դէպի  
հոգևոր ուսմունքը և թոյլ է տալիս իւրեան առաւել սնտախ  
զբաղմանց քամակից դնալ:

«Ո՞հ, պարոն, պատասխանեց նա այնպէս, որպէս թէ բու-  
լոր իւր դիտութիւնը պահպանել էր այս բողբի համար. ո՞հ,  
պարոն, աշխարհը երկխայութեան մէջ է ընկնում, նա խոնար-  
հում է դէպի իւր անկումը, բայց և այսպէս աշխարհակազմու-  
թիւնը կամ արարչագործութիւնը ամենայն դարու փիլիսոփա-  
ներին մի թել է տուել ոլորելու»:

Որպիսի խառնակ կարծիքներ են յարուցել նորանք աշ-  
խարհի արարչութեան մասին: Սանթոնիարոնը, Մանեթօնը,  
Բերօզը և Օցելուս-Վիւկանոսը ամենքը վայրապար են յարձակ-  
վել այս գաղտնիքի վերայ: Վերջինը ասել է Anarchon ara kai  
atelutaion to man, որ կամի ասել թէ՛ «Բոլոր աշխարհք ոչ բա-  
կիզն ունի և ոչ վերջ: Նմանապէս և Մանեթօնը, որ Նարու-  
քողօն-Աստերի ժամանակն էր (Աստերը մի Ասորոց բառ է և այս  
երկրի թագաւորների սովորական մականունն է, զորօրինակ՝ Տէկ-  
լատփաէլ-Աստեր, Նարօն-Աստեր և այլն): Մանեթօնը նոյնպէս

մի ցնորական կարծիք էր յօրինում այդ մասին, որովհետև ինչպէս մենք սովորութիւն ունինք ասելու . Ek to biblion kubernetes, որ նշանակում է թէ՛ «Պրեանքը աշխարհին խելք չեն սովրեցնելու . . . .» : Ի այց ներեցէք, պարոն, ես հեռանումեմ մեր խօսակցութեան առարկայից :

Յիրաւի ես չէի կարում հասկանալ թէ՛ ի՞նչ յարաբերութիւն ունէր աշխարհի արարչագործութիւնը այն բաների հետ, որոնց վերայ մենք խօսում էինք : Այդ մի նոր ապացուցութիւն էր իմ համար, օտարականի գրոց տեղեակ մարդ լինելուն և դորա համար առաւել էի յարգում նորան : Աամելով նորան կրկին փորձել, առաջարկեցի իմ սիրելի առարկան, որ ես փորձի քար էի համարում, բայց նա այնքան մարդասէր և համեստ էր որ՝ չըկամեցաւ . հակառակել և յաղթութիւնը ինձ թողուց : Ամեն մի նկատողութեանս դէմ, որ համարեա՞ թէ հանդէս էր կանչում նորան վիճելու, նա ժպտումէր, գլուխը շարժումէր և ոչինչ չէր ասում . սորանից ես հետեւեցնում էի թէ՛ նա կարող էր շատ բան ասել, եթէ պատշաճ համարէր : Խօսակցութիւնը մի անդգալի կերպիւ հնութեան բաներից անցաւ դէպի այն բաները, որոնց պատճառով տօնավաճառ էինք եկել : Աս նորան ասացի թէ իմ դաշու պատճառը այն էր, որ մի ձի էի բերել վաճառելու, և մի բաղդաւոր զիպուածով նորա պատճառը ևս այն էր եղած որ՝ ձի դնէ իւր մի վարձակալի համար : Աս բերեցի իմ ձին և խաղոյն մեր վաճառը վճռեցինք, մնումէր միայն փողը ինձ հատուցանել . «Նա հաննց մի քանի քէլէի երեսուն լուի և խնդրեց ինձ փոխելու : Արովհետև ես կարողութիւն չունէի նորա խնդիրը կատարելու, կանչեց նա իւր ծառային, որ չըյստպողեց ներկայանալ վայելուչ շուրերով «Վո, Աբրահամ, ասաց նա և դնա, փոխիր ոսկու, մեր գրացի Թակսօնի մօտ կամ ուրիշ տեղ » :

Օտանս դուրս եկաւ, իսկ տէրը սկսեց մի ախտաշարժ հրապարակախօսութիւն անել արծաթի պակասութեան մասին, ես ևս յետ չըմնալու համար սկսեցի ողբալ ոսկու սաստիկ պակասութիւնը, այնպէս որ՝ մինչև Աբրահամի վերադառնալը մենք արդէն համաձայն էինք թէ՛ ոչ մի ժամանակ այնպէս դժուար չէ եղել, որպէս այժմ, ոսկի կամ արծաթ ձարելը : Աբրահամը դարձաւ և մեզ ասաց թէ՛, բոլոր տօնավաճառը շրջել էր և բիլիթը

չէր կարողացել փոխելու, թէ և սորա համար կէս ոսկի առաւել էր խոստացել :

Այդ պարագան մի անակնկալ արգելք էր մեր տուրեւանի վերջաւորութեանը. բայց ծերունի ազնուականը, փոքր ինչ մտածելուց յետոյ, հարցրուց ինձ թէ՛ ճանաչու՞մէի արդեօք Մալումօն Ֆլեմբորօֆին, որ նոյն նահանգումն էր բնակում: Աս շտապեցի պատասխանել թէ՛ իմ մերձաւորագոյն գրացին է նա:

«Ուրեմն, ասաց նա, կարծումեմ թէ՛ մենք կարող ենք վերջացնել մեր գործը: Աս ձեզ կըտամ մի տոմսակ նորա վերայ, տեսած բուպէին հատուցանելի. կարեմ ասել թէ՛ նա այնպիսի հաւատարիմ անձն է, որի նմանը հինգ մզոն չըջակայքում չէր կարելի գտնել: Աս շատուց է նորան ճանաչումեմ և մեր ջահել ժամանակը շատ խաղացել ենք միմեանց հետ»:

Մի տոմսակ տեսած բուպէին հատուցանելի իմ գրացու վերայ արժէր պատրաստական արծաթի, որովհետեւ ես նորան ճանաչումէի իբրև կարողութեան տէր մարդ: Յանձնարարական թուղթը ստորագրած ես առի ձեռս և Պ. Յ. Գ. Կնկինսօնը (ծերունի ազնուականի անունն էր), նորա ծառան և իմ պառաւ Բլակբերրին դուրս գնացին, ինչպէս երևումէր կատարեալ գոհութեամբ:

Այն ինչ ես մենակ մնացի, սկսեցի մտածել թէ՛ մի գուցէ սխալել էի ես մի անծանօթ մարդու տոմսակ առնելով և իմաստութեամբ վճռեցի իսկոյն հասնել ձի առնողին և մի հնարով յետ առնել նորանից իմ ձին, բայց արդէն ուշ էր: Ճանապարհընկայ դէպի տուն, որոշած լինելով, որքան կարելի է շուտով թուղթը փողն փոխել: Իմ պատուելի գրացիին ես գտի դրան առաջև նստած, ծխափողը (չ-է-ը) բերանին, տուեցի նորան փոքրիկ տոմսակը նորա հասցէով, որ երկու անգամ կարգաց նա:

«Կարելի է չես կարում անունը կարգալ, ասացի ես: Այփրախիմ Գ. Կնկինսօն է»:

— Չէ, անունը բաւական պարզ է գրած, պատասխանեց նա, նոյնպէս և նորան ճանաչումեմ, իբրև ամենամեծ խարերայի աշխարհի երեսում: Սա նոյն ճարտար գողն է, որ ակնոցները ձեզ վաճառեց. մի պատուելի դէմքով, սպիտակ մազերով շաղաշուտ, որ ձեռները գրպաններում չի պահում: Անշուշտ նա ձեզ համար կարդացած կըլինի մի երկար հատուած յունական լեզուից, աշխարհածնութեան և տիեզերքի ստեղծագործութեան վերայ»:

Ես պատասխանեցի միայն հեծութեամբ մոնչելով :

«Այո՛, այո՛, շարունակեց նա, միայն այս հատուկտոր զխտութիւնը ունի նա և մինչ մի գիտուն մարդու ընկերանումէ իսկոյն հանդէս է կազմում իւր իմացածից. ճանաչումեմ այդ ստահակին և կըհատուցանեմ նորան փոխարէնը» :

Որքան և վշտացած էի ես, բայց մի մեծ փորձը դեռ ևս ըստպատումէր ինձ՝ կնոջս և աղջկերանցս հանդէպ եկած ժամանակը: Երբէք մի աշակերտ ուսումնարանից փախչելից յետոյ, այնպէս չէր վախենալ կրկին դառնալ և նստել իւր տեղում, խիստ վարժապետի աչքի առաջն, որպէս ես էի վախում տուն վերադառնալ. բայց ես վճռեցի հալածել փոթորիկը, ամենից առաջ ինքս ինձ տրամութեան և զայրուցքի տալով :

Ելի տուն և, աւանդ, ընտանիքս ոչ միայն ամենեւին յօժարութիւն չունէին պատերազմելու, այլ արտասուքի հեղեղ էին թափում: Պ. Թօռնհիլը եկած է եղել նորանց ասելու թէ՛ քաղաք գնալուց նորա բոլորովին պիտէր հրաժարվէին, որովհետեւ երկու տիկնայքը մի չարախորհուրդ մարդուց մեր դէմ՝ զզուշացրած՝ նոյն իսկ օրը գնացել էին մայրաքաղաք: «Կա չէր կարացել իմանալ ոչ այս համբաւի էութիւնը և ոչ թէ՛ ո՞վ էր նորա յօրինողը. բայց ի՞նչ և լինէր այդ լուրը և ո՞վ և լինէր նորան տարածելու հեղինակը, երկրատէրը հաւատացրել էր թէ՛ ինքը մնալու է մեզ բարեկամ և պաշտպան: Այս թախծալից պարագայքը ստիպեցին ընտանիքիս կատարեալ հնազանդութեամբ տանել իմ խարվկու զժկամակութիւնը, որ նսեմանումէր արդէն մի այլ մեծագոյն աղէտքի առջև: Մեզ առաւել շփոթումէր այն, թէ՛ ո՞ր պիտի անարգ մարդ է եղել նա, որ զրպարտել է մեր անմեղ ընտանիքին, որոնք բաւական զճուճ էին նախանձ զրգուելու համար և բաւական անպաշտպան ասելութիւն յարուցանելու համար:

ԳԼՈՒԽ 15.

Պ. Բուրչելի նեղութիւնը յայտնվում է. — Մեծ իմաստութիւնի ծայրը երբեմն յիմարութիւնի և հասնում է:

Ի ողոր երեկոն և միւս օրուայ մի մասը գործադրեցինք մենք մեր թշնամիին իմանալու անպտուղ ջանքի մէջ: Հազիւ թէ մեր շրջակայքում մի ընտանիք մնացին, որոնց վերայ մեր կասկածը չըտարածէինք և մեզնից ամեն մինը ունէր իւր մէջ ընտիր պատճառներ իւր կարծիքը պաշտպանելու: Մինչ այսպիսի վարանմանց մէջ էինք, մեր փոքր երեխներքից մինը, որ գրտումը խաղում էր, մի թղթի պահարան բերեց, մարգագեանի վերայ գտած: Իսկոյն ճանաչեցինք մենք, որ Պ. Բուրչելին էր պատկանում, որովհետեւ շատ անգամ նորա ձեռքում տեսել էինք. պահարանը պարունակում էր իւր մէջ ինչ ինչ տեղեկութիւններ զանազան առարկայից մասին. մեր ուշադրութիւնը առաւել զըրաւեց մի կնքած նամակ, որի վերայ գրած էր պատճէն մի անանուն նամակի, ուղարկվելու է Թոննհիլն ապարանքում բնակող տիկիններին: Իսկոյն մենք մտածեցինք թէ՛ սա պիտի լինի մեզ անարժանաբար զրգարտողը և խորհրդակցութիւն արեցինք թէ՛ քակե՞նք կնիքը, թէ՛ ոչ: Այս հակառակ էի, բայց Սովիան, որ հաստատում էր թէ՛ Պ. Բուրչելը մի այդպիսի անարգութեամբ յանցաւոր լինել չէր կարող, պնդում էր կարգալ նամակը. նորա կողմը պահպանեցին և մնացորդ ընտանիքս. թոյլ տալով նոցա յորդորանացը՝ ես կարգացի յետագայ տողերը

«Տիկնայք.

«Այս նամակը բերողը կրճանուցանէ ամեն բանը, ինչ որ «կրցանկայիք դուք իմանալ այն անձնի մասին, որից այդ ազգաբարութիւնը գալիս է. կարեմ՝ ասել միայն թէ՛ նա մի բարեկամ է՝ անմեղութեան, և պատրաստ է արգելք լինել, որ այդ ան-

«մեղութիւնը չըհրապուրվի: Այս հաստատապէս իմանումեմ որ՝  
 «դուք դիտաւորութիւն ունիք քաղաք տանել, ձեզ ընկերակցու-  
 «թեան օրիորդներ շինելու, երկու մատաղահաս աղջկերանց, ու-  
 «րոնց փոքր ինչ ճանաչում եմ: Չրկամելով թոյլ տալ որ՝  
 «պարզամտութիւնը խաբվի և առաքինութիւնը աղտոտվի,  
 «ես զգուշացնումեմ ձեզ թէ մի այգւպիսի ընթացքի անպատշա-  
 «ճութիւնը կարող է շատ վտանգաւոր հրականք ունենալ: Իմ  
 «կանոնները թոյլ չեն տալիս ինձ խտուութեամբ վարվել ա-  
 «նարդ և ապականեալ մարդկանց հետ և ես այդ հնարը չէի գործ  
 «ածել՝ իմ դիտաւորութիւնը յայտնելու, կամ որ և է մոլար  
 «ջանքը ճնշելու համար, եթէ գործը ուղղակի յանցանքի չընա-  
 «յէր: Բնագունեցէք մի բարեկամի խորհուրդը և ծանրակշռու-  
 «թեամբ մտածեցէք այն վտանգների մասին, որոնք յառաջանալու  
 «են, վատանունութիւն և մեղք մուծանելուց մի առանձնակի-  
 «ցութեան մէջ, ուր խաղաղութիւն և անմեղութիւն են բնակվել  
 «մինչև այսօր»:

Մեր տարակուսութիւնը այժմ լուծվեց, թէ և յիրաւի  
 այդ նամակի մի քանի տեղերը երկու տեսակ միտք էին ներկայաց-  
 նում և պարսաւանքը կարէին ուղղված համարվել նոյնպէս դէպի  
 այն անձինքը, որոնց նամակն էր գրված, որպէս և դէպի մեզ. բայց  
 ճանապարհորդութիւնը խափանելու շարակամ դիտաւորութիւնը  
 յայտնի երևումէր և մեզ փոյթ չէր աւելի ինչ որոնել: Ահա հա-  
 զի համբերութիւն ունեցաւ մինչև վերջը լսելու բարկութիւնը  
 տիրեց նորան անսահման բռնութեամբ նամակագրի դէմ: Օլիվիան  
 նոյնպէս սրամտութեամբ զրգուված էր, իսկ Մովսիսն ապշված էր  
 այդ շարութիւնից: Ար ինչ ինձ է վերաբերում, ես այդ բանի մէջ  
 տեսնում էի մի սեւաթոյր օրինակ ապերախտութեան առանց  
 պատճառի, որպիսուն երբէք հանդիպած չէի և բացատրում էի  
 այդ այնպիսի կարծիքով թէ՛ նա ցանկանումէր իմ կրտսերազոյն  
 աղջկան պահել մեր գաւառում՝ նորա հետ շուտ շուտ տեսնելու  
 նպատակով: Մենք ամենքս նստած էինք, վրէժխնդրութեան զա-  
 նազան խորհուրդներ մտածելով, մինչ մեր միւս փոքրիկ որդին,  
 վազելով եկաւ մեզ ասելու թէ՛ դաշտի ծայրում նկատուե՞ց Պ.  
 Բուրչկին: Եռաւել հեշտ է հասկանալ, քան թէ նկարագրել  
 այն բազմատեսակ զգայութիւնքը, որ մեր մէջ զրգուում էին, որ-

պէս նոր գործած նախատանաց թաղճանքը, նոյնպէս և առ ձեռն պատրաստ վրէժխնդրութեան բաւականութիւնը: Մենք ուզում էինք յանդիմանել նորան իւր ապերախտութիւնը և վճռեցինք այդ բանը անել որքան կարելի է խայթողական կերպիւ:

Ամենքս համաձայն էինք ընդունել նորան մեր սովորական ժպիտով և սկզբում խօսել նորա հետ առաւել քան սովորական մարդասիրութեամբ, փոքր ինչ զուարճացնել նորան, և յետոյ, այս կեղծեալ խաղաղութեան միջում, փոթորիկի պէս յարձակվել նորա վերայ և ընկճել իւր սեփական թշնամանաց զգացողութեան տակ: Այս այսպէս վճռած՝ կատարումը յանձնեցինք կրնոջ, և ճշմարտապէս մի այդպիսի գործ կատարելու տաղանտը նա ունէր: Պ. Բուրչիլը մօտենումէր, նա մտաւ ներս, մի ամթոռ վեր առեց և նստաւ:

«Պատուական օր է, Պ. Բուրչիլ»:

— Յիրաւի, շատ պատուական օր է, վարդապետ, թէ և ես պատրաստ եմ անձրև գուշակել փապարածքիս ցաւի պատճառով:

«Եղջիւրներիդ ցաւի պատճառով, աղաղակեց կինս, շառաջամբ ծիծաղելով և նոյնժամայն ներողութիւն խնդրեց այդ ծաղրախօսութեան մասին»:

— Ի բոլոր սրտէ ներումեմ ձեզ, սիրելի տիկին, պատասխանեց նա, որովհետև ես խոստովանումեմ որ՝ ոչինչ ծաղրական չէի գտնելու այդ խօսքերի մէջ, եթէ դուք ինձ չասէիք:

«Վարելի է չըզտնէք, պարոն, ասաց կինս, մեզ աչքով անելով, բայց ես զբաւաղիր կրկնիմ որ՝ դուք կարող էք ասել, ի՞նչքան խեղկատակութիւն է հարկաւոր, որ մի ունկիի ծանրութիւն ունենայ»:

— Այս ենթադրումեմ, տիկին, որ դուք այս առաւօտ ճարտար կատակների քաղուածք էք արել: Մի ունկի խեղկատակութիւնը մի չքնաղ կատակ է, (բայց անհաճոյ չըլինի՞ ձեզ) ես կէս ունկի ողջմտութիւնը գերիվերոյ եմ դասում:

«Այս ձեզ հաւատում եմ, ասաց կինս, նմանապէս աչքով անելով, թէև ծիծաղողներ չունէր իւր կողմում. որքան մարդիկ եմ տեսել, որոնք ողջմտութեան մեծամեծ պահանջներ են յայտնում, մինչ դեռ իրանք հազիւ թէ ունին այդ ողջմտութիւնը»:

Անտարակոյս, պատասխանեց նորա հակառակորդը, դուք

ճանաչում կրլինիք կանանց, որոնք պահանջումն ունին խելքի մասին, որից իրանք բոլորովին զուրկ են:

Ես սկսեցի մտածել թէ՛ կինս ոչինչ չէր շահվելու վեճարանութեան այդ դարձուածից, վճռեցի մէջ ընկնել և աւելի խրատութեամբ և ուրիշ ոճով վարվել այդ բաների մէջ:

«Խելքը և ողջմտութիւնը, ասացի ևս ոչինչ են առանց բարութեան. սա է արժողութիւն տալիս բնատուր բարբին: Տգէտ, բայց բարեմիտ գիւղականը առաւել մեծ է, քան այն փիլիսոփան, որ վարակված է ամեն մոլութիւններով: Խնչ է նշանակում հանձարը կամ քաջութիւնը առանց սրտի:

— «Բարի մարդը Աստուծոյ ամենակատարեալ գործն է»: Փօփի այս կանոնին, որ շատ լսելուց արդէն ձանձրալի է եղել, ևս միշտ նայումեմ իբրև մի անարժան բանի՝ ճարտար մարդու համար, պատասխանեց Պ. Բուրչիլը և իբրև մի անարդ հրաժեշտի իւր սեփական գերազանցութիւնից: Կնչպէս մի զբքի արժանաւորութիւնը չի հիմնրվում այնու վերայ թէ՛ նորա մէջ պակասութիւններ չըկան, այլ թէ՛ մի քանի գեղեցկութեանց գերազանցութիւն կար, նոյնպէս և մարդկանց փառք և պատիւը նորա մէջ չէին կայանում որ՝ նորա անկատարութիւններից զերծ են, այլ նորա մէջ որ՝ մի քանի հոյակապ և հազուադիւտ առաքինութիւններ ունին: Բազմահմուտ մարդը կարէ խորագիտութիւն չունենալ, աէրունական անձնը կարէ ամբարտաւան լինել, պատերազմականը՝ անզուժ, բայց արդեօք սորանցից վերադաս կը համարենք արուեստաւորին, որ մեծ աշխատութիւնով իւր օրուայ գործն է կատարում, առանց պարսաւանքի, առանց ծափահարութեան: Եյսպէս ուրեմն՝ պիտէր վերադաս համարել Պլանդրիական ընկերութեան գուհիկ, բայց ուղղականոն նկարները, Խտալական վրձինի եռանդոտ, բայց և սքանչազեղ ազդեցութիւնից:

«Պարոն, պատասխանեցի ևս, ձեր նկատողութիւնը իրաւացի է այն դիպուածների մէջ, երբ հոյակապ առաքինութիւնները խառն են չնչին պակասութիւնների հետ. բայց երբ որ մի և նոյն հոգւոյ մէջ սաստիկ մոլութիւնները ընդդիմադրված են տարօրինակ առաքինութիւններին, այդպիսի բարքը արժան է արհամարհանաց»:

— Արեւիկէ է, ասաց նա, կան այդպիսի հրէշներ, որպիսիքք դուք նկարում էք, զարդարված մեծամեծ առաքինութիւններով և մեծամեծ մոլութիւններով. բայց իմ կեանքիս բոլոր ընթացքի մէջ սորա օրինակը չեմ տեսած. ընդ հակառակին, ես միշտ նկատել եմ, եթէ մի մարդու միտքը ընդարձակ է՝ նորա յօժարութիւնքը բարի են: Աստիճանաբարութիւնը այս տեղ ևս մեզ ցոյց է տալիս իւր քաղցր հոգաբարձութիւնը. նա այն տեղ է նուազեցնում իմացութիւնը, որտեղ սիրտը ապականված է, և պակասեցնում մէ կարողութիւնը, մինչդեռ չար գործերու կամք կար: Այս օրէնքը, թուի թէ, տարածվում է և կենդանեաց վերայ, որոնց ստորին ազգերը միշտ նենգաւոր, դժնդակ և անարդ են, մինչդէ՛ր միւսները զօրութիւն և կարողութիւն ստացած, մեծանձն, քաջ և հեզ են:

«Այս նկատողութիւնքը լաւ են հնչում, պատասխանեցի ես, բայց ինձ դժուար չէ այս խի բուպէին ցուցանել մի մարդու, (աչքերս նորա վերայ բեռեցի), որոյ զլուխը և սիրտը մի զարշիկ հակառակութիւն են կազմում: Այո՛, պարոն, շարունակեցի ես, ձայնս բարձրացնելով, և ես շատ ուրախ եմ որ՝ պատահութիւն եմ գտնում զիմակը խելու մի այդպիսի մարդուց, նորա պատրիչ վտահութեան մէջ: Օհանօթ է ձեզ, պարոն, այս բանը, այս թղթի պահարանը: — «Այո՛, պարոն, պատասխանեց նա անվողով խաղաղութեամբ, այս պահարանը իմն է և ես շատ ուրախ եմ, որ դուք գտել էք այդ»: — «Օհանօթ է ձեզ այդ նամակը, գրչեցի ես, մի շփոթվեցէք և նայեցէք դէպի իմ երեսը, ես ձեզ եմ հարցանում, ճանաչում էք այդ նամակը: — «Այո՛ նամակը, ասաց նա, այո՛, իմն է, ես եմ գրել»: — Ի՞նչպէս կարացիք դուք այբբան անարգութեամբ և աստիճանաբարութեամբ վարվել: — Իսկ դուք ինքներդ, պատասխանեց նա տարօրինակ յանդգնութեամբ, ի՞նչպէս կարացիք անարգութիւն ունենալ այդ նամակը բանալու: Պիտէ՞ր որ՝ ես կարող եմ ձեզ ամենքիդ կախել տալ, միայն այս բանի համար. ինձ պիտոյ է միայն գնալ և երդմամբ յայտնել որ և է դատաւորի թէ՛ դուք իմ պահարանի փականքը կտարել էք և ձեզ ամենքիդ, իբրև յանցաւորների, կրկախեն այս տեղ, այս դրան մօտ»:

Այս անակնկալ յանդգնութիւնը այնպէս շփոթեց ինձ, որ

հազիւ էի կարենում պահպանել ինձ բարկութիւնից: — Վաճառ գնա այս տեղից, թշուառ ազերախտ, աղաղակիցի ես, դուքս, և մի ապականիր իմ բնակութիւնը քո ներկայութեամբ: Վհահ, և հեռակիր որ՝ երբէք քեզ չըտեսնեմ: Վաճառ գնա այս տեղից և այլ ևս չ'անցնես այս շէմքով: Աս ցանկանումեմ որ՝ քո բոլոր պատիժը լինի միայն քո խղճմանքի ըստդասնքը, նա կըլինի միայն քո դահիճը: — Այսպէս խօսելով, ևս ձգեցի դէպի նա նորա պահարանը, որ նա ժողովեց ժպտանօք և կրկին փակեց կատարեալ խաղաղութեամբ. սորանից յետոյ դուքս եկաւ և մեզ թողեց յաղթահարված իւր խաղաղութիւնից: Ահես կատաղած էր մահաւանդ նորանով որ՝ ոչինչ բան չըկարաց զրգոել այդ մարդուն, կամ ամօթալեց կացուցանել իւր անարդութեանց պատճառով: «Միրելե, ասացի ես, կամելով խաղաղացնել մեր մէջ սաստիկ բորբոքված կիրքերը, չըպիտի զարմանանք որ՝ չարազործները ամօթ չունին. նորանք կարմրում են միայն այն ժամանակ, երբ պատահաբար բռնրվումեն բարի գործելուս, և պարծենումեն իւրեանց մոլութիւններով »:

«Յանցանքը և ամօթը, ասումէ առակը, սկզբում անբաժան էին միմեանցից և իւրեանց ճանապարհորդութիւնը ընկերութեամբ էին անում: Բայց շուտով այդ միաւորութիւնը դժուարակիր և անհաճոյ դարձաւ երկուքին ևս: Յանցանքը ամօթին անդադար ներութիւն էր տալիս և Ամօթը շատ անգամ մասնումէր Յանցանքի դաղանի դաւաճանութիւնքը: Արկարատե անհամաձայնութիւնից յետոյ, նորանք դաշնադիր եղան վերջապէս յաւիտեան բաժանվել միմեանցից: Յանցանքը համարձակ գնաց մենակ, քայլերը փութացնելով, որպէս զն հասնէ ճակատագրին, որ առջևից գնումէր գահիճի դէմքով: Ամօթը բնականաբար երկչոտ, ուշացրուց իւր քայլերը, որ միաւորվի առաջինութեան հետ, որին իրանց ուղեգնացութեան սկիզբից թողել էին յետկում: Այսպէս ահա, սիրելիք, ամօթը թողնումէ մարդկանց, որոնք մոլութիւնների մէջ որ և է, յատաճադիմութիւն են գործում և միաւորվումէ այն փոքր առաջինութեան հետ, որ դեռ ևս մնումէ մարդկանց մէջ:

## ԳԼՈՒԽ 16.

Ընտանիքը մի խորամանկութիւն են ձեռնարկում, բայց հանդիպումն առաւել  
խորամանկ մարդկանց :

Չբզխտեմ ի՞նչ էր զգում Մովսիս դուստրս, բայց մնացած  
ընտանիքս ուրախ էին, որ Բուրչեյը բացակայ լինելով, այլ ևս ըն-  
կերութիւն չէր անելու մեզ մօտ ջահել երկրատիրոջը, որի այցե-  
լութիւնքը օրէ օր յաճախում էին և երկարանում : Աեղացած  
աղջկերանցս քաղաքի զուարճութիւններից զրկվելու մասին, այս  
պարոնը ամեն դիպուածում ջանք էր անում զբօսեցնել նորանց  
այնպէս որ՝ հաշտվէին մեր առանձնական կեանքի հետ : Մովորա-  
բար նա գալիս էր առաւօտը և մինչ որդիս և ևս դբսումը մեր աշ-  
խատանքի յետկից էինք, նա մնումէր մեր տանը ընտանիքիս հետ,  
որոնք զբօսեցնումէր, նկարագրելով մայրաքաղաքը, ուր ամեն  
թաղերը նորան քաջ ծանօթ էին, պատմումէր այն նկատողու-  
թիւնները, որոնք պարտում էին թատրոնների մթնոլորտում և  
լաւ գիտէր ամեն հանձարեղ կատակները, յաւաջ քան թէ սո-  
րանք տպագրութեամբ հրատարակվել էին : Առօտակցութիւններից  
մնացած միջոցաժամը գործ էր անում աղջկերանցս փէրփէ խաղալ  
սովորեցնելու կամ նոցա երկու փոքրիկ եղբարքը բմբջամարտել էր  
տալիս, ասելով թէ՛ փորձված կրլինեն այդ գործում, և այսպէս  
նորան փեսայացնելու ակնկալութիւնը կուրացնումէր մեզ նորանց  
բոլոր անկատարութեանց դէմ : Հազար որոգայթներ էր լարում  
կինս նորան որսալու համար կամ, առաւել բարեխիրութեամբ խօ-  
սելով, բոլոր իւր յաջողակութիւնը գործ էր անում՝ իւր աղջկայ  
արժանաւորութիւնքը բարգաւաճ ցուցանելու : Այժմ թէ թէ յի հա-  
մար պատրաստած կարկանդակները սեղմէին և փշրվող, Օլիվիան

էր շինել այն. եթէ հաղարջն զինին խաղաան էր, նա էր քաղկ հաղարջը. նորա մասններն էին գեղեցիկ դալարութիւն տւել քա-  
ցախում պահած պաշարներին. նորա հանձարն էր վճռել թէ  
ի՛նչ նիւթերի խառնածք պէտք էր զնի վուզինդի մէջ: Սորանից  
յետոյ խեղճ կինը իւր կարծիքն էր ասում երկրատիրոջը, իբր թէ  
Օլիվեան և նա խկապէս մի հասակ (թոյ) ունէին և նրանց վեր էր  
կացնում և միմեանց մօտ կանգնեցնումէր տեսելու թէ՛ որն է  
երկուսից աւելի բարձրահասակ: Այս փոքրիկ խորամանկութիւն-  
ները, որ նա անհասկանալի էր համարում, որոնց միջից ամեն բա-  
նը պարզ երևումէր, շատ հաճելի էին մեր բարերարին, որ ամեն  
օր նոր ապացուցութիւններ էր ապիւս իւր տարիանաց, և եթէ  
ուղղակի չէր զիմում նա դէպի ամուսնութեան առաջարկութիւ-  
նը, կարելի է ասել փոքր էր մնացել արդէն: Աորա յետաձգու-  
թիւնը մենք համարում էինք բնական երկչոտութիւնից, և կամ  
կասկածանքից թէ՛ մի դուրս հօրեղբայրը անբաւական լինի սորա-  
նով: Բայց մի իրողութիւն, որ շուտով սորանից յետ պատա-  
հեց, անտարակոյս ցուցանումէր նորա կողմից մեր ընտանութեան  
անդամ լինելու դիտաւորութիւնը: Վեբօրան սորա մէջ տեսնու-  
մէր նոյն իսկ յայտնի խոստումն:

Արձակալ Պրիմբօրօֆին այցելութիւն զնացած՝ կինս և  
աղջկերքս խնայան որ՝ նորանց բոլոր ընտանիքը այն միջոցում նը-  
կարել էին տուել իւրեանց պատկերները մի նկարչի, որ մեր դա-  
ւառումը շրջելով՝ պատկերներ էր նկարում, ամեն մինը տասն և  
հինգ շելլինկով: Արովհետև շատուց ոտխում էինք մենք ճաշակի  
մասին մեր դրացիների հետ, մեր ամբարտաւանութիւնը խռովե-  
ցաւ այդ գործքից և անփոյթ լինելով իմ բոլոր խօսածներից,  
մերոնք վճռեցին նոյնպէս իւրեանց պատկերները ունենալ: Խընդ-  
րեցինք նկարչին մեզ մօտ (ի՛նչ պիտէր անէի) և ջանք էինք ա-  
նում որ՝ մեր ճաշակը գերազանցութեամբ փայլէր զիրքի ընտ-  
րութեան մէջ: Պրիմբօրօֆները, թուով եօթն, իւրեանց նկարել  
էին տուել եօթն նարինջներով, մի բոլորովին անհամ բան, ա-  
ռանց պէսպիսութեան, առանց կինդանութեան, առանց յօրի-  
նուածի որ և է զգայական զօրութեան: Մենք ուզում էինք ա-  
ռաւել հոյակապ ոճով բան: Արկար վիճարանութիւնից յետոյ,  
միաբան վճռեցինք մի մեծ պատմական նկարի մէջ ամենքս միասին

ներկայացվելու, որով մի ընտանութեան պատկեր կրկազմէինք: Այս կրկններ աւելի աժան, ըստորում մի շքանակով կրբաւականանայինք, և անչափ երեւիլի, ըստ որում պատշաճագէտ անձինք այսպէս էին իւրեանց նկարել տալիս: Արովհետեւ պատմութիւնը չէր ներկայացնում մեզ այնպիսի առարկաների գուգաւորութիւն, որ պատշաճ էր մեր դիտաւորութեանը, այնուհամար բաւական համարեցինք օրինակել որոշ որոշ պատմական անձինք, անկախ մինը միւսից: Աինս ցանկացաւ ներկայացված լինել չատուածուհի գեղեցկութեան և նկարչին խնդրեց չըննայել անդամանդի զարդարանքը լանջապանի և մազերի մէջ:

Մեր երկու փոքրիկ որդիքը նորա երկու կողմից պիտէր լինէին իբրև քրոջս, մինչ ես ինքս քահանայական գրեատով, դօտի (սօսթ) կապած, նորան մեծարանք կրցուցանելի Ախթանեան վիճարանութեան գրքերովս: Օլիվիա դուստրս կամեցաւ նրկարվել ասողչն, նստած ծաղկաւէտ լեռնակի վերայ, կանաչագոյն և ոսկեզարդ հեծերագրեատով, մարտիր ձեռնումը: Մոլիան ուղեց խաշնարած կին լինել այնքան ոչխարներով, որքան կարող էր կրտաւը բովանդակել, բայց առանց նկարի զինը աւելցնելու և Մովսէսը կիւրակէի շորերով և փետրազարդ գզակով:

Մեր այս ընկերութիւնը այնքան զարմացրուց երկրատիրոջը որ՝ նա թախանձեց իւրեան ևս թոյլ տալ պատկերի մէջ նկարվելու, իբրև մեր ընտանիքի անդամ, Աղեքսանդր Մակեդոնացւոյ զիրքով և Օլիվիայի առաջն չորսած: Այս բանի մէջ մենք տեսնում էինք մի յայտնի նշանակ նորա մեզ հետ կապակցվելու ցանկութեան, ուստի և չըկարացինք մերժել նորա խնդիրը: Ակարիչը սկսեց իւր գործը և որովհետեւ նա շտապումէր, բոլորը վերջացաւ համարեն չորս օրում: Մի մեծ և գեղեցիկ բան էր այդ և պիտի խոստովանել որ՝ գոյններ խնայած չէին և այս առաւել գովելի էր կնոջս աչքում: Մենք ամենքս բողբոլվին գոհ էինք այդ գործուածով, բայց մի չարաբաղդ պարագայ, որ մեր միտքը եկաւ, երբ նկարը արդէն վերջացրած էր, մեզ զարհուրեցրուց: Այդ պատկերը այնքան մեծ էր որ՝ մեր ասնը բնաւ տեղ չըկար կախելու: Անհատկանայլ է թէ՛ ի՞նչպէս էինք մենք անհոգս եղել մի այսպիսի ծանրակշիւ հանգամանքի մասին, բայց միշտ այդպէս է որ՝ և ոչ մինը մեզնից այս մասին չէր մտածել: Արեմն փոխանակ մեր

անապարծութիւնը գոհացուցանելու, ինչպէս մենք յուսացած էինք, նկարը մնաց վշտալի կերպիւ յիշած խոհանոցի պատին, ուր կտաւը սկզբում տարածած էր շատ բարձր և շատ լայն որ և է դռնով անցուցանելու համար և այսպէս նա նշաւակ եղաւ արդէն մեր գլացոյց ծաղրածութեանց մինը բաղդատումէր նորան Աօրինդօն-Արուիզօէի ձիգ նաւակի հետ, որին տեղից շարժելը այնքան դժուար էր. միւսը ատումէր շատ նման է շիշերից կազմած կարժառի. մի քանիսը միմեանց հարցնում էին թէ ի՞նչպէս են դուրս բերելու այդ նկարը, միւսները զարմանում էին առաւել թէ՛ ի՞նչպէս էին ներս տարել:

Բայց եթէ մի քանիսի մէջ այդ նկարը միայն ծաղրալից ըզգացմունք էր գրգռում, միւսներին պատճառ էր տալիս առաւել չարանիւթ ակնարկութեանց: Արկրատիրոջ պատկերը մերոնց հետ խառն մի այնպիսի պատիւ էր մեզ համար, որ անշուշտ պիտէր նախանձ գրգռէր. խայտառակ լուրերը մեր մասին սկսեցին տարածվել և մեր խաղաղութիւնը անդադար վրդովում էին կարծեալ բարեկամները, որոնք գալիս էին մեզ պատմելու ամեն չար խօսքեր, որ թշնամիք մեր քամակից խօսում էին: Այս յայտարարութիւնները մենք ընդունում էինք կատարեալ արհամարհանք, բայց ոչքան առաւել պատերազմեն խայտառակութեան դէմ, այնքան առաւել նա զօրանումէ:

Մի նոր խորհրդակցութիւն արեցինք մենք այն մասին թէ՛ ի՞նչ հնարներ պիտէր գործ ածել չար լեզուները պապանձեցնելու համար և գտանք մի հնար, որ ինձ գոհացուցանելու համար, իմ կարծեօք խորամանկ էր. ահա ինչ էր այդ: Արովհետեւ մեր գլխաւոր նպատակը այն էր որ՝ մեզ ապահովենք պ. Թօռլն-Տիլի հանապազորութեանց պատուաւորութեան մասին, կիսս պէտք է ձեռնարկէր նորան քննելու, իբր թէ կամէր նորա կարծիքը իմանալ իւր անդրանիկ գտակը համար մի ամուսին ընտրելու մասին: Աւել թէ այս բաւական չէր լինել, որ նա իւր միտքը յայտնէ, նորան վախեցնելու համար, մի ոտիս յառաջ կրբերէր: Աս հրաժարվեցի ձեռնառու լինել այս վերջին հնարի մէջ, բայց Օլիվիա դուստրս հաւատացրուծ ինձ մի վաւերական կերպիւ թէ՛ նա կ'ամուսնանայ այն ցանկացողի հետ: Թէ և ես անհաւան էի

այդ խորատորհուրդ համարձակութեանը, բայց և արգելք լինելու միտք չունէի:

Առաջին անգամ որ Պ. Թօռնշիլը, մեզ տեսնելու եկաւ, աղջկերքս շտապեցին հեռանալ, որ խրեանց մայրը զխաղ ժամ ունենայ իւր խմաստուն հնարները գործադրելու. բայց նորա հեռացան Ռայն մերձաւոր սենեակը, ուստից կարէին բոլոր խօսակցութիւնը լսել: Ահնա հնարաղիտութեամբ սկսեց խօսել, զխտորութիւն անելով թէ՛ Պրիմբորօֆի օրիորդներից մինը, ինչպէս երևումէ, ընտիր ամուսին է գտել, որ է Պ. Սկանքերը. Թօռնշիլը մի հաստատողական նշան առած՝ կինս շարունակեց թէ՛ «Այն աղջկուները, որոնք հարուստ օժիտ ունին, պիտի վատահ լինին որ՝ լաւ ամուսիններ կրդանեն, բայց Աստուած օգնէ նորանց, որոնք ոչինչ չունին: Ինչո՞ւ է պէտք գեղեցկութիւնը, Պ. Թօռնշիլ, ինչո՞ւ են հարկաւոր ամենայն առաքելութիւնը, ամենայն մտածելի կատարելութիւնը այս անյազ և շահասէր դարուս մէջ: Հասարակաց ազգակր այն չէ թէ՛ ո՞վ է նա, այլ թէ՛ ի՞նչ ունի նա»:

— Տիկին, պատասխանեց երկրատէրը, ես հեռանումեմ ձեր ուղեղ և իմ յիմար նոր նկատողութեանց վերայ և եթէ ես լինէի թագաւոր՝ այլապէս կրլինէին այդ բաները: Այն ժամանակը ուկեղէն դար կրլինէր անօժիտ աղջկերքի համար և մեր երկու օրիորդքի հոգսը այդ մասին ամենքից յառաջ կրքաշղթին:

«Ո՛հ, պարոն, դուք ծիծաղում էք իմ վերայ, բայց ես կրցանկայի թագուհի լինել և զիտեմ յատկապէս թէ՛ ո՞ւմ կրնուրէր ամուսին իմ անդրանիկ դուստրը. բայց այժմ՝ մինչ դուք գէպի այդ նիւթը բերիք ինձ, կարէք արդեօք ցուցանել մի վայելուչ ամուսին նորա համար. արդէն տասն և ինն տարեկան է նա, հասակը բարձր և ուղեղ, կրթութիւնը լաւ, և որքան կարող եմ գտակ իմ կանացի խելքով՝ հանձնարը պակաս չէ»:

— Տիկին, պատասխանեց նա, եթէ ինձ յանձնված լինէր մի այդպիսի ընտրութիւն, ես կրցանկայի գտնել այնպիսի անձն, որ զարգարված լինէր ամեն բաներով, որոնք կարող են կրջանկութիւն տալ մի հրեշտակի, մի անձն, որի բարեմասնութիւնքը լինէին՝ խոհեմութիւն, հարստութիւն, գեղեցիկ ճաշակ, անկեղ-

ծութիւն. այսպիսի պիտէր լինել, տիկին, իմ կարծեօք վայելուչ ամուսինը:

«Ա, անտարակոյս, պարոն, ասաց կինս, բայց գուցէ կրճանացէք դուք մի այսպիսի անձն»:

— Զ, տիկին, ասաց նա. անհնար է ճանաչել նորան արժանաւոր անձն. նա անսպասուազանձ է, որին մի մահականացուչ կարող տիրել. հոգիս վկայ որ՝ ամենաչքնաղ կին է նա, ես ինչ որ մտածուեմ, այն եմ ասում, մի հրեշտակ է նա:

«Մհ, պարոն թօռնհիլ, դուք փաղաքշում էք աղջկաս, բայց մենք ահա քանի որ է որ՝ մտածում ենք նորան ամուսնացնել ձեր վարձակալներէց մինի հետ, որ իւր մօր մահից յետ, կրնոջ կարօտութիւն ունի, ատենը պահպանելու համար: Պիտէք ում համար եմ ասում, վարձակալ Մ իլիամի, որ բաւական հանգարտ մարդ է, պարոն թօռնհիլ, հաց ունի ուտեցնելու և քանիցս անգամ արդէն խնդրել է մեզ (այդ յիրաւի է): Բայց, պարոն, ասաց կինս վերջացնելու համար, շատ ուրախ կըլինէի, եթէ դուք հաւանէիք մեր ընտրութիւնը»:

— Ինչպէս եմ կարող, տիկին, հաւանել մի այսպիսի ընտրութիւն: Այդ գեղեցկութիւնը, հանձարը, քաղցրութիւնը զոհել մի շնականի, որ անոգայ է լինելու գէպի բոլոր այդ բարութիւնքը: Ներեցէք ինձ. երբէք չեմ կարող հաւանել այդպիսի անիրաւութիւնը, սորա համար ես ունիմ իմ պատճառները:

«Յիրաւի, պարոն, գոչեց Վերօրան, մի այլ բան է, եթէ դուք ունէք ձեր պատճառները. ինձ համար սքանչելի կըլինէր այդ պատճառները խմանալ»:

— Ներեցէք ինձ, տիկին, պատճառները այնքան յառաջացած են իմ սրտի միջ որ՝ չեմ կարող բացայայտել» . այս միջոցում ձեռը դրեց սրտի վերայ և ասաց՝ «Նորանք կրմնան ծածկված, թաղված այս տեղ»:

Նորա հրաժարվելուց յետոյ, ընդհանուր խորհրդակցութեամբ չըկարացինք մենք խմանալ թէ՛ ի՞նչ էին այդ մեծամեծ զգացմունքը: Օլիվիան կարծումէր թէ՛ ապացուցութիւն էին նորա բորբոքեալ տարփանաց, բայց ես նորա կարծիքի հետ հա-

մաձայն չէի. բոլոր այդ զեղեցիկ խօսուածքք վերաբերում էին ա-  
ռաւել արիանաց, քան ամուսնութեան: Կայց, [Թէ լաւ և [Թէ  
փատ լինէին այդ զգացմունքքը, մենք արդէն լճուեցինք կաթարել  
փարձակալ Ս իլիամի բաղձանքք, որ մեր դստեր այս կողմք գալեց  
ի վեր, չէր դադարում նորան ողբանք ցուցանելուց:

Հաջիւ այնպիսի առաքինութիւն կրողներ, որ կարող լինի դեմ կենալ երկար և բարձր հրապարակի զօրութեան :

Սաստիկ զբաղված իմ դասեր բարեբաղդութիւնով, ես մեծ բարեբաղդութիւն էի զգում՝ Վ. Լիլիամի հանապազորդութիւնքը տեսնելով. նա բարեկեցութիւն ունէր և նորա բարքը անխարդախ էր և խոհմամիտ: Մի փոքր խրախոյս էր հարկաւոր նորա անցեալ սէրը նորոգելու համար: Արկու կամ երեք օրից յետ, նա և Պ. Թօննիսիլը հանդիպեցան միմեանց մեր տանը. զմնեցին միմեանց կասկածանօք և բարկութեամբ, բայց Վ. Լիլիամը ոչինչ պարտ չէր իւր երկրաստիրօջը, ուստի և անհոգս էր նորա բարկութեան մասին: «Նոյնպէս և Օլիվիանս սքանչելապէս էր խաղում պչրօղի (coquette) գերը, եթէ կարել է խաղալ կոչել, որ ինչ նորան այնքան բնական էր: «Նա յայտնի ցուցանումէր թէ՛ իւր նոր պաշտօղին վերագաս էր համարում: Պ. Թօննիսիլը բոլորովին վհատված այս պարագայից, հրաժարական ասաց մտախոհ դէմքով: Խոստովանումէմ որ՝ չեմ կարում բացատրել նորա նեղութիւնը, մինչ նորան հեշտ էր այդ նեղութեան պատճառը հեռացնել, իւր պատուաւոր դիտաւորութիւնը յայտնելով. բայց որպիսի և լինէր նորա անհանգստութիւնը, դժուար չէր նկատել որ՝ Օլիվիայինը առաւել մեծ էր: Իւր պաշտօղների բազմապատիկ այցելութիւններինց յետոյ, նա միայնակութիւն էր որոնում՝ իւր թախանձանքին անձնատուր լինելու համար: Մի երկից, յետ նորա երկարատե կեղծեալ զուարթութեանը, յանկարծ տեսի նորան բոլորովին արտասուքի մէջ :

«Ի՞նչ տեսնումես, ասացի ես նորան, քո վատահոլութիւնը

դէպի Թօռնհիլե տարւիանքը երազական է, նա չարչարվում է մի այնպիսի մարդու ոտխուժիւնից, որ ամեն բանով նորանից ստոր է, բայց և գիտէ որ՝ իւրմէ է կախ քո ձեռը ապահովել իւր համար՝ անկեղծ առաջարկութեամբ»:

— Այո՛, հայրիկ, պատասխանեց դուտորս, բայց նա իւր պատճառները ունի այդ առաջարկութիւնը ուշացնելում. ևս գիտեմ որ՝ նա ունի պատճառներ: «Նորա նայեացքներին, նորա խօսքերին մտերմութիւնը ինձ համար ապացոյց է նորա կատարեալ յարգանաց: Յոյս ունիմ որ՝ շուտով նա կրցուցանէ իւր զգացմանց ազնուութիւնը, և այն ժամանակ դուք կբտեսնէք որ՝ իմ կարծիքը նորա մասին առաւել ուղիղ էին քան ձերը:

«Օլիվնա, սիրելի, ասացի ևս, բոլոր խորհուրդները, որ մենք արեցինք, նորան իւր միտքը յայտնել հարկադրելու, քեզնից էին առաջարկաց և կարգադրած և դու չես կարող ասել թէ՛ մի բանում քեզ հակառակել եմ: Բայց դու չըկարծես թէ՛ ևս պատրաստ եմ նորա պատուական ոտխիւն զոհել քո անկարգ տարւիանաց: Աս կրտամ քեզ այնքան ժամանակ, որքան հարկաւոր ես համարում քո կարծեալ պաշտօղին իւր միտքը յայտնել տալու համար, բայց մինչ այդ ժամանակը կըլտանայ և նա կըշարունակէ իւր լռութիւնը, այն ժամանակ ևս անշուշտ ուղում եմ որ՝ պատուաւոր Ա իլիամը վարձատրվի քո հաւատարմութիւնով դէպի նա: Իմ բարբի ուղղութիւնը, որով ևս մինչև այժմ վարվել եմ, պահանջում է այդ ինձնից. իմ հայրական գորովը առաւել չէ լինելու, քան իմ մարդապատկան արդարութիւնը: «Նըշանակիր ժամանակ, թող այնքան երկար լինի, որքան դու պատշաճ ես համարում, բայց և հողացիր տեղեկութիւն տալ Պ. Թօռնհիլին այդ վճռական ժամանակի մասին, որից յետոյ, ուրիշէ հետ եմ քեզ ամուսնացնելու: Աթէ՛ նա քեզ յիբաւի սիրումէ, նորա ողջմտութիւնը շուտով կ'ազդէ նորան միակ հնարը, որ նա պիտի գործադրէ քեզ յաւիտեան չըկորուսանելու համար:

Այդ առաջարկութիւնը, որոյ արդարութիւնը դուտորս չըկարաց ուրանալ, ընդունեց նա, կրկնելով հաստատուն կերպիւր Ա իլիամի հետ ամուսնանալու խոստումը, եթէ միւսը կըյամանէր իւր անզգայութեան մէջ: Այն ինչ մի պատահ ժամանակ գտնըվեցաւ, նոյն իսկ Թօռնհիլե ներկայութեամբ, պակի որը երկրատիրոջ ոտխի հետ նշանակեցինք մի ամսից յետ նոյն օրը:

Այսպիսի խիստ հնարները կարծես թէ կրկնապատկում էին Պ. Թօնն՝ հիշելով անխաբիա թիւերը, բայց ինչ որ Օլիվիան էր ձգմարտապէս զգում, ինձ էր անհանգիստ անում: Այս պատերազմի մէջ, որ նորա խոհանուր թիւերը և սէրը յարուցել էին միմեանց դէմ, նորա աշխուժութիւնը բոլորովին թողել էր նորան նա ջանկանում էր մենակ լինել և իւր ժամերը անցուցանում էր արտասուելով: Երբ շարժման անցաւ առանց Թօնն՝ հիշել կողմից ամուսնութիւնը արդէն լելու որ և է ջանքի. երկրորդում՝ նա դեռ ևս շուտ շուտ էր գալիս, բայց ոչինչ չը յայտնվեց. երրորդում՝ ամենեւին դադարեցրուց իւր այցելութիւնը և գուտարս, փոխանակ զայրացութիւն ցուցանելու, ինչպէս ես սպասում էի, մի մտախոհ խաղաղութիւն էր պահպանում, որ ես հպատակութեան տեղ էի ընդունում: Իմ մասին կարեւր տակ թէ՛ անկեղծօրէն վայելում էի այն միաբեր թէ՛ զաւակս զուարթ և խաղաղ վիճակի մէջ էր և ծափահարում էի շատ անգամ այն վճռականութեանը, որ նա ընդունել էր, երջանկութիւնը շուք ու փառքից աւելի վերադասելով:

Հարսանիքին չորս օր մնացած մի երեկոյ իմ փոքրիկ գերդաստանը զուարթարար կրակի առաջ և ժողովվել էր և պատմում էր անցեալ ժամանակի դանազան անցքեր, յօրինում էր ապագայի խորհուրդներ, ամեն մէկը Սպանիայի «դարձ» էր շինում, ծիծաղելով այն յիմարութիւնների վերայ, որ նորանց մտքով անցնում էին:

«Մըդի Մովսէս, ասացի ես, չորս օրից յետ հարսանիք է լինելու մեր տանը. ի՞նչպէս է երևում քեզ այդ բանը, ասա՛ մեզ փոքր ինչ քո կարծիքը այդ մասին»:

— Իմ կարծիքը, հայր, այն է, որ շատ բաւ բան է այդ. իբրևամբ մտածում եմ ես թէ՛ իմ քոյր Ալիկին ամուսնանալով վարձակալ Ալիլիամի հետ, այս վերջերս անարատձառ մեզ փոխ կըրտայ իւր ցբի («բա») քաշելու մամուլը և դարե՞ծուր եփելու սանը:

«Այո՛, ձգմարտ է այդ և աւելի ևս՝ նա կերպէ երբեմն մեզ զուարճացնելու համար Տիկնոջ մահը»:

— Այս երգը նա սովորեցրել է Վիկին, ասաց Մովսէսը, և ես քեզ հաւատացնում եմ որ՝ նա վատ չէ երգում:

«Եթէ այսպէս է, թող մեզ զբօսեցնէ. ո՛ր է նա, ո՛ր է Վիկը. թող երգէ բարձր ձայնով»:

— Աղբայր Վիկ, կանչեց փոքրիկ Վիլը, դուրս եկ քոյր  
 Վիվիի հետ. բայց Պ. Վիլիամը ինձ ևս սովորեցրել է երկու երգ,  
 որն որ, եթէ կամում էք, հայրիկ, ձեզ համար կ'երգեմ. ո՞րն էք  
 աւելի լաւ համարում, Մեռնող Կրօնը, թէ Մրմունջը կատաղե-  
 շան մահու վերայ:

Անտարակոյս Մրմունջը, սիրելի, ինձ դեռ ևս անծանօթ  
 է նա. Վերջորա, հոգիս դու զխոսես որ՝ վիշտը պապեցնումէ  
 մարդուս, տուր մեզ քո պատուական հաղարջի զինուց մի շեշ  
 մեր ուրախութիւնը արծարծելու համար: Ես այնքան արտա-  
 սուել եմ այս միջոցում զանազան եղբրերգութիւններից որ՝ ա-  
 ոանց մի բաժակ զուարթացուցիչ բանի, հաւաստի եմ թէ՛ չեմ  
 կարող գիմանալ այդ մրմունջին: Արի՛, Ափիա, սիրելիս,  
 սա քո փանդիւրը և մի փոքր ձայնակցութիւն քերքրի՛ր այս տը-  
 ղային»:

## ՄՐՄՈՒՆՋ

ՄԻ ԿԱՏԱՂԻ ԸԼՆ ՄԱՀՈՒ ՎԵՐԱՑ.

Եկէք, լսեցէք փոքրիկ ու մեծեր,  
 Երգով կրխօսեմ մի քանի բաներ.  
 Ի՞նչ այս իմ երգը դուք ասէք՝ կարճ էր,  
 Չանձրացնելու չէ ձեզ երկար ժամեր:

Իզլինդթօնումը երբեմն կրկինար  
 Մի ջահիլ տղայ բարբով շատ արդար.  
 Հաստատում էին թէ աղօթելուս  
 Վառ էր նորա մէջ միշտ հաւատ և յոյս:

Նորա սիրան, հոգին միամիտ յստակ,  
 Վեհանձն բարութեամբ լցված բովանդակ,  
 Իւր անձնը կրէր նա չէր զգեցնում,  
 Առանց ծածկելու խեղճի մերկութիւն:

Մի շուն էր կենում, որ տեղ որ նա էր,  
 Վուրք գիտէր անշուշա, թէ շատ կան գիւղեր,

Ուր կրգանքվին մեծ ու փոքր շուներ՝  
Գամիռ յալթանդամ, շնիկ ջահիլ կամ ծեր:

Մարդը և շունը սկիզբը բարեկամ,  
Շուտով իրար դէմ եղան չարակամ.  
Ի՞նչ արեց շունը. առեց կատաղեց,  
Մարդու վրան ընկաւ սաստիկ խաճատեց:

Մարդիկ բազմութեամբ իսկոյն վազեցին,  
Գլխացիք, խնամիք անշուշտ վճռեցին,  
Թէ շունն իսկ և իսկ խելքը կորցրել է,  
Պատճառ՝ իւր ազնիւ տիրոջը խաճել է:

Եմեն կողմանէ դէպքը դատեցին,  
Խոցուածը կարգով տեսին, քննեցին.  
Մարդը կրմեռնի, ասացին, վէրբից,  
Շունը կատաղի եղած պատճառից:

Բայց տեսէք, բանը ի՞նչպէս վերջացաւ.  
Ոչ դի մոքից երբէք այդ չանցաւ,  
Թէ մարդը վէրբից պիտէր բժշկվիլ,  
Կատաղութիւնից շունը սատակէր:

«Եւ երգեցիր, ազնիւ որդի Բիլլ, հաւատաւ ինձ: Ե՛րբ մրմունջը իրաւամբ կարէ կոչվիլ ողբերգական: շապա, սիրելիք, խմենք Բիլլի արեւշատութեան համար և ցանկանք նորան մի օր եպիսկոպոս լինել »:

— Ի բոլոր սրտէ, աղաղակեց կինս, և եթէ նոյնպէս լաւ կը քարոզէ՛նա, ինչպէս լաւ երգումէ, տարակոյս չունիմ որ իւր համար ճանապարհ կըբանայ: շամարեան բոլոր իմ ընտանիքը մօրս կողմանէ համբաւած էին երգեցողութեամբ: Մեր կողմում առակ էր դարձել արդէն թէ՛ Բիլլի կինսօրինսը երբէք չէին կարենում ուղիղ իւրեանց առջևը նայել, ոչ և շիւկինսօնները մի ճրագի փչել և մարել. բայց Արօղրամները իւրեանց համեմատը չունէին երգեցողութեան մէջ. որպէս և Մարտօրամները պատմարանութիւն անկու մէջ:

«Դնչ և իցէ, ասացի ևս, հրատարակական բանաստեղծութիւնների մէջ ևս առաւել սիրումեմ հասարակականը, քան նոր ժամանակի երգերը և այն քերթուածները, որոնք առաջի տունից սկսած քարացնում են մարդուս. տաղտուկ յառաջածութիւններ ևս ամենքը, որոնց ատում են, բայց գովում են: Անցրուր բաժակը դէպի քո կողայրը, Մովսէս: Այս կերերգական բանաստեղծների պակասութիւնը այն է որ՝ յուսահատ են լինում այն տառապանքների համար, որոնց մասին մարդկային ազգի մտացի մասը շատ փոքր է հոգս անում: Արցրել է արդեօք մի մեծատոհմ տիկին իւր օղիկը, հողմահարը կամ իւր սպանիական շնիկը, բարձրամիտ բանաստեղծը վաղումէ նրա մօտ այդ աղէտքը տաղաչափելու»:

—Վուցէ այդ լինի նորածե սովորութիւն վեմնագոյն յօրէնումաների համար, ասաց Մովսէսը, բայց ԱանեղաՅի երգերը, որոնք մեզ են հասնում, առաւել ընտանի ոճ ունին և ամենքը մի կաղապարից են ձուլված: Վօլներ հանդիպումէ Վօլիին և նուրանք մի խօսակցութիւն են սկսում. տղան տալիս է աղջկան տունովաճառում չնչին գնով առած մի ընծայ՝ մաղերը զարդարելու. աղջիկը սորա փոխարէն ընծայումէ մի փունջ ծաղկանց և սորա միասին ուղիղ գնումեն կկեղեցի, ուր ջահել օրիորդներին և հովիւներին խորհուրդ են տալիս որչափ կարելի է շուտով ամուսնանալ:

«Շատ աղնիւ խորհուրդ է այդ, ասացի ևս, և լաւ ներկայացրած ԱանեղաՅի երգերի մէջ, որովհետեւ, կթէ այդպէս է, ինչպէս ասումեն, խորհուրդը կատարելը շատ հեշտ է. ամուսնութեան հրաւիրելու հետ միասին, կինը ևս իսկոյն հայթայթումեն, անշուշտ մի լաւ վաճառք պիտի լինի այդ, ուր մեզ ցուցանումեն, ի՞նչ բանի պակասութիւն ունենք և նոյն ժամայն պակասած բանը պատրաստի առաջարկումեն»:

—Այո, հայր, կրկնեց Մովսէսը, Աւրուպայում երկու վաճառանոց միայն գիտեմ, որոնց մէջ կարելի է կին որոնել, ԱանեղաՅի Անգլիացում և Պոնթարարին Ապանիայում, բայց Ապանիայի տօնավաճառը տարին մի անգամ է լինում, մինչ մեր անգլիացի կանայքը ամեն երեկոյ են վաճառում:

«Իբրևուրդ ունիս, որդեակ, գոչեց նորա մայրը, բոլոր աշ-

խարհում միայն հինօրեայ Անդլիան է, ուր ամուսնացողք կարեն կին գտնել: — Ուր և կանայք խաղաղնում են իւրեանց ամուսիններին, միջահասակի ևս:

Հասարակաց ասած է օտար երկիրներում, եթէ մի կամուրջ ձգէին ծովի վերայ, ցամաքի բոլոր կանայք շտապով կըզային մեր կանանց ձեւերը առնելու, պատճառ որ՝ բոլոր Աւրոպայում չըկան Անդլիայի կանանց համեմատքը: Բայց, Վեբօրա, հոգիս, սուր մեզ մի շեշ ևս. Մովսէսը մի փոքրիկ տաղ կ'երգէ մեզ համար: Ոլբքան գոհութիւն պիտի մատուցանենք Աստուծոյ, որ մեզ պարզեւէ խաղաղութիւն, աստղութիւն, և մի համեստ բարեկեցութիւն: Աս ինձ առաւել բարեբաղդ եմ համարում այժմ, քան աշխարհի շատ թաղաւորները: Մեր այս զուարթագին գերդաստանի նմանը, այսպիսի ցնծակց դէմքերով, չըկայ բոլոր մեր շրջակայքում: Այո՛, Վեբօրա, մենք ծերանում ենք, բայց մեր կեանքի երկնոն խոտանումէ մեզ հանգիստ և երջանկութիւն: Մեր սերունդը յառաջ է գալիս անստգիւտ նախնիքից և մենք մեր յետքից կըթողնենք բարի և առաքինի զաւակունք: Սորանք կըլինին մեր ուրախութիւնը, մինչդեռ կենդանի ենք և յետ մեր մահից, իւրեանց յաջորդներից ամբիժ կաւանդեն մեր պատուաւորութիւնը: Արի՛, որդեակ, քո երգին ենք սպասում: ամենքս քեզ ձայնակից կըլինինք: Ուր է Օլիվիան, սիրելիս, նորա քերթեական ձայնը ամենից քաղցր է միարան երգեցողութեան մէջ:

Գեռ ևս այսպէս խօսում էի, Վիկը վազէվազ մտաւ ներս, աղաղակելով «Ո՛հ, հնչրիկ, հնչրիկ, նա չուեց գնաց, մեզնից մեկնեցաւ, բոլորովին մեկնեցաւ, իմ քոյր Ալիկին գնաց, որ այլ ևս չըվերադառնայ»: — Գնաց, մեկնեցաւ, որդի: — Այո՛, նա չուեց պարոնների հետ, փոստայի կառքով. նորանց մէջ մինը գրեկեց նորան ասելով թէ՛ պատրաստ է մեռանել նորա համար: Բայց նա շատ լաց եղաւ և ուղումէր վերադառնալ, միւսը կրկին մի քանի խօսք ասաց նորան և նա մտաւ կառքը. աղաղակելով՝ «Ո՛հ, ո՛հ, ի՞նչ կ'ասէ իմ խեղճ հայրը, մինչ կ'իմանայ իմ կորուստը»:

— Արի՛սե՛րք, դուեցի ևս, ընկեցէք թշուառութիւնից թըշվառութիւն, էլ չէ լինելու մեզ համար մի ժամ ուրախութեան. . . . Ո՛հ, երկնից բարկութիւնը կործանէ նորան և նորա ընկերն.

րին: Այսպէս դողանալ իմ զուակին: Այո՛, նա կրպատովի, սրովհետեւ յափշտակեց ինձնից այն քաղցր և անմեղ հողին, ուրին դէպի երկինք էի առաջնորդում . . . Մի մատաղահաս դուստարըս, զարդարված այնպիսի անմեղութիւնով . . . Այլ կըջացաւ բուրբ մեր երկրային երջանկութիւնը: Վնայե՛ք, որդիք զնայե՛ք, ընկեցե՛ք թշուառութեան և խայտառակութեան մէջ, էլ մի բան չեմ կարող շինել ձեզ համար, որովհետեւ սիրտս ջախջախված է:

«Հայր, աղաղակեց որդիս, այսչափ է միայն քո կարողութիւնը»:

— Արողութիւն, որդի, յիշաւի, նա կրտսննէ որ ես կարողութիւն ունիմ. բեր իմ ատրճանակները . . . կրցնամ զաւանձանի հետքից: Արզնամ, մինչդեռ նա երկրի վերայ է: Արքան և ծեր լինիմ, նա կրտսննէ թէ՛ կարող եմ զեւ ևս կործանել անարգ անզգամին, չար անօրէնին:

Այն ինչ ատրճանակներս առել էի, խեղճ կինս, որոյ կիրքը այնչափ յուզված չէին, գրկից ինձ: «Կամ սիրելի՛ ամուսին, գոչեց նա, Սուրբ Վիրքն է միակ զէկքը, որ պատշաճում է քո դողոջուն ձեռներին: Բացիր այդ զէկքը, սիրելիս, և փոխիր մեր անձկութիւնը դէպի համբերութիւն . . . Ո՛հ, ի՛նչպէս անարժանութեամբ խաբեց նա մեզ . . .»

— Յիշաւի, հայր, կրկնեց որդիս, ժամ մի դադարելուց յետոյ. քո սրտմտութիւնը շատ սաստիկ է և չափից անցնում է: Վու պիտէր մխիթարիչ լինէիր իմ մօրս, իսկ զու աւելացնումես նորա վիշաք: Վո ծերութեանը և մեծաշուք բարքին չի վայելում անիծել այդպէս քո ամենամեծ թշնամուն. որքան և թշուառ լինէր նա, չըպիտէր նորան նզովէիր:

«Չանիծեցի ես նորան, որդի. Վնիծեցի՞ նորան, ասումես»:

— Այո՛, հայր, արեցիր այդ, անիծեցիր նորան երկու անգամ:

«Աստուած, ներէ՛ իմ յանցանքը, որպէս և նորանը, ես աղաչումեմ: Այսօր եմ միայն հասկանում, որդեակ, այն գերմարդկային ողորմածութիւնը, որ մեզ ուսուցանում է աղօթել մեր թշնամիների համար: Օրհնեալ լինի նորա սուրբ անունը այն ամեն բարութեանց համար, որ մեզ պարգևել է, և այն բարութեանց համար, որ մեզնից խլել է: Բայց այս, աւանգ, մի սու-

փորական ցաւ չէ, որ իմ ծերացած աչքերից արտասուք է կոր-  
զում, իմ աչքերից, որոնք շատ տարի է այդպէս չին արտասուել,  
... Իմ դուստրը... նորան կորցնել, նորան ապականել, նորան  
իմ քաղցրիկ սիրելուս: Անկճք և նզովք կարէք... Տէր, թող  
իմ յանցանքը, ինչ ասացի... Չեր ամենքի միտքումն է, ինչպէս  
սիրուն էր նա, ինչպէս շնորհազարդ էր: Մինչ այս չարարող  
կէտը, բոլոր նորա հոգսը այն էր որ՝ մենք բազումօր լինէինք...  
Ախ, ինչու մեռած չէ նա:— Բայց նա փախել է... մեր բնտա-  
նիքի պատիւը ապականուիլ է... ևս յոյս չունեմ այլ ևս հանգիստ  
վայելելու, եթէ ոչ՝ միայն ապագայ կեանքում... Աստ ինձ,  
զաւակս, դու նորանց տեսնո՞ր որ չուեցին... Արևիկ է նա բունա-  
գասնց քրոջդ. եթէ նա բնութիւնն է գործել, ազջիկս դեռ ևս  
կարէ անմեղ լինել»:

— Մհ, հայրիկ, պատասխանեց երեխան. նա միայն գրկու-  
մէր Ախիկին և կոչումէր իւր հրեշտակ. իսկ իմ քոյրը սաստիկ  
արտասուումէր, յիշված նորա բազուկի վերայ. յետոյ ձիանքը ա-  
բազու թեամբ վազեցին:

«Ապերախտ արարած է նա, աղաղակեց կինս, որ հեծեծան-  
քից հաղել կարումէր խօսել. ապերախտ դուստր, որ այսպէս  
վարվեց մեզ հետ: Աորա յօժարութիւններին մենք բնաւ չենք  
ընդդիմացել. նա մեզ թողեց անարգանօք և չմտածելով թէ՛ քո  
տղիտակ մտգերը դերեզման կիջեցնէ, ուր և ևս չուտով քո քա-  
մակից կրգամ»:

Այս գիշերը, մեր ճշմարիտ տարաբաղդութեանց առաջին  
գիշերը, անցաւ բոլորովին դառն հեծութեանց և անզուսպ բոր-  
բոքման մէջ. ևս վճռել էի գտնել յախշտակիչին, ուր և լինէր  
նա և յանդիմանել նորան իւր անարգութիւնը: Միւսօրը առա-  
ւօտուն մեր դժբաղդ զաւակը այլ ևս մեզ հետ չէր, նա չկար մեր  
նախածաշիկի վերայ, ուր սփորարար զուարճութիւն և աշխու-  
ժութիւն էր բերում:

Աինս կրկին փորձեց կշամբիչ խօսքերով թեթեացնել իւր  
սիրտը: «Բնաւ, դուչեց նա, մեր տան աղտոնութիւնը չի նահմա-  
նեցնել մեր գերդաստանի պատիւը, բնաւ ևս նորան չեմ կոչել իմ  
դուստր: Չէ, թող սպրի նա իւր անարգ հրապուրիչն հետ:  
Նա մեզ ամօթ է պատճառում, բայց այլ ևս չի խարխլ մեզ»:

—Արն, ասացի ես, մի խօսիր այդպիսի խտուրթեամբ: Իմ ատելութիւնը դէպի նորա յանցանքը նոյնչափ սաստիկ է, որչափ և քո ատելութիւնը, բայց երբէք ո՛չ իմ տունը և ո՛չ իմ սիրտը չեն փակվել մի զղջացող մեղաւորի դէմ: Արքան շուտով կը վերադառնայ նա իւր մոլորութենէն, այնքան առաւել լաւ կընդունվի: Նորանից լաւերը կարեն մոլորվիլ մի և առաջին անգամ, խորամանկութիւնը հաւանել է տալիս և նորութիւնը կախարդիչ գեղեցկութիւններ ունի:

Առաջին մոլորութիւնը կարէ ճնանիլ պարզամտութիւնից, միայն միւսներն են բղետում յանցանքից: Այո՛, դժբաղդ արարածը բարով կը գայ այս տուն դէպի իմ զիրկը թէ և ապականված լինէր ամենայն մեղքերով: Աս դեռ ևս ուզումեմ լսել նորա ձայնի երաժշտութիւնը, ուզումեմ քնքշութեամբ գրկել նորան, եթէ նորա մէջ զղճումն կը գաննեմ: Արդի՛, բեր ինձ Սուրբ Վիլքը և իմ գաւազանը: Աս կը գնամ նորա քամակից, ինչ տեղ և լինի նա, և եթէ չեմ կարող փրկել նորան խայտառակութիւնից, գոնէ կ'արգելեմ նորան յամառել անիրաւութեան մէջ:

ԳԼՈՒԽ 18.

Հետամուտ թիւնը մի հօր՝ որ ուզումէ մտորեալ զառակին դէպի առաքինութիւն  
բերել:

Թէև Վիկը չըկարաց նկարագրել ինձ այն մարդուն, որ  
փոստայի կառքն էր նստեցրել նորա քրոջը, այնու ամենայնիւ իմ  
կասկածը բնականաբար մեր ջահել երկրատիրոջ վերայ էր, որով-  
հետև նորա ճաշակը այդպիսի խարդախութիւնների մասին քաջ  
յայտնի էր:

Ես ճանապարհ ընկայ դէպի Թոննշիրլե ապարանքը և մը-  
տադիր էի սաստիկ յանդիմանութիւններ անել նորան և եթէ կա-  
րելի էր, դարձնել իմ մտորեալ ոչխարին: Ճանապարհումը  
հանդիպեցի իմ թեմականներից մինին, որ ինձ ասաց թէ՛ տե-  
սել էր իմ աղջկան նման ջահել արիկինի փոստայի կառքում մի  
աղնուականի հետ, որ, նորա նկարագրութեանը նայելով, Բուր-  
չելին պիտէր համարել և թէ նորանք շատ շտապով էին գնում:  
Բայց ևս այս տեղեկութիւնով չբաւականացայ և հաստատ մնա-  
լով իմ կարծեաց մէջ, ուղիղ երկրատիրոջ մօտ գնացի: Վեռ  
ևս շատ վաղ էր, բայց ևս թախանձեցի թոյլ տալ ինձ իսկոյն նո-  
րան տեսնել, նա յայտնվեց, մօտ եկաւ դէպի ինձ մտերիմ և ան-  
կեղծաւոր դէմքով: Վաստերս յավիշտակութիւնը կարծես թէ սաս-  
տիկ զարմացրուց նորան. նա իւր սրտուի երաշխաւորութեամբ  
հաստատեց թէ՛ բոլորովին անխառն է այդ բանում:

Ես արդէն զղջացայ որ՝ կասկած էի ունեցել նորա վերայ և  
դարձուցի այդ Բուրչելի վերայ: Միտս բերեցի որ՝ Օյելիան և  
սա, վերջին ժամանակը, շատ խորհրդակցութիւններ էին անում:  
Մի այլ վկայ ամենեւին իմ տարակուսութիւնը փարատեց այդ  
դաւաճանութեան մասին. նա հաստատումէր թէ՛ դուստրս և Վ.  
Բուրչելը Վ. էլս քաղաքի ճանապարհովն էին անցել, որ երեսուն

մղոն հեռի էր այս տեղից և թէ՛ Ռուրչիլը այն տեղ բազմաթիւ ընկերներ ունէր: Ճարակ եղած այդ զայրացական վիճակին, որ մեզ յորդորումէ առաւել գէպի շուտափոյթ գործողութիւն, քան գէպի արդար իրաւաստհութիւն, ևս չըմտածեցի թէ՛ այս զանազան տեղեկութիւնները կարէին տալ խորհրդով ճանապարհում կացուցած մարդիկ և շարունակեցի իմ հետամտութիւնը աղջկաս և նորա յափշտակողի քամակից ուղեղ այնպէս, որպէս ինձ ցուցել էին: Արագաբայլ ընթացքով և սաստիկ նեղարտութիւնով գնումէի և հարցանումէի ամեն մի անցաւորից և ոչինչ չէի կարում իմանալ. քաղաք մտնելուս, մի ձիաւոր մարդու հանդիպեցի, որին միաս էր գալիս թէ՛ տեսել էի Պ. Թօննհիլը մօտ. նա ինձ հաւատացրուց թէ՛ երեսուն մղոն անցած գէպի արշաւատեղը անշուշտ փախտտականներին կրգտնեմ. նա տեսել էր նորանց անցեալ երեկոյին մի խնջոյքում պար գալիս, ուր բոլոր հրաւիրականքը հիանումեն եղել իմ դասեր գեղեցկութեան վերայ: Միւս օրը առաւօտուն կանուխ կրկին ճանապարհ բնկայ և ճաշից յետոյ չորս ժամին հասի նշանակած տեղը: Բազմութիւնը, որ ժողովվել էր այս տեղ արշաւանքը տեսնելու, մեծալայելուչ էր. ամենքը մի խորհուրդ, մի նպատակ ունէին, այն է՝ իրանց զուարճութիւնը. բայց, ո՛հ, ևս սորանց մէջ էի: Հեռուից նկատեցի ևս Պ. Ռուրչիլին, որ իբր վախենալով իմ հետ տեսնվելուց, այն ինչ ևս մօտեցել էի նորան, խառնվեց բազմութեան մէջ և ևս կրկին չբտեսի նորան:

Մտածեցի այնուհետե թէ՛ անօգուտ էր շարունակել այդ ունայն հետամտութիւնը, մինչ իմ խեղճ և անմեղ ընտանիքը տանը իմ կարօտութիւնն էին զգում: Բայց իմ մտքիս յուզմունքը և խոնջութիւնը, որ ևս կրել էի, իմ վերայ ջերմի ախա բերեցին, որոյ առաջին յայտնի նշանները ևս զգացի արդէն արշաւանքի ժամանակը: Այս ևս մի այլ անակնկալ հարուած էր, որովհետեւ հօթանասուն մղոն հեռի էի իմ տանից: Վաշվեցի ևս մի փոքրիկ պանդոկ, որ ճանապարհի վերայ էր և այս տրտում իջկանում, չքաւորութեան սովորական պատարարանում, պատկեցի, համբերութեամբ սպասելով ախախ վերջին: Արեք շաբաթի չափ մաշվեցի ևս այս տեղ. վերջապէս իմ կազմուածքը յաղթեց հիւանդութեանս: Մակաւ ծախքս վճարելու համար փողե կարօ-

տութիւն ունէի և այս պակասութիւնից կրած անհանգստութիւնը բաւական էր իմ ցաւը նորոգելու համար, եթէ մի ուղեոր այդ ճանապարհով անցանելով, չէր դադարել իմ կեցած պանդոկում իւրեան գովացուցանելու համար և չէր հասել ինձ օրնութիւն: Այս մարդը մի մարդասէր գրավաճառ էր, որ շատ մանր գրքեր էր գրել երեխերքի ընթերցման համար և ստացել էր սորանց բարեկամի տխորոս, թէ և բարեկամ էր բոլոր մարդկային ազգին: Մի փոքր անցած՝ այդ մարդը կրկին կամեցաւ ճանապարհորդել, ըստ որում միշտ շատ և ծանր գործեր ունէր իւրեանց յանձնած:

Այս իսկ միջոցում նա նիւթեր էր ժողովում (թոմաս թըրփի կենսագրութեան համար: Իսկոյն ճանաչեցի ես այդ մարդու անկեղծ դէմքը և առոյգ գոյնը, որովհետեւ սա նմանապէս հրատարակել էր և իմ մի քանի յօդուածները մեր դարու վերքի, այսինքն՝ երկամուսնութեան դէմ: Նա ինձ փոխ տուեց փոքր ինչ փող, որ ես խոստացայ տուն դարձած՝ հատուցանել նորան: Պանդոկից դուրս եկած՝ վճռեցի դառնալ իմ բնակարանը, թէ և նուազութեանս պատճառով օրը տասը մղոնից աւելի չէի կարող գնալ: Առողջութիւնս և սովորական հանգստութիւնս ստացած՝ դատապարտում էի արդէն իմ հպարտութիւնը, որ ինձ արանջել էր տուել պատժիչ բազուկի դէմ: Մարդ լաւ չի ճանաչում իւր համբերութեան չափը, մինչ դեռ չի դիմանցել բազմապատիկ աստապանքների: Արբ որ մենք փորձում ենք վեր կանել ամբարտաւանութեան կատարը, որ ներքեկից մեզ փայլուն է երևում, ամեն մի քայլը բացում է մեր առաջև մի տխուր և թախծալեց տեսարան, այսինքն՝ մեր յուսոյ ունայնութիւնը. նոյնպէս, մինչ մենք ցած ենք գալիս ուրախութեան սահմաններից, թշուառութիւնների հովիտը ներքեւումը կրկնում է լքված և խաւարչափն: Իայց և այսպէս, գործունեայ միտքը, որ հետամուտ է զբաղմանց, ճանապարհում հանդիպում է այնպիսի բաների, որոնք նորան քաշում են և նորան հաճելի են. որչափ որ մենք մօտենում ենք, այնչափ մթին առաքիւսները պարզվում են և մեր հոգու աչքը վարժվում է նորանց մթնութեան:

Արկու ժամ կը լինէր արդէն, որ ես ուղեորում էի և բաւական ճանապարհ անցել էի, մինչ նկատեցի փոքր ինչ հեռի մի սայլի

պէս բան. շտապիցի նորան հասնելու և տեսի որ՝ սա մի կառք էր շրջուկ կատակերգունների, որոնք իւրեանց զարգարանքը և բոլոր սարսաքը տանում էին մերձաւոր դիւղը, ուր պիտէր թատրոն խաղային: Միայն մի ձիաւոր էր այս տեղ և մի կատակերգու. խումբի մնացորդը հեռեկալ օրն էր դալու: «Աւա ընկերը կարճեցնումէ ճանապարհը»: Այս խօսակցութիւն բաց արեցի խեղճ դերասանի հետ, և որովհետև մի ժամանակ հահումն ունէի դէպի եղերերգութիւն, սկսեցի շաղկրատել այդ առարկայի վերայ իմ սովորական ազատութեամբ: Արդի թատրոնի մասին չունէի ես բաւական տեղեկութիւն, ուստի և հարցրի նորան թէ՛ ո՞վքեր էին այն ժամանակի համբաւաւոր հեղինակները, Վրկյդինները և Օթվայերը:

— Այս կարծումեմ, պարոն, ասաց կատակերգուն, թէ այժմու եղերերգական հեղինակներից փոքր կրկանվին արժանի այդ համեմատութեան պատուոյն. Վրկյդինի և Ոսովի ոճը բոլորովին սովորութիւնից դուրս է եկած. մեր ճաշակը մի դարու չափով յետ է գնացել. Պրետչերի, Քեն-Ջօնարնի գրուածներն են այժմ միայն ընդունված որպէս և Շակսպիրի բոլոր եղերերգական գրուածքը:

«Ի՞նչպէս, աղաղակեցի ես, մի՞թէ մեր ժամանակը հաւանումէ հին բարբառը, անցած գնացած կատակները և բարբերի չափազանցութիւնը, որոնցով առատ են այդ աշխատասիրութիւնքը:

— Վարոն, պատասխանեց դերասանը, ժողովուրդը անհոգս է, թէ բարբի, թէ բարբառի և թէ խեղկատակութեան ճաշակի մասին. նորա բանը այս չէ. նա միայն ուզումէ զուարճութիւն ստանալ և երջանիկ է արդէն, եթէ գանումէ այդ մի լսիկ Վուսանական խաղում, Քեն-Ջօնարնի կամ Շակսպիրի անունով:

«Ուրե՛մն, ասացի ես, մեր թատերական հեղինակները առաւել Շակսպիրի հետեանք են, քան թէ բնութեան:— Ճշմարիտը ասեմ, որ նորանք ում և իցէ հեռուում լինին, ժողովուրդը նորանից չէ պահանջում այդ. նա չէ ծախահարում խաղի յօրինումածին, այլ այն բազմաթիւ յանկարծութիւններին, դիւբերին, ազդեցութիւններին, որոնք մտցրած են նորա մէջ. ես մի խեղկատակութիւն տեսի, որի մէջ ամենափոքրիկ բառ չեկար ծիծաղե-

լու համար, և որ ժողովրդի հաճութիւնը գրաւեց միայն ուսերի առանձին շարժուածքով. նմանապէս մի գուսանական խաղ, որ խայտառակութիւնից փրկվեց մի խիթքի օգնականութեամբ, որ բանաստեղծը ճարտարութեամբ գործ էր անել նորա մէջ: Չէ, պարոն, Քօնգրեվի և Պարբլարի գրուածները շատ ճարտարամիտ են մեր ժամանակի համար: Մենք այժմ պարծումենք սուսուել մեր նորագոյն լեզուով »:

Շրջուկ խումբի սպասքը արդէն մօտենում էին դիւղին. բնակիչքը խմացած լինելով մեր գալը, բազմութեամբ դուրս էին եկել մեզ տեսնելու, ըստ որում, ինչպէս նկատուէր իմ ընկերը, զիւղական խնդկատակները միշտ աւելի տեսնողներ ունին դրսումը, քան ներսումը: Այս այն ժամանակ միայն հասկացայ իմ այսպիսի ընկերութեան մէջ լինելու անպատշաճութիւնը, երբ որ ամբողջ ժողովված շուրջ պատեց ինձ: Շուտով պատասպանեցի ինձ առաջին պանդոկում, որ հանդիպեց: Մի լաւ հագնւած աղնուական նստած էր պանդոկի սրահում. նա մօտ եկաւ ինձ, հարցանելով թէ՛ մի գուցէ խումբի քահանան էի ես կամ թէ իմ հագուստը որ և է դերի յատկութիւն էր: Արբ որ բացայայտեցի նորան ճշմարտութիւնը, ասելով թէ՛ ամենեւին թատրոնին չէի պատկանում, նա ինձ և իմ դերասան ընկերին մարդասիրութեամբ հրաւիրեց մասնակից լինել նորան մի բաժակ փունջ խրմելում: Բաւական շահագրգռութեամբ և եռանդով ճառասուտութիւն էր անում նա արդի քաղաքականութեան վերայ, որից ինձ երևումէր թէ՛ անշուշտ Խորհրդարանի (Parlament) անդամ պէտք է լինէր և այս կարծիքը արդէն հաստատվեց. մինչ յետ իմ հարցանելուց թէ՛ ի՞նչ կարէին մեզ տալ ընթրիք անելու, թախանձանօք խնդրեց մեզ զնայ իւր տունը, և մենք սախաված եզանք ընդունել այդ հրաւերը:

## ԳԼՈՒԽ 19.

ԳԺԳՈՏՈՒԹԻՒՆ արդի կառավարութենէն և կասկած ազգային ազատութեան վտանգի մասին :

Այն տունը, ուր մենք հրաւիրված էինք, մօտ էր զիւղեց-տանուտէրը խնայելով որ կառքը պատրաստ չէր, խնդրեց մեզ ուտով դնալ: Շատ չանցած եկանք մի այնպիսի շքեղ բնակարան՝ որպիսիքը շատ փոքր կրթասանվէին այն կողմում: Անեակը, որի մէջ մասնք, վայելուչ կերպիւ և նոր ոճով զարդարած էր: Տանուտէրը դուրս եկաւ ընթրիքի պատրաստութիւնը հրամայելու, իսկ խեղկատակը ինձ աչքով անելով, նկատել էր տալիս թէ՛ այս երեկոն յաջողակ էր մեզ համար: Տանուտիրոջ վերադառնալից փոքր ինչ յետոյ, մի անուշահամ ընթրիք բերին, որին մասնակից եղան երկու թէ երեք պատուաւոր կանայք՝ վայելուչ և պարզ ըզգեստով: Խօսակցութիւնը սկսեց սասախիկ եւ անդով. քաղաքականութիւնը, որ մեր կոչնաւիրոջ սիրած առարկան էր, նորէն առաջարկվեց: Ազատութիւնը, ասումէր նա, մի այնպիսի առարկայ էր նորա համար, որով նա պարծենումէր, բայց և զարհուրումէր նորա մասին. նա ինձ հարցրուց՝ ունէի արդեօք Մօնէլեօմբ և մինչ ես պատասխանեցի թէ՛ ո՛չ, «Ք՞նչ էք ասում ազազակեց նա, և ո՛չ Օդիթեօրը»:— Առաւել ևս ո՛չ, պարոն, պատասխանեցի ես:— «Ահա մի օտարոտի բան, անչափ օտարոտի: Աս բոլորը կարգուձեւ, ինչ որ հրատարակվումէ քաղաքականութեան մասին, ամեն հանապազօրեայ լրագիրները՝ Գէյլին, Փիւրլիկը, Արգթերը, Վրոնիկը, Աճուօն-Ալէնիսիկը, Ուվիթ-Հալլ-Ալէնիսիկը, տասն և եօթն Մագազինները և տասն Ուէվիւնները: Աւ թէ և սորա ամենքը ի բոլոր սրտէ ատում են միմեանց, այնու-

ամենայնիւ եւ բոլորին սիրումեմ: Ազատութիւնը, պարօն, ազատութիւնը անգլիացուն վիճակված սեփականութիւն է և իմ Արնուայի բոլոր քարածուխի հանքերովը երդուումեմ որ՝ ես յարգումեմ նորա պաշտպաններին:

«Ուրեմն իրաւունք է կարծել, ասացի ես, թէ դուք յարգում էք թագաւորին»:

— Այո՛, պատասխանեց իմ խօսակիցը, երբ որ նա գործումէ, որ ինչ մենք կամու՛մ ենք. բայց եթէ նա կըշարունակէ շարժել այնպէս, ինչպէս այս վերջին ժամանակը, ես չեմ խառնվելու նորա գործերի մէջ: Աս ոչինչ չեմ ասում, սակայն մտածումեմ ինքս ինձ թէ՛ ի հարկէ եւ աւելի լաւ կըվարէի այդ բաները. թագաւորը չունի բաւական խորհրդականներ. նա պիտէր ընդունէր ամենքի խորհուրդը, որոնք պատրաստ էին ասել իւրեանց կարծիքը, և այն ժամանակ գործերը այլպէս կ'ընթանային:

«Աս կ'ուզէի, որ ինչ ինձ է վերաբերում, ասացի ես, որ այդ անկոչ խորհրդականները առակ նշաւակի լինէին (խայտառակվէին): Ամեն պատուաւոր մարդու պարտականութիւնը պիտէր լինել սահմանադրութեան տկար կողմին յեցուկ տալ, ըստ որում այդ սրբազան իշխանութիւնը մի քանի տարի է ի վեր, որ ըստ օրէ ստորանումէ և կորուսանումէ իւր իրաւացի ազդեցութեան մի մասը, կտուավարութեան մէջ, բայց տղէս և անվորձ մարդիկ շարունակումեն իւրանց ազդակը ազատութեան համար և եթէ կշիռի մէջ որ և է ծանրութիւն ունին, անարդօրէն գընումեն այն կողմը, որը որ հակումէ արդէն»:

— Ի՞նչպէս, ազգականց տիկիներէից մինը, մի՞թէ այդքան ապրել եմ եւ այնու համար որ՝ տեսնեմ մեր ազատութեան մի չար թշնամուն, բռնակալութեան մի անարգ պաշտպանին: Ո՞վ ազատութիւն, երկինքի նուիրական պարզեւ, խեղճական Անգլիացւոց փառաւոր առանձնաշնորհութիւն:

— Ո՞վ կ'կարծէր յիրաւի, ասեց մեր կոչնատէրը, որ այս օրուայ օրը կարէին գանվել ստրկութեան պաշտպաններ, այնպիսի մարդիկ, որոնք կ'ուզէին անարգութեամբ կողոպտել անգլիացոց սեփականութիւնը: Ո՞վ կարէր լինել, պարօն, այնքան փառ...

— Պարօն, կրկնեցի ես, իմ պաշտպանութիւնը նոյնպէս ազատութեան համար է, այդ երկնային սեփականութեան համար,

փառաւոր ազատութեան, որ այդի ճառախօսութեանց անապա-  
ռելի աղբիւրն է: Այս կ'ուզէի որ՝ բոլոր մարդիկ լինէին թագա-  
ւորներ, ես ինքս ևս կրցանկայի թագաւոր լինել: Մենք ամենքս  
բնութիւնից ստացել ենք հաւասար իրաւունք գահակալ լինելու,  
որովհետեւ ամենքս ի բնէ հաւասար ենք: Այս իմ կարծիքն է,  
որպէս երբեմն և մի պատուաւոր ընկերութեան՝ որ կոչվումէր  
հարթողք (Niveleurs): Սորանք փորձեցին իւրեանցից մի հասա-  
րակապետութիւն կազմել, որի մէջ ամենքը հաւասարապէս ա-  
զատ պիտէր լինէին. բայց՝ աւանդ, բանը առաջ չըգնաց, որով-  
հետեւ նորանց մէջ մի քանիսը աւելի զօրաւոր և ննչաւոր լինե-  
լով, հօտի տէրերը դարձան: Չեր ձիավարը հեծումէ ձիանքի վե-  
րայ, որովհետեւ նորանցից առաւել խորագէտ է. այսպէս և մարդ-  
կային ցեղի մէջ կ'զանձի մի անձն առաւել յաջողակ կամ հզօր,  
որ մազլելով վեր կ'ելնէ նորա մէջքի վերայ: Արովհետեւ մարդկու-  
թիւնը դատապարտված է հպատակութեան և ոմանք ծնված են  
հրամայելու, իսկ միւսները հնազանդելու, ուստի պիտէր միայն  
իմանալ թէ՛ որն է առաւել լաւ՝ բռնակալներին՝ որոնց իշխա-  
նութեանը պիտի հնազանդենք, մեր սեփական տանը ունենալ կամ  
նոյն գիւղում, ուր մենք կենում ենք, թէ՛ հեռի տեղում, զորօրի-  
նակ մայրաքաղաքում:

Այսպէս ուրեմն՝ պարոն, որ ինչ ինձ է վերաբերում, ես մի  
բնական ատելութիւն եմ զգում դէպի բռնակալի կերպարանքը.  
որքան առաւել հեռի լինի նա, այնքան առաւել զոհ եմ ես:  
Մարդկային ցեղի մեծագոյն մասը իմ կարծիքը ունի և այս է  
պատճառը որ՝ նա միաբան հաւանութեամբ հնարել է թագա-  
ւոր՝ որի ընտրելութիւնը արգելք է լինում բռնակալների բազ-  
մանալուն և բռնակարոթիւնը կարելի չափով հեռի է պահում  
հպատակների բազմութիւնից: Բայց մեծամեծները՝ որոնք նոյն-  
պէս փոքրիկ բռնակալներ էին, մինչդեռ նորանցից մինը չէր բնոր-  
վել, բնականաբար թշնամի են այն իշխանութեան՝ որ նրանց վե-  
րայ կացել է և որի ծանրութիւնը առաւել զգալի է նորան ստ-  
րադրված դասերին: Մեծամեծների շահախնդրութիւնը պահան-  
ջումէ, որքան կարելի է, նուազեցնել թագաւորի առաւելու-  
թիւնքը, որովհետեւ ինչ որ նորանէ խլէին, իւրեանց համար էր  
գտած, և նոցա գործունէութեան մի մասը տէրութեան մէջ այն է

որ՝ իւրեանց միակ աիրոջ տակը փորեն և նորանից սակաւ առ սակաւ առնեն իւրեանց նախկին իշխանութիւնը: Վայց և տէրութիւնը կարող է գտնվիլ նոյնպիսի պարագաների մէջ, նորա օրէնքները կարեն այնպէս յորինված լինել և այս մեծատուն մարդկանց միտքերը այնպէս յարդարված լինել որ՝ ամենքը դաւանանեն թագաւորութեան զէմ և նորա տակը փորեն: Առաջին զէպքում, եթէ ընկերական վիճակի սրայմանները ձեռնտու են հարստութիւն ժողովելու և հարուսաներին առաւել ևս հարստացնելու, սորանց ամբարտաւանութիւնը կ'աւելանայ: Հարստութեան բազմապատկութիւնը անհրաժեշտ հետեւներ է այն բանին՝ որ մեր մէջ այժմ կատարվումէ, ուր արտաքին վաճառականութիւնը համեմատութեամբ շատ առաւել օգուտ է բերում, քան ազգային արուեստագործութիւնը և որովհետեւ արտաքին վաճառականութիւնը շահաւէտ կերպիւ կարող են գործել միայն հարուսաները և երկրի արուեստագործութիւնի շահը նմանապէս նորանք են ստնում, ուստի հարստութեան երկու աղբիւրները ևս բացվում են նորանց համար, մինչ խեղճերը միայն մի աղբիւր ունին: Այս պատճառով է որ՝ հարստութիւնը միշտ կուտված ենք տեսնում վաճառաշահ տէրութիւնների մէջ, որոնք ժամանակով դառնում են այնուաղետական:

«Այն խակ մեր տէրութեան օրէնքները ձեռնտու են ստացուածքի բազմապատկութեան. այս օրէնքներով է կործանվել այն բնական կոպը՝ որ միաւորումէր հարուստին խեղճի հետ. նորանք են որպէս թէ հրամայում հարուստին միաւորվիլ իւր նման հարուստների հետ: Եւ շատ ճարտարները, եթէ հարստութիւն չունին, անձեռնհաս են համարվում իւրեանց երկրի մէջ մի պաշտօն վարելու: Այսպէս արծաթը գառնումէ խմաստունի ամբարտաւանութեան միակ իրաւունքը. այս հնարով և այլ սորան նմաններով հարստութիւնը գնալով բազմանումէ: Իսկ արդ՝ մի ամենամեծ հարստութեան տէրը՝ որ ոչ պիտոյքի և ոչ կեանքի զուարճութեանց պահասութիւն ունէր, ի՞նչ բանի էր գործածելու իւր ունեցածի աւելորդը, եթէ ոչ իշխանութիւն ձեռք բերելու, այսինքն՝ ուրիշ կերպ ասելով, ձեռնաստուններ պատրաստելու, գարձնելով զէպի ինքը չքաւորների կամ շահասէրների ազատութիւնը, որոնք մի կտոր հացի համար յօժար են աանկը

որ և է անմիջական բռնակալութեան հարստահարութիւնքը: Այսպէս ամեն մի հարուստ մարդ հասարակօրէն իւր շրջանում խեղճերի խումբ է ժողովում և տէրութիւնը՝ որի մէջ հարստութիւնքը բազմանում են, կարելի է նմանեցնել Վեկարթի կանոնին, այն է թէ՛ ամեն մի երկրագունտը իւր հետ տանում է իւր սեփական փոթորիկը: Վայց և այսպէս՝ որոնք յօժարում են մեծերի արբանեակները դառնալու, յառաջագոյն արդէն նշանակված են սարուկ լինելու, անպիտան մնացորդ մարդկային ազգի, բնութիւնից և անկրթութիւնից պատրաստված ստրկութեան համար, որոնք ազատութեան միայն անունը զիտեն: Վայ և այնպիսի մարդկանց բազմութիւն, որոնք այդ սահմանից դուրս են կենում և հարուստների ազդեցութիւնից դուրս են մնում, այսինքն՝ այն դասը մարդկանց, որ ազնուականների և ամբօսի միջին տեղն է բռնում և որ բաւական բարեկեցիկ է իւր դրացու կամքին չհրպատակելու համար և նոյնչափ խեղճ՝ բռնակալների կարգը չանցնելու համար: Այս միջին դասի մէջն է արուեստը, իմաստութիւնը և ընկերական առաքինութիւնը. միայն այս դասն է իւրեան ցուցել իսկապէս պահպանիչ ազատութեան և կատարեալ իրաւունք է ստրան կոչել ազգ: Սակայն և այսպէս՝ պատահում է երբեմն, որ այս միջին հասարակութիւնը կորցնում է բոլոր իւր ազդեցութիւնը տէրութեան մէջ, և նորա ձայնը հեղձվում է խաժամուժի ձայնից. որովհետեւ՝ եթէ հարստութիւնը՝ որ հարկաւոր էր քաղաքացուն հասարակութեան զործերի մէջ խօսելու իրաւունքը ստանալու համար, տասնապատիկ փոքր է, քան որ ինչ էր սահմանադրութեան սկզբում, ակներև է որեւէ մի ստորին դասի, այսինքն՝ նոյն խաժամուժի մարդիկ կրման են քաղաքական կարգի մէջ և հարուստների քամակից ընկած՝ իւրեանց պաշտպանների թելադրութեանը կ'հնազանդին: Այսպիսի պարագայից մէջ, միջին դասին մնում է միայն թագաւորութեան հետ միաբանվել և նախանձաւոր խնամքով տքնել արքայական առաւելութեանց և առանձնաշնորհութեանց պահպանութեան վերայ, պատճառ որ՝ թագաւորութիւնը բաժանում է հարուստների իշխանութիւնը և արգելք է լինում մեծամեծներին բոլոր իւրեանց ծանրութիւնով նեղել իւրեանցից ստորագաս ժողովուրդին: Միջին դասը կարելի է նմանեցնել մի քաղաքի՝ որի հարուստները պաշարել են նորան, և որին օգնելու դրսից աճա-

պարուճէ կառավարիչը: Վանի որ պաշարողները վախումն մի իւրեանցից հօր թշնամուց, լաւ պայմաններ են առաջարկում քաղաքացոց, փայտայումն նորանց խօսքերով, և զուարճացնումն խոստմունքներով. բայց՝ այն ինչ յազլթիկ են կառավարչին, քաղաքի պարիսպը թոյլ պաշտպանութիւն է այնուհետեւ նորա բնակիչների համար: Աւզումն սորանք իմանալ թէ՛ ի՞նչ պիտի սպասեն այնուհետեւ, թող իւրեանց հայեացքը ուղղեն դէպի Հոլանդիա, Վենուա և Վլենետիկ, ուր օրէնքը իշխումէ խեղճերի վերայ, իսկ հարուստները իշխումն օրէնքի վերայ:

«Այս թագաւորութեան կողմունքն եմ և կրմունքն նորա համար, որովհետեւ՝ եթէ մարդկանց մէջ մի սրբազան բան կայ, թագաւորն է այն ժողովուրդից բնարված և նորա իշխանութիւնը նուազեցնելը թէ՛ պատերազմի և թէ՛ խաղաղութեան ժամանակը յաիշտակութիւն է նորա հպատակների իսկական ազատութեան: Եւ առ բաներ են արել արդէն այս անուններով՝ ազատութիւն, ազգասիրութիւն, Վոլիթօնացի. պիտի յուսալ որ՝ ազատութեան ճշմարիտ բարեկամները այսուհետեւ կ'արդիկ են այդ: Իմ կեանքի մէջ շատ եմ տեսել անկախութեան կարծեալ ջատաղովների և միտս չեմ բերում նորանցից ոչ մինին՝ որ իւր սրտի խորքի մէջ և իւր ընտանիքի մէջ չըլինէր բռնաւոր»:

«Կհատեցի ևս վերջապէս որ՝ իմ ջերմաջերմ համոզմունքը քաղաքավարութեան սահմանից դուրս էին անցուցել ինձ. տասնուեօրը՝ որ մի քանի անգամ փորձեց միջահատել իմ խօսքը, անհամբերութիւնով յարձակվեց իմ վերայ: «Այդ ի՞նչ է, ազաղակեց նա, մի՞թէ անգլիական քահանայի տեղ մի ծագված ճիզուիթի եմ ընդունել. Աօրնուայի քարածուխի բոլոր բովբերովս երդումեմ որ՝ սա այս տեղից դուրս կրդայ այնպէս, որպէս Վելկինսոնը»:

Այս զգացի որ՝ չափից դուրս էի եկել և ներողութիւն խնդրեցի իմ եռանդուն խօսակցութեան մասին: «Վերողութիւն, ասեց նա կատաղութեամբ, այսպիսի սկզբունքը միլեօն ներողութիւն են պահանջում: Ի՞նչպէս, հրաժարվել ազատութեան, սեփականութեան խնդիրներից և ինչպէս ասում է Ազէթը, թոյլ տալ մէջքը տրորել փայտեայ կոշիկներով: Պարոն, ևս պահանջումեմ որ՝ դուք իսկոյն դուրս դնաք այս տունից, եթէ չէք վախում աւելի վատ բանից. . . պահանջումեմ, պարոն»: Այն

ինչ ես ու զուսկի կրկնել իմ ներողութեանց խնդրուածքը, մի սաստիկ բազխում լսեցինք գոնումը: Տիկինները խստոյն գոչեցին: «Անանքս վկայ որ տանուտէրը և նորա օրհինն են ներս մտնում»: Սորանից յայտնի եղաւ որ՝ մենք տանուտիրոջ տեղ էինք ընդունել նորա տնտեսին՝ որ իւր տիրոջ բացակայ լինելովք, ցանկանումէր իւրեան մեծութան ու ազնուութեան կերպարանք տալ:

Ճամբիտ ասեմ, նա քաղաքականութեան վերայ այնպէս գեղեցիկ էր խօսում, ինչպէս շատ զիւղատէրներ: Աչնչի հետ չեմ կարող համեմատել իմ շփոթը, մինչ տեսի տանուտիրոջ իւր կնիկայ հետ ներս մտնելը. պակաս չէր և նորանց զարմացքը, տեսնելով իւրեանց տանը մի ժողով և սեզանի վերայ սիւնոց: «Պարտններ, ասեց նոր եկողը, գիտե՞լով դէպի ինձ և իմ ընկերը, ես և կինս ձեր և ամենախոնարհ ծառայքն ենք, բայց շնորհը՝ որ դուք մեզ ցուցանում էք, այնքան անակնկալ է որ՝ ես դժուարանումեմ շնորհակալութիւնը ձեզ յայտնել: Թէև յիրաւի անակնկալ լինէր նորանց համար մեր ներկայութիւնը, բայց նորանցը մեզ համար առաւել էր. ես մնացել էի լուռ և շփոթուած իմ սեփական անմտութիւնից, մինչ յանկարծ սրահը մտաւ իմ քաղցրիկ Արարելի Աւերակթը, իմ Պէտրոզ որդուս նախկին հարսնացուն, որի ամուսնութիւնը, ինչպէս վերը պատմեցի, եղծվել էր: Այն ինչ նկատեց նա ինձ, վազկեց դէպի ինձ, բազուկները տարածած: «Միտի՛ն պարտն, աղաղակեց նա, ի՛նչ երջանիկ դիպուածից պիտի շնորհակալ լինենք ձեր այդ յանկարծադէպ այցելութեան համար: Ստոյգ գիտեմ որ՝ իմ հօրեղբայրը և մօրաքոյրը անչափ կուրախանան, մինչ կիսմանան թէ՛՝ գերասպառիւ Քրիստոզ վարդապետը այցելու է իւրեանց մօտ:

Ասելով իմ անունը, ծերունի ազնուականը և նորա կինը վայելուչ գնացքով յառաջ եկին դէպի ինձ և մտերմութեամբ շնորհաւորեցին իմ դալուստը. ժպտոր նկարվեցաւ նորանց դէմքի վերայ, մինչ պատմեցի ես թէ՛՝ ինչպէս էի պատահել նորանց մօտ և խեղճ անտեսը՝ որին մտապիւր էին դուրս անել, իմ խնդրանօք ներողութիւն գառաւ:

Պարտն Արնօլար և նորա կինը՝ որոնց պատկանումէր այդ տունը, թախանձեցին ինձ մի քանի օր մնալ իւրեանց մօտ և նորանց քեռադուստր, իմ չքնաղ աշակերտը՝ որի միտքը, որպէս

և իցէ դաստիարակութեամբ էր կրթվել, միաւորեց նորանց հետ իւր արաչանքը և ես յանձնառու եղայ մնալ. ինձ տուին մի փառաւոր սննեակ ննջելու և միւս օրը, կանուխ առաւօտուն, օրիորդ Ալիմօթը առաջարկեց ինձ իւր հետ զբօսանքի գնալ նորանց պարտէզը՝ որ պաճուճազարդուած էր նոր ոճով: Բոլոր գեղեցկութիւնները ինձ ցոյց տալուց յետոյ, հարցրուց նա ինձ կեղծեաց անհոգութեան դէմքով՝ արդեօք նոր լուր ունէ՞ի ես որդուցս:

«Ա՛հ, աիկին, ասեցի ես, ահա երեք տարի է որ Պէտրոզը գնացել է և ոչ իւր բարեկամներին, ոչ ինձ մի սող չի գրել. չըզիտեմ ո՛ւր է նա. կարելի է բնաւ չեմ տեսնելու ո՛չ նորան և ո՛չ մի բազդի յաջողութիւն: Չէ, սիրելի աիկին, այն խաղաղ ժամերը՝ որ մենք անցուցինք Ալեքիլիդի սիրափառ ընտանութեան մէջ, այլ ևս չեն նորոգվելու: Իմ սիրելի ընտանիքը օրէ օր ցրվումն և խեղճութիւնը իւր յետկից բերումէ ոչ միայն կարօտութիւն, այլև անարգութիւն»:  
 Չքնաղ օրիորդի աչքերը լցվեցին արտասուքով և որովհետեւ ինձ ծանօթ էր նորա գորովը, չըկամեցայ արամեցնել նորան իմ նեղութիւնների մանրամասն պատմութիւնով: Բայց ես մտիթարութիւն էի զգում տեսնելով որ՝ ժամանակը բնաւ չէր փոփոխել նորա սիրտը: Վանի քանի ա՜մուսնական առաջարկութիւններ նա մերժել էր մեր այդ երկրից հեռանալու միջոցում: Նա չըջեցրուց ինձ բոլոր այդ կալուածքը, ցոյց տալով ձեմելի տեղերը, ծառափողոցները, պրակները և մինչ մի յարմար դիպուած էր լինում, նոր հարցումներ էր անում որդուս մասին:

Այսպէս անցուցինք մենք մինչև կեսօրից յետ այն ժամը, երբ ճաշի զանգակը կանչեց մեզ տուն: Այն տեղ մենք գտինք խեղկատակների խումբի վերակացուին՝ որ եկել էր տունակներ առաջարկելու երեկոյեան թատրոնի համար, ուր պիտէր խաղային՝ սիրուն զգացող կին: Ըօրացիօի գերը յանձնված էր մի ջահիլ մարդու՝ որ դեռ ևս ոչ մի թատրոնում չէր խաղացել: Արակացուն շատ դովումէր նորան և հաստատումէր թէ՛ երբէք չի տեսել որ՝ մի դերասանի սկսուածքը այդքան յաջողութիւն խոստանում լինէին: «Ըրապարակաստութեան հանձարը, ասեց նա, մի օրում սովորելու բան չէ, իսկ այդ երիտասարդը կարծես թէ թատրոնումն է ծնվել: Նորա ձայնը, կերպարանքը, շարժուածքը

սքանչելի են: Մենք նորան բնկերացուցել ենք զիպուածով մեր ճանապարհորդութեան ժամանակը»:

Այդ հանգամանքը գրգռեց մեր քննասիրութիւնը և աիկինների խնդրանօք ևս յօժարեցայ ուղևկից լինել նորանց զէպի տեսարանի սրահը՝ որ ոչ այլ ինչ էր, իթէ ոչ մի շտեմարան: Ժողովը՝ որի մի անդամը ևս էի, աներկբայ այն տեղի նախակարգն էր, ուստի մեզ ընդունեցին մեծ յարգանօք և նստեցրին հանդէպ տեսարանին: Անհամբերութեամբ սպասում էինք մենք շօրացիօի դուրս գալուն: Վերջապէս նոր խողացօղը յայտնվեց: Թող ով դք հայր է, նա դատէ իմ զգայութիւնքը, մինչ տեսի որ՝ այդ խողացօղը իմ զժբաղդ որդին էր: Արդէն խողը սկսելու ժամանակն էր, բայց նորա հայեացքը թախտելով ունկնդիրների մէջ, ընկաւ Վ իլմօթի և իմ վերայ. նա մնաց անշարժ և անձայն: Միւս խողացօղները՝ որոնք մնացել էին տեսարանի քամակում, վերաբերելով այդ սպշութիւնը նորա երկշտութեան, փորձեցին խրախուսել նորան, բայց փոխանակ յառաջ գնալու, լըվեց նա արաստուքով և յետ գնաց: Չ'զիտեմ՝ ի՞նչ յուզմունք և շփոթ տիրեցին ինձ այդ միջոցում. անհնար է ինձ նկարագրել սորանց անընդհատ փոփոխութիւնը, բայց այդ մտախոհական վիճակից շուտով դուրս բերեց ինձ օրիորդ Վ իլմօթը, որ զողորմուն ձայնով խնդրեց առաջնորդել նորան դէպի իւր հօրեղբայրը: Տուն վերադարձած՝ Պ. Արնօղը՝ որ մեր օտարօտի վարմունքից ոչինչ չէր հասկանում, այն ինչ տեղեկացաւ թէ՛ նոր գերասանը իմ որդին էր, իսկոյն ուղարկեց նորան իւր կառքը ստիպողական հրաւիրանօք: Արովհետեւ Պ. Արնօղը յամսառումէր տեսարանում յայտնվելու մերժողութեան մէջ, խողացօղքը փոխանակեցին նորան այլ անձնով և որդիս փոքր ինչ անցած արդէն մեզ մօտ էր:

Պ. Արնօղը սիրալիր բնդունելութիւն ցոյց տուեց, իսկ ևս զիրկս առի նորան գորովալից խնդութեամբ, որովհետեւ անսովոր էի կեղծել մի սխական զգացումն՝ որը որ իմ մէջ չըկար: Օրիորդ Վ իլմօթի բնդունելութիւնը սաստիկ ստուն էր, բայց ևս տեսի որ՝ այդ մի դեր էր խողացած: Արեւումէր որ՝ իւր ներքին շփոթը նա չէր կարում թեթեւացնել՝ ցրւած մտքով քսան տեսակ բաներ էր ասում, որոնք յայտնի էին կացուցանում նորա ուրախութիւնը. յետոյ ինքը ծիծաղումէր իւր խօսքերի անկար-

գութեան վերայ: Ճամննակ առ ժամննակ, ծածկարար մի հա-  
 յիացք էր ձգում դէպի հայելին, որպէս թէ հաճելի էր նորան իւր  
 անընդդիմանալի զեղեցկութիւնը. քսան տեսակ հարցումներ էր  
 անում մեզ, առանց սպասելու նորանց պատասխանը, կամ ու-  
 շաղիւր լինելու դէպի ստացածները:

ԳԼՈՒԽ 20.

Պատմութիւնը մի թախառական փիլիսոփայի՝ որ նոր նոր բաների քամակից վազելով  
իւր սրտի ուրախութիւնն է կորուսանում:

Ընթրիքից յետոյ, տիկին Արնօլդը վայելուչ կերպիւ առաջարկեց երկու ծառայ ուղարկել որդուս ինչքը բերելու: Առաջ նա դէմ կացաւ այդ բանին, յետոյ, որովհետեւ տիկինը թախանձումէր, պարտաւորից նորան ասել թէ՛ մի գաւազան և մի պարկ էր նորա միակ ստացուածքը՝ որոնց սեփականութիւնով կարէր պարծել այս աշխարհում: «Աւրեմն, որդի, ասեցի ես, խեղճ հրաժարվեցիր ինձանէ և խեղճ վերադառնումես դէպի ինձ. բայց՝ ինչպէս ես մտածումեմ, աշխարհի ծանօթութեան պակասութիւնից չէ այդ: — Այո՛, հայր, պատասխանեց Պէորդը, բայց բաղդի քամակից վազելը դեռ ևս նորան գանկելու հնարը չէ և ճշմարիտ ասեմ, ես արդէն թողել եմ այդ ունայն հետամտութիւնը»:

«Այս մտածումեմ, պարոն, ասեց տիկին Արնօլդը, թէ ձեզ դիպած անցքերի պատմութիւնը պիտի լինի բաւական զբօսուցիչ. առաջին մասին, շնորհօք քեռադատերս, ես տեղեակ եմ և եթէ դուք հաճէիք պատմել մեզ նորա շարունակութիւնը, ճշմարտապէս կը պարտաւորելիք մեզ:

— Տիկին, պատասխանեց որդիս, հաւատացնումեմ ձեզ որ՝ զուարճութիւնը՝ որ դուք կարէք ստանալ իմ պատմութիւնը լսելուց, ոչինչ կերպ աւելի չէ լինելու այն զուարճութիւնից՝ որ ես զգայու եմ ձեզ պատմելուց, բայց ես ձեզ չեմ խոստանում և ոչ մի զբօսուցիչ դիպուած, որովհետեւ պատմելու եմ միայն իմ տեսածը, այլ ոչ իմ գործածը:

«Իմ կեանքիս առաջին դժբաղդութիւնը, դուք գիտէք, շատ մեծ էր. նա ինձ սաստիկ վշտացրուց, բայց չկարած նուաճիլ. ես մեշա ունեցել եմ մի վարմանալի մթերք յուսոյ: Աբբան առաւել բարդը ապտտամբ էր երևում դէպի ինձ, այնքան առաւել ես յուսով էի որ՝ իմ վնասները մի օր կը հատուցանէ. ես նորա անխի տակն էի և ամեն մի շարժումը կարէր ինձ բարձրացնել, այլ ոչ՝ իջուցանել: Ճանապարհ ընկայ ես մի առաւօտ դէպի Վճնդոն, ոչ միայն անհոգս երկրորդ օրուայ մասին, այլև զուարթ և ուրախ, ինչպէս թռչունը՝ որոնք երգումէին ճանապարհի տարածութեան մէջ. ես ինքս ինձ քաջալերումէի, մտածելով թէ՛ Վճնդոնը մի մեծ հրապարակ էր, ուր ամեն տեսակ հանձարը կարէր դանել մեծարանք և վարձատրութիւն:

«Բազմք հասած՝ առաջին հոգսս այն եղաւ որ, հօրիցս ստացած յանձնարարական նամակը տանեմ ասմ մեր ազգակցին, որին ինձնից աւելի լաւ վիճակի մէջ չդպար: Աս դիտաւորութիւն ունէի առաջ, եթէ միաներդ է գալիս, մի ուսուցչական պաշտօն որոնել վարժարանում կամ կերակրով և բնակութիւնով դպրոցում և այս մասին խորհուրդ հարցուցի այդ մարդուց. նա իմ դիտաւորութիւնը ընդունեց սաստիկ սարգսնան ժպտով: «Ա՛հ, ասեց նա, քեզ ցուցել են այդ, իբրև մի շահաւոր ասպարէզ. ես անցել եմ այդ ասպարէզը, դպրոցում օգնականի պաշտօն ունենալով թող ինձ խղզեն կաննվի փողապատով, եթէ Աեովզաթի բանասագահի սպասաւորութիւնը աւելի լաւ չեմ համարում: Ա՛ր էի կենում վաղ, քնելու էի գնում ուշ: Վպրոցի տէրը խոժոռ դէմք էր ցոյց տալիս ինձ, նորս արուհին ատումէր, որովհետեւ ազեղ էի. ներսից աշակերանները զրգում էին ինձ և ես այնքան ազատութիւն չունէի որ՝ տեղեցս շարժեմ և գնամ դրսումը փոքր ինչ մարդասիրութիւն դանելու: Քայց դու ապահով ես որ՝ այդ գործի համար պատշաճութիւն ունես, տեսնեմք, ահա ես փոքր ինչ կը բնեմ քեզ: Ար և է արուեստ սովորել ես: — Ա՛չ: — Աւրեմն անհնար է քեզ դպրոց մանելը: Փոքրիկ ազերքին սանտրել գիտես: — Ա՛չ: — Աւրեմն պատշաճութիւն չունես դպրոց մանելու: Ծագելի արտ ունեցել ես: — Ա՛չ: — Աւրեմն ի՞նչպէս կարես մի դպրոց մանել: Արեքդ մի անկողնքում կարող էր քնել: — Ա՛չ: — Աւրեմն ոչ մի դպրոցի պատշաճութիւն չունես: Ախոր-

Ժակդ լաւ է: — Այո: — Աւրեմն բոլորովին անհնար է քեզ որ և է դպրոց ընդունել: Չէ՛, սիրելի, եթէ դու ուզումես մի ընտիր և հեշտ պաշտօն ունենալ, եթէն տարով աշակերտ մտիր գանակ սրողի մօտ երկանք պատելու և ամենայն հնարով հեռացիր դպրոցից: Այս տեսնումեմ, շարունակեց նա, որ դու սրտով տղայ ես և կրթութիւն ունիս. ի՛նչպէս ես կարծում, եթէ դու սկսելիք հեղինակութիւն անել, որպէս ես: Վու կարգացած կրթնես գրքերում թէ՛ հանձարեղ մարդիկը քաղցու մեռնումեն այս աւուեստի մէջ, բայց ես քառասունի չափ յիմարներ կարեմ ցոյց տալ քեզ քաղաքում, որոնք այս արուեստի մէջ առատութեամբ են կենում. ամենքը պատուաւ որ մարդիկ՝ որոնք սովորական շաւղով, ծանր և հաւասար քայլով գնումեն պատմութեան և քաղաքականութեան հաստատմանը դրելով, ամենքը գովված, այնպիսի մարդիկ, պարոն, որոնք, եթէ կոշկակարի աշակերտ էին, բոլոր իւրեանց կեանքում հին կօշիկներ կրկարկատէին և երբէք չէին կարող մի նորը կարելու:

«Տեղեկացած այն փոքր պատուի և օգտի մասին, որ կարէի ստանալ դպրոցական պաշտօնից, ես վճռեցի ընդունել նորա առաջարկութիւնը և լի յարգանք գէպի գրականութիւնը, մեծաբանօք ողջունեցի Արեփսարիթի Անթիզա Մաթերին\*։ Այս փասք էի համարում այն շաւղով գնալ, որով ինձնից առաջ գնացել էին Վրեյդէներ և Օթուայր և այս խաւարչտին կողմերի աստուածուհին ինձ երեւումէր իբրև աղբիւր ամենայն կատարելութեանց և եթէ աշխարհի հետ հաղորդութիւնը կարէր ողջմտութիւն տալ, նորա փոխարէնը, խեղճութիւնը ինձ երեւումէր իբրև հանձարի խեղճան մտուցիչ։ Վլուխս այսպիսի մտածութիւնով ուռցրած՝ նստեցի ես և համարելով թէ՛ լաւ լաւ բաները մնումէր ասելու աստութեան կողմից, վճռեցի մի բոլորովին նոր գիւրք գրել։ Ճարտարութեամբ յորինեցի մի քանի նորաբանչ բաներ. ամենքը յիրաւի սուտ էին, բայց ամենքը նոր էին։ Ճշմարտութեան ազամանդները այնպէս շատ էին դործածված ուրիշներից որ՝ ստիպվեցի ղիմել ղէպ ի սուտ պաճուճանքը՝ որոնք նմանապէս փայլումէին և հեռուից նայելուս նոյնպէս լաւ էին երեւում։

\* Մե աղտեղի փոքր և Լօնդոնում, ուր բնակուածն սովալլուի հեղինակներ։

«Չեղ եմ վկայ կանչուի, ո՞վ աստուածներ թէ՛ ինչ մը տացածին ճոխութիւն էր բազմում իմ գրիչի ծայրի վերայ, մինչ ես գրում էի: Գիտունների բոլոր խումբը ոտի կանգնեց իմ միտքերի դէմ պատերազմելու, բայց ես պատրաստ էի ամենքին հակառակելու: Ինչպէս խողուկ, ինքս իմ վերայ էի պատրաստվում, ցուցանելով գրիչին պոչովատակուռ ծայրը բոլոր հակառակորդներին:

— Մերուն խօսեցիր, որդիս, գոչեցի ես, ի՞նչ էր քո ճառախօսութեան առարկան, յուսամ որ՝ դու չըմոռացար այն փառաւոր խնդիրը միամունտութեան. բայց՝ չեմ ուզում խօսքդ միջահասակ, շարունակիր. դու հրատարակեցիր քո նորաքանչ բաները, շատ բարի. ի՞նչ տակն նորանց մասին գիտունների խումբը:

— Հայր, պատասխանեց որդիս, գիտունները ոչինչ չ'անցին իմ նորաքանչ բաների մասին, ամենեւին ոչինչ. ամենքը զբաղված էին իւրեանց բարեկամներով, իւրանցով պարծելով և հակառակորդներին դատապարտելով և որովհետեւ դժբաղդաբար ես չունէի ո՛չ բարեկամ և ոչ թշնամի, այնու համար ես կրեցի ամենադժնդակ վիշտ, այսինքն՝ կատարեալ անտարբերութիւն:

Մի օր, մինչ սրձանոցում նստած մտածում էի իմ տետրակի վերայ մի կարճահասակ մարդ ներս մտաւ և նստաւ նոյն սեղանի մօտ, ուր ես էի: Մի քանի նախապատրաստական խօսակցութիւններից յետոյ, խմանալով թէ՛ և ուստալ մարդ եմ, հանեց իւր գրպանից մի ծրար յայտարարութեանց և հրաւիրեց ինձ ստորագրվել Փրօփերսի մի նոր տպագրութեան համար, որ նա պատրաստումէր հրատարակելու ծանօթութիւններով հանդերձ: Այս խնդիրը անհրաժեշտ կերպիւ ստիպեց ինձ խոստովանելու թէ՛ ես և ո՛չ մի սուռնէի, իսկ իմ խոստովանութիւնը պատճառ տուեց նորան ինձնից տեղեկութիւն խնդրելու թէ՛ ի՞նչ ակնկալութիւններ ունէի ես: Աբրօր նա խնայաւ թէ՛ իմ յոյսը այնքան ընդարձակ էր որքան իմ քսակը դատարկ, ես տեսնումեմ, ասեց նա, որ դու քաղաքի պարագայքը չըզիտես. ես ցոյց կ'տամ քեզ նորահանգամանքներից մինը: Ան նայիր այս յայտարարութիւններին. տասներկու տարի է ահա՝ սորանք ինձ հանգիստ ապրուստ են տալիս: Այն ինչ մի ազնուական ճանապարհորդ է դալիս, մի

զաղթական Ճամախկից, կամ մի այրի տիկին իւր ասպարանքից, իսկոյն առաջարկուեմ Նորանց իմ ստորագրութիւնը, փաղաք-  
շանքով պաշարուեմ Նորանց սիրտը, և մինչ մի խրամատ է բաց-  
փում, սահեցնուեմ մէջը իմ խնդիրքը: Աթէ հաճութեամբ ըս-  
տորագրվումեն առաջին անգամում, կրկին գալիս եմ խնդրելու  
Նորանց անուշին նուիրել իմ շարագրութիւնը, սորան յօժարե-  
լուց յետոյ, աղաչուեմ թոյլ տալ իւրեանց ազգատոհմի նշանը  
գրքի սկզբում դրոշմել: Այսպէս, շարունակեց նա, ևս ապրուեմ,  
անասարժների հաշով և ինքս ծիծաղուեմ սորա վերայ, բայց՝  
մեր մէջը մնայ, այժմ համարեա ամենքը լաւ ճանաչել են ինձ.  
Հատ կուզէի մի նոր կերպարանք փոխ առնուլ, որովհետեւ մի բարձ-  
րաստիճան ազնուական է եկել Խաղիայից և իմ կերպարանքը  
չատ ծանօթ է նորա դճնապահին. եթէ դու յօժարէիր տանել  
Նորան այս ստանաւոր հատուածը, կեանքս գրաւուեմ որ կ'յա-  
ջողվէիր և մենք շահը կ'բաժանէինք»:

— Աստուած օգնէ մեզ այդ փորձութեան մէջ, Վեորգ,  
աղաղակեցի ևս, միթէ սորանով են պարտապում այժմու բանաս-  
տեղծները: Բարձր ստղանդի տէր մարդիկ ցածանուեմն մինչի  
մուրացկութիւն. իւրեանց կոչումը արհամարհուեմն, գովեստի  
անարգ վաճառ աշահութիւն անելով, մի կտոր հացի համար:

— Չէ, չէ, հայր իմ, ասեց նա, իսկական բանաստեղծը  
այդպիսի անպատուութիւն չէ ընդունում, որովհետեւ ուր հանձար  
կայ, այնպեղ կայ և մի գովելի հպարտութիւն: Իմ պատմած  
թշուառներն են մուրացիկ չափարաններ: Քչմարտա բանաստեղ-  
ծը շատ բան է գոհում, փառքի հասնելու համար, բայց վախումէ  
արհամարհանքից, և միայն նորանք են անարժան պաշտպանու-  
թեան, որոնք խոնարհուեմն ստիպմամբ խնդրելով այդ պաշտպա-  
նութիւնը:

«Երնէ բաւական սեղ հոգի ունենալով, մինչ այդ անարդու-  
թիւնը չիջանելու համար, նոյնպէս մի գծուծ դրութիւն՝ որ չէր  
ներկ ինձ կրկին յարձակվել բաղբի վերայ, ևս պարտաւորված  
եղայ միջին վիճակ ընտրել և զրել իմ ապրուստի համար, բայց  
բաւական պատշաճութիւն չունէի մի այնպիսի արուեստի համար,  
որի մէջ հնարագիտութիւնն է ապահովվում յաջողութիւնը:  
Աս չէի կարում հեղձուցանել իմ մէջ ծափահարութեան սէրը,

վանու մէի իմ ժամանակը ո՞նք կատարագործելու ջանքի մէջ, — փոխանակ իմ օգտի համար միջակ ո՞ճով զրուածներս շատացնելու: Մանր, բայց ճշտիւ կատարելագործված զրութիւնքս յայտնվում էին պարբերական հրատարակութիւնների բազմութեան մէջ և նորանց մէջ կորչում էին անտես և անգէտ: Հասարակութիւնը ուրիշ բան ունէր գործելու և չէր նկատում իմ ո՞ճի հեշտընկալ պարգութիւնը կամ պարբերութեանց դաշնակաւորութիւնը. թիրթ թերթի քամակից այսպէս գնում էին մոռացութիւնից կված լինելու: Իմ փորձերը, շատ դիշխային տքնութիւնները ազատութեան համար, շատ արեւելեան առասպելաբանութիւնները և դեղագիրերը կատապած շան խածատանքից բժշկվելու համար, ամենքը թաղվեցին, մինչդեռ Գելլոթուսը, Գելլալթը, Գելլոթուսը և Գելանթուսը զրուակին նոյնչափ լաւ որչափ և շուտ:

«Այս սկսեցի այնուհետև շուտ շուտ գնալ այն հեղինակների մօտ, որոնք իմպէս դժկամակ և դժգոհ էին և որոնք միմեանց գուվում, միմեանց խնայում և միմեանցից չարախօսում էին: Որքան առաւել զեղեցիկ էին մեծանուն հեղինակներից հրատարակված գրքերը, այնքան առաւել վատ ընդունելութիւն էին գտնում տւրանք մեր մէջ. չկայ մի հանձար՝ որ ինձ հաճելի լինէր ուրիշ մէջ՝ իմ թախծալի նորապանչ բաները բոլորովին ցամաքեցրել էին իմ համար այդպիսի վայելութեան աղբիւրը. ես չէի կարում ոչ կարդալ և ոչ գրել բաւականութեամբ, որովհետև միւսների գերազանցութիւնը իմ տանջանքն էր, իսկ գրելը իմ արուեստը:

«Մի օր մինչ ընկզմված այսպիսի թախծալից մտածութիւնների մէջ, նստած էի Աէն-Ճամի պարտեզում, մօտեցաւ ինձ մի ջահիլ մարդ՝ որ համալսարանում իմ մտերիմ բարեկամներից միսն էր. մենք ողջունեցինք միմեանց փոքր ինչ վարանքով, նա կարմրելով որ՝ նորան ճանաչեց մի շատ աղքատ կերպարանքով մարդ, իսկ ես կասկածելով թէ՛ մի գուցէ նա ինձ մերժէ: Բայց իմ կասկածանքը փարատվեցին շուտով, որովհետև Պ. Թօունհիլը ի բնէ լաւ ընկեր էր:

— Ի՞նչ տեսցիր, Վէորդ, գոչեցի ես, միջահատելով նորան, ոչ ապաքէն Թօնհիլի անունը առելի. դա մեր երկրապետը պիտի լինի: — Զիրաւի, ասեց Թիկին Երնոյդը, Պ. Թօունհիլը ձեր մօտի

գրացին է: Շատուց արդէն նա մեր բարեկամն է և մենք սպասում ենք այս միջոցում նորա այցելութեան:

— Իմ բարեկամի առաջին հոգար եղաւ, շարունակեց որդիս, փոփոխել իմ արտաքին տեսիլը, գլխիցս մինչև ոտքս իւր սեփական շորերը ինձ հագցնելով: յետոյ դէպի իւր սեղանը հրաւիրեց, վարվելով իմ հետ, կէսը իրրև ընկերի և կէսը իրրև ստորագամի հետ: Իմ պարտաւորութիւնը այն էր որ՝ ուղեկից լինելի նորան դէպի վաճառքը, զուարճողեմ պահպանելի նորան, մինչ իւր պատկերը նկարելու համար նստումէր, կառքի մէջ նորա ձախակողմում նստելի, եթէ մի ուրիշը չէր բռնելու այդ տեղը, բազմախնդրութեան արշաւէի նորա հետ, եթէ մի այդպիսի բանդազուշանք տիրէին նորան: Բայց սորանից քսանի չափ այլ մանր պաշտօններ ունէի ներսում կատարելու և ուրիշ շատ մանր մունր բաներ անելու, առանց որևէ պատուելի սորանց մասին, զոր օրինակ խցահան գործիքը տալու, անասի երեխայքը մկրտութեան ժամանակը ձեռնումս պահելու, խառնի երգելու, այն ինչ հրաման կատանայի, երբէք շարանոյն չ'երևելու, միշտ խոտարհ և եթէ կարելի էր, կատարելապէս երջանիկ լինելու:

Բայց՝ սուանց ոտիների չէի ևս այդ պատուաւոր պաշտօնի մէջ՝ ծովային զօրքի մի քափիթան, կատարելապէս կրթված այդ դերի համար, մաքառումէր իմ գէմ պաշտպանիս սէրը դէպի ինքը զբաւելու: Նորա մայրը մի անուատահմ մարդու լուսոյք անող կինն է եղած, և սա իւր մօր կաթնի հետ ծծել է անարժան խրոտովարարութեան հոգի և յարգանք դէպի ազգաատահական նշանը: Արովհետև այդ սարժանաւոր մարդու բոլոր կեանքի փոյթ և ջանքը եղել է ճանաչել յորդերին, թէ և սորանցից շատերը դուրս էին արկ նորան իւր յիմարութեան պատճառով, նա գեռ ևս չտել էր իւր նման թանձրամիտներ՝ որոնք ներում էին սորա գեզերանքը: Փաղաքշանքը նորա օրուայ հաց ձարելու գործիքն էր և սորա մէջ նա գործ էր անում բոլոր իւր յաջողակութեանը՝ որ, իմ կարծեօք, տարածե և բռնապրօսիկ էր: Օրէ օր իմ պաշտպանիս ծարաւը գովհասների համար անցալ էր դասնում, մինչ ժամէ ժամ առաւել իրազէս եղած նորա մոլորութիւններին, իմ կողմանէ նորան գովելու յօժարամտութիւնը նուազումէր: Այսպէս համարեա ևս պատրաստ էի ճակատատեղը թողնել քափիթանին,

մինչ իմ ազնիւ բարեկամը այնպիսի սրարագայից մէջ գտնուից, ուր իմ օգնութիւնը նորան հարկաւոր էր: Մի ոչինչ բան էր նորա խնդրածը, այսինքն՝ պիտէր մենամարտել (battre en duel) մի ազնուականի հետ, որի քրոջը ստուձէին, սաստիկ անարգանք էր ցուցել: Տեսնու՞մք որ զուք պարտաւում էք իմ գնացքը, բայց այդ մի պարտք էր դէպի բարեկամութիւնը և ես չ'կարէի հրաժարիլ նորանից: Ասիւք առ ի իմ վրաս, հակառակորդիս զինաթափ արեցի և շատ չ'անցաւ որ՝ բաւականութիւն ունեցայ տեղեկանալու թէ՛ կարծեալ զոհը մի վատարարոյ ազջիլ է եղած, և իմ հետ մենամարտողը՝ նորա տարվածուն:

Այս երախտագործութիւնը մեծամեծ շնորհակալութեան վկայութիւններ բերեց ինձ և իմ բարեկամը՝ որ մի քանի օրից յետ մեկնուիլու էր քաղաքից, ուրիշ հնար չ'գտաւ ինձ վարձահատոյց լինելու, եթէ ոչ բարեխօսելով իմ մասին իւր հօրեղբայր Սիր Վելիամ Գօսնահիլի մօտ և մի այլ վսեմախայլ ազնուականի մօտ, որ կառավարութեան մէջ բարձր պաշտօն ունէր: Այն ինչ բարեկամն մեկնուցաւ քաղաքից, շատպիցի ես նորա նամակը տանել տալ հօրեղբորը՝ որի առաքինական համբաւը, թէև համատարած, բայց արժանաւորութեամբ էր ժառանգած:

Օտտայքը ինձ քնդուենցին սաստիկ հերքնկարական ժպտանօք, որովհետև արեջ բարեհաճութիւնը ցողանուձէր սպասաւորներէ կրեալ վերայ: Ինձ տարեցին մի մեծ սենեակ, ուր շուտով եկաւ և Սիր Վելիամը: Աս յայտնեցի նորան իմ պատգամաւորութիւնը և սուեցի նամակը, նա կարգաց և մի քանի բոպէ լրուելուց յետոյ, ասեց՝ «Հաճեցէք, պարոն, տեղեկութիւն տալ ինձ՝ ի՞նչ էք գործել զուք իմ եղբորորդուս այդ եռանդուն բարեխօսութիւնը ստանալու համար: Բայց առանց մի մեծ ջանք գործելու, ես կարող եմ գուշակիլ: Վուք կուուել էք նորա փոխարէն և սպասում էք ինձնից մի վարձատրութիւն նորա մեղութիւնների գործիք եղած լինելու համար: Ի խորոց սրտի ցանկանումս որ իմ մերժումը ձեր յանցանաց պատիժը լինի և մանաւանդ՝ դէպի զգլու՞մս ստիպէ ձեզ:

Համբերութեամբ տարեցի ես այդ յանդիմանութեան խրատութիւնը, որովհետև զգուձէի որ՝ իրաւացի էր այն: Յոյսս մընաց այնուհետև տէրութեան վսեմախայլ պաշտօնէն զբաժնաւ

մակի վերայ: Արովհետև մեծամեծների դռները միշտ պաշարված են մուրացիկներով, որոնք պատրաստ են զանազան խորամանկ խնդիրներ նետելու, այս պատճառով մեծ դժուարութիւն կրեցի, և իմ երկրաւոր հարստութեան կէսը մասը մասը սպասաւորներին բաժանելուց յետոյ միայն, ինձ հրաւիրեցին մի ընդարձակ սենեակ, իսկ նամակս առաջուց տարված էր *Նորին Պետրականցութեան*: Մի կարճ միջոցում, որ լի էր անձկանօք, ես ժամանակ ունեցայ նկատելու իմ բոլորտիքը. ամեն բան հոյակապ էր և սեթեւեթեալ ոճով, նկարները, կահերը, ոսկեղէնքը ինձ զարմացնում էին և առաւել բորբոքում էին այն կարծիքը՝ որ ես ունեի իշխանների մասին:

«Ո՛հ, մտածումէի ես, ո՞րքան մեծ պիտի լինի բոլոր այս բաների տիրոջը: Սորա գլխի վերայ հանգումն տէրութեան բոլոր գործերը. սորա տունը ամփոփումէ իւր մէջ մի թագաւորութեան կէս հարստութիւն. անշուշտ սորա հանձարը անսահման պիտի լինի:

«Այս պատկանելի զբաղմունքների մէջ մի ծանր դնայքով մտանալու ձայն լսեցի. ահա՛ գալիս է ինքը մեծատունը. ո՛չ. տան հոգաբարձու կինն էր այն: Սորանից յետ կրկին քայլերի ձայն լսեցի. այս անգամ նա պիտի լինի. . . չէ՛. երեւել անձնի սպասաւորն էր այն: Այնքան Նորին Պետրականցութիւնը ներս մտաւ: «Պո՛ւ ես գոչեց նա, նամակի բերող»: — Այս պատասխանեցի զբլուխ տալով: «Այս տեսնումեմ, շարունակեց նա, թէ՛. . . այսպէս կամ այնպէս. . .» (Իսկ «Վայց՝ ճիշտ նոյն բոպէին, սպասաւորը մի տոմսակ տուեց նորան և նա ամենեւին անհոգս իմ մասին՝ սենեակից դուրս եկաւ և ինձ թողեց հանգիստ վայելելու իմ երջանկութիւնը: Այս նորան կրկին տեսի միայն այն ժամանակ, երբ ծառաներից մինը եկաւ ինձ ասելու թէ՛՝ Նորին Պետրականցութիւնը պատրաստվումէ կառքը նստելու. վաղեցի նորա հետքից, միառուրելով իմ ձայնը երեք կամ չորք տառապեալների հետ՝ որոնք իմ պէս շնորհ խնդրելու էին եկել: Իսկ «Վայց՝ Նորին Պետրականցութիւնը շատ արագ էր գնում և մեծ մեծ քայլերով արդէն հասնումէր կառքի դռնին, մինչ ես բոլոր ուժովս աղաղակեցի որ՝ իմանամ թէ՛ պիտե՞ր սպասէի նորան, թէ՛ ո՛չ: Նա արդէն կառքի մէջն էր և մի պատասխանի միջնջեց, որի կէսը միայն լսեցի, իսկ ֆնացոր-

դը անիւնների դըրդիւնի մէջ կորաւ : Այս մի փոքր միջոց մնացի վիզս ձգած, մի այնպիսի դրութեան մէջ, երբ մարդ ականջները պատրաստուած վերջեց իջանելի հիւնշիւններ լսելու : Այնքապէս նայեցի բոլորալիքս և տեսի ինձ մենակ Նորին Պարագանցութեան դռնումը :

«Եւ համբերութիւնը, շարունակեց որդիս, այնուհետև բոլորովին սպառեցաւ : Առոցոտված հազար շարախորժութիւններով՝ որոց հանդիպել էի, ուր ասես կ'նետէի ինձ՝ անդունդքն էր պակաս, որ ինձ ընդունէր : Այս ինձ նայումէի, իբրև մի այնպիսի շարբանի, որին բնութիւնը վիճակի էր անպիտան մնացորդի մէջ լինելու, աղջամուղջի և մոռացութեան մէջ կորչելու համար : Աէս կիսն էր միայն մնացել գրգանումս և ես մտածումէի թէ՛ նոյն խակ պատահարքը սիրտ չէին արել ինձ սորանից զբիւրու. բայց բոլոր փոփոխական զիպուածներէից նորան ապահով կացուցանելու համար, վճռեցի խկոյն գնալ և ծախսել (խարջել) թող յետոյ ինչ ուզումէր պատահէր ինձ :

«Այնչ այսպիսի զեղեցիկ դիտաւորութեամբ գրաւված՝ դընումէի, Պ. Քրիստոս սեղանատունը բացվեց առջևումս մի հրապուրիչ կերպիւ և իբր ինձ բարով եկիր ասելով : Պ. Քրիստոս բարեխրութեամբ առաջարկում է երեսուն լուխի վեհանախան խոստումն ամեն հպատակի Նորին Քրիստանան մեծութեան, որոց փոխարէն, ստացողները ապիս են բոլոր իւրեանց կեանքի ազատութիւնը, թոյլ տալով աարագրել իւրեանց Ամերիքա, իբրև ստրուրկների : Արջանիկ համարելով ինձ. եթէ մի տեղ գտնէի, ուր կարէի ազատվել իմ յուսահատութեան վտանգից, հաւատաւորիս եռանդով մտի ես այդ խցիկը՝ սեղանատունը յիբաւի մի խուցի նման բան էր : Այնտեղ գտի ես բազմութիւն խեղճերի, որոնք իմանման վիճակի մէջ լինելով, սպասումէին Պ. Քրիստոսին և համառօտաբար պատկերացնումէին իւրեանց մէջ անգլիական անհամբերութիւնը : Այս չկրթված և չկրթվելի հողիքը, պատերազմի մէջ բաղդի հետ, նորա անիրաւութիւնների վեժխնդրութիւնը իւրանք իւրեանց վերայ էին կատարում :

«Պ. Քրիստոսը ցած եկաւ վերջապէս և բոլոր մրմնջիւնքը դադարեցին. նա ինձ արժանացրուց մի առանձին բարեհաճութեան պատուոյն : Արիւր մի ամենից ի վեր, սա առաջին մարդն էր, որ

ինձ մօտեցաւ ժպտանօք: Մի քանի հարցու մներից յետոյ, նա տեսաւ որ՝ ես պատշաճ էի ամեն բանի. և մտածելով թէ՛ ինչ պէս մի լաւ հոգս անէ իմ համար, խփեց ճակատին, իբր թէ, յանկարծ մի բան էր միտքը եկել և ինձ ասեց թէ՛ Փանսիլվանիաի Սիւնհօդօսը, ասուձեն, մի զեսպանութիւն է ուղարկում Շ իկասաւի հնդկաց մօտ, և թէ նա բոլոր ունեցած վարկը գործ կ'ածէ, ինձ այն տեղ ատենադպիր նշանակելու համար: Այս յատուկ զիտէի որ՝ շաղաշուտը սուտ է ասում, բայց նորա խոստումը ինձ հաճոյ եղաւ, որովհետեւ մի շքեղութիւն էր լավում նորա խօսքերի մէջ: Այս նորա հետ բաժանեցի իմ կէս կինէն՝ որի կէսը գնաց նորա երեսուն հարար լիտր հարստութիւնը աճեցնելու, իսկ ես վճռեցի մնացորդը խարջել մօտակայ պանդոկում և նորանից աւելի երջանիկ լինել:

«Մինչ այս զիտաւորութեամբ դուրս էի գալիս, դռնումը հանդիպեցի մի նաւապիտի, որին մի ժամանակ փոքր ինչ կ'ձանաչէի և որ յօժարեցաւ մի բաժակ փունջ խմել իմ հետ: Այս իմ դրութիւնը կրկէք ծածուկ շեմ պահում, ուստի մինչ նա իմացաւ ո՞ւր էի ես այժմ, հաւատացրուց ինձ թէ՛ ես գէպի իմ կուրուսան էի գնում, լսելով այդ գործեր յորինողն խոստմունքը, որի նպատակը այն էր որ՝ ինձ վաճառէ անկարկնեթին: «Բայց, շարունակեց նա, եթէ ինձ հաւատումէք, մի քաւելի կարճատե ճանապարհորդութիւն կարէ ձեզ նոյն հնարը տալ պատուով մի կրտոր հաց գանելու. ընդունեցէք իմ խորհուրդը: Իմ նաւը էգուց առագասաները պարզելու է գէպի Ամնթերդամ: Ինչո՞ւ չէք գալ նորա մէջ, իբրև նաւորդ: Այն ինչ ցամաք կ'իջնէք, խեղոյն կարէք պարապել շորանդացոյ անգլիական լեզու սովորեցնելով և ես երաշխաւոր եմ լինում ձեզ որ՝ ոչ աշակերտները և ոչ փողը ձեզ չեն պակասել: Այս կարծումեմ թէ՛ դուք անգլիարէնը զիտէք, ինչ ուղումէր լինէր մէջը: «Աստարեալ հաւատարմութեամբ ես ապահովեցրի նորան իմ կարողութեան մասին, բայց համոզված չէի թէ՛ հոլանդացիք կցանկան իմ ծննդական լեզուն սովրելու. նա երգմամբ հաստատեց թէ՛ անշափ սիրում էին այդ լեզուն: Այսպէս ես ընդունեցի նորա առաջարկութիւնը և հետեւալ օրը նաւը մտեցի հոլանդացիքին անգլիարէն սովորեցնելու նրա պատակով:

«Նորմը յաջող եղաւ և ճանախորդութիւնը կարծ: Ճանապարհիս ծախքը վճարեցի աղիտիս կէտովը և ահա Ամսթերդամի գլխաւոր փողոցների մինի մէջ կանգնած էի այնպէս օտար, որպէս թէ, ամերիկի միջնոց վերընկած լինէի այտանդ: Անհամբեր էի որքան կարելի է շուտ գործի ձեռնամուխ լինել: Վիմպի երկու կամ երեք անցաւորի, որոնց արտաքին տեսքը իբր թէ յաջողութիւն էր խոստանում, բայց՝ մեզ անհնար եղաւ միմեանց հասկանալը և այժմ միայն միտս կկաւ թէ՛՝ հօլանդացիքին անգլիարէն սովորեցնելու համար, անշուշտ հարկաւորէր որ՝ առաջնորանք ինձ հօլանդերէն սովորեցնէին: Չարմանալի բան է իմ համար թէ՛՝ ինչպէս մի այգպիսի մեծ դժուարութիւնը ևս մոռացել էի. բայց յայտնի է թէ՛՝ չէի մտածել սորա վերայ:

«Վա՛մ դիտաւորութիւնը այդպէս գլխովայր կործանված՝ արդէն փոքր ինչ ցանկանումէի անգլիա վերադառնալ. բայց ահա մի Նրլանդացի ուսանողի հանդիպեցի, որ Առվինիցն էր վերադարձել. մեր խօսակցութիւնը բնկաւ բանասիրական ուսմանց վերայ, (որովհետեւ, հարեանցօրէն ասված լինի՝ այն ինչ կարենում էի դպչել այդ աւարկային, խիղջն մոռանում էի իմ չքաւորութիւնը): Ուսանողը ինձ իմացրուց թէ՛՝ բոլոր համալսարանում երկու անձինք չկային որ յունարէն հասկանային. այդ բանը ինձ զարմացրուց: Վսիղյն վճուեցի ևս Առվին ճանապարհորդել և այնտեղ կենալ այդ դիտնական լեզուն սովորեցնելով: Վա՛մ ուսումնակիցը հաստատեց ինձ այդ դիտաւորութեան մէջ, հասկացնելով թէ՛՝ կարէի այնտեղ հարստութիւն ձարել:

«Համարձակ հետեւալ օրը ճանապարհ բնկեցի. օրէ օր իմ բնուր թեթեւացնումէր, ինչպէս Ադովրի կողովը, որովհետեւ փողի պակասութիւնից, շորերովս էի հատուցանում բոլոր ճանապարհի իջեանների գինը: Առվին համած՝ ևս վճուեցի՝ ո՛չ թէ ստորակարգ ուսուցիչներին դիմել մեծարանօք, իբրև մի ստոր մարդ, այլ ուղիղ գնալ գլխաւորի մօտ: Յայտնեցին նորան իմ դպրը և նա ընդունեց ինձ. ևս առաջարկեցի իմ պաշտօնատարութեան բաղձանքը, իբրև յունական լեզուի ուսուցչի, որովհետեւ, ինչպէս ինձ ասել էին, համարաբանը այդ բեմի պակասութիւնը ունէր: Վրխաւորը կարծես թէ երկբայումէր իմ ընդունակութեան մասին, ուստի նորան համոզելու համար, առաջադրեցի լատինական

լեզու թարգմանել մի հասուած ո՞ր յունական հեղինակից կ'հա-  
 ծէր ցուցանել : Տեսնելով որ՝ ես անկեղծութեամբ եմ զխնում  
 դէպի այդ գործը, «Աւ նայեցէք ինձ, պարոն, ասեց նա. ես  
 երբէք չեմ ուսել յունական լեզուն, բայց և չեմ կարացել երբէք  
 նկատելու որ՝ այդ մի պակասութիւն լինէր իմ համար. իրաւա-  
 դիտութեան աստիճանը ստացել եմ, առանց յունական լեզուի.  
 տան հազար Քլորին տարեկան թոշակ եմ ստանում, առանց  
 յունական լեզուի. ամենապատուական ակտրիսի ունիմ, առանց  
 յունական լեզուի. ուրեմն շարունակեց նա, որովհետեւ ես չ'զիտեմ  
 յունական լեզուն, ուստի չեմ կարում իմանալ թէ՛ ինչու է հար-  
 կաւոր այդ լեզուն» :

«Այժմ շատ հեռի լինելով հայրենիքիցս, իմ վերադարձը  
 մտածելու համար, վճռեցի առաջ գնալ : Այս ունեի մի թեթե-  
 տեղեկութիւն երաժշտութեան և միջակ ձայն. սկսեցի իմ օգտի  
 համար գործածել, իբրև մի հնար սպրուտի, այն բանը՝ որ  
 մինչ այժմ իբրև զուարճութիւն էի բանեցնում : Երջումէի  
 Պլանդրիաի և Պրանսիաի բարեսիրտ գիւղականների մէջ, որոնք  
 բաւական խեղճ էին զուարթ լինելու համար, բայտ օրում ես միշտ  
 նորանց ուրախ էի տեսնում իւրեանց թշուառութեան չափով :  
 Արբ որ մի հիւղի էի մօտենում երկինապահին, հնչեցնումէի իմ  
 զգայուն երգերից մինը և այն զիւղում ոչ միայն իջևան էի զրո-  
 նում, այլև միւս օրուայ սպրուտս : Այն երկու անգամ փոր-  
 ձեցի հնչել և երգել վերակարգ մարդկանց համար, բայց սորանք  
 պարսաւեցին իմ նուազածութիւնը, ասելի համարեցին և ոչ մի  
 դանակ չ'տուեցին : Այս բանը ինձ շատ օտարտի երևեց, այն  
 պատճառով որ՝ երբ իմ լաւ ժամանակներում երաժշտութիւնը  
 իբրև զբօսանք էի գործածում, ոչ մի ակումբի մէջ չ'պտտահեց որ՝  
 իմ տաղանդը նախանձու չ'գովէին, մանաւանդ տիկիներին զար-  
 մացած երևում. իսկ այժմ, մինչ այդ նուազածութիւնը իմ միակ  
 ապաւէնն էր, արհամարհանօք էին լուսմ : Ահա մի անմերժելի ա-  
 պացուցութիւն այն բանին թէ՛ հասարակութիւնը միշտ պատ-  
 րաստ է տժգնել այն տաղանդները՝ որոնք մարդու սպրուտն են  
 տալիս :

«Երջելով եկի ես մինչև Փարիզ, առանց որ և է զիտառ-  
 րութեան, այլ միայն երկիրը տեսնելու և առաջ գնալու համար :



կանց հետ, որոնք ամեն մի նկարի, ամեն մի շքադրամի մասին, նորա կարծիքն էին խնդրում, իբր թէ մի անվրէպ ուղեցոյց էր նա, կամ մի կանոնագիր ճաշակի: Այսպիսի դիպուածներում, նա բաւական օգուտ էր քաղում իմ ներկայութենէն: Այլոր նորա կարծիքն էին հարցանում, նա ծանրակշիւ պէմքով ինձ մի կողմ էր քարշում, հարցանումէր, ուսերը բարձացնումէր և մի խորագէտ կերպարանքով դասնումէր պէպի ժողովը, հաւատարմացնելով թէ՛ անհնար էր նորան մի այսպիսի ծանր գործի մասին իւր վրձնական կարծիքը ասել, բայց երևին և յանդգնութեամբ էր պարտաւճար լինում: Միտս է դալիս որ՝ նկարի մասին նա յայտնեց թէ՛, երանդները բաւական յարմար չէին և խորախորհուրդ պէմքով վրձինը թաթախեց սև ներկի մէջ, որ պատահաբար նորա մօտ դասձ էր և շքեցրուց կտաւի վերայ մեծ վատահութեամբ, հարցանելով ժողովին թէ՛՝ ո՞չ ապաքէն գոյների գաշնակութիւնը այնուհետև աւելի լաւ էր կրելում:

«Այր որ նա իւր գործերը վերջացրուց Փարիզում, զգալի յանձնարարութիւններ արեց իմ մասին զանազան մեծապատիւ անձանց, իբր թէ ես շատ վայելուչ էի մի ջահել մարդու ընկելութիւն անելու ճանապարհորդութեան ժամանակը: Յիրաւի իմ պաշտօն գտնելը չուշացաւ: Մի անդիւցի՛ որ իւր սանին Փարիզ էր բերել, այնտեղեց Աւրոսպի շքադրամութիւնը սկսելու համար, խնդրեց ինձ առաջնորդել այդ պատանիին, բայց այն պայմանով որ՝ ազատ թողնէի նորան իւր կամքով վարկելու: Իսկեղ երևումէր որ՝ նա ինձնից լաւ գիտէր շահասիրական գործերը վարելը: Ան ժատանդիւ էր 200,000 լիտր ստերլինգի մօտ հարստութիւն իւր հօրեղբորից՝ որ արևմտեան Անգլիաստանումն էր ծառայել, և նորա խնամակալները, այդ հարստութիւնը արնտեսելու համար, աշակերտ էին տուել նորան մի գործակալ հոգաբարձուի: Ազահութիւնը ամենեւին տիրել էր նորա հոգուն: Բայց նորա հարցումները ճանապարհումն պատում էին փոզի խրնայողութեան հնարներին և թեթեւածախ կերպիւ ճանապարհորդելու վերայ: Նոյնպէս թէ՛ ի՛նչ էր կարելի գնել (առնել) մի կրկրում և շահով վաճառել Ա՛ճոյճում:

Միշտ ցանկանումէր ճանապարհում չքնաղ բաներ տեսնել, եթէ ոչինչ չարժէր այդ. իսկ մինչ պիտէր մի բան հասուցանել,

նորան միշտ ասում էին թէ՛ այդ բանը չարժէր որ նորա համար դադարէին: Պանդոկներում իւր ծախքը չէր հաստուցանում, առանց նկատելու թէ՛ ճանապարհորդութիւնը սաստիկ մեծածախ է: Եհա սյարսն ժլատ էր նա հագիւ քսան և տարեկան հասակում: Երբ որ մենք հասանք Վիփուրն և զնայինք ցամաքային և ծովային ճանապարհորդութեան կայարանները, նա հարցրուց անդլիա անցնելու զինք. մի չնչին զանազանութիւն կար ծովային և ցամաքային ճանապարհորդութեանց մէջ. չկարաց նա դէմ կենալ այդ հրապուրանքին, վճարեց այն փոքր բանը՝ որ ինձ պարտէր, ողջունեց ինձ և նաև նստեց միայն մի ծառայով Վօնգօն վերադառնալու:

«Արկին ևս մնացի աշխարհում թափառելու, իբր թէ այդ վիճակի համար էի ստեղծված: Իմ երաժշտական գիտութիւնը ևս չկարէր արգէն ինձ օգնել այդ երկրում, ուր ամեն մի շինական ինձնից աւելի լաւ երաժիշտ էր: Բայց ևս ստացնլ էի մի ուրիշ տաղանդ՝ որ այս միջոցում ինձ օգնեց. ևս բաւական յաջողակ էի վիճարանական ձեռնարկութեանց մէջ: Օտար երկրից համալսարաններում և վանքերում սովորական օրեր կան, երբ ամեն յանկարծազէպ կեողը դէմ պաշտպանում են մի փիլիսոփայական խնդիր, և եթէ ըմբիւր վէճի մէջ ցուցանումէ գիտութիւն և յաջողակութիւն, իրաւունք է ստանում մի փոքր փողի, մի ճաշի, և մի զիշերուայ անկողնիքի: Ե, յսպէս ևս ճանապարհ ընկայ պատերազմից պատերազմ, վէճից վէճ, ուղղվելով դէպի անդլիա: Վաղաքից քաղաք էի մանում, մօտ առ մօտ քննելով մարդկային ազգը և նայելով, եթէ կարելի այդպէս ասել, նկարի երկու երեսը ևս: Բայց իմ նկատողութիւնքը բազմութիւ չեն: Եմեն տեղ թագաւորութիւնը ինձ երևեց լաւագոյն կառավարչութիւն խեղճերի համար, հասարակագիտութիւնը՝ հարուստների համար: Աս նշմարելի ամեն երկրում ընդհանրապէս որ՝ հարստութիւնը մի ուրիշ անուն էր՝ որ տուել էին ազատութեան և թէ՛ ոչ ոք անկախութիւնը չէր սիրում մինչ այն սաստիճան որ՝ չկամենար կորացնել իւր կամոց ասի այն մարդկանց կամքը, որոնք նորա հետ ընկերութեան մէջ էին:

«Անդլիա վերադարձած՝ ևս մտադիր էի նախ և առաջ կատարել իմ պարտականութիւնքը դէպի ձեզ, հայր. յետոյ զինուոր

գրվել առաջին պատերազմական արշաւանքի մէջ, որ պատրաստ-  
վելու էր, բայց ճանապարհորդութեանս ժամանակը մի հին ծա-  
նօթի հանդիպեցի, որ նահանգներում շրջող խեղկատակների  
խումբի ընկերութիւնիցն էր: Այս զիպուածը փոփոխեց իմ զի-  
տաւորութիւնը: Արեւումէր որ խումբը յօժար էր ինձ ընկերաց-  
նելու: Բայց իմ նոր ընկերները չճածկեցին ինձնից ձեռնարկու-  
թեանս բոլոր զժուարութիւնները և նիթադրեալ նպատակիս ծան-  
րութիւնը: Աորանք ինձ յայտնեցին թէ՛ ժողովուրդը մի հարիւր  
գլխանի վիշապ է և թէ՛ շատ լաւ գլուխ պիտի ունենայ, նորան  
հաճոյ լինելու համար. թէ թատրոնում խաղալու սովորու-  
թիւնը մի օրում չէ ստացվում և առանց ուսերը յայտնի կերպիւ  
բարձրացնելու, առանց աւանդեալ անդամաշարժութեանց, ու-  
րոնք հարիւրաւոր տարիներից հետէ միայն թատրոնումն են լե-  
նում և միայն այնտեղ են տեսնում, անկարելի է յաջորութիւն  
սպասել: Պորանից յետոյ զժուարութիւնը իմ համար մի դեր  
դաննէն էր, որովհետեւ ամենքը արդէն բաժանած էին: Մի միջոց  
տարուբերեցին ինձ մի գերասանութիւնից միւսը, մինչև որ վեր-  
ջապէս վճռական կերպիւ ինձ տուին Հօրացիօի գերը՝ որ ձեր  
յանդիմանակացութիւնը բարեբաղդաբար արդեւից ինձ խաղալու:

## ԳԼՈՒԽ 21.

Անառակների բարեկամութիւնը կարճատև է. նա ոչնչանում է այն զուարճութիւնի հետ, որ նորանց ժողովում է :

Որդու պատմութիւնը այնքան երկար էր որ՝ չէր կարելի մի անդամում վերջացնել. այս երեկոյին մենք լսեցինք առաջին մասը և միւս օրը ճաշից յետ նա աւարտելու վերայ էր որ՝ Պ. Թօռնհիլը կառքը երևելով, դադարեցրուց հասարակաց բաւականութիւնը: Տեսեսր՝ որ արդէն իմ բարեկամ էր դարձել, ականջումս ասեց թէ՛՝ երկրատէրը օրիորդ Վ իլմօթի հետ ամուսնանալու առաջարկութիւն է արել և թէ՛՝ հօրեղբայրը և մօրաքոյրը, ինչպէս երևում է, հաւան են այդ ամուսնութեան: Պ. Թօռնհիլը ներս մտած, այն ինչ նկատեց որդուս և ինձ, մի քանի քայլ յետ քարշիկեց, այդ շարժումը ես վերաբերում էի նորա զարմացման, այլ ոչ որ և է տհաճութեան: Մենք առաջ գնացինք նորան ողջունելու և նա մեզ ընդունեց մտերմութեան կերպարանօք. այնուհետև զուարճութիւնը՝ որ մի վայրկեան միջահասովել էր, առաւել ևս տարածվեց:

Թէ՛յ խմելուց յետոյ, Պ. Թօռնհիլը մի կողմ քաշեց ինձ, կամելով տեղեկութիւն ստանալ դատերս մասին և լսելով թէ՛ իմ հետազօտութիւնքը զուր էին եղել, սաստիկ զարմացումս ցոյց տուեց. նա աւելցրուց թէ՛՝ այս միջոցում շուտ շուտ է գնացած եղել մեզ մօտ մնացեալ ընտանիքս մխիթարելու, որունց և թողել է կատարելապէս առողջ: Յետոյ նա ինձ հարցրուց թէ՛ խօսել էի արդեօք այդ դժբաղդութեան վերայ օրիորդ Վ իլմօթի կամ որդուս հետ և երբ որ ես բացասաբար պատասխանեցի, շատ գովեց իմ խոհեմութիւնը և չափաւորութիւնը, յորդորելով ա-

մեն կերպ ծածուկ պահել այդ բանը, որովհետև, ասումէր նա, չպիտէր հռչակել իմ սեփական անպատուութիւնը, մանաւանդ թէ՛ կարելի է վերջապէս օրիորդ Ալիմին այնքան յանցաւոր չէ, որքան կարծումենք...

Այս տեղ մեզ միջահատեց ծառաներից մինը՝ որ եկաւ յայտնելու թէ՛ պար խաղալու էին սպասում նորան: «Աս ինձ թողեց յուզված այն խնամքով՝ ցոյց էր տալիս այդ զործի մէջ: Նորա դեպերանքը օրիորդ Ալիմի մէջ այնքան նշանացի էին որ՝ չէր կարելի խարսխել նորանց մասին, բայց՝ ինչպէս երևումէր, օրիորդը մոզված չէր սորանով և առաւել իւր մօրաբարձ կամքը պատուելու համար էր սանում այդ բանը, քան թէ իւր սիրոյ պատճառով: Արքան քաղցր էր ինձ նկատել որ՝ նա աստորէն վատնումէր իւր հայեացքը դէպի իմ դժբաղդ որդին, մինչ Ֆիւսր բոլոր իւր հարստութիւնով և եռանդագին սիրով չէր կարում ստանալ այդ զգացմանց նշանակը: Պ. Թօսնճիլի կերպարաննալ խաղաղութիւնը ինձ զարմացնումէր: Օլիմանելով դէպի Պ. Արնօղլի եռանդագին թախանձանքը, մենք մնացել էինք նորա մօտ մի շարաթ և որչափ առաւել օրիորդ Ալիմի մէջ սէր էր ցոյց տալիս որդուս, այնքան առաւել Պ. Թօսնճիլը բազմապատկու- մէր իւր շնորհը դէպի նա:

Սա մի ժամանակ մեզ մարդասիրաբար հաւատարմացրել էր թէ՛ բոլոր իւր վարկը կ'զործադրէ մեզ ձեռնտու լինելու համար: Այժմ սորա աստատանութիւնը միայն խոստումնքի մէջ չէր բովանդակում: «Նոյն իսկ դուրս գալուս ասաւօտը, նա ինքը եկաւ իմ մօտ զուարթագին դէմքով և յայտնեց թէ՛ բազմապատկու է համարում իւրեան որ՝ կարացել է օգնեցալ լինել իւր բարեկամ Պէրդիին. այդ խօսքերի զօրութիւնը այն էր թէ՛ նորան նշանակելու էին դրօշակիր մի գունդի՝ որ գնալու է արևմտեան շնորհաստան: սորա համար նա խոստացել էր հարիւր լուի միայն, մնացեալ երկու հարիւրը իւր ազդեցութեամբ նա պակասեցրել էր:

«Աս ուրիշ վարձատրութիւն չեմ ցանկանում այս թեթև երախտիքի համար, շարունակեց նա, բացի իմ բարեկամին շնորհ ցուցանելու բաւականութիւնը. իսկ որ ինչ վերաբերումէ հարիւր լուի հատուցանելուն, եթէ դուք պատրաստի չունէք, ես այժմ

կվճարեմք և դուք ինձ կ'դարձնեք, երբ կարելի կլինի ձեզ: Խօսք չէի գտնում հս նորանից շնորհակալ լինելու համար. իսկ այն տուեցի նորան իմ պարտքի մուրհակը և այնքան շնորհակալութիւն արեցի որ՝ կարելի էր մտածել թէ՛ երբէք հատուցանելու դիտաւորութիւն չունէի:

Գեորգը պիտէր հետեւեալ օրը ուղևորվեր դեպի Աճնգոն իւր պաշտօնը ընդունելու, համաձայն իւր պաշտպանի վնհանձն յանձնարարութեան, որ պատշաճ էր գատում շտապել այդ բանում, կասկածելով թէ՛ մի՞ գուցէ մի ուրիշը մէջ ընկնի և առաւել լաւ նուիրումներ անէ: Այսպէս հետեւեալ օրը մեր ջահիլ դրօշակիրը շատ վաղ պատրաստվեց դուրս գալու. մեր ամենիս մէջ միայն նա էր երևում անտարբեր դէպի առաջնիկաց ուղևորութիւնը: Այն խոնջութիւնը, ո՛չ վտանգը՝ որ նորան հանդիպելու էր, ո՛չ իւր սիրուհին (որովհետև օրիորդ Ալիմթը իսկապէս նորան սիրումէր) որից հեռանալու էր, չէին նուազեցնում նորա քաջասրտութիւնը: Արբ որ նա հրաժարական ողջոյն ասեց մնացեալ ժողովին, ևս տուի նորան բոլոր իմ ունեցածը, այսինքը՝ իմ օրհնութիւնը: Այժմ, սիրելի որդի, ասեցի ևս, դու գնումես պատերազմելու քո հայրենեաց համար. միտդ բեր, ի՞նչպէս քո պապը կ'ուր արեց իւր թագաւորի պաշտելի անձին համար, այն ժամանակ, երբ հաւատարմութիւնը դէպի գահը անդլիացոց մէջ մի առաքինութիւն էր: Չնայ, որդի, նմանի՛ր նորան ամեն բանում, բացի նորա թշուառութիւնքը, եթէ դեռ ևս կարելի է թշուառութիւն համարել Աօրդ Պալկյանդի հետ մեռնելը: Չնայ, որդի, և եթէ մեռնելու ևս հոյի, մենակ, առանց քեզ սիրողների քեզ վերայ ողբալուն, մտածիր թէ՛ ամենապատուական արտասուքը նորանք են, որը որ երկինքը թափումէ զինւորի անգերեզման մարմնի վերայ:

Միւս օրը ևս մնաք բարև ասեցի ազնիւ ընտանիքին՝ որ ինձ այնպէս երկար պահել էր և կրկնեցի իմ շնորհակալութիւնը Պ. Թօռնհիլին, նորա վերջին երախտագործութեան համար: Նորանց ամենեկին թողի ևս այն բարերազողութեան մէջ, որ ստացվումէ բարեկեցութիւնից, լաւ ընկերութեան սովորութիւններից և դէպի առն ուղևորվեցի, յուսահատած աղջկաս գանելու մասին և հասաչանօք սղաչելով Աստուծուն խնայել նորան և նե-

րիչ նորա յանցանքը: Արդէն քսան մըն էր մնացել մինչև առև  
 և ես մի ձի էի վարձել, որովհետև դեռ ես տկարութիւն էի ըզ-  
 դում: Ինձ պահպանումէր միայն այն յոյսը թէ՛ շուտով արդէն  
 տեսնելու էի նորանց՝ որոնք իմ համար ամեն բանից թանգագին  
 են աշխարհում: Արովհետև զիշերը մօտենումէր, ես իջեւանեցի մի  
 փոքրիկ պանդոկում՝ որ ճանապարհի վերայ էր և խնդրեցի պան-  
 դոկատիրոջը ինձ օգնել մի շեշ գինի գտառակեցնելու: Առհասկե-  
 ըոցի կրակարանի առաջն նստած, մենք սկսեցինք խօսել քաղա-  
 քականութիւնից և շարժագիւյն այն կողմի նոր լուրերը. պանդո-  
 կատէրը մի քանի անձանց կարգում յիշեց երկրատէր Աօսոնհիլին,  
 որ այնքան ատելի էր, ասումէր նա, որքան սիրելի էր նորա հօր-  
 եղբայրը՝ որ երբեմն այցելու էր լինում այդ նահանգում: «Նորա  
 խօսքով, երկրատիրոջ միակ զբօսանքն էր հրապուրել նորանց  
 ազնկերանցը, որոնք բնդունում էին նորա այցելութիւնը: Տան  
 հինգ օր կամ երեք շաբաթ պահումէր իւր մօտ այդ դժբաղդնե-  
 ըին և յետոյ դուրս էր անում նորանց անարգված և առանց մի  
 սուփ:

Մինչ մենք այսպէս խօսակցում էինք, պանդոկատիրոջ  
 կինը՝ որ գնացել էր մանր արծաթադրամ խնդրելու, ներս մտաւ  
 և տեսնելով որ իւր ամուսինը մի գուարձութիւն է վայելում, որ  
 ինքը հաղորդ չէ, խիստ ձեռով հարցրուց նորան թէ՛ ի՞նչ էր ա-  
 նում այդ տեղ: Ամուսինը քաղցր գէմքով պատասխանեց նորան,  
 խմելով նորա կենացը: «Ա. Ամեն, աղապակեց կինը, դուք շատ  
 վատ էք վարվում իմ հետ, ես չեմ կարող այլ ևս համբերել. գոր-  
 ծերի երեք մասը իմ վերայ է բարդված, իսկ չորրորդը անկատար  
 է մնում, որովհետև դուք օրերը անցուցանումէք ճամփորդների  
 հետ ձեր որովայնը զինով լցնելով, մինչ ինձ միայն մի քթայլ էր  
 հարկաւոր ջերմից բժշկելու համար և ես չեմ կարում ստանալ և  
 ոչ մի կաթիլ: «Այս խօսքերից ևս հատկացայ թէ՛ ակկինի միտքը  
 ի՞նչ էր և լցրի մի բաժակ գինի, որ նա վեր առաւ մարդասիրարար  
 և շտապով գտառակեցրուց իմ կենացը:

«Տեսնումէք Պարոն, տեսց նա, ես ոչ թէ գինիի արժէքի  
 համար եմ նեղանում, այլ չեմ կարում պատրաստութեամբ  
 յանձն առնուլ մեր տան մէջ գործված վաճառմը: Պիտոյ է ար-  
 դեօք պարտատէրներին թախանձել, իմ մէջքի վերայ է բնկնում

այդ բեռներ, սա առաւել սիրով այս բաժակը կուէ կ'տայ, քան թէ յանձն կ'առնու ինքը կատարել այդպիսի բաները: Օրորելնակ՝ մեր վերի յարկում մի ջահել կին է եկել բնակվելու. նորա չափազանց մարդասիրութեան պատճառով ևս երկբայումեմ որ՝ նա մի մեծ գանձի տէր լինի, բայց իմ ստուգիւ գիտացածը այն է որ՝ նա ամենեին չէ շտապում իւր ծախքը հատուցանելու և ևս կցանկայի նորան յիշեցնել այդ: — Ինչո՞ւ է պէտք յիշեցնելը, պատասխանեց պանդոկատէրը, հատուցման մէջ ծոյրերն են աւելի հաւատարիմքը: Այդ ևս չգիտեմ, ասեց կինը, բայց ինձ յայտնի է միայն այն թէ՛՝ ահա տասն և հինգ օրէ որ նա այստեղ կենումէ և մենք դեռ ևս նորա փողն գոյնը չենք տեսել: — Աս կարծումեմ, սիրելի. թէ բողբոջ միասին կ'ստանանք: — Բողբոջ միասին, Աստուած տար որ ստանայինք, միասին կամ մասը մասը, բայց ևս վճռել եմ որ՝ այս երեկոյ լինի այդ, եթէ ոչ, բանակը խաղացնելու է զէնքով և աղէքով: — Մտածիր, սիրելիս, ասեց ամուսինը, թէ մի տիկին է նաև թէ՛ մենք պարտաւոր ենք առաւել ակնածութիւն ունենալ զէպի նա: — Տիկին է, տիկին չէ, բայց քաշուելու է և շատ շուտ. ազնիւ անձինք կարեն իւրեանց յարգը ունենալ այն տեղ, ուր ինչ և իցէ բանեցնումեն և ծախքը հատուցանումեն, բայց որ ինչ ինձ է վերաբերում, ևս չեմ տեսնում, որ նորանք մի մեծ օգուտ բերում լինին Տախանի (պանդոկի անունն է) նշանին:

Այսպէս խօսելով՝ վեր գնաց նա մի նեղ սանդուղքով՝ որ խոհանոցից տանումէր վերին սենեակը. շատ չանցաւ, նորա դառն խօսքերից և սաստիկ թշնամանքներից հասկացայ թէ՛ նա չէր կարում իւր վարձարձակից փող ստանալ. լսումէի նորա կըշտամբիչ խօսքերը «դուրս գնա, ասումեմ քեզ, քաշվիր այս տեղեց. ա՛, թշուառ աստանդական, դուրս գնա, եթէ չես ուզում երկք ամսից աւելի իմ տուած նշանները քեզ վերայ կրել: Անամօթ գող, ի՞նչպէս համարձակիցիր դալ բնակվել մի պատուաւոր տան մէջ, առանց մի սուլի կամ մի բանի՝ որ քեզ յարգելու պատճառ տար: Գնանք, դուրս, քեզ ասումեմ»:

— Ո՛հ, սիրելի տիկին, գոչեց օտարական կինը, զթացիր ինձ, զթացիր մի խեղճ և անօգնական ստեղծուածի: Միայն մի զիշեր, և ահա մահը շուտով մնացածը կ'կատարէ:

Իսկոյն ճանաչեցի ևս իմ խեղճ կորուսեալ զաւակի, իմ Օ-

լիվիայի ձայնը: Ապօղբի նորան օգնելու, մինչ կինը նորա մազերից բռնած՝ գեանի վերայ էր քարշում և իմ գիրկս աօի սիրելի անասակիս:

«Վարև եկիր, իմ ոչխար մոլորեալ, իմ գանձ կորուսեալ, բարև եկիր դէպի քո ալեգարդ հօր զլրկը: Թէեւ յանցաւորները քեզ թողել են, բայց դեռ ևս մնումէ աշխարհում քո մի բարեկամը՝ որ քեզ երբէք չե թողնիլ: Աթէ տասն հազար յանցանքի պատասխանատու լինէիր, նա բոլորը կ'մոս անայ:

— Ո՛հ, քաղցրիկ... Մի քանի բողբոջ աւելի ինչ չ'կարաց ասել... «Իմ սիրելի, իմ բարի հայր, հրեշտակները քեզնից առաւել ողորմած և զթած չեն: Ի՞նչ եմ արել այդքան բարութեան արժանանալու համար: Թշուառակա՞նք, ևս նորան նոյնչափ եմ ատում, որչափ և ինձ, այդքան բարութիւններով շարագործելու համար... Գուք չէք կարող ինձ ներել, չէ՛, ևս զգու՛մեմ որ՝ չէք կարող...»

Ընդհանրապէս, որդի, ևս քեզ ներումեմ սրտիս խորքից: Չզղացիր միայն, և մենք թերևս բարերարդ կ'լինենք, թերևս կ'տեսնենք լաօրեր, սիրելի Օլիվիա:

Ո՛հ, երբէք, Տէ՛ր իմ, երբէք իմ թշուառ կեանքի մնացորդը այսուհետև ու խափած է զբախց անարգութեան, ներախց ամօթի և խայտառակութեան... Վայց՝ աւանդ, հայրիկ, դուք շատ դժգոյն էր երևում ինձ: Ա՛յ սպաքէն իմ պէս չար է ակն է ձեզ պատճառել այդքան տատապանքը: Վայց դուք այնքան խնայալից թիւն ունէր որ՝ ձեր վերայ չէք ասնել իմ յանցանքի պատասխանատուութիւնը: — Մեր խնայալիցութիւնը, կ'ին մտաւորեալ (Չահիլ) պատասխանեցի ևս: — Ո՛հ, ինչո՞ւ այդ ստոն անուներ տուեցիք ինձ, հայրիկ, ազաղակեց նա, այս առաջին անգամն է որ՝ դուք այսպէս կոչեցիք ինձ: — «Ներիք ինձ, իմ անուշիկ, ասեցի ևս. միայն ուղումէի ասել թէ՛ խնայալիցութիւնը շատ յամբ դեղ է վշտազին տատապանաց դէմ, թէ և դուցէ առաւել անկասկած դեղ է»:

Պանդոկատիրոջ կինը եկաւ խնամալու՝ կամէ՛ր նք արդեօք առաւել պատշաճաւոր բնակարան ստանալ. ևս նշան տուեցի յօժարութեան և նա մեզ տարեց մի սենեակ, ուր մենք կարէնք ազատութեամբ խօսակցել: Այր որ մենք երկուքս ևս փոքր

ինչ հոգիներս խաղաղացուցինք, ես յայտնեցի դատերս թէ՛ ցանկանումէի խմանալ՝ ի՞նչ աստիճաններով էր նա եկել հասել մինչ այդ վշտալի և անխնամ վիճակը: «Չար ապիրատը, ասեց նա, մեր տեսնելու առաջին օրից, պատուաւոր առաջարկու թիւններ էր անում ինձ, թէև ծածուկ:

— Յիրաւի՛, շատ ապիրատ, գոչեցի ես, բայց ես զարմաւ նուժեմ թէ՛ ի՞նչպէս մի այդպիսի զգոնամիտ մարդ և այդքան պատուաւոր արտաբուստ, որպիսի Պ. Բուրչեյն է, կարողացաւ ժանտալից անարգութեամբ յանցաւոր գտնվել և սպրդվել մի ընտանիքի մէջ, յայտնասպէս նորան կորուսանելու գիտաւորութեամբ:

— Մերկի չայր, ասեց դուստրս, դուք մի օտարօտի սխալման մէջ էք: Պ. Բուրչեյը երբէք ինձ հրապուրելու դիտաւորութիւն չե ունեցել. ընդ հակառակն՝ ամեն դիպուածում նա ինձ զգուշացնումէր Թօսնճիլի խորհուրդների գէմ. այդ մարդը, այժմ ես լու գիտեմ, առաւել չար է, քան թէ Բուրչեյը ինձ նկարագրումէր: — Պ. Թօսնճիլը, մի՞թէ: — Այո՛, չայր, պատասխանեց նա: Պ. Թօսնճիլն է ինձ մտրեցնողը, նա մէջ բերեց այն մեծապատիւ տիկիներին, ինչպէս ինքը նորանց կոչումէր, կամ լաւ ևս ասել՝ այն չարաբարոյ, անուսումն և անհոգի կանանց, ինձ և իմ քրոջը Վօնգօն քաշել տանելու համար: Միտներդ բերէք, նորանց խորամանկութիւնները անշուտ յաջողվելու էին առանց Պ. Բուրչեյի նամակին, որի մէջ իւր կշտամբանքը ուզել էր դէպի այդ կանայքը և որ մենք այնպէս վատ բացատրեցինք: Ի՞նչպէս կարաց նա նորանց խորհուրդները ոչնչացնել, այդ մինչև այժմ մի գաղանիք է, որ ես չեմ կարում հասկանալ, բայց ես համոզված եմ որ՝ նա միշտ եղել է մեր եռանդուն և մտերիմ բարեկամը:

— Դու ինձ զարմացնումես, սիրելի, գոչեցի ես. ես այժմ տեսնում եմ որ՝ իմ նախկին կասկածանքը Թօսնճիլի անարգութեան մասին բոլորովին հաստատ են եղած: Բայց՝ նա կարէ ապահով մնալ իւր յաղթութեան մէջ. նա հայուստ է, իսկ մենք աղքատ: Ասա՛ ինձ, սիրելի, մի՞թէ մի թեթեւ հրապոյր էր, որ կարողացաւ յաղթել քո բարեխրատ գաստիարակութեան սկզբունքին և փոփոխել քո սրտի պէս առաքինի սիրտը:

— Արդարեւ, հայրիկ, ասեց նա, այդ յաղթութեան պատճառը այն էր որ՝ ես նորա բարեբաղդութիւնն էի ցանկանում, այլ ոչ իմը: Աս իմանումէի որ՝ մեր ամուսնութեան արարողութիւնը՝ որ ծածկարար կատարվել էր մի պապական քահանայի միջնորդութեամբ, ամենեւին նորան չէին կապակցում իմ հետ, և թէ՛ ես այլ երաշխաւորութիւն չունէի, բացի նորա պատիւը:

— Ի՞նչ ասեցիր, խկապէս արդեօք դուք պսակած էք մի քահանայից, մի կարգ ստացած մարդուց:

— Այո՛, տէր իմ, թէ՛ և մենք կրդուած ենք երկուքս ևս չըյայտնել նորա անունը:

— Ուրեմն՝ եկ նորէն զիրկս առնում քեզ, դուստր իմ, հազարապատիկ օրհնեալ լինիս և քո գալուստը բարի լինի: Առնուրա կինն ես ամենայն պատուով և ամենամաքուր յօժարամտութեամբ: Մարդկային օրէնքները, թէ՛ և պղնձի տախտակի վերայ լինէին զբաժ, չեն կարող եղծել այդ նուիրական կապը:

— Աւա՛ղ, սիրելի հայր, պատասխանեց դուստրս, դուք լաւ չէք ճանաչում նորա դժնդակութիւնը: Այն քահանայի ձեռնով նա պսակվել է վեց կամ ութն այլ կանանց հետ, որոնց, որպէս և ինձ, խաբել է և թողել է:

— Այդպէս է գործել նա... ուրեմն մենք կախել կ'տանք քահանային. վաղիւ իսկ դու վկայութիւն կ'տաս ատեանում:

— Բայց՝ հայր, արդեօք լաւ կ'լինի այդ, ես կրդուել եմ գաղտնիքը պահպանելու:

— Աթէ՛ դու մի այդպիսի խոստումն ևս արել, որքի, ասեցի, ես չեմ կարող քեզ յորդորել դէպի նորա դժբուժը, թէ՛ և այդ լինէր հասարակաց օգտի համար. դու չ'պիտի վկայես նորա դէմ: Եմն մարդկային կարգադրութիւնների մէջ, մի փոքրիկ չարը թոյլ է տուած, մի մեծ բարիքի հասանելու պատճառով, ինչպէս քաղաքականութեան մէջ, մի գաւառ տալիս են մի տէրութիւն պահպանելու համար, բժշկականութեան մէջ, մի անդամ կրտումն, բոլոր մարմինը փրկելու համար. բայց կրօնի մէջ, մի օրէնք է զբլած և անողոք է, այն է թէ՛ կրեք չար մի գործիր: Աւ այս օրէնքը, սիրելի, արդար է, որովհետեւ եթէ այլապէս լինէր, եթէ թոյլ տայինք մի թեթեւ չար, մի մեծ բարիք առջննորումս ունենալով, յանցանքը կ'լինի յայտնի, իսկ օգուտը երկբա-

յիլն և եթէ նորաստակը ապահովված ևս լինի, միջոցը՝ որ անցանելու է յանցանքի և նորանից յառաջանալու բարութեան մէջ, մեզ յանցաւոր էր թողնելու և կարէր մի այնպիսի ժամ պատահել, երբ մենք կ'կոչվէինք պատասխանատու լինել մեր գործուածներին մասին և երբ մեր գործողութեանց արձանագրութիւնը յաւիտեան կ'փակվէր մեզ համար: Բայց ես միջահասակցի քո խօսքը, շարունակիր:

— Այցն իսկ հետեւեալ օրը, ես տեսի որ՝ նորա մտերմութեանը չկարելի հաստատու նա ինձ ներկայացնուց երկու դժբաղդ կանանց՝ որոնց որպէս և ինձ, նա խարել էր և որոնք նորա մօտ կենում էին, գոհ իւրեանց անարգութիւնով: Աս նորան սիրում էի այնքան խանդաղասանօք որ՝ չկարելի թոյլ տալ այդպիսի ստիճաններն հաղորդ լինել նորա սիրոյն և ջանք էի անում մտաւնալ իմ անարգութիւնը վաւարմութեանց յարձանքի մէջ: Պար էի դալիս, զարդարվում էի, խօսում էի իմ գզայութիւնքը թմրեցնելու համար, բայց իմ թշուառութիւնը չէր դադարում: Ինձ այցելութիւն անող մարդիկը անպաղար գովարանում էին իմ կախարհիչ գեղեցկութիւնը և նորանց գովեստները միայն սաստկացնում էին իմ սրամտութիւնը. ո՞վ թէ, որպիսի անմտութեամբ էի չարագործել այդ գեղեցկութիւնը: Այսպէս՝ օրէ օր ես առաւել մտածում էի, իսկ նա առաւել լըբանում էր, մինչև որ վերջապէս՝ հրէջը անսրտակառութիւն ունեցաւ առաջարկել ինձ մի իւր բարեկամ ջահիլ պարսնի. փոյթ չէ ինձ ասել, տէր իմ, թէ այդ ապերաստութիւնը պատասեց իմ սիրտը: Իմ պատասխանը առաջարկութեան եղաւ բանդապուշանքը: Աս կամեցայ հրաժարվել նորանից: Վուրս գալուս ժամանակը նա ինձ ընծայեց մի քրտակ փողով լի, և ձգեցի այն նորա երեսին և յարձակվեցի նորանից հեռի այնպիսի կատաղութեամբ՝ որ մի միջոց ինձ անողացարուց դէպի իմ ստեղծվել զինձակը: Աւերջապէս նայեցի իմ բոլորաւիքը, և տեսի ինձ մենակ, արհամարհված, անարդ, յանցաւոր, առանց մի բարեկամի, որին դեռ ևս հնար էր ինձ ապաւինել:

Մի դիւրեման էր անցնում, ես մտի նորա մէջ. իմ դիտաւորութիւնը այն էր որ՝ որքան կարելի էր, հեռանայի թշուառականից՝ որին արհամարում էի և որից խորշում էի: Ինձ իջուցին այստեղ, ուր մինչև այժմ, իմ ցաւը և այս կնիկանից գործած նա-

խատինքը իմ հաւատարիմ ընկերներս են եղել: Այն երջանիկ ժամերի յիշատակութիւնը, որ ես անցուցել եմ իմ մօր և իմ քրոջս մօտ, առաւելացնում է իմ տառապանքը: Աորանց հեծութիւնքը սաստիկ են, բայց իմը առաւել սաստիկ է, որովհետեւ նա խառն է յանցանքի և անարգութեան հետ:

— Համբերութիւն, որդեակ իմ, գոչեցի ես. յոյս ունեմ որ՝ այդ բաները կ'ուղղվին: Հանգիստ առ այս գիշեր. վաղը ես կ'տանեմ քեզ տուն, քո մօր մօտ, քո մնացեալ ընտանիքի մօտ, որոնք բարեմտութեամբ քեզ կ'ընդունեն: Խեղճ քո մայրը. յանցանքը նորա սիրտը մաշեց, բայց դեռ ևս նա քեզ սիրում է: Օլիվիա, նա քեզ սիրում է և կ'մոռանայ»:

## ԳԼՈՒԽ 22.

Ուր սեր կայ, այնտեղ չ'կան այնպիսի թշնամանք, որոնք չ'ներվէին  
գիտութեամբ:

Առաւօտուն նստեցրի դատերս ձիուս քամակում և ճանապարհ ընկայ դէպի տուն: Մինչ մենք գնում էինք, ևս ջանք էի անում հաւանեցուցիչ խօսքերով փարատել նորա ցաւը և կասկածը և քաջալիրել նորան իւր դառնացած մօր ներկայութեան հանդուրժելու: Պերձազարդ երկրի ամեն մի գեղեցիկ դիրքը անցանելուս, նկատել էի տալիս նորան թէ՛ որքան առաւել զթած է Վերին տեսչութիւնը դէպի մեզ, քան թէ մենք միմեանց համար և թէ որչափ փոքրաթիւ են բնութիւնից մեզ հասած արկածքք: Աս հաւատացնումէի նորան թէ՛ երբէք չէ նկատելու նա մի փոփոխութիւն իմ սիրոյ մէջ, և բոլոր կեանքումն՝ որ գուցէ դեռ ևս երկարելու է, նա կ'ունենայ ինձ իւր պաշտպան և առաջնորդ: Աս նորան զօրացնումէի հասարակաց դատապարտութեան գէմ, ցուցանելով նորան այն գրքերը՝ որոնք կարէին մարդասէր և սորոմանձ ընկերներ լինել չարաբաղդին և որոնք, կթէ չեն կախարող մեզ կեանքը վայելել տալ գոնէ կ'սովորեցնէին տանել նորան:

Արձաձ ձին, որ մենք հեծել էինք, պիտէր թողնէի այն երեկոյ մի պանդոկում՝ որ ճանապարհի վերայ էր, հինգ մղոն հեռի մեր բնակութիւնից և որովհետեւ ևս ուզումէի պատրաստել իմ բնտանիքին Օլիվիայի գալստեան մասին, վճռեցի թողնել նորան այն գիշեր պանդոկում և միւս օրը վաղ առաւօտուն, Մոփիա դատերս հետ միասին գալ և տանել նորան: Արդէն բոլորովին մթնանումէր, մինչ մենք հասանք կայանքք: Վստերս մի պատշաճաւոր սննեակում տեղաւորեցի, տանուտիրուհուն պատուիրեցի զովացուցիչ բաներով նորան սպասաւորել, գրկեցի նորան և շարունակեցի իմ ճանապարհը ոտով:

Վոր զուարճութեան զգացողութիւններ էին շարժում իմ սրտի մէջ, մինչ փոքր առ փոքր մտանումէի եւ դէպի իմ խաղաղ սանիքը: Իբրև մի թռչուն՝ որին ահարեկութիւնը փախուցել է իւր բունից, իմ գորովը բոլորովին յաիշտակված սպասելուց, ինձնից առաջ էր դնում եւ թեկըր տարածումէր իմ փոքրիկ բնասանիքի բոլորակը: Աս կրկնում էի ինքս ինձ այն գորովալից խօսքերը՝ որ սիրտէր ասէի. սիրալեր ընդունելութիւնը՝ որ իմ համար պատրաստած էր, զբաւել էր իմ հոգին. զգում էի արդէն իմ կնոջ զրկախտանութիւնքը, ժպտումէի իմ փոքր երեսներքի ուրախութեան դէմ:

Օոյլ ընթացքով գնումէի եւ ե զիշերային խաւարը թանձրանումէր. հողագործները հանգստանումէին օրուայ աշխատութիւնից: Այսը շիջել էր արդէն բոլոր խրճիթներում: Աչինջ հնչեւն չէր լսվում, բացի սքաղաղի թափանցելի կանչը եւ պահապան շան հաչը հեռուից: Աս մտանումէի դէպի իմ սիրելի առանձնութիւնը. հարիւր քայլից աւելի չէր մնացել, մինչ մեր հաւատարիմ զամինսը (շուն) վազից իմ հանդէպ:

Ան գիշերը զարկից եւ բաղնեցի դուռը. ամենայն ինչ խաղաղ էր եւ անմնւուչ. սիրտս բացվումէր, լցված անպատում երջանկութիւնով, մինչ յանկարծ, անմեկնելի զարհուրանօք նկատեցի բոցերի փայլումն. տան ամեն մուտքը շառագունվեցին հրդեհհից. ճիշ բարձի եւ ահադին, ընկեցի քարայտաակի վերայ անզգայ: Այս աղաղակը զարթեցրուց իմ որդուն՝ որ քնած էր եւ որ տեսնելով փառվառուն բոցերը, վազից կնոջս եւ դասերս զարթեցնելու. ամենքը խուճապեցին դուրս դալ, կիսամերկ, յնորամտոված զարհուրանքից, նորանց աղաղակը ինձ միտքի բերեց, բայց այս մի նոր վիշա զգալու համար էր: Արակը հասել էր մինչև տանիքը՝ որի կտորները անջատվումէին եւ մին մինի քամակից վեր էին ընկնում, մինչ ընտանիքս, ընկողմված լուռ տասնապանքի մէջ, նկատումէին այդ տեսարանը, իբրև թէ մի ուրախտիան հրոզարդի մօտ էին եկել:

Աս փոփոխարար նայումէի հրդեհին եւ զաւակացս. որոնցի շրջագայքումը երկու աղերքիա, նորանք չկային: Ա՛յ աղէտիցս, «Ա՛ւր են փոքրիկներս, աղաղակեցի եւ, ո՛ւր են նորանք:

— Նորանք էրվել են, մեռել են բոցակիրոված, ասեց իմ կինը խաղաղութեամբ, եւ ես ուզումեմ նորանց հետ մեռնել:

Այս վայրկենում լսեցի ես իմ քաղցրիկ անմեղներէն աղաղակը, որոնց կրակը զարթեցրել էր, ոչինչ չկարաց ինձ արգելել: «Ո՛ւր էք դուք, ո՞ւր էք որդիքս, գոչեցի ես, ձգելով ինձ բոցերի մէջ և խորտակելով այն սենեակի դուռը, որի մէջ նորանք փակված էին: Ո՛ւր են իմ փոքրիկները:

— Այս տեղ ենք, քաղցրիկ հայր, ահա այս տեղ, գոչեցին նորանք միասին, մինչ կրակը արդէն տիրումէր անկողնիքին, որի մէջ սրտուկած էին:

Այն ատի երկուսին ևս իմ գիրկը և տարեցի վազելով բոցերի միջոց: Մինչ ևս դուրս էի գալիս, սամկիքի մնացորդը կործանվեցաւ:

«Այժմ, գոչեցի ես, սրտիս սեղմելով երեսերքիս, թող որքան կամի կատաղե կրակը, թող լափի նա իմ երկրացին ստացուածքը... Ահա նորանք, և փրկեցի իմ գանձը: Տես, սիրելի կին. ահա մեր հարստութիւնը, մենք կարենք դեռ ևս կրճանիկ լինել»: Աղաւ անդամ գրկեցինք մենք մեր սիրելիներին՝ որոնք մեր պարանոցից կախված, կարծես թէ մասնակից էին լինում մեր հիացման, մինչ նորանց մայրը փոփոխաբար ողբումէր կամ ծիծաղումէր:

Այնուհետեւ ևս խողաղութեամբ դիտումէի հրդեհը և միայն մի միջոց անցանկուց յետոյ, նկատեցի որ՝ ուսիցս մինչև ձեռնս բոլորովին երված էր. ինձ անկարելի էր օգնել որդուս՝ որ ջանք էր անում մեր շարժական ինչքը փրկելու և կրակի առաջքը առնելու որ՝ շտեմարանը չ'զբաւէ: Ե փոթված դրացիները վազեցին եկան մեզ օգնելու, բայց նորանց արածը այն էր որ՝ մեզ հետ միասին մնացին անգործ վկայ մեր թշուառութեան: Վորը ստացուածքս՝ որոնց մէջ էին մի քանի բանքի բիլիթներ՝ պահպանված աղջկերանցս օժիտի համար, հրոյ ձարակ եղան, բացի մի փոքրիկ արկղը՝ որ խոհանոցումն էր պահված և որ թղթեր էր պարունակում իւր մէջ, նմանապէս և մի քանի սակաւապէտ բաներ՝ որ սկզբում որդիս գերծուցել էր: Վրացիքը սակնայն հնարներով օգնեցին մեր թշուառութիւնը թիթեացնելու: Վորանք բերին մեզ համար շորեր, պատրաստեցին խոհակերոցի սպասներ տան մի մասնի մէջ, որ կրակը ինայել էր, այնպէս որ լոյսը բացվելուս մենք ունեինք մի պատասպարան, թէ և շատ ողորմելի: Մեր

բարեբարոյ դրացի Ալեմբօրեֆը և նորա զաւակունքը բաւական փոյթ ունեցան մեր կարօտութիւնքը հոգարու և այնպիսի միութարութիւն տալու, որ միայն բնական բարեսիրութեան է սկսական:

Տնտանիքիս վախը փոքր ինչ խաղաղացած, ամենքը յայտնեցին իւրեանց քննասիրութիւնը թէ՛ ի՞նչ էր իմ այդպիսի երկարատե բացակայութեան պատճառը: Կամ անցքը մանրամասնաբար պատմելուց յետոյ, ես սկսեցի մի լաւ ընդունելութիւն պատրաստելու մեր խեղճ անասակ որդու համար: Թէեւ մեր թշուառութիւնը մի մասնով նորանից էր յատաճացել, այնու ամենայնիւ ես ցանկանում էի որ նորա զայը բարի լինէր: Կամ ջանքը դժուար էին լինելու առանց մեր արդի տատապանաց՝ որ իմ կնոջ հոգարութիւնը խոնարհեցրել էր և նորա բարկութիւնը նուազեցրել էր կակճեցուցիչ նեղութիւններով:

Չկարելով ինքս գնալ և խեղճ երեխայիս բերել, որովհետեւ կուռս սաստիկ ցաւում էր, ես ուղարկեցի որդուս և դասերս՝ որոնք շուտով վերադարձան, պաշտպանելով դժբաղդ յանցաւորին: «Կս չէր համարձակում նայել իւր մօրը, որին բոլոր իմ յորդորանքը և խրատները չ'կարացին գէպի կատարեալ հաշտութիւն բերել: Այս առակ վրէժխնդրութիւնը կանանց մէջ առաւել սաստիկ է, քան մարդկանց մէջ:

— Ա՛յ, տիկին, գոչեց մայրը, սա մի շատ աղքատ բնակարան է քեզ ընդունելու համար, այնքան շքեղութիւններից յետոյ: Ո՛վ է տուել մեզ, ինձ և Սոփիային, այնքան վայելչութիւն որ՝ կարենանք զբօսեցնել մի անձնի՝ որ մեծամեծաց ընտանութեան մէջ է կեցել: Յիրաւի, օրիորդ Ալիք, այդ փոքր ժամանակի մէջ, քո խեղճ հայրը և ես անողորմաբար չարչարվել ենք, բայց ես պաշտում եմ Աստուծուն, որ քեզ ներէ»:

Մինչ նա այսպէս խօսում էր, չարաբաղդը զոհը, գունաթափ, գողոցուն, չէր կարում, ո՛չ ողբալ և ոչ պատասխանել: Չկարացի ես այլ ևս անմեռունչ վկայ մնալ նորա թախծանաց և իմ ձայնին և շարժմանցս խստութեան ձե տալով, որին սովորաբար կատարեալ հնազանդութիւն էր հետևում՝ ասեցի:

«Այս քեզ հրամայում եմ, կի՛ն, լսել իմ խօսքը մի և վերջին անգամ, ես քեզ մօտ բերել եմ մի անօգնական, աստանդական և

չարաբազդ կ'ընջ: «Նորա գարձը դէպի իւր պարտականութիւնը, գարձուցանումէ նորան իւր իրաւունքը դէպի մեր գործը: Ահանքի ճշմարիտ արկածքը մեր վերայ թափումեն կուտակված պէքնւրով չաւերացնելը նորա վերայ անմխարանութիւնը: Եթէ մխարանութեամբ, միմեանց հետ խաղաղութեամբ ապրինք, զեռ ևս կարենք գոհ լինել, որովհետեւ բազմաթիւ ենք և կարենք մեզ մեկուսացնել աշխարհի գատաքննութիւնից և պաշտպանել միմեանց փոխադարձաբար: Աշխարհի գթութիւնը խոստացված է զզջացողին և ոչ ապաքէն նոյնպէս և մենք պիտի շարժենք: Նոյն է աւել մեզ մեր Փրկիչը. «Նշաւել ուրախութիւն կ'լինի երկնքում մի զզջացող մեզուսրի համար, քան իննսուն և ինն արդարեանի համար, որոնք ապաշխարելու կարօտութիւն չունին»): Արդար և իրաւացի է այս օրէնքը, որովհետեւ կորուստի սայթաք դարեանդի վերայ իւրեան կանգնեցնելու բռնութիւնը ինքն ինքեան մի առաւել մեծ առաքինական ջանք է, քան որ ինչ կ'պահանջեն հարիւր արդարութեան գործքեր:

## ԳԼՈՒԽ 23.

Միայն յանցաւորները կարեն երկար և կատարելապէս դժբաղդ լինել :

Շատ ճգնութիւն հարկաւոր եղաւ մեր նոր բնակարանը կարելի չափով պատշաճեցնելու համար և մեկք յետ այնորիկ բաւտացանք մեր առաջուպ խաղաղ կիցութիւնը: Չկարելով որդուս հետ միասին սովորական զբաղմանցս ձեռնարկել, ես սկսեցի բարձր ձայնով կարգալ իմ բնասանիքի համար այն փոքր գրքերը՝ որոնց կրակը խնայել էր, մանաւանդ այնպիսի գրքեր էի կարդում, որոնք երևակայութիւնը զբօսելով, զուարթացնումէին սիրտը: Մեր բարեհոգի զբայեկք ամեն օր դալիս էին մեզ գորովալից մը խիթարութիւն բերելու: Նորանք մի ժամանակ նշանակեցին մեր հին տան նորոգութեան նպատակով մեզ օդնելու: Նարեհիրտ Սիլիամը վերջինը չ'եղաւ մարդասիրութիւն և բարեկամութիւն նուիրելում, նա նորէն սկսեց առաջարկութիւններ անել իմ զբաւերը, բայց սա բոլորովին կարեց նորա յոյսը ապագայում: Արևուտմէր որ՝ դատերս ցաւը այն ցաւերիցն էր, որոնք երբէք չեն անցնում: մեր փոքրիկ շրջանի մէջ միայն նա էր որ՝ մի շարաթից յետ ևս չէր դարձուցել իւր զուարթութիւնը: Նորա մէջ թարշամել էր անմեղութեան ծաղիկը, որ դէպի ինքը յարգանքը արծարծումէ և որ այլոց հաճոյ լինելու զուարճութիւն է պատճառում: Անձկութիւնը սաստիկապէս տիրել էր նորա հոգուն, նորա գեղեցկութիւնը փոփոխվումէր առողջութեան հետ միասին, անհոգութիւնը իւր մասին և տրամութիւնը մաշումէին նորա հոգին և մարմինը: Ամեն մի խանդաղատական խօսքը՝ որ ասվումէր նորա քրոջը, նորա սրտի մէջ տագնապ էր յարուցանում և նորա աչքերը արտասուքով էր լցնում: Անչպէս մի ախտ թէ և բժշկված, միշտ միւս ախտերի բողբոջ է թողնում, այնպէս նորա յանցանքը, թէև զղջութեամբ քաւված, նորա հոգու մէջ մուտք

էր առեւել յաջադիրտութեան և նախանձի: Հազար տեսակ փորձեր էի անում, նորա տառապանքը խազադրացնելու համար, մուսանուսմէի իմ նեղութիւնը, նորան սիրովելու համար. ժողովումէի նորա համար բոլոր շահագրգիռ զիպուածները՝ որ իմ զօրաւոր յիշատակը և ընթերձած տեղեկութիւնները կարէին ինձ ազգել:

«Մեր երջանկութիւնը, իմ քաղցրիկ, ասումէի նորան, շատ անգամ նորա ձեռին է, որ կարող է երջանկութիւն ծնուցանել հազար անտկնկալ հնարներով և ծաղրելով մեր խնամութիւնը: Աթէ քեզ օրինակ է հարկաւոր, սպացուցանելու համար, ևս կ'ստանամ քեզ սիրելի, մի անցք, երևելի պատմութանից առած, թէ և այդ պատմութանը երբեմն և տառապելքաներ կըլած լինէր:

«Մաթեղը շատ ջահել՝ մի 'Նախորդի բարձրաստիճան աղետականի հետ ամուսնացած՝ տանն և հինգ տարեկան հասակում մնաց այրի և մայր: Մի օր, մինչ կանգնած պատուհանի առաջ, որ Ալիթուրն գետի վերայ էր, զգուանօք փազաբշումէր իւր որդուն, երկտան յանկարծ ոտոսց, վեր ընկաւ գետը և խկոյն անհետացաւ. Մայրը խկոյնը կորցրած՝ կամելով նորան փրկել, խրեան ևս ձգեց գետը նորա քամակից: Բայց ոչինչ օղնութիւն չկամելով հասուցանել իւր որդուն, ահագին նեղութեամբ հազիւ հազ ընդդիմակաց ամբ հասաւ. և այս խկապէս այն ժամանակն էր որ՝ Ֆրանսիական զօրքը երկիրը աւարումէին. յայտնի բան է՝ խկոյն նորան գերի առին:

Այն ժամանակուայ պատերազմը Պրանսիացիք և Իտալացիք ահագին անդթութեամբ էին վարում: Այն ինչ յաղթողները պատրաստ էին յազեցնել չարարազդ կնոջ վերայ իւրեանց վայրենի կիրքը և կատաղութիւր, մի ջահել հարիւրասպետ (officier) նորան պաշտպան կանգնեց և թէ և ախպլած էր շատ շտապով յետ կենալ պատերազմից, նստեցրուց նորան ձիու վերայ իւր քամակից և ողջ և առողջ բերեց իւր հայրենի քաղաքը: Առաջ այդ կնոջ գեղեցկութիւնը զարմացրուց հարիւրասպետին, փոքր ինչ յետոյ նորա արժանատւորութիւնը զբաւեց սիրար: 'Նորանք ամուսնացան: Հարիւրասպետը բարձր աստիճանի հասաւ: Արկար ժամանակ բարեբազդութեամբ սպրեցին սորանք, բայց զօրականի

երջանկութիւնը շատ անգամ կարճատև է լինում: Եւ շատ տարի-  
ներ անցանելուց յետոյ, նորա հրամանի տակ եղած զօրքը յաղթ-  
ված, նա ինքը եկաւ պատաստարվեցաւ այն քաղաքում, ուր երբեմն  
իւր կնոջ հետ կեցել էր: Թշնամիք պաշարեցին այդ քաղաքը և  
առեցին վերջապէս: Պատմութիւնը փոքր օրինակներ է տալիս այն  
անազօրոյն և զանազանակերպ անգթութեանց, որ այս միջոցում  
կատարեցին Պրանսիացիք և Խալաբիք: Այսպիսի պարագայից  
մէջ, յաղթականները վճռեցին բոլոր գերիներին սպանել և յառ-  
կապէս Մաթիլդի ամուսնին՝ որ ամենից յամառն էր եղել պա-  
շարումը երկարացնելու: Բնդհանրապէս այս պատաստարու-  
թիւնները իսկոյն էին կատարվում: Պերի ամուսնին բերին հրա-  
պարակը, գահիճը սուրը բարձրացրած՝ պատրաստ կանգնել էր,  
մինչ աննողները թախծալից լուծեամբ սպասում էին օրհա-  
սական հարուածին՝ որի նշանը պիտէր տար թշնամիների զօրա-  
պետը, իբրև գահիւնց դատաւոր: Այսպիսի ստեղծել անձկու-  
թեամբ սպասելու ժամանակը, Մաթիլդը եկաւ իւր վերջին ող-  
ջոյնը ամուսնին տալու. նա բարձրաձայն ողբումէր իւր թշուա-  
ռութիւնը և իւր ճակատագրի անգթութիւնը, որ նորան Ա իւլ-  
թուրնիմէջ կանխատեսաւ մահից փրկել էր մի աւելի մեծ տառա-  
պանաց մէջ ձգելու համար: Չօրսպետը ջահիլ մարդ էր. այդ  
կնոջ գեղեցկութիւնը նորան զարմացրուց և նորա շարժարանքը ի  
գութ շարժեցին նորան, բայց նորա խռովութիւնը երկպառօնիկ  
եղաւ, լսելով այն վտանգի պատմութիւնը, որից այդ կինը ազատ-  
վել էր: Չօրսպետը սորա որդին էր, այն երեխան, որին փրկե-  
լու համար մայրը իւր մահը արհամարհել էր. նա ճանաչեց իւր  
մօրը և նորա ոտքը ընկաւ: Մնացորդը գթութեամբ չէ գուշակել: Պե-  
րին ազատութիւն ստացաւ և բոլոր այն երջանկութիւնը՝ որ սէ-  
րը, մտերմութիւնը և առաքինութիւնը կարեն տալ մարդուս այս  
աշխարհում, նորանց վիճակվեցաւ:»:

Այսպէս ևս ջանք էի անում դասերս մաքից հեռացնել նորա  
գթազգութիւնը, բայց նա մեծ ուշադրութիւն չէր դարձնում  
դէպի իմ զրոյցները: Նորա սեփական թշուառութիւնը խլումէր  
նորանից բոլոր այն վշտակցութիւնը՝ որ երբեմն ցուցանումէր նա  
դէպի այլոց թախծանքը. մի բան չկար, որ կարենար թիթեաց-  
նել նորա վիշտը: Օտարականների մօտ նա վախումէր արհամար-

հանքից, միայնակութեան մէջ տանջվումէր: Այսպիսի թշուառութեան մէջ էր նա, մինչ եկին մեզ յայտնելու, իբրև ստոյգ բան թէ՛ Պ. Թօռնհիլը ամուսնանումէ օրիորդ Աւիլմօթի հետ, եւ միշտ հաւատումէի թէ՛ Թօռնհիլը ճշմարիտ սէր էր զգում գէպի այդ օրիորդը, թէպէտ եւ իմ առաջև անզաղար ցոյց էր սալիս, իբր թէ այդ աղջիկը ոչ անձնով եւ ոչ իւր հարստութեամբ յարգ չունէր նորա համար: Այս լուրը բազմապատկեց խեղճ Օլիվիայի ցաւը, մի այսպիսի խղճահար անհաւատարմութիւնը նորա կարողութիւնից վեր էր: Այս որոշեցի ստուգել այդ բանի ճշմարտութիւնը եւ խափանել, եթէ կարելի էր, նորա դիտաւորութիւնների կատարումը. այս պատճառով շտապով ուղարկեցի որդուս ծեր Աւիլմօթի մօտ, նորանից այս մասին տեղեկութիւն ստանալու համար, եւ օրիորդ Աւիլմօթի վերայ մի նամակ գրեցի, որի մէջ յայտնում էի Թօռնհիլի վարքը իմ բնատանիքի դէմ:

Որդիս գնաց եւ երեք օրից յետ վերադարձաւ, հաստատելով յիշեալ լուրի ճշմարտութիւնը. նա չէր կարացել իմ նամակը տալ օրիորդին եւ պատշաճ էր համարել թողնել այն տեղ, որովհետեւ օրիորդ Աւիլմօթը Թօռնհիլի հետ գնացել էին մօտակայ ծանօթներին այցելութիւն անելու: Ետումէին թէ՛ նորանք մի քանի օրից յետ ամուսնանալու էին: Աիրակի օրը, յառաջ քան Մովսէսի վերադառնալը, նորանք միասին յայտնվեցին եկեղեցում, մեծ փառաւորութեամբ, հարսնացուն վեց ջահիլ աղջկերանց ընկերութեամբ եւ փեսայացուն նոյն թուով ջահիլ մարդկանց: Հարսանիքի մօտենալը բոլոր երկրին ուրախութիւն էր պատճառել. հարսն եւ փեսայ սովորաբար զբօսումէին միասին այնպիսի շքեղ կառքի մէջ, որի նմանը շատուց այն նահանգում չէր երևել: Արեւու ընտանեաց բոլոր բարեկամքը ժողովել էին: Սորանց մէջ էր նմանապէս երկրատիրոջ հօրեղբայր Աիր Ալիլամ Թօռնհիլը՝ որի բարի համբաւը ամենեկին յայտնի էր: Մովսէսը աւելացրուց թէ ամեն տեղ խնջոյք եւ ուրախութիւն էր, բոլոր գաւառը գովասանումէր հարսնացուի գեղեցկութիւնը եւ փեսայի վայելութիւնը եւ թէ սորանք անչափ սիրումէին միմեանց. խօսքը վերջացրուց նորանով թէ՛ Պ. Թօռնհիլը յայտնապէս աշխարհի ամեներջանիկ մարդն է:

«Թող լինի նա, եթէ կարող է, պատասխանեցի ես. բայց

Մինչ նա վերջացնումէր երկրորդ տունը, որին նորա վարանական ձայնը, խորատակած վշտալից ցաւից, մի կախարդական վայելչութիւն էր տալիս, Թօռնհիլի կառքը հեռուից երևելով, ամենքիս խռովեցրուց և իմ անդրանիկ դասեր շիտթը աւելցրուց: Վամելով խուսափել իւր մոլորեցուցչից, նա իւր քոյր Սոփիայի կռնից բռնած՝ զնաց դէպի տուն: Մի քանի բուպէից յետոյ, Թօռնհիլը ցած եկաւ կառքից, մօտեցաւ դէպի այն տեղը, ուր ես նստած էի, և հարցրուց իմ առողջութիւնը իւր սովորական մտերմութեամբ:

«Պարոն, ասեցի ես, ձեր յանդգնութիւնը մի յաւելուած է ձեր բարքի անարդութեան: Վար մի ժամանակ, երբ ես կարող էի պատժել այդ լքութիւնը, երբ պատուհասակոծ կ'անէի ձեր այդպիսի համարձակութեամբ յայտնվիլը իմ առաջը, բայց այժմ դուք ապահովված էք, պատճառ որ՝ ճերութիւնը նուազեցրել է իմ հոանդը և իմ դաւանութիւնը հրամայումէ ինձ ճ'նշել նորան:

— Այս բողոքումեմ, սիրելի պարոն, որ դուք ինձ սաստիկ զարմացնումէք. չեմ կարում հասկանալ թէ՛ ի՞նչ է նշանակում այդ: Յոյս ունիմ որ՝ դուք մի յանցաւորութիւն չէք համարում այն կարճատե արշաւանքը, որ ձեր դուտորը արեց իմ հետ:

— Ղեն, թշուառական, աղաղակեցի ես, դու մի անարգ և վտտթար խայտառակ ես... և ամեն կողմից մի խաբերայ. բայց նոյն իսկ քո անարգութիւնը քեզ ազատումէ իմ բարկութիւնից... Խնացիր, պարոն, ես սերվումեմ միայնպիսի ցեղից՝ որ չէ տանելու այդ անարգանքը... Չոր հրապուրիչ, դու չ'վախեցար, քս բուպէական տուփանքը կշտացնելու համար, մի խեղճ ստեղծուածի դժբաղդեցնել բոլոր իւր կեանքի մէջ և ազականել նորա ընտանիքին՝ որոնց միակ ստացուածքը իւրեանց պատիւն է:

— Աթէ այդ ստեղծուածը, կամ դուք վճռել էք դժբաղդ լինել, ի՞նչ էք ուզում որ՝ ես անեմ այդ տեղ. բայց ձեր բարեբաղդութիւնը դեռ ևս ձեզնից է, կախ և ի՞նչ կարծիք և ունենայիք իմ մասին, ես պատրաստ եմ ձեզ ձեռնառու լինելու: Փոքր ժամանակի մէջ մենք կարենք ամուսնացնել նորան մի ուրիշի հետ և առաւել ևս՝ նա ազատ կ'լինի պահպանել իւր սիրողին, որովհետեւ, երգումեմ ձեզ որ, դեռ ևս պահպանումեմ դէպի նա իմ գորովալի յարգանքը:

Բողոք կիրքերս արիւնիս հետ միասին բարձրացան դէպի զըլուխս, այդ թշնամանքի լրումը լսելով, որովհետեւ մարդուս մտքը՝ որ մեծամեծ թշուառութիւնների տակ, դեռ ևս մնումէ խաղաղ, կարէ երբեմն խթովել մինչև կատաղութիւն այնպիսի անարդ նախատինքներով, որոնք թափանցումեն մինչև հոգին:

«Քաշվեր աչքիս առջևից, օձ դժնգակ, աղաղակեցի ես, և մի այլ ևս նախատիր ինձ քո ներկայութիւնով: Ա՛յ եթէ իմ խեղճ որդին այստեղ կ'լինէր, նա չէր տանել այդ... բայց ես, ես ծեր եմ և խեղ, անդարձ կորուսված:

— Ես տեսնումեմ, ասեց նա, որ դուք ձեր մտքում դրել էք ստիպել ինձ առաւել խառութեամբ խօսել ձեզ հետ, քան թէ ուզումէի. բայց որովհետեւ ես ձեզ ցոյց տուի ինչ որ կարէիք ըստ պատել իմ բարեկամութիւնից, իրաւացի է ուրեմն որ՝ դուք նրմանապէս իմանաք թէ՛ ի՞նչ հետեանք է ունենալու իմ վրէժխնդրութիւնը: Իմ գործակալը՝ որին տուել եմ ձեր վերջին պարտքի մուրհակը, ստիպված է սաստիկ կարեւորութեամբ. ես ուրիշ հնար չունեմ արդարութեան դատաստանի տակ չձգելու այդ բանը, եթէ ոչ ինձնից հատուցանելով նորան պարտաւորեալ գումարը, որ, մտակոյց ամուսնութեանս պատճառով, ինձ համար հեշտ չի լինիլ: Միւս կողմից, իմ տան տեսուչը ասումէ թէ՛ պիտի պահանջէ ազարակի վարձի հատուցումը. սա մի այնպիսի մարդ է, որ իւր գործը զիտէ և ես երբէք չեմ խառնվում այդ բաների մէջ, բայց ես դեռ ևս կցանկայի ձեզ ձեռնառու լինել, մաւնաւանդ կցանկայի որ՝ դուք և ձեր դուստրը, իմ օրիորդ Ալիւմօթի հետ ամուսնութեան ժամանակը, որ մի քանի օրից յետոյ է լինելու, գտնվէիք մեզ մօտ. այդ մասին խնդրումէ իմ չքնաղ Արաբիլան և ես յոյս ունեմ որ՝ դուք չէք մերժել նորա խնդիրը:

— Պարոն թոռնհիլ, պատասխանեցի ես, լսեցէք ինձ մի և վերջին անգամ. որ ինչ վերաբերումէ ձեր ամուսնութեան մի ուրիշ հետ, այլ ոչ իմ դատեր հետ, ես երբէք նորան հաւանութիւն չեմ տալու. թէ՛ ձեր բարեկամութիւնը ինձ բարձրացնելու լինէր մինչև գահ և թէ՛ ձեր վրէժխնդրութիւնը ինձ գերեզմանի շնորհելու լինէր, ես արհամարհումեմ երկուսն էլ... Ա՛յ, դու ինձ ցաւագին և անդարմանելի կերպիւ խաբել ես. Ուր ես յանձ-

նել էի ինձ քո պատուին, այն տեղ գաի անարգութիւն: Մի յիշեր ուրիմն բարեկամութեան անունը՝ զնա՛, տիրիր բոլոր այն բաներին, որ բաղդը քեզ տուել է՝ զեղեցկութիւն, հարսաութիւն, ստողութիւն, զուարճութիւն: Վճան, թող ինձ ճարակ մնայ թշուառութեան, ամօթի, հիւանդութեան և ցաւի, կոր կորձանված, ինչպէս կամ, իմ հոգին դեռ ևս յեռ է պահանջում իւր արժանաւորութիւնը, թէ և դու ստացար իմ թողութիւնը, բայց իմ արհամարհանքից ազատ լինելու շնորհը չես ունենալ:

— Աթէ այդպէս է, ասեց Թօռնհիլը, դուք շուտով կ'զգայ՝ ձեր յանդգնութեան հեռանկար և մենք կ'տեսնենք թէ՛ ո՞վ մեզնից արժանի կ'լինի արհամարհանքի: Այս խօսքից յետ, նա իսկոյն հեռացաւ:

Աինս և որդիս, որոնք վկայ էին այդ խօսակցութեան, ապա շահարկած էին բոլորովին, զատերքս, երբ որ խնցան նորա զնալը, եկան մեր խորհրդակցութեան հեռանկար իմանալու և մինչ տեղեկացան ամեն բանին, նոյնչափ խռովված երեւցին, որչափ և մնացեալ ընտանիքս. իմ մտտին կարեմ ասել թէ՛ ասպարէզ էի կանչում նորա շարակամութեան ամենամեծ նշանակութիւնը: Վճնդակազոյն հարուածը նա արդէն հատուցել էր և ես պատարաստ էի յազթահարելու նորա ամեն մի նոր ջանքը, իբրև այն պատերազմական զէնքերը՝ որոնք թէ և խորտակված, վեր ընկած են, բայց դեռ ևս իւրեանց սուր ծայրը ցոյց են տալիս թշնամուն:

Մենք տեսանք շուտով որ՝ նորա խրոխտանքը դուր չէին, նոյն իսկ միւս օրը, նորա ասն տեսուչը եկաւ պահանջելու ինձնից ազարակի վարձագինը՝ որ ես վերը պատմած անցքերի պատճառով չէի կարացել հատուցանել: Այս անձեռնհասութեանս պատճառով, բռնեց երեկոյին իմ դուարները, զին արեց և միւս օրը վաճառեց կէսագին: Աինս և երեկոյնքս ազաշումէին ինձ ընդունել ամեն պայմանները այդ յայտնի աւերածքից ազատելու համար, պաղատումէին թոյլ տալ միանգամ ևս Վ. Թօռնհիլի այցելութիւնը և բոլոր իւրեանց զեղեցկախօսութիւնը դորձածեցին նկարագրելու այն աղէտքը՝ որին պատրաստվում էի նշաւակ լինել, սոսկալի բանդարկութիւնը այն խստաշունչ ժամանակում ստողութեանս վտանգաւոր վիճակը հրդեհի դիպուածից պատճառված, ես մնացի անողոր:

«Միրելիք, ասեցի ես, ինչո՞ւ համար էք այդքան ջանք ա- նում համոզել ինձ դէպի այն դործը՝ որ բարի չէ: Իմ պարտա- ւորութիւնը ինձ հրամայումէ ներել նորան, բայց իմ խղճմանսը չէ ներում ինձ հաւանել նորան: Մուղէիք դուք որ՝ հրապարա- կը ծափահարէք ինձ այն բանի համար, որը որ իմ սիրտը դատա- պարտումէ ծածկարար: Մուղէիք դուք տեսնել ինձ, անարդու- թեամբ հպատակված, մինչ այն աստիճան խոնարհացած որ՝ փա- զաբշէի անարդ մըրեցուցչին և բանտից ազատվելու համար դա- տապարտէի ինձ անդադար դէպի այն սարկութիւնը՝ որ ամենից չարն է, այսինքն՝ դէպի հողու սարկութիւնը: Ա՛չ, ո՛չ և երբէք: Այթէ մեզ պիտի քաշեն տաննն այս պատապարանքից, հաստնա մնանք ուղիղ ճամփում և ուր որ ձգեն մեզ, մենք միշտ կ'ունենանք մեր մէջ մի խաղաղ տեղի ապաստանի, ուր կարենք քննել մեր սիրար աներկուղութեամբ և յօժարութեամբ»:

Արեւիկոն անցաւ այսպէս. միւս օրը վաղ առաւօտուն, որով- հետև զիշերը շատ ձիւն էր եկել, որդիս զբաղված էր մաքրելով և դրան առաջև ճանապարհ բաց անելով. յանկարծ նա վաղելով դարձաւ տուն, գունաթափ և զարհուրած և մեզ ասեց թէ՛՝ եր- կու օտարականք, որոնց նա ճանաչումէ որ՝ արդարութեան պաշ- տօնակալներ են, դէպի իւրեանց տուն են գալիս: Այն ինչ նա այդ խօսքը ասեց, նորանք մտեցին տուն և մօտենայով դէպի անկողնու- քը՝ որի մէջ էս պառկած էի, ասեցին թէ՛՝ ո՞վ էին նորանք և ինչո՞ւ համար էին եկել: Նորանք յայտնեցին ինձ թէ՛՝ պիտի բան- դարգեալ լինիմ և հրամայեցին պատրաստվել նորանց քամակից դաւառի բանդը գնալու, որ իմ բնակութիւնից տասն և մի մղոն հեռի էր:

«Վարեկամք, ասեցի, դուք շատ խիստ ժամանակ էք եկել ինձ բանդը տանելու, մանաւանդ որ նորերումն բազուկս էրված լինելով մինչև ոսկոբ, ես մի թեթեւ ջերմ հմ գում: Նամանապէս ես շորեր չունեմ հագնելու և այժմ՝ ձեր և տկար լինելով, չեմ կարող երկար ոտով ման գալ այդքան թանձր ձիւնի մէջ. բայց՝ եթէ այդպէս պէտք է...»

Դարձայ ես դէպի իմ կինը և երեխերքս և ասեցի նորանց որ՝ ժողովն այն փոքր բաները՝ որ դեռ մնումէր մեզ և պատ- րաստվեն հեռանալու այդ տեղից: Աս յորդորումէի նորանց բը-

տապել, իսկ որդուս յանձնեցի օգնել իւր մեծ քրոջը՝ որ գիտելով թէ՛ բոլոր այդ դժբաղդութիւններն պատճառը ինքն էր ընկած ուշաթափ և կորուսել էր զգացողութեանց հետ և յիշատակը այդ չարեաց: Այս քաջայերուձէի կնոջս, որ թախծալից և գող-դոջուն գրկել էր մեր երկու խղճուկ փոքրերին՝ որոնք զարհուրած՝ պատասաել էին նորան լռութեամբ և վախումէին գլուխները ծռել դէպի օտարականները:

Մինչ այս այսպէս էր, երկրորդ դուստրս կարգադրումէր երթալու ամեն բանը, և որովհետև նորան անդադար կրկնումէին շտապել, մի ժամ հազիւ անցած՝ մենք արդէն պատրաստ էինք չուկու:

Չ'կայ մի վիճակ, որոնք և թշուառական լինելը ըստ երևութին, որ չ'բերե իւր հետ որ  
և է միտթարութիւն:

Օտանը քայլերով հեռացանք մենք մեր խաղաղ բնակութիւնից: Մեծ դուստրս՝ նուազած ջերմից՝ որ մի քանի օր էր արդէն սկսել էր նորա կազմուածքի տակը փորել, բնդունեց մի պաշտօնակալի առաջարկութիւնը և նստեց նորա ձիու գաւակում, պիտի ասել որ՝ այդ մարդիկը իւրեանք բոլորովին զուրկ չէին մարդասիրութիւնից: Արդիս մի փոքր կրկնայի ձեռնից էր բռնել, կինս միւսի, խակ ես գնումէի յեցված փոքրիկ դստերս վերայ, որի արտասուքը թափվումէին ոչ թէ իւր, այլ իմ գծբաղդութեանց պատճառով:

Մենք արդէն երկու մզոնի չափ հեռացել էինք մեր բնակարանից, մինչ նկատեցինք մեծ բազմութիւն՝ որ վազումէր և ազաղակումէր մեր քամակից: Սորանք մի յիսուսի չափ անձինք էին իմ՝ աղքատ ժողովուրդից, սրտնք շրջապատեցին արդարութեան պաշտօնակալներին ահագին անէծքներով, և երգուելով թէ՛ թոյլ չեն տալ իւրեանց քահանային բանդը տանել, մինչ դեռ մի կաթիլ արիւն ունեն թափելու նորա պաշտպանութեան համար: Նորանք պատրաստվումէին սասախկ խտութեամբ վարվելու այդ մարդկանց հետ և նորանց զայրուցքի հետեանքը կարէր աղէտալի լինել նորանց համար, եթէ ես իմ հոգեւոր իշխանութիւնը չբզործածէի: Զաղիւ հազ յաջողեցաւ ինձ կորզել կատաղի ամբոխի ձեռնից երկու պաշտօնակալներին: Աշրխտեքս, տեսնելով իմ յայտնի ազատութիւնը, հիացած էին և ուրախութիւնից չէին իմա-

նում ինչ աննն, բայց շուտով տեսան որ՝ խարվել էին, որովհետեւ ես սկսեցի յանդիմանել այդ խեղճ կոյրերին՝ որոնք կարծուձէին թէ՛ ինձ կրախալք էին ցոյց սալիս:

«Այդ ի՞նչ է, սիրելիք, ասեցի ես, այդպէ՞ս էք դուք ինձ սիրում, այդպէ՞ս էք կատարում այն քարոզութիւնները՝ որ ես ձեզ տուել եմ: Վու՞ք ապստամբութիւն էք գործում արգարութեան առաջև և ահադին պատժի վտանգի մէջ էք ձգում ինձ և ձեզ: Ո՞վ է ձեր առաջնորդը, ցոյց տուէք ինձ այն մարդուն՝ որ ձեր միտքը յափշտակել է, որչափ յիրաւի է որ՝ այդ մարդը կայ ձեր մէջ, նոյնչափ յիրաւի է և այն թէ՛ ես նորան պիտի զգայուցանեմ բոլոր իմ սրտմտութիւնը: Ահ, իմ սիրելի մոլորեալ ոչխարներ, դարձէք զէպի ձեր պարտականութիւնքը, միտներդ բերէք ինչ որ պարտաւոր էք Աստուծուն, ձեր երկրին և ինձ: Արեղի է ես այնքան կապրեմ զեռ ևս, որ ձեզ կրկին կ'տեսնեմ և ձեռնառ կ'լինեմ ձեզ այս աշխարհում կրջանիկ լինելու: Վայց՝ ի՞նչ և պատահի, թող այն մխիթարութիւնը միայն ունենամ որ՝ իմ հօտը զէպի անմահութիւնը ժողովելուս, տեսնեմ թէ՛ իմ ոչխարներից ոչ մինը պակաս չէ»:

Ամենքը երեսուձէին գղջութեամբ թափանցիւած արտասուքի հեղեղ թափելով, մին մինի քամակից եկան ինձ մնաս բարև աւսելու: Ամենի ձեռք խանդաղատութեամբ սեղմեցի և իմ օրհնութիւնը տալուց յտոյ, շարունակեցի ձանապարհս, առանց այլ ևս մի արգելքի հանդիպելու: Վիշերից մի քանի ժամ առաջ, հասանք մենք մի քաղաք կամ լաւ ևս ասի՝ մի գիւղ: Մի քանի անշուք տուներ, այստեղ այնտեղ զիրուցան առաջուայ ճոխութեան մնացորդն էին և իւր հինուց քաղաք եղած առաւելութիւններից այդ տեղին պահպանել էր միայն բանդը:

Այս տեղ հասած՝ մենք գնացինք պանդոկը, ուր հրամայեցինք ուտել տալ մեզ ինչ որ առ ձեռն պատրաստ կ'գտնուէր. Ու վորական յոժարութեամբ ընթրիք արեցի ես իմ ընտանեաց հետ և կնոջս և երեխերքիս պատշաճապէս տեղաւ որելով գիշերուայ համար, ինքս գնացի դատաւորի գործակալների քամակից բանդը: Այս բանդը մի ժամանակ զինուորական պահեստի տեղի էր և ունէր մի ընդարձակ սենեակ ամուր վանդակներով պատած և յատակը սպաքարած. այստեղ ձարտար գողերը պարտքի համար

բանդարկիվածները անցուցանումէին օրուայ շատ ժամերը, բայց ամեն կալանաւոր ունէր մի տուանձին խուց՝ որի մէջ գլխերը փակվումէր:

«Վերս մտած՝ ես սպասումէի լսել թշուառութեան սուգ և կոծ, բայց ամենէն այլ բան տեսի: Վանդարկիւորները կարծես թէ միայն մի նպատակ ունէին, այսինքն՝ իւրեանց միտքը ուրախութեան և աղմուկի մէջ հեղձուցանել: Ինձ յայտնեցին նոր կողմերից կանխաւ հատուցանելի տուրքը և ես խոյն գոհացուցի նորանց, թէ եւ իմ ունեցած մի փոքր փողը վերջանալու վերայ էր: Իմ նուէրը անյատաղ դործածեցին ուժեղ քմակներ և այնուհետեւ բոլոր բանդը թնդաց ազմկայի խրախճանութիւնով, ծիծաղով և հայհոյանքով:

«Ենչպէս բան է, մտածեցի ես, որ այդ մտրուած մարդիկը ուրախ են, իսկ ես տրտում, մինչ ես ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ՝ նորանց նման բանդարկված և կարծումեմ թէ՛ աւելի պատճառ ունէի հանդիստ լինելու»:

Ես ջանք էի անում այսպիսի մտածողութիւններով ինձ զուարճացնել, բայց զուարճութիւնը կրէք չէ յառաջանում ջանքից՝ որ ինքն ինքեան մի յողնութիւն է և վաստակ: Մինչ ես նստած էի մտախոհութեամբ բանդի մի անկիւնում, իմ դժբաղդութեան ընկերներից մինը մօտ եկաւ, նստեց իմ մօտ և խօսակցութիւն սկսեց: Վոչոր կեանքիս մէջ ես իմ համար կանոն էի դրել կրէք չ'հրաժարվել խօսելուց, ո՛ւմ հետ և լինէր այդ, որովհետեւ՝ եթէ մի բարի մարդ է նա, նորա կարծիքը ինձ օգուտ կ'ընէ, իսկ եթէ չար մարդ է, կարէ ինձնից օգուտ քաղել: Իմ հետ խօսողը ճարտար մարդ էր երևում, բայց անկիրթ ողմտութիւնով և մտքի այնպիսի սաստիկ կորուրթութիւնով՝ որ յաջողել էր նորան մարդկային բնութեան չար կողմերը յայտնադործելու: «Այս ինձ հարցրուց՝ հոգացել էի արդե՞ք մի անկողնիք ստանալու մասին. յիշաւի այդ մի այնպիսի պարագայ էր, որի մասին ամենէն չէի մտածել:

«Վհա՛ մեր դժբաղդութիւնը, ասեց նա, մեզ այստեղ տալիս են միայն յարգ և ձեր սննեակը շատ մեծ է և ցուրտ: Բայց՝ որովհետեւ դուք ինձ երևումէք ազնուական սնունդի սովոր և ես

պարծու մեմ թէ՛ մի ժամանակ ես ես այդպէս եմ եղել, կատարեալ յօժարութեամբ առաջարկուեմ ձեզ իմ օթոցքի կէսը»:

Ես շնորհակալ եղայ նորանից, խոստովանելով իմ զարմանքը որ՝ այդքան մարդասիրութիւն էի գտնում բանդի մէջ, ուր անգթութեան օրինակները պակաս չէին: Ամբողջ ցոյց տալ նորան իմ բանիրուն մարդ լինելը, ասեցի « Էին ժամանակուայ խնաստունը լաւ հասկացած է երևում մի բարեկամի դինը նեղութեան մէջ. կրբ որ ասումէ՛ Ton kosmon aire, ei dos ton clairon, վեր առէք ինձնից բոլոր աշարհը, բայց թողէք ինձ մի բարեկամ: Աշխրաւի, շարունակեցի ես, ինչ է աշխարհը, կթէ նորա մէջ մեռակ էինք մնալու:

— Դուք աշխարհի վերայ էք խօսում, պարոն, պատասխանեց իմ ընկերը. աշխարհը երախայութեան մէջ է ընկնում և հակումէ դէպի իւր անկումը, բայց և այսպէս՝ աշխարհածնութիւնը կամ տիեզերքի արարչութիւնը բոլոր դարերի փիլիսոփաներին մի թել է տուել ոլորելու: Արքան կարծիքների խառնակութիւն են յարուցել նորանք աշխարհի արարչութեան վերայ: Վանքօնիաթօնը, Մաննիթօնը, Բերոզը, Օսկոսը, Առկանտը, ամենքը ի զուր են այդ ստարիպին դիմել. սորանցից վերջներ ասել է՝ Anarchon ara kai atclentaion to pan, որ նշանակումէ . . .

— Սերէք ինձ, պարոն, միջահատեցի ես, որ ձեր զիտութիւնները ուղուեմ կարճ կապել տամ, որովհետեւ կարծուեմ թէ՛ բոլոր այդ բաները ես արդէն ըսել եմ: Ո՞չ աստքէն բաւակաւ նութիւն եմ ունեցել մի անգամ ձեզ հանդիպելու Ա կըրրիդի սօնապաճառում և ձեր անունը Ափրախիմ Ժանկինսօն չէ՞ արդեօք:

Այս խօսքում նա մի հառաչանք արձակեց: «Ապարծուեմ թէ՛ շարունակեցի ես, դուք միտներդ կ'բերէք Փրիմբօզ վարդապետին, որից դուք մի ձի գնեցիք»:

Իսկոյն նա ինձ ճանաչեց: Տեղի մթնութիւնը և զիշխրուայ մօտենալը արգելել էին նորան սկզբում որոշել եմ գծագրութիւնքը:

«Այո՞, պարոն, պատասխանեց նա, կատարելապէս յանձն եմ առնում ձեզ ճանաչելը. ես ձեզնից մի ձի առի և մոռացայ հատուցանել նորագինը: Չիր դրացի Ֆրիմբօրոֆն է միայն իմ ընդդէմ վկայ, որից ես սաստիկ վախումեմ, մտածելով իմ մօտազայ դատը: Նա ուղումէ կրդամմբ վկայել իմ դէմ, իբր թէ ես նեն-

զաղբամ շինող հմ: Աս անչափ խնայումեմ որ՝ ձեզ կամ ուրիշներին խաբել հմ, որովհետև, շարունակեց նա ցուցանելով իւր կապանքը, տեսնումէք իմ ճարտար գործքերը ո՞ւր են բերել ինձ»:

— Աւրեմն՝ պարոն, ես վարձահատոյց կ'լինեմ ձեզ փոխարէն իմ մասին հոգատարութեան, այն ժամանակ, երբ ամենեւին չ'կարէիք սպասել ինձնից այդ փոխարինութիւնը: Քոյրը իմ ջանքը դործ կ'ածեմ Գլխորօթի ձեր գէմ վկայութիւնը մեզմացնել՝ գուցէ իմ խնդրանօք նա ամենեւին կ'հրաժարվի ես սորանից: Առաջիկայ դիպուածում յատուկ այս նպատակով կ'ուղարկեմ իմ որդուն նորա մօտ. բոլորովին անտարակոյս եմ որ՝ նա չի մերժիլ իմ խնդիրը, իսկ վկայութեան մասին ատեսնում բնաւ մի հանգստացէք:

— Աթէ այսպէս է, պարոն, ընդունեցէք բոլոր իմ ծառայութիւնը: Աւելի քան անկողինքիս կէսը կ'ստանաք այս զիշերուայ համար և ես ջանք կ'անեմ բարեկամական օգնութիւն ցուցանել ձեզ այս բանդում, ուր, կարծեմ թէ, փոքր ինչ ազդեցութիւն ունեմ:

— Աս շնորհակալ եղայ նորանից և չ'կարացի թագուցանել իմ զարմացքը նորա սքանչելի կերպիւ ջահելացած երևելու վերայ: Առաջին անգամ նորան տեսնելուս նա ինձ գոնէ վաթսուն տարեկան էր երևում: «Պարոն, ասեց նա ինձ, դուք բաւական տեղեակ չէք աշխարհի բաներին. այն ժամանակ ես ունէի սուտ մտղեր և ամեն հասակի նմանութիւնը կերպարանելու արհեստին քաջ տեղեակ եմ, տասն և եօթն տարեկանից մինչև եօթանասունը: Ահ, պարոն, եթէ զող և դաւաճան լինելու աշխատութեանս կէսը դործած լինէի մի արհեստ սովորելու, այսօր հարուստ մարդ կ'լինէի: Քայց և ճարտար գող լինելով, կարող եմ փոքր ի շատէ օգտակար լինել ձեզ մանաւանդ այն ժամանակ, երբ դուք ամենեւին ինձնից այդ յոյսը չունէք:

Մեր խօսակցութիւնը միջահատեցին բանդի սպասաւորները, որոնք եկան բանդարկեալներին կանչելու և նորանց ամենին զիշերը խուցիրի մէջ փակելու: Մի մարդ յարդի խուրճը ձեռին, որ իմ համար անկողինք էր պատրաստելու, նեղ և մութն անցքով տարաւ ինձ մի սենեակ, սալաքարած այնպէս, հասարակաց սրահը: Ափսեցի ևս մի անկիւնում յարդը և այն ծածկոյթը՝ որ

իմ՝ նոր բարեկամը առել էր ինձ և այս կարգադրութիւնը վերջացրած՝ իմ ուղեցոյցը՝ որ բաւական բարեբարոյ մտրդ էր երկուում, բարի զիշեր ասեց ինձ և հեռացաւ:

Ինչպէս որ սովոր էի, զբաղվեցի իմ մտածութիւնով, օրհնեցի այն բազուկը՝ որ ինձ պատժումէր և յետոյ մտեցի անկողինքս և խորին քնով քնեցի մինչև առաւօտ:

ՎԼՈՒԽ 26.

Բանդի վերանորոգութիւնը. — Օրէնքը կատարեալ լինելու համար, սիտէք՝ սրպէս պատժուձէ, նոյնպէս և վարձատրէք :

Այդ առաւօտուն ինձ զարթուցին ընտանիքս, որոնք արտասուախառն դէմքով կանգնած էին սնարքումս. որովհետեւ շքրջակայ թախծալից տեսարանը զարհուրեցրել էր երեխերքիս, ես փարատեցի նորանց ցաւը, հաւատացնելով թէ՛ երբէք այնպէս հանդիստ չէի քնել, ինչպէս այս գիշերը: Մեծ դուստրս նորանց հետ չէր: Յառաջընթաց օրուայ աշխատութիւնը և անհանգստութիւնը սաստկացրել էին նորա ջերմը, ուստի և զգուշութիւն էին համարել չ՛բերել նորան: Իմ առաջին հոգսը այն եղաւ որ՝ որդուս ուղարկեմ մի կամ երկու սննեակ վարձելու ընտանեացս որքան կարելի էր բանդի մօտ բնակութեան համար: «Աս գնաց և մի սննեակից աւելի չ՛կարաց գտնել, որ և վարձել էր աժան գընով, իւր մօր և քուերց համար: Բանտապահը մարդասիրութեամբ յօժարեցաւ ուղուս և նորա երկու մանր եղբարցը թոյլ տալ մնալ իմ մօտ: «Նորանց համար սննեակի մի անկիւնում պատրաստեցին անկողնեք՝ որ ինձ բողբոջին պաաշաձաւոր երեւեց: Բայց ես ուղեցի առաջ տեղեկանալ արդեօք դժկամակելու չէի՞ն նորանք քնել մի այնպիսի տեղում, որ սկզբում զարհուրելի էր երևել նորանց:

— Ապա, սիրելի քաջիկներ, ասցի ես, հաւանումէք ձեր քնելու տեղը. յոյս ունիմ որ՝ դուք չէք վախել այստեղ քնելուց, թէ և սեւապատ է բոլորովին:

— Չէ՛, հայրիկ, պատասխանեց Վիկը, ես ոչինչ տեղ չեմ վախում քնել, եթէ դու այնտեղ ես:

— Աս ես, ասեց Վիլլը՝ որ դեռ ես չորս տարեկան էր միշտ սիրումեմ՝ այնտեղ լինել, ուր հայրիկս է:

Մորանից յետ, ես ամենքին նշանակեցի իւրեանց պարտաւորութիւնքը: Սուրիա դատերս յանձնեցի հողալ իւր քրոջ վեաս ված առողջութիւնը. կինս պիտէր ինձ ընկերութիւն անէր, փոքր տղերքս իմ համար կարգէին, «խակ որ ինչ քեզ է վերաբերում, որդի. ասեցի ես Մովսէսին, քո աշխատութիւնից և քո ձեռնարկից է կախ մեր ամենիս կեանքը. քո հանապազորդական թոշակը կատարելապէս կ'ըստականացնէ մեր չափաւոր, բայց անթշուառ ապրուստը: Վու այժմ տասն և վեց տարեկան ես, ունես ոյժ և կարողութիւն՝ որ քեզ տուված է, որդի, օգտակար և ազնիւ գործածութեան համար՝ քեզ է մնում քաղցից ազատել քո հիւանդոտ հօրը և քո ընտանիքին: Վատրաստվէր այս երեկոյ մի դործ գտնելու եզուցվայ համար և ամեն օր տուն բեր քո աշխատած փողը»:

Բոլոր այս կանոնադրութիւնքը անելից յետոյ, գնացի ես բանդի հասարակաց սրահը, ուր առաւել կարէի վայելել օդի ընդարձակութիւնը և տեղե տարածութիւնը, բայց երկար չ'մնացի այնտեղ: Ենէճքը, անարգ խօսքերը, անասնութիւնը ամեն կողմից թափվելով, ինձ ստիպեցին դառնալ իմ սենեակը: Աս նստեցի մտածելով այդ թշուառականների մոլորական վիճակի վերայ, որոնք, տեսնելով բոլոր մարդկային ազգը իւրեանց դէմ յուզված, ջանք էին անում ապագայ կեանքի համար ևս մի թշնամի ունենալ, հարիւրատոսիկ զարհուրելի:

Մորանց անզգայութիւնը վերին աստիճանի վշտակցութիւն էր գրգռում իմ մէջ և սեփական նեղութիւնը դուրս էր անում սրբախցս: Մորանց ուղղելու և փրկելու փորձք մի ստիպողական պարտաւորութիւն երևեց ինձ, վասն որոյ՝ ես վճռեցի կրկին գնալ նորանց մօտ և հակառակ նորանց արհամարհական կատակներին, խորհուրդներ տալ և յաղթել նորանց իմ հաստատամտութեամբ: Խակոյն նորանց մօտ դարձած՝ իմ դիտաւորութիւնը հողորդեցի Ճենկինսօնին՝ որ կամակորութեամբ ծիծաղեց դորս վերայ և յայտնեց իւր ընկերներին՝ որոնք նմանապէս ցնծալից կատակով ընդունեցին իմ առաջարկութիւնը: Այս բանը մի նոր զուարճութեան հեռանկատ տեսք էր այն մարդկանց համար՝ որոնք ուրիշ

հնար չունէին զբօսանքի, բացի ծաղրածութիւնը և զեղխութիւնը:

Բարձր ձայնով, բայց առանց պաճուճազարդ բաների, կարգեցի ևս աստուածային պաշտմանց մի մասը. ունկնդիրքը զարմանալի կերպիւ խնդային: Անամօթ շունչները, սուտ զղջումի ծաղրալից հառաչանքը, դէպի միմեանց ձգած կատակիչ հայեացքը, յանկարծահաս սաստիկ հաղը, փոփոխաբար զրգուճէին նորանց ծիծաղը: Այս իմ սովորական հանդիսաւորութեամբ շարունակուձէի կարդել, հաւատացած լինելով թէ՛ կարէի դեռ ևս մի քանիսին դէպի զգաստութիւն բերել, և թէ՛ սրբասաց բաները ոչինչ ապականութիւն չէին կրելու սորանից:

Այս ընթերձումը վերջացրած՝ սկսեցի իրախտական բաներ խօսել. առաւել նորանց սփոփելու զխտաւորութեամբ, քան թէ դատապարտելու: «Ասիս և առաջ նկատել տուի նորանց թէ՛ իմ խօսակցութեան գլխաւոր պատճառը նորանց հանդիսան էր և բարեկեցութիւնըս յետոյ թէ՛ ևս ինքս նոյնպէս բանդարկեալ էի և ընկեր սորանց թշուառութեանց և թէ՛ վերջապէս ինձ ոչ ոք չէր վարձել նորանց քարոզելու համար: «Այս շատ նեղացած եմ, ասեցի, տեսնելով նորանց ամբարշտութիւնը, որ ոչ միայն օգուտ չի բերելու, այլ կարէ պատճառ լինել նորանց կորստեան»»: Աւատացէք ինձ, բարեկամք, գոչեցի ևս, (գուք իմ բարեկամ էք, թէ և բոլոր աշխարհը հերքումէ ձեր բարեկամութիւնը) հաւատացէք որ՝ եթէ օրը հազար հայհոյանք անէիք, մի սու չէիք աւելացնելու ձեր քսակում: Ի՞նչ էք շահվում գուք, ամեն բուպէ սատանայի անունը տալով և իբր նորա մտերմութիւնը փաղաքշելով. չէք տեսնում որ՝ նա բոլորովին անզգայ է դէպի ձեզ: Ի՞նչ էք ստանում նորանից, բացի հայհոյանքը, ձեր բերանը նորանցով լցնելու համար, մինչ ձեր փորը նա թողնումէ դատարկ և ինչքան ևս կարեմ դատել նորա մասին, ապագայում ևս դորանից լաւ բան չի տալու ձեզ:

«Այբ որ մենք մի մարդու արարքից անբաւական ենք լինում, բնականաբար զիմուձենք դէպի մի ուրիշը: Աւ չէր լինել արգետօք փորձել մի նոր ուսուցչի՝ որ գոնէ գեղեցիկ խոստումներով է հրաւիրում ձեզ դէպի ինքը: Յայտնի բան է սիրելիք որ՝ ամենամեծ յիմարութիւն կլինէր, մի տուն կողոպտելից յետոյ, զնալ և իւրեան յանձնել ժանդարմների պաշտպանութեան: Իսկ գուք միթէ սու-

բանից լաւ էք գործում. դուք ամենքդ, նորա մօտ, որ ձեզ մնաւ նկէ, օգնութիւն էք խնդրում մի այսպիսուց՝ որ հազարապատարիկ առաւել ննդաւոր է, քան ոստիկանութեան (police) շատ խորագէտ հետախոյզը՝ սա ձեզ կողոպտումէ և յետոյ կախել է տալիս, իսկ միւսը, ոչ միայն կողոպտումէ և կախումէ այլ՝ որ չարագոյն է, չի արձակում ձեզ, թէ և դահիճը իւր գործը արդէն կատարել էր:

Այս խօսքերից յետոյ, ևս մեծարանք ընդունեցի իմ ունկնդիրներից. մի քանիսը իւրեանց ձեռք մեկնեցին ինձ, երգուելով իւրեանց հոգով թէ՛ մի բարեբարոյ և իբնէ պարկեշտ մարդ էի ևս և թէ՛ նորանք կամումէին հրահանգվել իմ անդեկութիւններից: Աս խոստացայ հեռեկալ օրը կրկին խօսել նորանց հետ և արդէն յոյս ունէի մի նորօգութիւն ձգելու նորանց մէջ, որովհետեւ ևս միշտ այն կարծիքը ունէի թէ՛ ոչ ոք չ'բժշկված չէ մնում և թէ՛ խղճմաննքի տազնասլը ամենի սրտի մէջ կարէ յայանվել, միայն թէ աղիզը ձգողը ուղիղ նայէր:

Խղճմաննքս այսպէս բաւականացած, եկի իմ սննեակը, ուր կինս մի չորաբեկ ճաշ էր պատրաստել: Ժենկինսօնը ին դրեց թոյլ տալ նորան իւր ճաշը միաւորել մերի հետ և հազորդ լինել այն բաւականութեան՝ որ իմ խօսակցութիւնը կարէր տալ: Նա դեռ ևս չէր տեսել իմ ընտանիքին՝ որոնք ինձ այցելութեան էին գալիս մի այլ դռնից՝ որ բացվումէր դէպի վերը նկարագրած նեղ անցքը և այսպէս ազատ էին մնում հասարակաց սրահովը անցնելուց: Այս տեսակցութեան ժամանակը, Ժենկինսօնը հիացած էր երևում իմ կրտսեր աղջկայ գեղեցկութեան վերայ՝ որին նորա մտածիչ կերպարանքը առաւել հրապուրիչ զօրութիւն էր տալիս: Փոքրիկ որդիքս նմանապէս նորա ուշադրութիւնը զբաւեցին:

«Ո՛հ, վարդապետ, դոչեց նա այս երեխերքը այսպիսի անդում բնակելու համար են այդ չափ գեղեցիկ և բարի»:

— Փառք Աստուծոյ, պարոն Ժենկինսօն, պատասխանեցի ևս. նորանք դաստիարակված են Աստուծոյ երկիւղի և դէպի բարին սիրոյ մէջ. և եթէ յիրաւի բարի են, ինչո՞ւ է պէտք մնացած բաները:

— Աս մտածումեմ, պարոն, ասեց իմ դժբաղդութեան ըն-

կերը, թէ դուք մեծ մխիթարութիւն պիտի գտնէք, ձեր բոլոր ընտանիքին այսպէս ձեզ մօտ ունենալում:

— Մխիթարութիւն, պարոն Ժենկինսօն. ա՛, յիրաւի շատ մեծ. բոլոր աշխարհը չէի վերառնել առանց սորանց, իսկ սորանց հետ խաւար բանդը ինձ ապարանք է երևում: Եւ՛ բաղդին այս կեանքում հարուած հասուցանելու մի հնար կայ, այդ՝ սորանց վնասելն է:

— Ուրեմն, պարոն, ասեց նա. ես վախումեմ այդ մասին յանցաւոր եղած լինեմ (նա Մովսէսին էր նայում) որովհետեւ տեսնումեմ այստեղ մի անձն՝ որ ինձնից դժկամակելու էր և որից ես կուզէի ներողութիւն ստանալ: «Որդիս միտը բերեց նորա ձայնը և դէմքի դժագրութիւնքը, թէ և ծպտված էր նորան տեսել և ձեռք մեկնելով դէպի նա, հաւատացրուց նորան թէ՛՝ ռի չէր պահում նորա դէմ»: Բայց, աւելցրուց, չեմ կարում հասկանալ ի՛նչպէս իմ կերպարանքից դուք կարացիք խմանալ թէ՛՝ ինձ յիմարացնելը այդքան հեշտ էր»:

— Մերկէ՛ պարոն, պատասխանեց Ժենկինսօնը. Ամենեին ձեր կերպարանքը չէր, որ ինձ հրապուրեց, այլ ձեր սպիտակ զանկապանները և սև ժապաւէնը՝ որով ձեր մազերը պրքացրած էին: Բայց առանց նուազեցնել կամելու ձեր մտքի կորովութիւնը, պիտի ասեմ որ՝ իմ ժամանակում ձեզնից առաւել կորովիներին յիմարեցրել եմ, թէ և իմ բոլոր ճարտարութիւններից այն է դուրս է եկել որ՝ վերջապէս յիմարներն են հզօր յայտնվել:

— Աս կարծումեմ, ասեց Մովսէսը, թէ մի այնպիսի կեանքի պատմութիւնը, որպիսի ձերն է, կարէ կրթողական լինել և զօտուցիչ:

— Ո՛չ այնքան, որքան կարծումէք. պատմութիւնը՝ որ մեր առաջև մերկացնումէ մորութիւններ և ծանականք, ուշացնումէ մեր յառաջադիմութիւնը կեանքի մէջ, սաստկացնելով մեր կասկածը: Ճամփորդը՝ որ ամեն հանդիպած բանից կասկած է կրում և որ յետ է դառնում, այն ինչ մի մարդ է երևում նորան զողկ կերպարանքով, դժուարութեամբ կ'հասնէ իւր ճանապարհորդութեան նպատակին:

«Այլ յիրաւի, մինչ ես դատումեմ իմ անձնական փորձերի նկատողութեամբ, կարծումեմ թէ՛՝ խորամանկ մարդը մեծ յի-

մարներից մինը պիտի լինի բոլոր աշխարհում: Արիկայութեանս ժամանակ ինձ շատ խորագէտ էին համարում: Վեռնա ևս եօթն ասարկան էի որ՝ տիկիները իմ մասին ասումէին թէ՛ կատարեալ մարդ էի: Տասն և չորս տարեկան հասակումս արդէն աշխարհի բաները զիտէի, գտակա ծռած էի գնում գլխուս և սիրուններին սիրուն խօսքեր էի ասում: Վասն տարեկան, թէ և կատարեալ պէս բարբարոյ էի, այնպէս բարբարոյ էի, այնպէս խորամանկ էին համարում ինձ որ՝ ոչ որ չէր կամում իմ վերայ վստահութիւն ունենալ: Ամայ ակամայ վերջապէս նենգաւոր եղայ և ապրեցի գլուխս միշտ լցված խաբելու դիտաւորութիւնով և սիրտս դողդողելով յայտնի լինելու ահից: Աս սովորութիւն ունէի կատակել ձեր դրացի Պլեմբորոֆի պարկեշտ պարզմտութիւնը և այնպէս կամ այնպէս տարին մի անգամ գոնէ նորան խաբումէի, բայց այդ բարի մարդը իւր ճանապարհը շարունակեց, ուղղակի առաջ գնալով, առանց որ և է կասկածի և հարստացաւ, մինչ ևս, շարունակելով իմ չարագործութիւնը և ճարտարութիւնը, մնացի աղքատ և առանց այն միսիթարութեան, որ ստացվումէ բարեբարոյ լինելուց: Անչ և իցէ, աւելացրուց նա, պատմեցէ՛ք ինձ ձեր բանը, տեղեկութիւն տուէ՛ք, ի՞նչ պատճառով էք այստեղ բնկել և թէ և իմ համար բանդից խուսափելու յաջողութիւնը չունեցայ, դուցէ կարող եմ դեռ ևս իմ բարեկամներին դուրս բերել այն տեղից:

Նորա քննասիրութիւնը գոհացնելու համար պատմեցի կարգով բոլոր այն անցքերը և յիմարութիւնները՝ որոնք ինձ խորատուլել էին այն անդունդքը՝ որի մէջ գտնվումէի և չթաքուցի իմ նորա միջից դուրս դալու կատարեալ անկարողութիւնը: Այդ պատմութիւնը լսելուց յետոյ, փոքր ինչ մտածելից նա, խփեց ճակատին, իբր թէ մի կարեւոր հնար էր գտել և հրաժարական ողջոյն տուեց մեզ ասելով թէ՛ գնումէ խորհելու թէ՛ ինչ պիտի անել:

ԳԼՈՒԽ 27.

Նոյն առարկաների շարունակութիւնը:

Նշրկորդ օրը, կնոջս և երեխերքիս հաղորդեցի իմ դիտաւու-  
րութիւնը բանդարկեալների վերանորոգութեան մասին. նորանք  
ընդունեցին այդ ընդհանուր դժգոհութեամբ, հաստատելով սորա  
անկարելութիւնը և անպատշաճութիւնը և աւելացուցին թէ՛ իմ  
ջանքը ոչինչ լաւութիւն չէին յառաջացնելու, այլ հաւանական  
է թէ՛ վտանդի մէջ կ'ընէին իմ հոգեւոր պաշտօնը:

«Ներկեցէք ինձ, պատասխանեցի ես. այս մարդիկը, թէ և  
պատուից ընկած են, բայց այնու ամենայնիւ զեռ ևս մարդիկ են  
և այս մի մեծ իրաւունք է զէպի իմսէրը: Մի բարի խորհուրդը՝  
որ հերքումեն, հարստացնումէ նորա հոգին, որ այդ խորհուրդը  
տալիս է. զիցուք թէ՛ իմ խրատները նորանց չեն ուզելու, ես  
ինքս ինձ կուզեմ նորանցով: Աթէ այդ դժբաղդները, սիրելիք,  
լինէին իշխաններ, հազարաւոր մարդիկ կ'զանէին պատրաստ իւր-  
եանց ծառայութիւնը նորանց նուիրելու, բայց իմ կարծեօք, այն  
հոգին՝ որ բանդի մէջ է, առաւել մեծագին է քան թէ՛ որ դահի  
վերայ է բաղմած: Այո՛, սիրելիք, եթէ ես կարող կ'ամ նորանց վի-  
ճակը լաւացնել, կ'անեմ այդ: Գուցէ՛ ամենքը չեն արհամար-  
հել ինձ, գուցէ՛ մինին զուրս կ'բերեմ անդունդից. այդ ևս բա-  
ւական է, որովհետեւ կսոյ արգեօք աշխարհի երեսում մի առաւել  
մեծագին բան, քան մարդու հոգին:

Այս խօսքերից յետոյ, ես թողեցի նորանց և գնացի հասա-  
րակաց սրահը, ուր բանդարկեալներին գտի զուարճալից վիճակի  
մէջ. նորանք ինձ սպասումէին, ամենքը պատրաստված որ և է խաղ  
խաղալու խեղճ վարդապետի հետ: Այն ինչ ես կամումէի սկսել,  
մինը, իբր թէ զիպուածով, շրջեց իմ դնովի մազերը (peruque)

և ներողութիւն խնդրեց: Միւսը՝ որ փոքր ինչ հեռի էր ինձնից, մի առանձին ձևով ատամների միջև թուքը անձրևի պէս թափումէր գրքիս վերայ: Արրորդը ամէն էր կանչում այնպիսի վրշտալի ձայնով, որ զարմացնումէր միւսներին: Չորրորդը՝ ճարտարութեամբ գրպանիցս գողացաւ իմ ակնոցները: Բայց սորանց մէջ կար մինը ևս, որի չար խաղը ամենքի աչքում շատ յաջող երևեց. նա նկատեց որ՝ ես իմ առաջև սեղանի վերայ կարգով շարել էի իմ գրեանքը, հիանալի աջողակութեամբ գողացաւ նորանցից մինը և նորա տեղ դրեց պիղծ կատակների մի հատոր, որ իւրեան էր պատկանում: Բայց ես առանց ամենևին նկատելու ինչ որ անումէր այդ չարագործ խումբը, շարունակեցի իմ խօսուածքը, մտածելով թէ՛ եթէ իմ փորձի մէջ մի ծաղրածական բան կայ, կարէ զրգուել նորանց խնդութիւնը մի կամ երկու անգամ, մինչ նորա կարևորագոյն մասը կարէ տեսողական բարիք յառաջացնել: Իմ մարգարէութիւնը կատարվեց. տասն օր չանցած՝ մի քանիսը զղջացած երևեցին, իսկ միւսները արդէն ուշադիր էին:

Իրաւունք ունէի ես պարծելու թէ՛ իմ հաստատամտութիւնով և յաջողութիւնով կարացել էի զգայականութիւն զարթեցնել այդ դժբաղգների մէջ, որոնք բոլորովին զուրկ էին բարոյական զգացողութիւնից: Մտածեցի նմանապէս ուրիշ մարդասիրութիւններ ևս ցուցանել և նորանց վիճակը քաղցրացնել: Մինչև այժմ՝ նորանց ժամանակը անցնումէր քաղցածութեան կամ անառակութեան մէջ, աղմկալից խռովութեան կամ դառն չարխօսութեանց մէջ: «Նորանց միակ զբաղմունքն էր միմեանց հետ կռուելը, թուղթ խաղալը և ծխախոտ կտորելը: Այդ անօգուտ գործը պատճառ տուեց ինձ մտածելու թէ՛ զուցէ կարելի էր ուզողներին զբաղեցնել սեպիր շինելով ծխախոտի գործարանների համար կամ կաղապարներ շինելով կոշկակարների համար: Այսպիսի դիտաւորութեամբ հարկաւոր նղած փայտը գնեցի ամենքի ծախքով և պատրաստված բաները վաճառումէր իմ վերակացութեամբ, այնպէս որ՝ ամեն օր նորանք մի բան աշխատում էին, յիրաւի շատ փոքր բան, բայց բաւական, նորանց սպրուստի համար:

Սորանով ևս չբաւականացայ. այլ տուգանք նշանակեցի անբարոյական գործերի համար և վարձատրութիւն ամենայն աւել

լորդ աշխատանքի համար: Այս հնարով տասն և հինգ օրուայ մէջ կազմեցի իմ շրջանում մի այնպիսի բան՝ որ արդէն նմանութիւն ունէր մարդկային ընկերութեան: Ենչպէս ուրախ էի ես, նայելով ինքս ինձ իբրև մի օրէնադրի, որովհետև յաջողվել էի այդ բնականաբար զազանամիտ մարդկանց համոզել զէպի աշխատասիրութիւն և հնազանդութիւն:

Շատ ցանկալի կ'ըլնէր եթէ օրէնադրական իշխանութիւնը պարապէր առաւել օրէնքները նորոգելով, քան պատիժները աւելացնելով, որովհետև նա պիտէր իմանար թէ՛ յանցանքը արմատախիլ անելու համար, հարկաւոր է՝ ոչ թէ պատիժները աւելցնել, այլ նորանցից վախել տալ: Այն ժամանակ, մեր այժմեան բանդերի տեղ, որոնք ապականումեն անմեղների բարքը, առաւելացնումեն մեղապարտների անբարոյականութիւնը, և ընդունելով մի դժբաղդի՝ որ ամբատանված է իբրև յանցանքի տէր, դարձնումեն նորան հասարակութեան, (եթէ կենդանի է մնացել) պատրաստ հազար այլ յանցանք գործելու, մենք կուեննանք, ինչպէս Աւրուպայի մի քանի երկիրներում, ապաշխարութեան և առանձնութեան տեղիք, ուր մեղապարտին այցելութիւն կանէին այնպիսի մարդիկ, որոնք կարէին զգումն զրգուել նորա մէջ, եթէ յանցաւոր էր, կամ յորդորել նորա խրատներով առաքինի մնալ, եթէ անմեղ էր: Այս կերպով են վերանորոգում տէրութիւնները, այլ ոչ թէ պատիժները աւելացնելով: Աս երկրայելի եմ համարում այն իրաւունքի արժանաւորութիւնը, որ մարդկային ընկերութիւնները սեփականել են թեթև յանցանքները մահապարտութեամբ պատժելու: Մարդասպանութեան մէջ, իրաւունքը ակներև է, որովհետև նա հաստատված է անձնական պաշտպանութեան օրէնքի վերայ, որ մեզ պարտաւորում է դուրս ձգել հասարակութեան մէջից այն մարդուն՝ որ բնաւ չէ խնայում ուրիշի կեանքը: Բնութիւնը ինքը բոլորովին զնուլում է մարդասպանի դէմ, բայց ոչ այն մարդու դէմ, որ իմ մի բանը գողացել է. բնական օրէնքը իրաւունք չէ տալիս ինձ կեանքից զրկել նորան, պատճառ որ՝ նոյն բնական օրէնքով այն ձին՝ որ ինձնից գողանում է, նոյնչափ նորանն է, որչափ և իմը: Այստեղ ես կարեմ իմ իրաւունքը պահպանել միայն մեր մէջ հաստատված դաշնադրութիւնի զօրութեամբ՝ որից յայտնվում է թէ՛ ով որ միւսի ձին գողանայ, մահապարտ է,

բայց այս դաշնագրութիւնը հաստատուած է սուտ հիմքի վերայ, որովհետեւ ոչ որ իրաւունք չունի իւր կեանքի վերայ, նոյնպէս և չունի իրաւունք այդ կեանքը մի իւր նմանից խլելու, ըստ որում իւրը չէ այն: Աւել առաւել ևս՝ այդ դաշնագրութիւնը սպորինուոր է և մի հասարակ ատեանը կարէ փոխել նորան, ըստ որում մի թիթեւ անպատշաճ գործի պատիժը շատ մեծ է. անշուշտ աւելի լաւ է պաշտպանել երկու մարդու կեանքը, քան թէ պահպանել մինի ձիով ման գալու բաւականութիւնը: Մի դաշնագրութիւնը եթէ ուղիղ չէ երկու անձանց մէջ, ուղիղ չէ և հարիւր կամ հարիւր հազար անձանց մէջ. որպէս տասն միլիօն շրջանները չեն կազմել մի չորեքանկիւն, նոյնպէս անթիւ անձանց ձայնը միասին՝ անզոր է մի ստութիւն պաշտպանելու, այսպէս է խօսում բանականութիւնը և բնութիւնը ինքը նոյնն է ասում: Այլ այրենիները՝ որոնք վարվում են միայն բնական օրէնքով, շատ ազահ են միմեանց կեանքին, բայց նորանք ևս արիւն են թափում, միայն վրէժխնդիր լինելով ամենամեծ չարագործութեան համար:

Մեր նախնիք Սաքսոնները, որքան և կատաղէ էին պատեւրազմի մէջ, խաղաղութեան ժամանակը սակաւ էին սպանութիւն գործում: Տէրութիւնները իւրեանց սկզբում, մինչ բնութեան ազդեցութիւնը նոցա վերայ սաստիկ է, համարեա ոչ մի յանցանք մահապարտութեամբ չեն պատժում: Մեծապէս քաղաքակրթված տէրութիւնների մէջ են պատժական օրէնքները՝ որոնք հարուստների ձեռնում լինելով, առաւել և առաւել ճշուում են խեղճերին: Տէրութիւնը, հասակը աւելանալով, կարծես թէ ծերութեան տխուր յատկութիւններն է ստանում. և որովհետեւ մեր ստացուածքը կամ կալուածքը այնչափ առաւել քաղցրանում են մեզ համար, որչափ առաւել շատանում են, այնու համար մեր երկիւղը աւելանում է մեր հարստութիւնը աւերանալու հետ և այս պատճառով, բոլոր սեփականութիւնքը ամեն օր պաշտպանվում են նորանոր հրովարտակներով և շրջապատվում են կախաղաններով, ասպատակներին զարհուրեցնելու համար:

Այս չ'գիտեմ՝ արդեօք մեր պատժական օրէնքների շատութիւնիցն է, թէ՛ մեր ժողովուրդի սպերասանութիւնից որ՝ մի տարուայ դատապարտվածների թիւը մեր երկրի մէջ աւելի է, քան բոլոր Աւրոպայի տէրութիւնների կէսի միջ. դուցէ այդ եր-

կու պատճառներն են փոփոխակի ազգեցութիւն անում: Արբ որ պատժական օրէնքները անորոշակի սահմանված՝ մի և նոյն դատապարտութիւնն են դնում զանազան յանցաւորութեանց, ժողովուրդը՝ զանազանութիւնը չ'տեսնելով, կորցնումէ յանցանքը զանազանելու զգացումը, որ բարոյականութեան պատուար պիտի համարել: Այսպէս օրէնքների բազմապատկութիւնը ծնանումէ նորանոր մոլութիւններ և մոլութիւնները ծնանումեն նորանոր պատիժներ:

Հատ ցանկալի կ'լինի որ՝ փոխանակ նոր օրէնքներ հնարելու, միայն յանցանքը պատժելու համար, փոխանակ ընկերութեան կապերը տարածելու մինչ այն աստիճան որ՝ մի անակնկալ ջանքը կարէր նորանց խորտակել, փոխանակ կտրելու, իբրև անօգուտ բան, մի դժբաղդի կեանքը՝ որից դու չէին փորձել որ և է օգուտ ստանալու, փոխանակ վրէժխնդրութիւն գործ ածելու, մինչ հարկաւոր էր աշխատել վարք ուղղելու, շատ ցանկալի կ'լինի, ասումեմ, որ տէրութիւնը փորձէր և օրէնքը ժողովուրդի պաշտպան շինէր, այլ ոչ դահիճ: Այն ժամանակ՝ մենք կ'տեսնէինք որ՝ այն ստեղծուածները՝ որոնց հոգիքը մենք համարում էինք չար և անարգ, սպասում կ'լինէին մի խաղաղարարի ձեռնտուութեան. կտեսնէինք որ՝ այն էակները՝ որոնք դատապարտված են երկարատև տանջանքի բարեբաղդների կասկածանքից թէ՛ մի գուցէ իրանք մի բոպէ անձկութիւն ունենան, կարէին այլ իմն վարչութեան մէջ, տէրութեան զօրութիւնը դառնալ վտանգի ժամանակը. կ'տեսնէինք որ՝ մի և նոյն գէպը ունենալով, մենք ունէինք նմանապէս և մի և նոյն սիրտը և թէ՛ չ'կայ այնպիսի անարգ հոգի՝ որին հանապազօրդ ջանքը չ'կարենայ վերածնել, թէ՛ մի մարդու, յանցանքից զուշացնելու համար, հարկաւոր չէ մեռուցանել և թէ՛ շատ փոքր արիւնը բաւական է մեր ապահովութիւնը պաշտպանելու համար:

## ԳԼՈՒԽ 28.

Բաղդատորութիւնը կամ ապարդիութիւնը այս աշխարհում հետեւանք են առաւել մեր խոհեմութեան ։ քան առաքինութեան ։

Տասն և հինգ օրից աւելի էր արդէն որ՝ ևս բանդումն էի և իմ քաղցրիկ Օլիվիան դեռ ևս ինձ այցելութիւն չէր արել ։ և որովհետեւ շատ ուշանում էր իմ նորան տեսնելը, ևս յայտնեցի կնոջս իմ ցանկութիւնը և միւս օրը առաւօտուն խեղճ աղջիկս մտաւ իմ սենեակը, թեք ընկած իւր քրոջ կոնին։ ‘Նորա կերպարանքի փոփոխութիւնը ինձ զարմացրուց ։ զեղեցկութեան անթիւ վայելչազարդութիւնքը, որոնցով նա կրբեմն ոգևորված էր, ամենեւին անհետացել էին, մահի բազուկը ծանրացած էր երևում նորա գծազրութիւնները վերայ ։ նորա քունքը խորացած էին, ճակատը նսնմացած, և մի կապարագոյն դեղնութիւն ծածկել էր նորա թուշերը ։

Շատ ուրախ եմ որ՝ քեզ տեսնումեմ, իմ սիրասուն, աւսեցի ևս, բայց ինչո՞ւ ևս այդպէս վհատված, Օլիվիա։ Ենտարակոյս եմ, սիրելի, որ դու սիրումես քո ծերունի հօրը և չես թող տալ տառապանքին մաշել քո կեանքը՝ որ ևս հաւասար եմ համարում իմ կեանքին ։ խրախուսվեր, որդեակ, դուցէ՛ կարենք դեռ ևս աւելի օրեր տեսնել ։

— ‘Վուք միշտ իմ համար չափազանց բարի էր եղել, հնչրիկ, պատասխանեց դուստրս, բայց՝ ևս չկարեմ այլ ևս հազորդ լինել ձեր խոստացած երջանկութեան և այդ միտքը սաստկացնում է իմ վիշտը։ Կնձ տիրել է մի իրաւացի կասկած թէ՛ այս աշխարհում չկայ իմ համար ուրախութիւն և ևս փախաբումեմ դուրս գնալ այն տեղից, ուր միայն չարչարանք էի գտել։ Բայց յիշաւի,

հայրիկ, ես կցանկանայի որ դուք յօժարէիք մի փորձ փորձել թօռնհիլի մօտ, գուցէ նա ի դուժ կ'շարժէր դէպի ձեզ, և այդ մի թեթևութիւն կ'լինէր իմ համար, յառաջ քան իմ մեռանիլը:

— Ոչ երբէք, որդի, ասեցի ես. ի՞նչպէս եմ կարող անարգանալ մինչ այն աստիճան որ՝ իմ դասերը անպատուացած ճանաչեմ. թէ և բոլոր աշխարհը քո յանցանքի համար քեզ արհա-համարհէր, ես իրաւունք ունեմ այդ յանցանքը առաւել դիւրահաւանութիւն համարել, քան ապականութիւն: Արքան և խաւարչտին երեւի քեզ այդ բանդը, այնու ամենայնիւ ես չարաբազդ չեմ նորա մէջ. ստոյգ զիտացիր, մինչ դեռ կրկնային օրհնութիւնը պահպանումէ իմ համար իմ երկապին, երբէք այդ մարդը իմ հաճութիւնը չի ստանալ դէպի այն ամուսնութիւնը՝ որ քո վերջին հարուածն է լինելու:

Դասերս հրաժարվելուց յետոյ, իմ զերութեան ընկերը՝ որ մեր խօսակցութիւնը լսել էր, բաւական խելօք յանդիմանութիւններ արեց ինձ իմ յամառութեան մասին, իբր թէ ես ի զուր էի մերժում որ և է փորձը՝ որ կարէր ինձ ազատութիւն տալ. նա ասեց թէ՛ մնացեալ ընտանիքս չ'պիտի զոհվէին մի զաւակիս հանդստութեանը, այն զաւակիս՝ որ ինձ վերաւորել էր: Աւել թէ՛ իրաւացի՞ էր արդեօք արդեկք լինել մի մարդու և մի կնոջ միաւորութեան, ինչպէս ես էի անում, զանալով իմ հաճութիւնը դէպի այդ ամուսնութիւնը՝ որ կարէի զժբազդացնել, այլ ոչ խափանել:

— Պարոն, ասեցի ես, դուք չէք ճանաչում այն մարդուն՝ որ մեզ հարստահարումէ. ես համոզված եմ որ՝ ոչինչ հնազանդութիւն մի ժամ ազատութիւն չէր բերելու իմ համար: Անցեալ տարի չէր որ՝ նորա պարտապաններից մինը քաղցու մեռաւ այստեղ: Ի՞սոյց թէ և իմ հնազանդութիւնը և յօժարութիւնը բաւական լինէին այս մթին և նեղ սենեակը փոխելու դէպի մի հոյակապ բնակարան, ես նորան չեմ տալ ոչ մինը և ոչ միւսը, որովհետեւ իմ մէջ մրմնջումէ մի բան, իբր թէ՛ այդ կ'նշանակէր ընդունել նորա շնութիւնը: Մինչդեռ իմ դուստրը կենումէ թօռնհիլի ոչ մի այլ ամուսնութիւնը չ'կարէ իմ աչքում օրինաւոր երևել: Իսկ եթէ, նա չ'լինէր, յիրաւի ես ամենաչար մարդիկերբից

մինը կ'լինէի, եթէ իմ վրէժխնդրութեան համար խափանէի երկու միմեանց սիրելի անձանց միաւորութիւնը: Ա՛հ, պարոն, որքան և արհամարհելի է նա, այնու ամենայնիւ ևս կ'ցանկանայի զեռ ևս նորա ամուսնութիւնը, գոնէ նորա անկարգութեանց զժնդակ հետեանքը խափանելու համար, բայց այժմ, ո՛չ ապաքէն անողորմ հայրերից չարագոյնը կ'լինէի, եթէ բանդից խուսափելու համար, ստորադրէի այն վճիռը՝ որ կ'կրկնու է իմ դստեր անպատուութիւնը և նորան գերեզման է իջնցնելու, կամ չարչարանքից ազատվելու համար, հազարաւոր վեշտերով տանջէի իմ երեխայի սիրտը»:

Աս համաձայն էր այս խօսքերի ճշմարտութեան հետ, բայց չզգուշացաւ ինձ ասելու թէ՛ աղջկաս կեանքը այնքան նուազել էր որ՝ ինձ երկար չէր պահելու բանդում: Կծէ և դուք, շարունակեց նա, հրժարվումէք շնորհ ցուցանել կղբօրորդուն, յոյս ունեմ հակառակել բոլոր այդ գործը առաջադրելու նորա հօրեղբօրը՝ որ ճշմարտասիրութեան և բարութեան կողմանէ մեծ համարումն ունի բոլոր տէրութեան մէջ: Աս խորհուրդ եմ տալիս ձեզ փոստայով մի նամակ ուղղել զէպի նա, և պատմել նորա կղբօրորդւոյ չար գնացքը. կեանքս զբաւ եմ գնում որ՝ երեք օրից յիս դուք պատասխան կստանաք»:

Աս շնորհակալ եղաց այդ խորհուրդի համար և պարտաւոր համարեցի ինձ իսկոյն կատարել. բայց գրելու թուղթ չ'ունէի և զժբողգարար ինչ փող որ ունէինք, առաւօտուն ծախս կնք արել ուտելքը առնելու: Դենկինսօնը թուղթը բերեց:

Հետեւեալ երեք օրը ևս անցուցի սաստիկ անձկութեան մէջ, ինքս ինձ մաշելով զանազան կարծիքներով իմ նամակի ընդունելութեան մասին: Ահնա կրկնապատկեց իւր թախանձանքը որ ինձ յօժարեցնէ ընդունել բոլոր պայմանները, միայն թէ՛ բանդարկութիւնից դուրս գայինք: Հետզհետէ անդեկութիւն էի ըստանում թէ՛ խեղճ դուստրս սաստիկ արագութեամբ իւր մահին էր մօտենում: Արրորդ և չորրորդ օրը անցան առանց իմ նամակի պատասխանին բերելու: Մի օտարի գանդատը սիրելի կղբօրորդւոյ զէմ զժուար է ընդունվում: Այդ յոյսը, բոլոր միւսների պէս չէք դարձաւ: Իմ հողին զեռ ևս հաստատ էր, թէ և անդործութիւնը և վառ օդը սկսել էին յայտնապէս փոփոխել իմ առող-

Չութիւնը և այն բազուկս՝ որ կրակից վնասվել էր, վատանումէր: Բայց և այսպէս մինչ ևս յարդէ վերայ ընկած էի, երեսներս իմ մօտ նստած, կարդումէին իմ համար փոփոխարար կամ լուսնէին իմ խրատները և լաց էին լինում: Օլիվիայի կարողութիւնը աւելի շուտով էր սպառում, քան իմը: Ամեն մի լուրը նորա մասին սաստկացնումէր իմ կասկածը և իմ ցաւը: Հինգերորդ օրը, իմ նամակը Սիր Ալիլիամ Թօնհիլին ուղարկելից յետոյ, ինձ խնցրին թէ՛ դուստրս արդէն խօսելու կարողութիւնը կորուսել էր: Այն ժամանակ միայն հասկացայ խիստպէս բանդարկութեան ազէտքը: Իմ սիրտը սլանումէր դէպի կիսամեռ դատերս անկողնւքը, նորան մխիթարելու, նորան կազդուրելու, նորանից իւր վերջին կամքը ընդունելու և նորա հոգին դէպի երկինք ասաջնորդելու: Արկին լուր տուին ինձ թէ՛ ոգևժարք է և ևս զրկուած էի նորա մօտ արտասուելու օխուր մխիթարութիւնից: Փոքր ինչ յետոյ, իմ բանդարկութեանս ընկերը ներս մտաւ: Աս ինձ ասեց որ՝ զինվիմ համբերութեամբ և Աստուծոյ կամացը հպատակութեամբ դուստրս արդէն մեռել էր:

Միւս օրը առաւօտուն նա կրկին եկաւ և ինձ գտաւ երկու փոքրիկներին հետ, որոնք կատարեալ անմեղութեամբ հեռուումէին ինձ զբաղեցնել, նորանք ուղումէին կարգել, պաղատումէին ինձ չափաւորել իմ կակիծը, ասելով թէ՛ ևս շատ ծեր էի և չպիտէր արտասուէի: «Ա՛յ ապաքէն մեր քոյր Ալիլին այժմ հրեշտակ է, ասեց մեծը, ուրեմն ինչո՞ւ էք դուք այդքան արտմուռ: Այս շատ կցանկայի հրեշտակ լինել և այս դժնդակ սննեակից դուրս գալ, կի՞ն հայրիկս իմ հետ գար. — Այո՛, աւելորուց երկու քերովէներից փոքրագոյնը, երկինքը, ուր իմ քոյրս է, առաւել զեղեցիկ է, քան այս բանդը. այնտեղ միայն բարի մարդիկ կան, մինչ այստեղ ամենքը սաստիկ ամբարիշտ են»:

Ենկնանօնը կրկնեց նորանց անմեղ թոթովանքը: Արովհետեւ ևս արդէն կորուսել էի իմ դուստրը, հարկ էր ինձ, ասումէր նա, զգօնութեամբ մտածել իմ մնացեալ ընտանեաց մասին և ջանադիր լինել խնայելու իմ կեանքը՝ որ օրէ օր աւելի նուազումէր պիտոյքի և առողջարար օրի պակասութիւնից: Այս պարտաւոր էի զօհել իմ ամբարտաւանութիւնը և քէնը նորանց բարեկեցութեան համար, որոնց միակ պաշտպանն էի. բանականութիւնը

հաւասարապէս պարտաւորումէին ինձ փորձել որ և է հաշտակ-  
ցութիւն իմ թշնամու հետ:

«Փառք Աստուծոյ որ՝ պատասխանեցի ես, իմ մէջ չ'կայ  
այլ ևս ամբարտաւանութիւն: Այս իմ սեփական սիրտը կ'արհա-  
մարհէի, եթէ գտնէի նորա մէջ մի կայծ բարկութեան կամ ատե-  
լութեան: Ընդ հակառակն՝ որովհետեւ իմ հալածիչը իմ թե-  
մականներէն է, ես ցանկանումեմ և յուսով եմ նորա փրկված  
հոգին մի օր յանդիման կայուցանել Մշտնջենաւորի ասունին:  
Չէ՛, պարոն, ես ամենեւին քէն չ'ունեմ և թէպէտ այդ մարդը  
ինձնից յափշտակել է այն բանը՝ որ բոլոր գանձելից թանգազին  
էր իմ համար, թէպէտ նա իմ հոգին չարչարել է (որովհետեւ ես  
տանջվումեմ կարողութիւնիցս վեր), այնու ամենայնիւ, ընկեր,  
իմ մէջ չ'կայ վրէժխնդրութեան և մի փոքր մնացորդ: Այս այժմ  
պատրաստ եմ հաւանել նորա ամուսնութեանը և եթէ այդ հը-  
նազանդութեան յայտարարութիւնը կարէ նորան հաճելի լինել,  
թող իմանայ որ՝ ես ինայումեմ, եթէ որ և է մնաս եմ հասու-  
ցել նորան:

Պ. Ժեննիխսօնը գրիչ վեր առեց և գրեց իմ հնազանդու-  
թիւնը համարեա այնպէս, որպէս ես ասել էի՝ ես ստորագրեցի և  
իմ որդին գնաց այդ նամակը տանելու Պ. Թօռնհիլին՝ որ այն  
ժամանակ իւր ապարանքումն էր: Այլ ժամից յետոյ նա վերա-  
դարձաւ մի բերանացի պատասխանի բերանով: Նորա ժպիտը և  
կասկածոտ ծառաները թոյլ չէին տուել ներկայանալու երկրա-  
տիրոջը՝ որին միայն զխաղածով էր տեսել, մինչ նա դուրս եկած  
է եղել մի դործի համար, անտարակոյս մի կարգադրութիւն անե-  
լու իւր ամուսնութեան համար, որ երկը օրից յետ կատարվելու  
էր: Որդիս ամենայն խոնարհութեամբ առաջ էր գնացել և իմ  
նամակը մատուցել էր Պ. Թօռնհիլին՝ որ կարգալից յետոյ ասել  
էր թէ՛՝ այդ թողութեան ինդրուածքը արդէն ուշացել էին և հե-  
տեւարար անօգուտ էին, թէ՛՝ նորան յայանի է իմ գնացքը նորա  
հօրեղբոր մօտ, որ իմ խնդիրը ընդունել է այնպիսի արհամար-  
հանօք, որպիսուն նա արժանի էր. իսկ իմ նոր բողոքը նորան վե-  
րաբերելի չէր, այլ պիտէր ուղղել դէպի նորա գործակալը: Յետոյ  
ասել էր թէ՛՝ որովհետեւ նա շատ լաւ կարծիք ունի երկու ջահիլ

աղջկերանցս զգծնութեան մասին, նորանց բարեխօսութիւնը աւաւել հաճոյ կ'լինէր նորան:

— Ահա, Պարոն, գոչեցի ես, դուք այժմ յայտնապէս տեսնումէք այն մարդու բարքը, որ ինձ ջախջախումէ: «Նա կարէ կատակախօս և անողորմ լինել, բայց ոչ լկել ինձ, ինչպէս ինքը ուզումէ: Եւստով կ'լինիմ ազատ այդ բանդարկութիւնից. ես քայլ առ քայլ գնումեմ դէպի այն կայանքը՝ որ ինձ այնքան ճանճանչազարդ է երևում, որքան մօտենումեմ նորան: Այս հեռանկատ տեսքը թեթեւացնումէ իմ ցաւը և թէ և ինձնից յետ թողնելու եմ անօգնական որբերի խումբը, նորանք չեն մնալ բոլորովին լքված: Վուցէ՛ դեռ ևս մի բարեկամ, նորանց դժբաղդ հօր սիրոյ համար, կ'զայ նորանց օգնելու կամ մի քանի մարդասէր հոգիք կ'թեթեւացնեն նորանց վիճակը մեր երկնաւոր և օր սիրոյ համար:

Մինչ դեռ ես խօսումէի, կ'ինս՝ որին այս երեկոյ չէի տեսել, ներս մտաւ յուսահատված դէմքով և սնտոի ջանք անելով մի քանի խօսք ասելու: «Վ՞նչ է այդ, իմ սիրասուն, գոչեցի ես, մի՞թէ դուք ուզումէք ձեր թախծանօք բազմապատկել իմ թախծանքը: Աթէ հնազանդութիւնը չ'կարողացաւ զինաթափ անել մեր անդուծ բռնակալին, եթէ նա ինձ դատապարտել է մեռնել այս թշուառութեան տեղում, եթէ մենք կորցրինք արդէն մեր սիրանիշ աղջկան, ոչ ապաքէն իմ մահից յետոյ, դուք դեռ ևս մխիթարութիւն էք ունենայու միւս երեխերքից: Նսկապէս ճըշմարիտ է որ՝ մենք կորցրինք մեր ամենագեղեցիկ աղջկան, ասեց կ'ինս: Իմ Սոփիան, իմ բարեսիրտ և քաղցրիկ Սոփիան մեզնից յափշտակված է. չարագործները նորան տարել են:

— Ի՞նչպէս, ափիկին, գոչեց Ժենկինսօնը. օրիորդ Սոփիաի՞ն են տարել. մի՞թէ կարելի բան է այդ:

Վինս մնաց ակնապիշ կանգնած և պատասխանեց միայն արտասուքի հեղիլ թափելով՝ բայց բանդարկեալներէից մինի կ'ինը՝ որ նորահեռ ներս էր մտել, մեզ պատմեց այդ բանի մի քանի մանրամասնութիւնքը: «Նա ասեց թէ՛ մինչդեռ իմ աղջկիլը, կ'ինս և նա ինքը ման կ'ին գալնս գեղից մօտ ճամբում, մի փոստայի կառք երկու ձի լծած, ուղիղ մօտեցաւ նորանց և խկոյն կանգնեց. մի մարդ լաւ հագնված, բայց թփօսնհիլը չէր, ցած եկաւ

կառքից, վեր առեց աղջկաս մէջքից և բռնութեամբ կառքի մէջ նստացրած՝ հրամայեց ձիավարին զնալ. այնպէս որ՝ մի լուպէ անցած՝ նորանք արդէն անտես եղան:

«Այժմ, ազազակեցի ես, լրացաւ իմ տառապանաց չափը. ոչ մի մարդկային էակ, ոչ մի հարուած չեն կարող մի նոր վեշտ աւելցնել իմ հեծութեան վերայ: Այ մինը չմնաց... հրէշը ոչ մինին չ'թողեց ինձ... Արեխասս՝ որ առաւել առաջացած էր իմ սրտի մէջ. նա՛ որ հրեշտակի իմաստութիւն ունէր... Բայց, պաշտպանեցէք այդ կնոջը՝ որ ահա վեր է ընկնում: Այ մինին չըթողեցին ինձ:

— Ո՛հ, իմ հոգեկից, ասեց կինս, դուք առաւել կարօտութիւն ունէք մխիթարութեան, քան թէ ես: Մեր դժբաղդութիւնները յիրաւի մեծ են, բայց ես կարեմ տանել նորանց և առաւել ևս, միայն թէ ձեզ խաղաղ տեսնէի: Թող ինձնից առնեն իմ երեխերքին և ինչ որ ունեմ աշխարհում, միայն թէ դուք մնայիք իմ համար»:

Որդիս ջանք էր անում չափաւորելու մեր կսկիծը. նա մեզ հրամայումէր քաջալիրութիւն ունենալ. նա յոյս ունէր դեռ ևս գոհաբանելու Աստուծուն: «Արդի, ասեցի ես, նայիր և տես՝ մտումէ՞ արդեօք որ և է հնար մեր ուրախութեան համար: Այ ապաքէն յուսոյ վերջին նշոյլը խաւարիկ է: Աթէ հորիզոնը մի որ լուսաւորվելու է, անանց կեանքումն է լինելու այդ»:

— Մերելի հայր, կրկնեց նա, մի՛ խօսեցէք այդպէս, գուցէ՛ դեռ ևս մի բան կարող է ձեզ ժամանակաւոր խաղաղութիւն պատճառել. ևս ահա մի նամակ եմ ստացել Պէտրոզ եղբորիցս:

— Նորանից, որդի, միջահատեցի ես. դիտէ՞ նա արդեօք մեր դժբաղդութիւնները. յուսով եմ որ՝ երկինքը խնայած կըլինի նորան մեր ընտանեաց բոլոր չարչարանք յայտնելուց:

— Այո՛, հայր, նա կատարելապէս գոհ, ուրախ և երջանիկ է. նորա նամակը լաւ լուրեր է տալիս. գնդապետը՝ որի սիրականն է նա, խոստացել է նորան առաւել բարձր աստիճան տալ:

— Արդեօք ստոյգ է այդ, գոչեց կինս, արդեօք անկասկած է որ՝ ոչինչ դժբաղդութիւն չի հանդիպել իմ որդուն:

— Յիրաւի ոչինչ, պատասխանեց Մովսէսը. դուք կ'կարգէք նորա նամակը՝ որ ձեզ կ'ուրախացնէ և եթէ աշխարհում

դեռ ևս մի բան կարէ ձեզ մխիթարել, անշուշտ նորա գրածն է լինելու այդ:

— Բայց՝ կրկնեց մայրը, ստուգապէս նամակը նորանիցն է և իսկապէս երջանիկ է նա:

— Բողբոլովին ստոյգ է այդ, մարդիկ, դուք կ'տեսնէք որ՝ մի օր նա մեր տան շուքը կ'լինի և մեր բնամանկաց պաշտպանը:

— Աւրեմն՝ օրհնեալ է Նախախնամութիւնը, ազազակեց մայրը, որ իմ վերջին նամակը նորան չէ հասել: Այո՛, սիրելի, շարունակեց նա, դառնարով դէպի ինձ. ես խոստովանուամեմ թէ՛ Աստուծոյ բազուկը՝ որ մեր վերայ ծանրացել է այդքան այլ և այլ պարագաների մէջ, այս անգամ մեզ օգնել է: Աս պրկել էի իմ որդուն, բողբոլովին դառնացած բարկութիւնով, և կրգմնեցուցել էի նորան որ՝ եթէ իւր մօր օրհնութիւնը մի համարումն ունի նորա աչքում, եթէ նա ունի տղամարդի սիրտ, իրաւունք գործէ իւր հօր և քրոջ համար և մեր անարգանաց վրէժը առնէ: Բայց՝ փառք Նորան՝ որ ամեն բանը անօրինուակէ, իմ նամակը կորցվել է և ես արդէն հանդիստ եմ:

— Աին, ասեցի ես, դու վատ ես գործել և մի ուրիշ ժամանակ իմ կշտամբանքը առաւել խիստ կ'լինէին: Այո՛, ի՞նչ զարհուրելի անդունդքից ես դու զերծվել. դու քեզ քո որդւոյ հետ կլանել կ'տայիր այն անդունդքին, առանց որ և է փրկութեան յուսարու. յիրաւի Նախախնամութիւնը առաւել ողորմած է եղել դէպի մեզ, քան թէ մենք ինքներս: Նա պահպանել է այդ որդուն հայր և պաշտպան լինելու մեր երկխերքին, իմ մահից յետոյ. Արգիսի արդարութիւն է իմ կողմանէ զանգատել բոլոր մխիթարութենէ զրկված լինելուս համար, մինչ ահա ես տեղեկանումեմ թէ՛ նա բարերարդ է, մեր տառապանքը չ'գիտէ, և կարէ դեռ ևս յեցուկ լինել իւր մօրը նորա այրիութեան մէջ և պաշտպանել իւր եղբայրներին և քուրերին. բայց ո՞ր են նորա քուրերը. աւանդ, նա քուրեր չունի, նորանք մեռել են, գնացել են, ամենքին ինձնից տարել են և ես ահա՛ կոր ի զլուխ կործանված եմ:

— Այր, միջահատեց որդիս, թող տուր ինձ կարգել այդ նամակը, նա ձեզ կ'խաղաղացնէ, ես հաւաստի եմ. սրանից յետոյ նա բարձր ձայնով կարգեց հետեւեալ:

«Մեծարոյ հայր իմ,

«Այս ինձ թաքցնումեմ մի քանի բոսիկ այն հաճոյական պարագաներից՝ որոնք ինձ շրջապատումեն, մի յատուկ նպատակով որ՝ իմ երեւակայութեան մէջ, անցանեմ դէպի այն առարկաները՝ որոնք ինձ առաւել հաճելի են, այսինքն՝ դէպի մեր փոքրիկ և սիրելի գերդաստանը. իմ աչքի առաջն են բերում ամենասիրելի խումբը՝ որ խաղաղ բաւականութեամբ ականջ է դնում իմ ամեն մի տողին. բերկրութեամբ եմ նկատում այն դէմքերը՝ որոնց ոչ ամբարտաւանութիւնը և ոչ վիշտը բնաւ չեն թարշամեցրել. բայց՝ որքան խաղաղ լինէին արդարութիւնքը ի ներքուստ, ես հաւատալի եմ թէ պիտի առաւելացնեմ նորանց, յայանելով իմ կատարեալ բաւականութիւնը արդէ վիճակովս և իմ ամենայն կերպիւ բարեբաղդութիւնը:

«Մեր գունդը երկրորդ հրաման ստացաւ և այլ ևս չի հրաժարվելու Անգլիայից: Պնդապետը՝ որ ինձ իւր բարեկամների կարգն է ընդունել, տանում է ինձ պատուաւոր ընկերութիւնների մէջ և ուր որ միանգամ այցելութիւն եմ անում, այնուհետեւ ինձ ընդունում են առաւել և առաւել մեծարանօք: Արեւի երեկոյին ես պար եկի օրիորդ Վ...ի հետ և եթէ ինձ կարելի լինէր մոռանալ... դուք զիտէք ումբ... Պուրջէ՛ իմ ուշադրութիւնը դէպի այդ օրիորդը բարեբաղդ համարէի. բայց իմ ճակատագիրս է որ՝ պիտի մտքումս պահեմ ուրիշներին, մինչ իմ բացակայ բարեկամներին մեծ մասը ինձ մոռանում է: Չիցէ՛ թէ դուք ևս սորանց մէջ էք, սիրելի հայր, որովհետեւ շատ ժամանակ է արդէն որ՝ փափաքումեմ տանից մի լուր ստանալ և միշտ ի դուր: Օլիվիան և Սոփիան նմանապէս խոստացել էին ինձ գրել. կարծես թէ սորանք յիշողութիւնը կորուսել են. ասեցէք նորանց թէ՛ հոյակապ ապեւրախաներ են նորանք և թէ՛ ես կատաղած եմ նորանց դէմ: Վայց չ'գիտեմ ինչպէս բան է որ՝ այն ինչ ես ուզումեմ որոտալ և աղմուկ բարձրացնել, սիրտս սկսում է խանդաղատովիլ և քաղցր յուզմունքով լցվել. ուրեմն՝ ասեցէք նորանց թէ՛ ամեն բանից յետոյ, ես նորանց սիրումեմ քնքշութեամբ և դուք ապահով եղէք որ միշտ մնալու եմ ձեր հնազանդ որդի»:

«Մեր բոլոր դժբաղդութեանց մէջ, աղաղակեցի ես, որքան

գոհութիւն ունենք մատուցանելու Աստուծուն որ՝ մեր բնասնութեան մի անդամը գոնէ ազատ է մեր կրած չարչարանքից. Աստուած պահէ նորան և այնպիսի երջանկութեան հասուցանէ որ՝ մի ժամանակ պաշտօնուն լինի իւր մօրը և այս երկու սնամեղներին՝ որոնց միակ ժառանգութիւն եմ թողնում նորան: Միայն թէ՛ կարենար նա զգուշութեամբ պահպանել նորանց հոգին կարօտութեան փորձութիւններէից և առաջնորդել նորանց պատուի շաւիղով:

Մինչ ևս վերջացնումէի այդ խօսքերը, մի խոփայոյզ աղմուկ հասաւ մեր ականջը. փոքր ինչ դադարեց և յետոյ շղթաների զնկզնեոյ էր լսվում այն անցքում՝ որից մուտք կար դէպի իմ սենեակը: Բանդապահը ներս մտաւ մի մարդու հետ՝ որ բուրովին արինաթաթախ էր և ծանր շղթաներով կապված: Խողճահարված նայեցի ևս այդ դժբաղդին՝ որ առաջ էր դալիս և երեակայէք թէ՛ ի՞նչ զարհուրանք տիրեց ինձ, մինչ ճանաչեցի թէ՛ այդ դժբաղդը իմ սեփական որդին էր:

— Գէորդ, Գէորդ, քեզ եմ արդեօք տեսնում վերաւոր և շղթայակապ, այս է քո բարեբաղդութիւնը, այսպէս ևս վերադառնում մեզ մօտ. ո՛հ, քո դէմքը իմ ալիքը կտորումէ. ինչո՞ւ չեմ կարում մեռնել:

— Ո՛ւր է քո քաջասրտութիւնը, հայր, պատասխանեց որդիս քաջակազմ ձայնով. ևս պիտի կրեմ իմ պատիժը, օրէնքը պահանջումէ իմ կեանքը, — թող վեր առնի: Այժմ ևս կորցրել եմ ներողութեան որ և է յոյսը, ուրախ եմ գոնէ որ՝ սպանութիւն չ'գործեցի:

Մի բուպէ ևս լուռ մնացի, կամելով զսպել իմ կիբքերը, բայց ջանքը սպանումէր ինձ: «Այ՛ իմ որդի, ազազակեցի ևս, իմ սիրտը արիւնով է լցվում, քեզ այսպէս տեսնելով և ոչինչ չ'կարելով անել քեզ համար: Աս քեզ կարծումէի փառաւորված, ազաչումէի Աստուծուն քո ազահովութեան համար, և ահա՛ քեզ տեսնումեմ այսպէս շղթաներով կապկապած և վերաւորված: Բայց՝ ջահիլները դեռ ևս բարեբաղդ են մեռնելով, իսկ ևս ծեր, շատ ծեր, ապրել եմ որ՝ այս օրը տեսնեմ, իմ բոլորտիքում զաւակնելիս ժամանակից առաջ մի առ մի կործանվելը տեսնեմ և ինքս այդ աւերածքի մէջ մնամ կենդանի: Ո՛ւր էր թէ բոլոր նգովքը և

անէծքը՝ որոնք երբ և իցէ մի հոգի կործանել են, անձրևի պէս թափվելին իմ զաւակներին սպանողն վերայ. Աւր էր թէ՛ նա ապրել էր ինչպէս ես...»

— Ապրիլ, հայր, միջահատեց որդիս, մի թոյլ աուր ինձ կարմրել քո պատճառով: Վու մնանումես քո հասակը, քո սուրբ և խաղաղաբեր կոչումը, կանխաւ դրաւումես երկնից արդարութիւնը և կամումես նղովք և անէծք արձակել, որոնք կը դառնան դէպի քո սպիտակացած զլուխը՝ նորան շանթահարկուհամար: Չէ՛, իմ հայր, մտածիր միայն ինձ պատրաստելու այն նախատալից մահի համար, որ շուտով պիտի ընդունեմ. սպառազինիր ինձ յուսով և հաստատութիւնով. տուր ինձ քաջալերութիւն այն դառն բաժակը խմելու, որ իմ համար պատրաստած է:

— Վու չես մեռնիլ, որդի. ես ստոյգ զիտեմ որ՝ քո գործքերից ոչ մինը այդպիսի պատժի արժանաւորութիւն չունի: Իմ Վեորգը չէր կարող այնպիսի յանցանքի տէր լինել, որ խայտառակելու էր նորա նախնիքին:

— Իմ յանցանքը, պատասխանեց որդիս, վախումեմ ասել, այն յանցանքներինն է, որոնք երբէք չեն ներվում: Աչրբ որ ես ըստացայ մօրս նամակը, իսկոյն դուրս եկի գնացի. ես որոշել էի պատժել նենգաւորին՝ որ մեր պատիւը յափշտակել էր. ուղարկեցի նորան մենամարտութեան կոչելու տոմսակ՝ որին նա ինքը չ'պատասխանեց, այլ չորս ծառայ զրկեց որ ինձ տիրեն և վեր առնեն: Այս սաստիկ վերաւորեցի նորան՝ որ ամենից առաջ իմ վերայ յարձակվեցաւ. միւսները ինձ գերի առին: Ահարգը որոշել է իմ դէմ գործ ածել օրէնքի բոլոր խստութիւնը: Ապացուցութիւնքը ակներև են, ես մենամարտութեան եմ կոչել և որովհետեւ առաջին օրինազանցը ես եմ, ուրեմն ներողութիւնից անյոյս եմ: Բայց քանիցս անգամ դու ինձ յորդորել ես դէպի քաջասրտութիւն, դէպի հոգւոյ զօրութիւն: Այժմ քո կարգն է, հայր, սորանց օրինակ լինել իմ համար:

— Ա՛տամ քեզ այդ օրինակը, որդի, ասեցի ես. այժմ ես իմ թեկերը տարածումեմ ի վեր քան այս աշխարհը և նորա բոլոր զուարճութիւնները: Այժմ ես խորտակումեմ այն կապերը՝ որոնք միաւորում էին ինձ երկրի հետ. պատրաստե՛ք մեզ երկուսիս ևս յաւիտենականութեան համար: Այժ, որդի, ես ճանապարհը

բաց կ'անեմ քեզ համար. իմ հոգին կ'առաջնորդէ քո հոգուն իւր վերացմամբ, որովհետեւ մենք միասին թռիչք կ'առնունք: Այս պիտի տեսնուամե՞ն որ՝ դու այս աշխարհում գլխութեան յոյս չունես. ուրեմն պիտի պաղատես Արիւն տեսչութեան ատենին՝ որի առաջն շուտով երևելու ենք: Բայց ազահ չ'լինենք մեր յորդորանքում: Թող մեր դերութեան ընկերները օգուտ քաղին սորանից: Բարի բանդապահ, թոյլ տուէր նորանց ներս մտնել. ես ուզումեմ մի անգամ ես աշխատել նորանց ուղղելու:

Այսպէս խօսելով, ես ջանք արեցի բարձրանալ իմ յարդի վերայից, բայց ոյժս հատաւ եւ միայն կարացի թէք ընկնել դէպի որմը: Բանդարիւնները ժողովիցին իմ խնդրանօք, որովհետեւ սիրումէին լսել իմ խրատները. որդիս եւ նորա մայրը երկու կողմից ինձ պաշտպանումէին. ես նայեցի որ մարդ չէր մնացել զալու եւ սկսեցի հետեւեալ խօսքերը:

ԳԼՈՒԽ 29.

Ապացուցութիւն թէ՛ Նախախնամութիւնք մի օրինակ արդար է բարեբաղդների և դժբաղդների համար: Հաճոյքների և վիշտերի նոյն խոյ ընտելութիւնից յայս յանդիման երևում է որ՝ դժբաղդները իւրեանց շարձարանքի վարձատրութիւն պիտի գտնեն ապագայ կեանքում:

«Իմ բարեկամներ, իմ որդիք, իմ թշուառութեան ընկերներ, երբ որ ևս մտածում եմ թէ՛ բարին և չարը ինչպէս են բաշխւիլ այս աշխարհում, տեսնում եմ որ՝ եթէ մարդկութեանը շատ բան է տուված վայելելու, աւելի ևս տուված է չարչարվելու: Եթէ մենք բոլոր աշխարհը ման գանք, չենք գտնել և ոչ մի մարդ այնքան երջանիկ՝ որ ոչինչ չունենար ցանկալու, իսկ հազարաւոր մարդիկ իւրեանք իւրեանց սպանելով, ապացոյց են տալիս թէ՛ յոյսերը բոլորովին կտրված է: Մորանից երևում է որ՝ բարեբաղդութիւնը կատարեալ չէ այս աշխարհում, իսկ դժբաղդութիւնը անձայր է և անվերջ:

«Ինչո՞ւ համար ենք մենք ուխտված ցաւերի. ինչո՞ւ է որ՝ մեր թշուառութիւնը հարկաւոր է ընդհանուր երջանկութեան համար. ինչո՞ւ է որ՝ ամեն կարգի կատարելութիւնը բղետում է նորա մասների կատարելութիւնից, մինչ ամենամեծ կարգը կարօտութիւն ունի, ոչ միայն այնպիսի մասների՝ որոնք ստորադրված են միւսներին, այլ և որոնք իւրեանք իւրեանց մէջ թերակատար են: Մորանք են ահա այն խնդիրները, որ անկարելի է վճռել և որոնց լուծումը, եթէ յայտնի լինէր, գուցէ անօգուտ կ'լինէր: Նախախնամութիւնը պատշաճ է համարիլ ի դերև հանել մեր քննասիրութիւնը այդ կէտի մասին և բաւականացիլ է մխիթարութեան զանազան պատճառներ տալով մեզ:

«Իւր տղխութեան մէջ, մարդը օգնութիւն է կանչել փիլիսոփայութիւնը և Աստուած՝ տեսնելով սորա տկարութիւնը մեզ մխիթարելու համար, առեւէ մեզ կրօն: Փիլիսոփայութեան մխիթարութիւնները հանձարեղ են, բայց ստայօղ: «Աս մեզ ասումէ թէ՛ կեանքը լեքն է բարութիւններով, միայն թէ մենք կարենայինք վայելել: միւս կողմից թէ՛ եթէ անհրաժեշտ չարչարանք կայ այս աշխարհում, որ մենք պիտի տանենք, մահը շուտով կ'ազատէ մեզ նորանցից: Այսպէս նորա մխիթարութիւնները մինը միւսին կործանումեն, պատճառ որ՝ եթէ կեանքը վայելչութեան ժամանակ է, նորա կարծութիւնը արդէն մի չարիք է և եթէ կեանքը երկարատե է, ուրեմն նորա երկարութիւնը մեր ցաւերն է երկարացնելու: Սորա մէջն է ահա փիլիսոփայութեան տկարութիւնը: Արօնը մի ուրիշ լեզուով է խօսում: Մարդս այս աշխարհում, ասումէ նա, այնու համար է որ՝ մաքրէ իւր հոգին և պատրաստէ նորան աւելի լաւ բնակութեան համար: Արբ որ արդար մարդը թողնումէ իւր մահկանացու դիակը և մաքուր հոգի է դառնում, նորան յայանի է լինում թէ՛ երկնային երջանկութիւնը նորա համար սկսվումէ այս աշխարհում, մինչ դեռ չար մարդը, եղծված կերպարանքով, ապականված մեղքերով, իւր մարմինը զարհուրանօք է թողնում և արդէն զգումէ իւր վերայ երկնային վերէժխնդրութեան ծանրութիւնը: Արօնի շնորհիցն է որ, կեանքի ամեն տեսակ հանգամանքների մէջ, մենք պարտաւոր ենք ճշմարիտ սիրտանք սպասելու: Աթէ մենք բարեբաղդ ենք, ի՞նչ ուրախութիւն է մեզ մտածելը թէ՛ կարումենք յանդիման կացուցանել երկնային երջանկութիւնը: Իսկ եթէ, ընդ հակառակն, մենք չարչարվումենք, մխիթարութիւն չէ՞ արդեօք իմանալը թէ՛ մեզ համար պատրաստած է մի տեղ հանգստանալու: Այսպէս կրօնը ոմանց խոստանումէ բարեբաղդութեան շարունակութիւն, միւսներին չարչարանքի վերջ:

«Ուրան և գթած լինէր կրօնը դէպի բոլոր մարդկութիւնը, բայց դժբաղդների համար նա պահումէ առանձին վարձատրութիւններ. հիւանդները, աղքատները, մերկերը, անպատասպարները, իւրեանց բեռնից ճնշուածները աւելի առատ մասն ունին նուիրական օրէնքի խոստումներից: Մեր կրօնի երկնաւոր հաստիչը ամեն տեղ կոչվումէ դժբաղդների բարեկամ և մեծ տարբերու-

Թիւնով աշխարհի սուտ բարեկամներից առատապէս է բաշխում իւր զգուանքը անօգնականներին: Անխորհուրդ միտքերը պարսաւել են այդ կողմնապահութիւնը, նորանք այստեղ տեսնում են մի նախամեծարանք՝ որ ոչինչ արժանաւորութիւնով չի արդարանում: Բայց նորանք չեն մտածում թէ՛ չկայ այնպիսի իշխանութիւն, ոչ և երկնային, որ յաւիտենական երանութեան խոստումը մի օրինակ զին դնել տար այս աշխարհի բարեբաղդներին: Առաջինների համար յաւիտենականութիւնը փոքր ինչ աւելի բարերարութիւն է, որովհետեւ նա աճեցնում է այն երանութիւնը՝ որ նորանք արդէն վայելում էին: Աջերջինների համար նա երկպառակ զանձ է, պատճառ որ՝ թեթեւացնում է նորանց չարչարանքը այս աշխարհում և ապահովացնում է, կեանքից յետոյ, երկնային ցրնծութիւնով վարձատրութիւնը:

«Ախախտնամութիւնը ուրիշ նկատողութիւններով առաւել ողորմանձ է դէպի աղքատները, քան դէպի հարուստները: Ապագայ կիանքը առաւել ցանկալի ցուցանելով, նա քաղցրացնում է կրքը այս աշխարհից. դժբաղդները շատուց արդէն ընդերացած են զարհուրանքի ամեն տեսիլների հետ: Աշտացած մարդը հանդստութեամբ է անկողնի մէջ ընկնում մեռնելու. առանց ոտացուածքի՝ որ պիտի խնայէր, առանց բարեկամական կապերի՝ որ պիտի խորտակէր և որ դայթակղեցնելու էր նորա հրաժարումը: Այս վերջին բաժանման ժամանակը նա զգում է միայն ոգեվարքի տաղնապը, բայց նա շատ անգամ է կորացել այսպիսի անազորոյն վիշտերի ծանրութիւնից, որովհետեւ զանազան չարչարանքներ կրած լինելով, նորա արգահատական բնութիւնը անզգայութեամբ մեղմացնում է ամեն մի հարուածը՝ որ մահը մեղ տալիս է:

Ախախտնամութիւնը դժբաղդներին, բարեբաղդների բազդատութեամբ առաւելութիւններ է տուել այս կեանքում: նախ որ՝ մահը նորանց համար այնքան սարսափելի չէ և երկրորդ՝ երկնից վայելութեան երջանկութիւնը նորանց համար առանձին պերճութիւն ունի իբրև նորանց առաջին վիճակի հակառակութիւն, և այս պերճութիւնը, սիրելիք, արհամարհելու բան չէ. նա աղքատի ուրախութիւններից մինն է, ինչպէս առակից երևում է: Ազգարոտը թէ՛ և արդէն երկիրքումն էր և բոլոր վայելչութիւնները ճաշակում էր, բայց՝ իբրև նորա երջանկութեան յա-

ւելուած, ասած է թէ՛ նա երբեք չարչարանք էր կրել և այժմ մխիթարվումէ. նորան ծանօթ է եղել թշուառութիւնը, այժմ խմանումէ թէ՛ ի՞նչ է ուրախութիւնը:

Այսպէս, սիրելիք, դուք տեսնումէք թէ՛ ինչ որ կրօնն է գործում, փիլիսոփայութիւնը երբէք չի կարացել գործել: Արօնը մեզ ցոյց է տալիս թէ՛ երկինքը հաւասարապէս արդար է բարեբաղդներին և դժբաղդներին առաջ և մարդկային վայելչութիւնները շարել է զուգակշռութեամբ: Արօնը հարուստին և աղքատին տալիս է նոյն հանդերձեալ երանութիւնը, նոյն յոյսը և նոյն յուսալու իրաւունքը: Այժմ հարուստները առանձին շնորհ ունին այս աշխարհի բարիքը վայելելու, աղքատները, յաւիտենական երանութեան ծոցում, անսպառ սփոփանք ունին, խմացած լինելով թէ՛ ի՞նչ է դժբաղդութիւնը և եթէ այս առաւելութիւնը փոքր բան է երևում, գոնէ նա մշտնջենաւոր է և իւր տււողութիւնով փոխարինումէ երկրի մեծամեծների բաղդի սաստկութիւնը:

«Այս են աղքատների յատուկ մխիթարութիւնները՝ որոնք և բարձրացնում են նորանց ի վեր քան միւս մարդիկը, թէ և այլ և այլ հանգամանաց մէջ, նորանք դրված են վերջին կարգում: Որոնք կամում են տեղեկանալ աղքատի թշուառութիւններին, պիտի նորա կեանքով ապրեն և նորա քաշածը քաշեն: Պարծել ժամանակաւոր յաջողութիւններով՝ որ նա վայելումէ, կ'նշանակէ կրկնել այն բանը՝ որին ոչ ոք չի հաւատում և որ ոչ ոք չի գործածում: Այն մարդիկ՝ որոնք իւրեանց պիտոյքը ունեն, աղքատ չեն, բայց որոնք այդ պիտոյքի պակասութիւն ունեն, իսկապէս թշուառ են: Այո՛, սիրելիք, մեր վիճակը չարչարանքն է: Բորբոքված երեւակայութեան ունայն ջանքը չեն կարող խաբել բնութեան կարօտութիւններին, չեն կարող կենդանարար քաղցրութիւն տալ մի բանդի խոնաւ գորրչկեքին կամ խաղաղացնել խորտակված սրտի բարախումբը: Փիլիսոփան, իւր փափուկ անկողինքի մէջ ձգված, մեզ կասէ թէ՛ այս բաները յաղթելու բաներ են: Բայց՝ աւաղ, ջանքը՝ որ մենք անումենք սորանց յաղթելու համար, մի առաւել մեծ ցաւ է: Մահը ոչինչ բան է և ամեն մարդ նորա դէմ կարէ կանգնել, բայց տանջանքն է ստակալի փորձ՝ որ շատերը չեն կարում տանել:

«Մի իմ բարեկամներ, երկնային խոստումները առաւել մեզ համար պիտի լինեն քաղցր, պատճառ որ՝ եթէ մենք այս աշխարհում էինք գտնելու մեր միակ վարձատրութիւնը, յիրաւի մենք կ'լինէինք ամենաթշուառ արարածք: Այս նայումեմ այս սեւացած պատերին՝ որոնք շինած են, որչափ մեզ զարհուրանօք կաշկանդելու համար, նոյնչափ և մեզ բանդարկելու համար. այս լուսի նշոյլին՝ որ գերեզմանական սոսկումն է ազդում մեզ. այս շղթաներին՝ որոնցով բռնակալութիւնը մեզ ճնշում է, կամ որին կարելի է յանցանքն է կարեւորութիւն տուել: Այս տեսնումեմ ձեր ծիրված դէմքերը, լսումեմ ձեր հեծութիւնքը: Մի իմ բարեկամներ, ի՛նչ ուրախութիւն է փոխանակել այդ ամենը երկնքի հետ, անձանօթ աշխարհներ անցանել մաքրի արագութեամբ, ազատ, ինչպէս օդը, զբօսնուլ յաւիտենական երանութեան ճառագայթների մէջ, երգել մշտնջենաւոր օրհնութիւն և գովութիւն, առանց մի իշխողի՝ որի սպառնալիքը կամ թշնամանքը կարեկնք լսել, միշտ մի վերնային բարութեան առաջը, որոյ տեսիլը սքանչելի է: Արբ որ ես այս բաների վերայ մտածումեմ, մահը ինձ երեւում է իբրև մի հրեշտակ՝ որ աւետելու է ինձ զուարթարար նորութիւններ. նորա սուր խայթոցը դառնում է իմ յոյս և յեցուկ: Ի՛նչ կայ այս կեանքում, որ պիտէր ինայելի. ո՞րն են աշխարհի այն մեծաշուք փառաւորութիւնները՝ որոնց քաղցի չէի տալ, երկնքի փառաւորութիւնը տեսնելով: Թագաւորները պալատների խորքից, հառաչում են իւրեանց բարութիւնների վերայ, իսկ մենք, մեր թշուառութեան խորքից, շնչում ենք դէպի երկնք մեր այրիչ բաղձանքների բոլոր ջերմութիւնը:

«Ի՛սկ այց այս երանութիւններին արդեօք կ'լինե՞նք մենք մասնակից: Այո՛, եթէ մենք կ'զրգովինք նորանց ստանալու համար: Մենք մի մխիթարութիւն ունինք, մտածելով թէ՛ մեր գերութիւնը ազատում է մեզ բազմատեսակ փորձութիւններից՝ որոնք կ'արգելէին մեր ընթացքը: Զմայ աննք ստանալու այդ երանութիւնները և նորանք անշուշտ մեր սեփականութիւնը կ'զառնան շատ շուտ, որովհետև՝ եթէ մենք յետս նայինք, մեր անցկացած կեանքը մեզ կ'երևի իբրև մի կէտ ժամանակի տարածութեան մէջ, իսկ որ ինչ մնում է մեզ ապրելու, աւելի ևս շուտով կ'անցնի: Որքան աւելի մենք ծերանում ենք, այնքան աւելի մեր օրերը կար-

ճացած են երևում և ժամանակի հետ ընտանեցած, մենք կորց-  
 նումենք նորա տեղողութեան զգացողութիւնքը: Վաջարտու-  
 թիւն ստանանք, որովհետեւ կատարածին ենք մօտնուում, շուտով  
 վեր կ'քցենք այն ծանր բեռը, որ երկինքը դրել է մեր վերայ և թէ-  
 պէտ մահը, դժբաղդների միակ բարեկամը, պատումէ թեթեա-  
 միտ ճամբորդին և նորան յայտնի լինելով, փախչումէ նորա առա-  
 ջև, ինչպէս նորա հորիզոնը, բայց կ'զայ ժամանակը, երբ մեր աշ-  
 խատուութիւնը կ'վերջանայ, երբ աշխարհի բազում անոնները և մե-  
 ծամեծները ոտի տակ չեն քցել մեզ, երբ մենք շրջապատված կը-  
 լինենք բարեկամներէ, նորանցմէ՝ որոնք արժանի են մեզմէ սիրված  
 լինելու, երբ մեր բազմին խօսք չի հասնել և իբր լիութիւն մեր  
 երանութեան, այդ բազմը կ'լինի անասման և անսպառ:

ԳԼՈՒԽ 30.

Երկինքը սկսուե պայծառանալ: Եթէ մենք շինք խնարհում բաղդի առաջև, բաղդը  
 Կ'խնարհի մեր առաջև:

Արք որ ես վերջացրել էի և իմ ունկնդիրքը հեռացել էին, բանդապահ՝ որ բաւական մարդասէր էր իւր պաշտօնի համար, ինձ ասեց թէ՛ յոյս ունի որ ես չեմ նեղանալ նորա վերայ. նա ստիպված է իւր պարտաւորութիւնից իմ որդուն տանել մի այլ խուց, աւելի ապահովված և թէ՛ Գևորգը թոյլտուութիւն կ'ունենայ ամեն առաւօտ իմ մօտ գալ: Աս շնորհակալ եղայ այդ բարեգթութեան համար և խեղճ որդուս ձեռք սեղմելով, մնաս բարև ասեցի, և զգուշացրի նորան մտքից չ'հանել այն փորձը՝ որ նորան ապաստուէր:

Զգվեցի ես նորէն իմ յարդի վերայ և մինչ որդիքիցս մինք իմ սնարքում նստած՝ կարգումէր իմ համար, ներս մտաւ Ժենկինսօնը և ինձ յայտնեց թէ՛ դատերս մասին լուր ունէր: Մի մարդ նորան տեսել էր, երկու ժամ առաջ, մի օտարականի հետ միասին: Նորանք իջել էին մօտակայ զիւղում փոքր ինչ զովանալու համար և կարծեա թէ դէպի մեր զիւղն էին գալիս: Համարեա նոյն միջոցին բանդապահ՝ եկաւ եռանդագին ուրախութեան դէմքով ինձ ասելու թէ՛ դուստրս գտնվել էր: Մի փոքր անցած՝ Մովսէսը վազեց եկաւ աղաղակելով թէ՛ նորա քոյր Սովիան ցածուսն էր և ահա գալիս էր վեր մեր հին բարեկամ Բուրչելի հետ:

Արջապէս իմ քաղցրիկ դուստրը ներս մտաւ և ուրախութիւնից կարծեա թէ մոլորված՝ ընկաւ իմ ծոցը զմայլելի սիրով: Նորա մօր արտասուքը և լուրթիւնը ցոյց էին տալիս թէ մինչ ո՞ր աստիճան յուզված էր նա:

ԳԼՈՒԽ 30.

Երկինքը սկսում պայծառանալ: Եթէ մեր շներ խնարհում բազրի առաջը, բազրը կ'խնարհի մեր առաջը:

Արբ որ ես վերջացրել էի և իմ ունկնդիրքը հեռացել էին, բանդապահը՝ որ բաւական մարդասէր էր իւր պաշտօնի համար, ինձ ասեց թէ՛ յոյս ունի որ ես չեմ նեղանալ նորա վերայ. նա ստիպված է իւր պարտաւորութիւնից իմ որդուն տանել մի այլ խուց, աւելի ապահովված և թէ՛ Վեորգը թոյլտուութիւն կ'ուսննայ ամեն առաւօտ իմ մօտ գալ: Աս շնորհակալ եղայ այդ բարեզթութեան համար և խեղճ որդուս ձեռք սեղմելով, մնաս բարեասեցի, և զգուշացրի նորան մտքից չ'հանել այն փորձը՝ որ նորան սպասումէր:

Զգվեցի ես նորէն իմ յարդի վերայ և մինչ որդիքիցս մինք իմ սնարքում նստած՝ կարդումէր իմ համար, ներս մտաւ Դենկինսօնը և ինձ յայտնեց թէ՛ դատերս մասին լուր ունէր: Մի մարդ նորան տեսել էր, երկու ժամ առաջ, մի օտարականի հետ միասին: Նորանք իջել էին մօտակայ գիւղում փոքր ինչ զովանալու համար և կարծես թէ՛ դէպի մեր գիւղն էին գալիս: Համարեա նոյն միջոցին բանդապահը եկաւ եռանդազին ուրախութեան դէմքով ինձ ասելու թէ՛ զուստրս գտնվել էր: Մի փոքր անցած՝ Մովսէսը վազեց եկաւ աղաղակելով թէ՛ նորա քոյր Սոփիան ցածուսն էր և ահա գալիս էր վեր մեր հին բարեկամ Վուրչելի հետ:

Ա՛յ երջապէս իմ քաղցրիկ զուստրը ներս մտաւ և ուրախութիւնից կարծես թէ՛ մոլորված՝ ընկաւ իմ ծոցը զմայելելի սիրով: Նորա մօր արտասուքը և լուութիւնը ցոյց էին տալիս թէ՛ մինչ ո՞ր աստիճան յուզված էր նա:

տօրեայ կատակի առարկան էր: Մինչ այնքան մօտացել էինք նուրան որ՝ ձայն կարէր հասնել, կանչեցի նորան իւր անունով, ազաչելով ինձ օգնել: Եւտ անգամ կրկնեցի իմ ազազակը, վերջապէս նա դոչեց դէպի ձիափարը որ կանգնէ, բայց սա բանի տեղ չ'դրեց և աւելի արագ գնաց: Ինձ անհնար երևեց որ՝ Պ. Բուրչելը կարենայ մեզ հասնել, բայց մի բուպէ հազիւ անցած՝ ևս նուրան տեսի ձիանքի հետ հաւասար վազելում: Պաւազանի մի հարուածով գետնի վերայ տարածեց ձիափարին և ձիանքը ինքն ինքեան կանգնեցին. իմ ընկերը կառքից դուրս թռաւ, հայհոյութիւն և սպառնալիք աղաղակելով. նա դուրս հանեց իւր սուրը և հրամայեց Պ. Բուրչելին հրաժարվել, եթէ իւր կեանքը խնայումէր, բայց իմ ազատարարը յարձակվեց նորա վերայ, կտորտեց նորա սուրը և պնդեց նորա հետքից մինչև մի քաւորդ մղոն, թէ և չ'հասաւ նորան: Աս կառքից դուրս էի եկել որ՝ օգնեմ իմ վեհանձն պաշտպանին, բայց նա վերադարձաւ յաղթանակով: Ձիափարը՝ որ ուշի էր դարձել, ուզումէր նոյնպէս փախչել: Պ. Բուրչելը վտանգը իւր վերայ առնելով, հրամայեց նորան վարել կառքը և տանել մեզ մինչև զիւղը: Տեսնելով թէ՛ անհնար էր յամառել, նա հնազանդեց դժկամակութեամբ: Ալ էրբը՝ որ նա ստացել էր, ինձ ծանր էր երևում, որովհետև բոլոր ճամփում ցաւից զանգատումէր, այնպէս որ՝ վերջապէս շարժեց Պ. Բուրչելի ցաւակցութիւնը, որ և իմ խնդրանօք յօժարեցաւ մօտակայ պանդոկում, ուր մենք խջել էինք, մի ուրիշին վեր առնել »:

— Բարև եկիր, որդի, գոչեցի ևս, և դու, վեհանձն ազատարար, հազար անգամ բարև եկիր և օրհնեալ է ձեր դարուստը. մենք ձեզ պաս կ'պահեցնենք, թէ և ուրախութեամբ ենք ձեզ ընդունում: Այժմ Պ. Բուրչել, որովհետև դուք ազատել էք իմ աղջկան, եթէ դուք արժանի վարձատրութիւն էք համարում նուրան մի սյգպիսի երախտեաց, — նա ձերն է: Աթէ դուք յօժար էք կապակցվել մի այնպիսի ազքատ ընտանիքի հետ, որպիսի մերն է, աւէք նորան: Ստացէք նորան, ևս գիտեմ որ՝ դուք նորա սիրտը գրաւել էք նոյնպէս, որպէս և իմ սիրտը: Թոյլ տուէք ինձ, պարոն, ձեզ ասել թէ՛ այդ ընծան՝ որ ևս ձեզ առաջարկումեմ, մեծագին զանձ է: Թէ և յիրաւի շատ անգամ են գովել նորա գեղեցկութիւնը, բայց իմ խօսքը դորա վերայ չէ. իմ ասած զանձի մթերքը նորա մէջն է:

— Այս կարծումներ, պարոն, ասեց Ռուբինը, թէ դուք գիտէք իմ դրութիւնը և իմ անկարութիւնը մի այնպիսի կեանքի համար, որին նա արժանի է:

— Այժմ այդ դժուարութիւնը մի հնար է իմ առաջարկութիւնից խուսափելու, յետ եւ քաշվում: Բայց նորան ստանալու համար, ես չեմ ճանաչում ձեզից աւելի արժանաւոր անձն և եթէ ես կարենայի միլ լեծներ տալ նորան և հազարաւոր պահանջողք նորան խնդրէին ինձից, այնու ամենայնիւ նախամեծարութիւնը կ'ունենար իմ ազնիւ և քաջ բարեկամ Ռուբինը:

Այդ առթիւնը բոլոր այս սասածիս դէմ ինձ երևումէր մի ամօթաբեր մերժում: Առանց որ և է պատասխանի տալու իմ առաջարկութեանը, նա հարցրուց թէ՛ կարելի էր արդեօք մտաւկայ պանդոկից զովացուցիչ բաներ ստանալու և երբ որ ասեցին՝ այո՛, նա հրամայեց ընտիր ճաշ բերել, եթէ հնար էր, շուտով պատրաստել տասներկու շիշ պատուականագոյն դիւին և մի բանի կազդուրեցուցիչ ըմպելիք իմ համար, նա ասումէր թէ՛ այս անգամ ուզումէ մի փոքրիկ անսովորութիւն գործել, որովհետեւ թէ և բանդէ մէջ լինէր, կրբէք այդքան յօժարութիւն չի ունեցել ուրախութիւն անելու: Պանդոկի ծառան խկոյն եկաւ ճաշի պատրաստութիւնը տեսնելու: Բանդապահը՝ որ իւր դեղերանքը երկպատկել էր, մի սեղան փոխ տուեց. զինու շիշերը կարգով շարվեցին և երկու կերակուր բերին մեզ շատ գեղեցիկ պատրաստած:

Իմ դուտորը դեռ ևս ոչինչ չէր իմանում իւր խեղճ եղբոր տխուր վիճակի մասին. ոչ որ մեզից քաջարտութիւն չունէր այդ աղէտալի լուրով ըփոթել նորա ուրախութիւնը: Բայց ես ի զուր կէ փորձում ուրախ երևել. իմ որդու վիճակի զբաղմունքը չէի կարում թաքուցանել. վերջապէս վճռեցի արամութիւն տարածել մեր փոքրիկ խնջոյքի վերայ, պատմելով նորա դժբաղդութիւնը որ՝ նորան թոյլ տան դալ և հաղորդ լինել այդ սփոխմանց ժամին: Երբ որ իմ պատմութիւնից գործված վհատութիւնը փոքր ինչ փարատվեց, ես խնդրեցի իմ բանդարկութեան ընկեր Պ. Ժենկինսօնին նմանապէս թոյլ տալ գալ մեզ մօտ: Բանդապահը հաճութիւն ցոյց տուեց դէպի իմ խնդիրը, մի անսովոր հնազանդութեան դէմքով: Այն ինչ որդուս շղթաների ձայնը լսել եղաւ անցում, քոյրը վազեց նորա առաջ: Պ. Ռուբինը ինձ հարց-

բուց՝ Պէորդ չէ՞ արդեօք նորա անունը և մինչ ես հաստատեցի այդ, նա մնաց լուռ: Այս նկատեցի որ՝ Պէորդը ներս մտած՝ զարմացմամբ և ակնածութեամբ էր նայում Պարոն Բուրջիկին:

— Ա՛հ, որդի, գոչեցի ես, որքան և վատ դրութեան մէջ լինէինք մենք, Նախատնամութիւնը հաճել է փոքր ինչ զաղաւթեցնել մեր ցաւերը: Վո քոյրը դարձել է դէպի մեզ և ահանուրա ազատիչը: Այս ազնիւ մարդուն հմ պարտաւոր դեռ ևս մի դուստր ունենալովս, տուր նորան բարեկամութեան ձեռնդ, նա իրաւունք ունի դէպի մեր խորին երախտադիտութիւնը:

Որդիս, կարծես թէ բոլոր այդ միջոցը, չէր լուծ ինչ որ ես ասումէի և մտումէի անշարժ նոյն ակնածու դրութեան մէջ: «Միւրիւն հղբայր, գոչեց քոյրը, ինչո՞ւ շնորհակալ չես լինում իմ վեհանձն ազատարարից: Ազնուարարոյ մարդիկ պէտք է միմեանց սիրեն»:

Նա շարունակումէր իւր զարմացումը և լութիւնը, մինչև որ մեր հիւրը, տեսնելով վերջապէս որ՝ ճանաչվել է և իւր բարձր ատտիճանի արժանաւորութեամբ՝ որ բնական էր նորան, խնդրեց Պէորդին մօտենալ: Արբէք ես չէի տեսել այնպիսի շքեղութիւն, որպիսի նորա կերպարանքը և նորա բոլոր անձն էր ներկայացնում: Ամենադեղեցիկ տեսարանը աշխարհի, ասումէ մի փիլիսոփայ, բարի մարդն է աղէտքի հետ պատերազմելուս. բայց կայ մի աւելի ևս մեծ տեսարան, երբ բարի մարդը գալիս է այդ աղէտքը թեթեացնելու: Մի միջոց իմ որդուն ղիտկուց յետոյ, ծանրակշիւ դէմքով ասեց նա՝ «ես տեսնումեմ, յանդուգն երիտասարդ, որ ոյն յանցանքը...»

Այստեղ նորան միջահասեց բանդի սպասուորը՝ որ եկաւ յայտնելու թէ՛ մի բարձրատտիճան անձն բազմաթիւ յուղարկաւորներով քաղաք է եկել. նա իւր մեծարանքը մատուցանելով այն ազնուականին՝ որ մեզ հետ է, հարցանումէ՝ երբ կ'բարեհաճի նա ընդունելութեան պատիւ ցուցանել նորան: «Թող սպասէ, գոչեց մեր հիւրը, ես կ'նդունեմ նորան, երբ դիպող ժամ կ'ունենամ»:

Պարձաւ նա կրկին դէպի իմ որդին, «ես տեսնումեմ, պարոն, շարունակեց նա, որ դուք կրկին ձեզ մեղապարտ էք կացուցել այնպիսի յանցանքով՝ որի համար օրէնքի կողմանէ արդար պատիժ է նշանակած: Պուցէ դուք կարծումէք թէ՛ ձեր սեփական կեանքը

արհամարհելը իրաւունք է տալիս ձեզ ուրիշին կեանքից զրկելու . բայց՝ ո՞ւր է զանազանութիւնը մենամարտի և մարդասպանի մէջ, որոնց առաջինը ոչինչ բանի համար վտանդի մէջ է ձգում իւր կեանքը, իսկ միւսը անձնական ապահովութեամբ է հասուցանում իւր հարուածը: Մի՞թէ խաղացողի նենգութիւնը պակասում է, եթէ նա վկայութիւն է բերում թէ՛ իւր արծաթը սեղանի վերայ էր դրել »:

— Ո՛հ, պարոն, դոչեցի ես, ո՞վ և լինէք դուք, խնայեցէք այդ խեղճ և մոլորեալ ստեղծուածին: Աորա գործածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կոյր հնազանդութիւն իւր կուրացած մօր կամացը, որ սաստիկ բարկութեան մէջ նորան հրամայել էր վրէժխնդիր լինել նորա նախատանաց, եթէ չէր մերժում իւր մօր օրհնութիւնը: Ահա այն նամակը՝ որից դուք կ'համոզվէք գրողի անխոհմտութեան մասին և որ կ'նուազեցնէ իմ որդու յանցանքը:

«Աս վեր առեց նամակը և հարեանցօրէն կարդելուց յետոյ, ասեց՝ «Թէ և այդ մի պատճառ չէ նորա կատարեալ ներողութեան համար, բայց գոնէ մի այնպիսի բացատրութիւն է նորա յանցանքին, որ ինձ յորդորում է ներել: Արծումեմ, պարոն, շարունակեց նա, մարդասիրութեամբ բռնելով որդու ձեռներ, թէ դուք զարմացած էք ինձ այստեղ գտնելու մասին, բայց ես շատ անգամ եմ այցելութիւն արել բանդերին, թէ և ոչ սորա նման կարեւոր դիպուածներում: Այսօր ես հսկելու եմ արդարութիւն գործելու դէպի այն արժանաւոր անձը, որ իմ մտերիմ յարգանքը գրաւել է: Արկար ժամանակ ես ծածկարար դիտել եմ ձեր հօր բարի գործքերը նորա անշուք բնակարանում ես վայելել եմ պատիւ և յարգանք, որոց կեղծ փաղաքշանքը չի ապականկ . նորա ընտանեկան կեանքի հրապուրիչ պարզութիւնը ինձ համար մի դէպք է եղել այն երջանկութիւնը վայելելու, որ և պալատեհար չեմ կարող տալ: Իմ եղբօր որդին իմանում է ինչ դիտաւորութեամբ եմ ես այստեղ, նա ինքը այժմ իսկ եկել է: Անիրաւութիւն կ'լինէր նորա դէմ, որպէս և ձեր դէմ, դատասպարտել նորան, առանց խորին քննութեան. եթէ որ և է զրկողութիւնը են եղել, կ'հասուցվին, որովհետեւ ես կարեմ ասել, թէ՛ ոչ որ երբեք երկբայութիւն չի ունեցել Աիր Ա իլիամ Աօուհիլի արդարութեան մասին:

Այժմ միայն մենք խնայանք թէ՛ այն անձը՝ որի հետ այդ քան երկար ժամանակ մենք վարվել էինք իբրև մեր հաւասարի հետ և ընդունել էինք իբրև ընկեր զբօսեցուցիչ, ոչ այլ որ էր, եթէ ոչ մեծանուն Սիր Ա իլիամ թօռնհիլը, որ հաւասարապէս հրաշակված էր իւր առաքինութիւններով և այլանդակութիւններով: Խեղճ Բուրչիլը իսկապէս անբաւ հարստութեանց տէր մարդ էր, մեծ վարկ ունէր ծերակուտի մէջ (sénat), նորան ծափահարութեամբ էին լսում և բոլոր կուսակցութիւնքը (partis), նորան հաւան էին. նա իւր հայրենեաց մտերիմ բարեկամն էր, բայց և իւր թագաւորի հաւատարիմ հպատակը: Իմ խեղճ կինը զարհուրանքից ապշված էր երևում, մտածելով անցեալ ընտանեկան գնացքը այդ մարդու հետ: Բայց Սոփիան՝ որ մի բոպէ առաջ նորան նայումէր, իբրև իւր խօսնայրին, նկատելով այն տարապայման տարածութիւնը՝ որ հարստութիւնը գնումէր նորանց մէջ, չկարաց պահել իւր արտասուքը:

— Այս, պարոն, աղաղակեց կինս ողորմ ձայնով, կարող եմ արդեօք երբ և իցէ ձեր ներողութիւնը ստանալ: Իմ քամահանքը վերջին անգամ, որ արժանի եղանք ձեզ ընդունելու, այն յանդուգն հնդկութիւնքը, որ ես համարձակիցի դէպի ձեզ ձրգել . . . Այս, ես վախումեմ, դուք երբէք չէք ներիլ ինձ: — Իմ սիրելի և բարի տիկին, պատասխանեց նա ժպտանօք, եթէ դուք կատակներ արձակեցիք դէպի ինձ, ես յետ չմնացի. թող այս ընկերութիւնը վճռի, եթէ իմ կատակները չարժէին ձեր հանձարեղ խօսքերին. բայց ճշմարիտ ասեմ իմ վրէժխնդրութիւնը այսօր այն ստահակի դէմ է, որ այնպէս սաստիկ զարհուրեցրուց այդ քաղցրիկ երեխին. ես ժամանակ չունեցայ նորան բաւականապէս գննելու, որպէս զի նշանները տայի դատաւորներին: Ասա ինձ, սիրելի Սոփիա, կարեւ դու նորան ճանաչել: — Չեմ համարձակում հաստատել, թէ կ'ձանաչէի, բայց միտս է գալիս որ՝ յօնքերի մինից բարձր մի մեծ նշան ունէր: — Ներողութիւն եմ խնդրում, որիորդ, միջահատեց Ժենկինսօնը՝ որ այնտեղ էր. հաճեցէք ինձ ասել՝ ստահակը իւր սեփական կարմիր մազերը ունէր արդեօք: — Արթուրմութէ՝ կարմիր էին մազերը, ասեց Սոփիան: — Չեր գերզանցութիւնը, շարունակեց Ժենկինսօնը, դատնալով դէպի Սիր Ա իլիամը, նկատել էր արդեօք նորա ոտների երկայնութիւնը: —

Արկայնութիւնը չ'զիտեմ, ասեց Աիր Ա իլիամը, բայց համոզված եմ նորանց արագութեանց մասին, որովհետեւ վազելում նա ինձնից յատկեց, մինչ ես կարծումեի թէ՛ բոլոր մեր տէրութեան մէջ փոքր էին այդ յաջողութիւնը ունեցող մարդիկը: —

— Չեր գերազանցութեան համոթեամբ, ասեց Վենկինսօնը, ես ճանաչում եմ այդ մարդուն, անշուշտ նա պիտի լինի ամենից լաւ վազկանը Անդլիայի մէջ. նա վազելում յաղթել է Վեյքաստըի Փինուայրին և կոչվում է Տիմոթէոս Բաքստեր. ես նորան լաւ ճանաչում եմ և նորա բնակութեան տեղը գիտեմ: Աթէ, Չեր գերազանցութիւնը բարեհաճի հրամայել բանդապահին ինձ երկու մարդ տալ, ես խօսք եմ տալիս մի ժամ չ'անցած, նորան բերել ձեզ մօտ:

Բանդապահին կանչեցին՝ Աիր Ա իլիամը հարցրուց նորան թէ՛ ճանաչումէր արդեօք իւրեան:

— Աթէ, կ'ներէք ինձ, լաւ ճանաչում եմ Աիր Ա իլիամ թօնհիլին և ո՞վ որ միանգամ այդ պարոնի մասին մի բան լսել է, ցանկութիւն ունի նորան աւելի ճանաչելու:

— Բարի է ուրեմն՝ ասեց Աիր Ա իլիամը, ես ձեզ խնդրում եմ այս մարդուն և ձեր սպասաւորներից երկուքին թող տալ գնալ և իմ հրամանով մի յանձնարարութիւն կատարել և որովհետեւ ինձ յանձնված է նահանգի խաղաղութիւնը, ես իմ վերայ եմ առնում պատասխանատուութիւնը և ձեր մասին երաշխաւութիւնը: — Չեր հրամանը բաւական է ինձ, պատասխանեց բանդապահը, դուք կարէք իսկոյն ուղարկել նորանց Անդլիայի մի ծայրից միւսը, ուր և պատշաճ կ'համարէ Չեր գերազանցութիւնը:

Բանդապահի հաւանութիւնը ստացած՝ Վենկինսօնը շտապից հետամուտ լինելու Տիմոթէոս Բաքստերին, իսկ մենք զուարճութիւն էինք անում մեր փոքրիկ Բելլի քնքշութիւնով. Սա կրբ որ մտաւ մեր սենեակը և Աիր Ա իլիամին տեսաւ, իսկոյն նորա աթոռի քամակից բարձրացաւ նորան գրկելու: Մայրը ուզում էր նորան սաստել այդ չափազանց ընտանեկութիւնը, բայց մեծարց անձը արգելեց և վեր առեց պատառոտած շորերով կրկնային՝ իւր ծնկանց վերայ: «Չես մոռացել, իմ չաղ թուշերով ընկեր, քո հին բարեկամ Բուրչիլին, ասեց նա: — Վու ևս, Վիկ, տեսնում էք որ՝ ես ձեզ չեմ մոռացել:» Աս հանեց իւր գրպանից և տուեց

‘նորանց մի մի անուշ հացեր’ որ խեղճ երեխեքքը կերին առանձին ախորժակով, որովհետև այն օրը ցամաք նախաճաշիկ էին արել :

Արջապէս մենք նստեցինք ճաշելու . կերակուրները սառել էին . բայց և այնպէս Սիր Ալիխանը առաջ մի հրամանագիր դրեց բժշկական զեղ բերելու իմ կուռնի համար, որ դեռ ևս սաստիկ ցաւումէր : ‘Նա բժշկականութիւնը ուսել էր սիրով և բաւական յաջողակ էր նորա գործածութեան մէջ : ‘Նորա սոմնակը ուղարկեցին դեղագործի մօտ, կուռնիս դարման արեցին և ես արդէն մի վայրկենական թիթեւութիւն զգացի : Քանզապահար ինքը կամեցաւ մեզ սպասաւորել, որպէս թէ առանձին պատիւ ցուցանելով մեր հիւրին : ‘Վեռ ևս մենք ճաշը չէինք վերջացրել որ’ երկրորդ պատգամաւորութիւնը եկաւ Պ. Ռօտնշիլի կողմանէ, որ նորէն թոյլտուութիւն էր խնդրում յայտնվելու, իւրեան արգարացնելու և իւր պատիւը նորոգելու համար : ‘Վարոնը, հաճելով զէպի նորա խնդիրը, հրամայեց ներս թողնել նորան :

ԳԼՈՒԽ 31.

Անցեալ երախտիքի տակուտք հասուցումը

Պ. ԹՅՈՒՆՏՆԻՐը ներս մտաւ ժպտելով, ինչպէս որ նորա սովորութիւնն էր և արդէն պատրաստովուձէր զրկախառնովի իւր հօրեղբոր հետ, մինչ սա արհամարհանօք մերժեց նորան:

«Ի բնոց դրեք փաղաքշանքը, պարոն, դուչեց Անր Վ իլիւամբ խատութեամբ. միակ ճանապարհը դէպի իմ սիրտը արդարութիւնն է, իսկ ես տեսնումեմ այս տեղ բազմապատիկ օրինակներ խաբէութեան, անարգութեան և բռնակալութեան: Ի՞նչպէս էք կարացել դուք, պարոն, այդ խեղճ և մեծարոյ մարդու հետ, որի բարեկամ էիք համարվում, այսպիսի խատութեամբ վարվել, նորա աղջկան անարգութեամբ հրապուրել, իբր նորա հիւրատիրութեան վարձատրութիւն և իւրեան ձգել բանդի մէջ, դուցէ այնու համար որ՝ զգացել էր, որպէս և պարտ էր, այդ թշնամանքը: Նորա որդին նմանապէս, որին դուք չէք համարձակվել հանդէպ դուրս գալ...»

— Ի՞նչպէս է կարելի, միջահատեց եղբորորդին, որ իմ հօրեղբայրը ինձ յանդիման է, յանցանք համարելով այն բանը՝ որից նորա կրկին և կրկին կարծիքն էին ինձ արգելել:

— Չիւր պատասխանատուութիւնը իրաւացի է, ասեց Անր Վ իլիւամբ. դուք խոհեմարար և լաւ էք շարժել այդ պարագայի մէջ, թէ և ճիշդ այնպէս, որպէս ձեր հայրն էր գործել: Իմ եղբայրը յիրաւի անձնագործված պատիւ էր... և դուք... Այո՛, դուք կատարելապէս բարւոք էք շարժել և ես հաւանումեմ:

— Յոյս ունեմ, ասեց եղբորորդին, որ իմ բարբի միւս մասնիկը ձեզ չեն երևել արժանի պարսաւանաց: Պարոնի աղջկայ հետ

ես գնացի մի քանի հրապարակական տեղեր, զբօսանաց ժամադրեալ ժողովարաններ և որ ինչ միայն թիթեամտութիւն պիտէր համարել, չարախօսութիւնը մի աւելի խիստ անուն տուեց նորան և լուրը հռչակվեցաւ, իբր թէ ես հրապուրել էի նորան: Աս յայնմ վեցի նորա հօր մօտ, բանը պարզեցնելու և նորան զոհացնելու դիտաւորութեամբ, նա ինձ ընդունեց հայհոյանօք և սպառնալօք: Իսկ որ ինչ վերաբերումէ նորա այստեղ գտնուելուն, իմ գործակալը և իմ տեսուչը աւելի լաւ դիտեն այդ, քան թէ ես, որովհետեւ իմ գործերը վարելը բոլորովին նորանց եմ թողել: Աթէ այդ պարոնը պարտքի տակ է մտել և չի կամում կամ չի կարում հատուցանել, նորանց պարտականութիւնն է հետամուտ լինել և ես ո՛չ անդթութիւն և ո՛չ անիրաւութիւն եմ համարում պարտքը ստանալու համար օրինաւոր հնարներ գործածելը:

— Աթէ բանը այդպէս է, ինչպէս դուք ասումէք, պատասխանեց Սիր Ա իլիամը, մի աններելի բան չկայ ձեր ընթացքի մէջ և թէ և ձեր վարքը աւելի վհահանձն կ'լինէր, եթէ թոյլ չտայիր ձեր ստրուկ բռնակալներին ճ'նշել այդ ազնիւ մարդուն, այնուամենայնիւ այդ վարքը գոնէ փոքր ի շատէ արդար է:

— Սա չէ կարող ընդդիմախօսել ինձ ոչ մի կէտի մասին, կրկնեց երկրատէրը. ես ասպարէզ եմ հրաւիրում նորան: Իմ ծառաներից շատերը պատրաստ են վկայել իմ խօսքի ճշմարտութեանը: Այսպէս, սիրելի հօրեղբայր, շարունակեց նա, տեսնելով որ ես լուռ եմ կենում, իմ անմեղութիւնը բոլորովին հաստատված է. և թէ և ձեր խնդրանօք ես պատրաստ լինեի ներել այդ պարոնի որ և է միւս յանցանքը, իմ մէջ անզսպելի վրէժխնդրութիւն է զրգում: Նորա հեռեղութիւնը ինձ ձեր յարգանքից զրկելու մասին: Այս այս թերեւս մի այնպիսի ժամանակ, երբ նորա որդին ինձ կեանքից զրկելու հնար էր որոնում: այդ յանցանքի դէմ ես թողել եմ որ՝ օրէնքը կատարէ իւր պաշտօնը: Աս պատրաստի ունեմ նորա մեղամարտութեան կոչելու նամակը և երկու վկայք դէպի իմ պաշտպանութիւնը, որպէս և ծառաներիցս մինի սաստիկ վերաւորուած լինելը: Աթէ իմ սիրելի հօրեղբայրը ինքը կամենար դարձնել ինձ իմ խորհուրդից, թէ և հաւանական է որ նա այդ չի անել. ես կ'հօգամ որ՝ շուտ և ուղիղ դատաստան գործվի. նա կ'ապաշխարէ իւր յանցանքը:

— Պարոն, աղաղակեց կինս, դեռ ևս չես յագեցրել քո վերէփխնդրութիւնը, և ուզումես իմ որդուն ևս զոհել: Ես յուսով եմ որ՝ բարեխիտ Սիր Վելիամը մեզ կ'պաշտպանէ, որովհետեւ Վեորդը այնպէս անմեղ է, որպէս նոր ծնած երեխան. ևս պատասխանատու եմ նորա անմեղութեան մասին, նա երբէք վատութիւն չի արել ում և իցէ:

— Տիկին, պատասխանեց արժանամեծար իշխանը, ձեր բաղձանքը նորա ապահովութեան մասին իմից աւելի կաթոգին չեն, բայց ես շատ նեղացած եմ որ նորա յանցանքը ակներե են և կթէ իմ կըրօրորդին պնդումէ...

Այստեղ մեր ուշադրութիւնը յանկարծ դէպի ինքը դարձրուց Դենկինսօնի և երկու սպասաւորների դալը. սորանք ներս մտան, քաշելով իւրեանց քամակից մի մարդու՝ որ վայելչապէս հագնված էր և որոյ արտաքին տեսքը ամեն կերպիւց ցոյց էր տալիս իմ աղջկան յափշտակող թշուառականի նշանները:

«Ահա, ասեց Դենկինսօնը, առաջ մղելով նորան, բռնեցինք. կթէ կախազանի արժանաւոր մարդ կայ, անշուշտ սա է»:

Այն ինչ Պ. Թօռնհիլը տեսաւ Դենկինսօնին և կալանաւորածին, յետ յետ գնաց ապշահարված զարհուրանքից: Նորա դէմքի զեղնութիւնը ցոյց էր տալիս թէ՛ խղճմտանքը շփոթված է. նա պրծնելու վերայ էր առանց Դենկինսօնին, որ նկատեց նորա դիտաւորութիւնը և միջահատեց նորան:

«Ի՞նչպէս, պարոն, ասեց նա. կարմրում էք դուք ձեր երկու ճին ծանօթ Դենկինսօնին և Բաքստերին տեսնելով: Այսպէս են ահա մեծամեծները մտնում իւրեանց բարեկամներին: Բայց՝ իբրև փոխարէն հատուցումն, ես վճռել եմ ձեզ չ'մոռնալ: Մեր գերին, շարունակեց նա դառնալով դէպի Սիր Վելիամը, բոլորը խոստովանեց: Սա է իսկապէս այն մարդը՝ որի համար ասում են իբր թէ սաստիկ վերաւորված է: Սա յայտնումէ թէ՛ Պ. Թօռնհիլը ինքն է կարգել նորան այդ բանի վերայ, այն շորերը՝ որ նորա վերայ տեսնումէք, նա է տուել որ՝ ազնուականի կերպարանք ունենայ, նոյնպէս և փոստայի կառքը նորանից է: Նորանց համախոհութեամբ որոշած դիտաւորութիւնը այն է եղել որ՝ Բաքստերը ջահել աղջկան փախցնէ մի առանձին և ապահով տեղի, ուր զանազան սպառնալիքք վախեցնէ նորան, իսկ պարոն Թօռնհիլը,

իրը թէ, դիպուածով, հասնելու էր օրիորդին օգնելու: Արիւ ըմբիշքը պիտէր մենամարտէին և չարագործը փախչելու էր որ՝ Պ. Թօռնհիլը ազատարարի պատիւը ստացած՝ յաջողութիւն ունենար օրիորդի սէրը գրաւելու»:

Ար Վ իլիամը ձանաչեց հաղուստը, որովհետև շատ անգամ տեսել էր իւր եղբորորդուն այդ շորերով և գերին հաստատեց մնացորդը մի աւելի մանրամասն պատմութիւնով: «Աս վերջացրուց իւր խօսքը, յայտնելով թէ՛ Պ. Թօռնհիլը քանիցս անգամ նորան ասել էր թէ՛ երկու քուերցը միասին սիրահարված է:

«Արկինք, աղաղակեց Ար Վ իլիամը, այդ ի՞նչ օձ եմ դարմանել ես իմ ծոցում. դեռ ևս սա իւրեան կերպարանումէր հասարակաց արդարութեան պաշտպան, այժմ՝ նորան ցոյց կտան արդարութիւնը: — Ի՞նչ ապահով վեր առ դորան... բայց՝ չէ՛, սպասիր մի րոպէ, գուցէ օրինաւոր վկայութիւն չ'կայ դեռ ևս սուրան բանդարկելու համար:

Այս միջոցում Պ. Թօռնհիլը ամենախոնարհ կերպիւ աղաչումէր որ՝ չ'գատապարտին նորան միայն այդ երկու թշուառականների վկայութեամբ, այլ հարցանին նորա սպասաւորներին: «Չիր սպասաւորներին՞, պատասխանեց Ար Վ իլիամը. չարաբազդ, նորանք այլ ևս ձեզ չեն պատկանում, բայց՝ տեսնե՞ք, իմանանք թէ՛ ի՞նչ են ասելու դորանք, թող կանչեն անտեսին»:

— Արբ որ այս վերջները ներս մտաւ, իւր տիրոջ կերպարանքից հասկացաւ թէ՛ արդէն բազբը նորան մատնել էր և իշխանութիւնը վերջանալու վերայ էր: «Ասացէ՛ք ինձ, գոչեց Ար Վ իլիամը ստատիկ խօսութեամբ, տեսե՞լ էք դուք երբ և իցէ ձեր տիրոջը և այդ ստահակին նորա շորերով, ընկերութեամբ ուր և է գնալու»:

— Այո՞, Տէր իմ, պատասխանեց անտեսը, հազար և հազար անգամ. այս մարդն էր միշտ նորա համար տիկիկներ բերում:

— Ի՞նչպէս, միջահատեց Թօռնհիլը, դու համարձակումես... իմ առաջում...:

— Այո՞, կրկնեց նա, ում առաջում և լինէր, ճշմարտութիւն խոստովանելով, պարտաւոր եմ ասել թէ՛ դուք երբէք ինձ հաճելի չէիք, բայց ի՞նչ փոյթ էր ինձ իմացնել ձեզ իմ մտածելու կերպը»:

— Այժմ ասեց ժենկինսօնը, պատմիր նորին գիրազանցութեան ինչ որ գիտես իմ մասին . . .

— Չեմ կարող ասել թէ լաւ բաներ շատ ունեմ ձեր մասին . այն գիշեր որ պարոնի դատերը պալատն էին բերել, դուք այնտեղ էիք . . .

— Ուրեմն՝ գոչեց Սիր Վլիխամբ, սա է քո վիան, որին դու կանչումես քո անմեղութիւնը հաստատելու : Ապականգութիւն մարդկութեան . ընկերանալ այդպիսի թշուառականների հետ : Բայց շարունակե՛ք մեր հարց ու փորձը : Վուք ասումէք, անտես, թէ այդ մարդն էր ծերունիի աղջկան պալատը բերողը :

— Չէ, տէր իմ, բերողը նա չէր . երկրատէրը ինքն էր յանձն առել այդ հոգսը, այլ նա բերեց քահանային՝ որ իբր թէ պսակեց նորանց :

— Իսկապէս ճշմարիտ է այդ, ասեց ժենկինսօնը, ես չեմ կարող մերժել որ՝ այդ էր յանձնված իմ հոգարարձութեան, և ես, աւօթ ինձ, կատարեցի այդ :

— Ողորմած տէր, գոչեց Սիր Վլիխամբ, սորա ամեն մի անարգութիւնը ինձ զարհուրեցնումէ : Բոլոր յանցանքը ակներև են և ես տեսնումեմ որ՝ սորա հետամտութիւնները ազգված են բրնձնակալութիւնից, անարգութիւնից և վրէժխնդրութիւնից : Պարոն բանդապահ, արձակեցէք իմ ինդրանօք, այն ջահել զօրականին՝ որ ձեր պահպանողութիւնն է յանձնված . պատասխանատուութիւնը ես իմ վերայ եմ առնում, այս բանը ես պարտաւոր եմ բացայայտել բոլոր իսկական պարագաներովը այն դատաստանական ատեանին՝ որ նորան բանդայակել է : Բայց ո՛ւր է դժբաղդ ջահել աղջիկը, — թող երես առ երես խօսելու այդ թշուառականի հետ . ես անհամբեր եմ իմանալու թէ՛ ինչ խորամանկութեամբ է սա նորան հրապուրել . ինդրեցէք նորան դալ . ո՛ւր է նա :

— Ո՛հ, պարոն, ասեցի ես, այդ ինդիրը խոցոտումէ իմ սիրտը . յիրաւի ես ունէի մի դուստր և բարեբաղդ էի նորանով, բայց նորա դժբաղդութիւնը . . . » Այստեղ խօսքս կարեց յանկարծ եկած օրիորդ Արարելու Վլիխթթը, որ հետեւալ օրը ամուսնանալու էր Պ . Թօռնհիլի հետ : Ոչինչի հետ չէր կարելի հաւասարել նորա զարմացքը, երբ որ տեսաւ իւր աջաց առաջև Սիր Վլիխամբն և նորա եղբորդուն, որովհետև բոլորովին անակնկալ

գիւղուածով էր եկել, սա իւր հօր հետ գնումէ եղել մօրաքրոջ մօտ նորա բաղձանօք իւր ամուսնութիւնը այնտեղ կատարելու համար և քաղաքի մէջով անցանելուս, իջել էր մի պանդոկում՝ որի պատուհանից նկատելով փողոցում իմ փոքրիկներէից մինին, իսկոյն մի սպասաւոր էր ուղարկել նորան բերել տալու և մեր դժբաղդութիւնների մի մասը խնացել էր նորանից, բայց չգիտէր թէ՛ այդ դժբաղդութիւնների պատճառը Պ. Թօռնհիլն էր: Թէ և հայրը շատ յուզարարութիւն էր սրել տորան բանդի այցելութիւն աւնելու անպատշաճութեան մասին, այնու ամենայնիւ նա հաստատ էր մնացել և մեր երեխային իւրեան ուղեցոյց առած, այդ ձգնական միջոցին գալով, մեզ զարմացման պատճառ էր տալիս:

Եւ չեմ կարող զանց առնել այստեղ և մի բոպէ չ'մտածել այդ անակնկալ հանդիպմանց վերայ, որոնք, թէ և ամեն օր են լինում, բայց տարօրինակ գիւղուածների մէջ գրգռումեն մեր զարմացումը և ո՞րքան պատահական պարագայք կան, որոնց օգնութեանն ենք պարտաւոր մեր կիանքի բազմադիմի զուարճութիւններովը: Ո՞րքան յայտնի գիւղուածները պիտի միաւորվին որ՝ մենք մեր մերկութիւնը ծածկենք և մեզ կերակրենք: Պէտք է գիւղացին յօժար և պատրաստ լինի աշխատելու, երկիրը անձրեւից ոռոգվի, քամին ուռցնէ նաւի առադաստը, իսկ եթէ ոչ՝ բազմութիւնը պիտոյքի կարօտութեան մէջ էր մնալու:

Մենք ամենքս մի միջոց մնացինք լուս, իսկ իմ չքնաղ աշակերտուհին (սովորաբար այս անուն էի տալիս օրիորդ Ալիմօթին) իւր հայեցումածի մէջ ցոյց էր տալիս վշտակցութեան և զարմացման խառնումով՝ որ առաւել պայծառացնումէր նորա գեղեցկութիւնը: «Յիրաւի՛, սիրելի պարոն Թօռնհիլ, ասեց նա երկրատիրոջը՝ որին կարծումէր թէ՛ մեզ օգնելու բաղձանօք է եկել, այլ ոչ ճ'նշելու. «Յիրաւի, ես գրգռված եմ դժգոհ լինել ձեզից որ՝ դուք առանց ինձ էք եկել այստեղ, մանաւանդ թէ՛ և անտեղեակ էք թողել ինձ մի այնպիսի ընտանիքի դատն վիճակին, որ մեզ երկուսիս ևս շատ սիրելի է: Պուք գիտէք որ ես նոյնչափ ուրախ կ'լինէի, որչափ և դուք, թեթեւացնել իմ ճշմարիտ ուսուցչի դրութիւնը, որին ես միշտ մեծարելու եմ. բայց՝ ես անսնումեմ, դուք ձեր հօրեղբօր պէս, սիրումէք ծածկարար բարեկործութիւն անել:

— Մ<sup>օ</sup>, ս<sup>օ</sup> է սիրում բարեգործութիւն անել, գոչեց Սիր Ս իլիամբ, միջհասակով օրիորդի խօսքը: Չէ՛, սիրելի, սորա բաւականութիւնքը այնքան չար են, որքան ինքն է չար: Սա մի այնպիսի անբարխտ է, որ մարդկութիւնը անպատուութեամբ ապականել է: Սա այն թշուառականն է, որ խեղճ ծերունու աղջկան հրապուրելուց յետոյ, նորա քրոջ անմեղութեան դէմ նենգութիւն գործելուց յետոյ, հօրը ձգել է բանդ և որդուն կապանք, այն պատճառով որ՝ սա քաջասրտութիւն է ունեցել հաշիւ պահանջելու նորանից այդ խայտառակութիւնների մասին: Թոյլ տուէ՛ք ինձ, սիրելի օրիորդ, ուրախակից, լինել ձեզ որ՝ դուք խուսափել էք այդ հիւշել գրկախառնութիւնից:

— Արկնայի՛ն բարութիւն, աղաղակեց փափկասուն աղջկէր. մինչ ո՞ր աստիճան եմ խաբված եղել: Պ. Թօնհիլը, իբրև մի ստոյգ իրողութիւն, ինձ պատմել էր թէ՛՝ վարդապետի անդրանիկ որդին, Վափիթեան Փրիմրողը Ամերիկայ է անցել իւր նուրասակ կնոջ հետ:

— Քաղցրի՛կ օրիորդ, գոչեց կինս, նա սուտ է սակ ձեզ, իմ որդին Պէորզը երբէք անգլիայից չի հրաժարվել և ոչ դքի հետ չի ամուսնացել. թէ և դուք նորան թողած լինէիք, նա ձեզ այնքան սիրումէր որ՝ չէր կարող մի ուրիշ վերայ մտածել. ևս ինքս լսել եմ նորանից թէ՛՝ նա անպսակ մեռնելու է ձեր սիրոյ համար: Նա շարունակեց խօսքը ընդարձակօրէն իւր որդու տարիմանց վերայ, յայտնեց Պ. Թօնհիլի հետ մենամարտութեան իսկական պատճառը և հետևաբար անցաւ դէպի երկրատիրոջ անբարոյականութիւնները, նորա սուտ ամուսնութիւնները և վերջացրուց նորա յետին անարգութիւնը արիւնանների գոյներով նկարագրելով:

— Արգասր երկինք, աղաղակեց օրիորդ Ս իլմթթը, ի՞նչպէս մօտ եմ եղել դէպի իմ կորուստը և ի՞նչ երջանկութիւն է իմ համար այդ փորձանքից ազատվելը: Պ. Թօնհիլը հազար խաբերայութիւններ գործ ածելուց յետոյ, վերջապէս հաւատացրուց ինձ թէ՛՝ ևս ազատ եմ իմ սիրելուն տուած խոստումից, որովհետև նա ինքը անհաւատարմութիւն է գործել իմ դէմ: Նորա հոյակապ ստութիւնները ինձ խորշեցրին մի քաջ և վնասնձն մարդուց:

Այս միջոցում որդուս արձակեցին կապանքից, որովհետև կարծեալ վերադարձ ծառան խոստովանել էր իւր յանցանքը, և

Ժենկինսօնը՝ որ ժամանակաւոր սպասաւորութիւն էր անում որդուս կարգի զրեց նորա մտղերը և նորա համար բերեց մի քանի այլ բաներ՝ որոնք հարկաւոր էին պատշաճապէս յայտնվելու համար: Որգիս ներս մտաւ զինւորական զգեստով և առանց սնապարծութեան կարեմ ասել, շատ զեղեցիկ երևեց նա ինձ: Հետուից յարգողական և համեստ ողջոյն տուեց օրիորդ Ալիմօթին, ըստ որում զես ևս չգիտէր այն երջանիկ փոփոխութիւնը՝ որ նորա մօր զեղեցիկխօսութիւնը կատարել էր զէպի իւր որդու օգուտը: Իսկ օրիորդը, բոլորովին կարմրած՝ չկարաց պահպանել նորանէ ներողութիւն ստանալու անհամբերութիւնը՝ նորա արտասուքը, նորա շիօթը յայտնի ցուցանումէին թէ՛ որքան յանցաւոր էր համարում իւրեան, խոստումը ժխտած և մի հրապուրելի խարէութեան մատնված լինելով: Այդ անակնկալ զիջումը զարմանալի և անհաւատալի երևեց որդուս:

— Չիցէ թէ, տիկին, մի առ աջօք տեսել է այդ, ասեց նա, որովհետեւ այդքան բարութեան ես ինձ արժանի չեմ համարում: Այդ ընդունելութիւնը մի մեծ երջանկութիւն է:

— Չէ, պարոն, պատասխանեց օրիորդը. ես խաբված էի, անարժանութեամբ խաբված. իսկ եթէ ոչ, ի՞նչ պիտէր ինձ ժրտակ տար իմ խոստումը. իմ սէրը ձեզ յայտնի է, որովհետեւ վաղուց էի ձեզ նուիրել. մոտացէ՛ք ուրեմն իմ գործածը և որովհետեւ դուք ընդունել էիք իմ սկզբնական հաւատարմութեան ուխտը, թող տուէ՛ք ինձ կրկնել այդ և ստուգապէս իմացէ՛ք թէ՛ ձեր Արարելւան եթէ չկարէ լինել ձերը, չի լինել երբէք ուրիշներ:

— Արբէք ուրիշներ, այլ նորանը կլինիք, ասեց Սիր Ալիիամը, եթէ ես որ և է վարկ ունիմ ձեր հօր աչքում:

Այս խօսքը բաւական էր որդուս Մովսէսին. նա իսկոյն վազեց այն պանդոկը, ուր Ալիմօթն էր գտնվում և նորան կէտ առ կէտ պատմեց բոլոր անցքը: Իսկ Պ. Թօննհիլը, տեսնելով որ ամեն կողմից ճարը կտրվել էր փաղաքշանքը կամ կեղծաւորութիւնը չկարէին նորան յոյս տալ, ընտրեց իբրև առաւել ապահով միջոց, փոխել իւր զրութիւնը և դառնալ ընդդէմ յարձակվողներին: Ամօթը բոլորովին կրող զրած և իւր անօրէնութիւնը մերկ ցուցանելով, «տեսնումեմ, ասեց նա, որ այստեղ արդարութիւն չեմ գտնելու, բայց ես վճռել եմ արդարութեամբ կատարել իմ գործը:

Պուք կ'իմանար, պարոն, շարունակեց նա, դառնալով դէպի Սիր Ռուկիւամբը, որ ես այլ ևս ձեզնից չնորհ չեմ սպասում, որովհետեւ արհամարհումեմ այդ շնորհը: Օրիորդ Աւիւմօթի հարստութիւնը, որ նորա հօր փութաջան հոգսի շնորհօքը, բաւական նըշանաւոր է, ինձ է պատկանում և ոչինչ չի կարող ինձնից խլել այդ հարստութիւնը. դաշինքի յօդուածները և կալուածքի ինձ պարգևված լինելը ստորագրված են և օրէնքով ապահովված: Աս ոչ թէ նորա անձին էի ցանկանում, այլ նորա կայքին. այժմ մինը հանգիստ վայելելով, միւսը ուզողին եմ թողնում»:

Այդ հարուածը սաստիկ էր. Սիր Աւիւմօթը գիտէր որ՝ նորա իրաւունքը հիմնաւոր էին, որովհետեւ ինքը մասնակից էր եղել այդ դաշինքը յօրինելուն և ստորագրելուն: Օրիորդ Աւիւմօթը, համոզված իւր հարստութեան անդառնալի կորուստի մասին, դարձաւ դէպի իմ որդին և նորանից հարցրուց թէ՛ այդ օժիտի կորուստը նուազեցնելու էր արդեօք նորա արժանաւորութիւնը որդուս աչքում: «Թէ և ես իրաւունք չունեմ դէպի իմ հարստութիւնը, ասեց նա, բայց իրաւունք ունեմ իմ ձեռս ում կամիմ առաջարկելու»:

— Այս է իսկապէս, աիկին, գոչեց նորա ճշմարիտ տարփածուն, այն ամենաթանգագին բանը՝ որ դուք կարելիք տալ. գոնէ իմ ցանկացածը միշտ այս է եղել. երզվումեմ ձեզ այժմ, իմ սիրելի Արաբալլա, որ ձեր ստացուածքի կորուստը դեռ ևս առաւել երջանկութիւն է պատճառում ինձ, մի նոր դիպուած լինելով սիրոյ մտերմութիւնը ձեզ ցուցանելու համար:

Պարոն Աւիւմօթը ներս մտաւ. նա զմայլված էր երևում որ՝ իւր դուստրը խուսափել էր ահագին վտանգնից և յօժարեցաւ իսկոյն խափանել նորա ամուսնութիւնը Թօննհիլի հետ. բայց երբ որ իմացաւ թէ՛ նորա օժիտը օրինաւոր կերպիւ ապահովված է Թօննհիլի վերայ և դարձուցանելու հնար չ'կայ, չափազանց նեղութեան մէջ ընկաւ, որովհետեւ յայանի տեսնումէր որ՝ բոլոր իւր կեանքի մէջ պահպանած և խնայած ստացուածքը պիտէր հարստացնելին մի օտար մարդու: «Նորան փոյթ չէր արդէն որ՝ դուստրը ազատվել էր մի ստահակի հետ ամուսնութիւնից, այլ ցաւումէր որ՝ իւր գանձը կորուսել էր: Այսպէս նա մնաց ընկղմված ախուր մտածողութիւնների մէջ, մինչև

որ Միր Վ իլիամը ձեռնարկեց նորա արամութիւնը թիկեայնելու :

«Այս խոստովանումն, պարոն, ասեց նա, որ ձեր այժմու վնասը ինձ ամենեւին չի արամեցնում, որովհետեւ հարստութեան անյագ ցանկութիւնը ձեր մէջ եւ տեսնումն իրաւապէս պատժված : Իսկ եթէ ձեր դուստրը չկարէ հարուստ լինել, նա ունի գոնէ այնքան որ՝ իւր կարևոր պիտոյքը կարէ գոհացնել և այդ շատ անգամ բաւական է լինում երջանկութիւն վայելելու համար : Գուր տեսնումէք ձեր առաջն մի աղնիւ և քաջ զինուորականի՝ որ պատրաստ է ամուսնանալ նորա հետ առանց օժիտի. նորանք շատուց արդէն միմեանց սիրումն, և ես, դէպի հայրը ունեցած բարեկամութեանս պատճառով, բոլոր իմ վարկը գործադրելու հմ որդու յառաջադիմութեան համար : Երաժարվիցէք ուրեմն ձեր ամբարտաւանութիւնից՝ որ ձեզ այդքան վնասեց և ընդունեցէք այժմ այն բարեբաղդութիւնը՝ որ ձեր առաջն է գալիս :

— Միր Վ իլիամ, պատասխանեց ծերունի ազնուականը, հաւատացէք որ՝ ես երբէք չեմ ընդիմացել իմ դստեր յօժարամտութեանցը և այսօր իսկ մի այդպիսի բան չեմ գործելու : Աթէ նա մինչև այժմ սիրումէ այդ երիտասարդին, թող ամուսնանայ նորա հետ, ես ի բոլոր սրտէ յօժար հմ : Փառք Աստուծոյ, մենք թերևս մի փոքր ստացուածք ունեք և ձեր ազգեցութիւնը կ'օգնէ այդ կայքը աճեցնելու, թող իմ հին բարեկամը (նա ինձ էր ցոյց տալիս) խոստանայ ինձ ապահովել դստերս համար վեց հազար լիտր ստերլինկ, եթէ երբ և իցէ կ'վերագարցնէ իւր հարստութիւնը և ես ահա պատրաստ հմ այս իսկ երեկոյ նորանց միաւորել :

Այժմ իմ կարգն էր ուրեմն մատաղ գոյգի բարեբաղդութիւնը կազմելու և ես կամու և յօժարութեամբ խոստացայ խընդրած նուէրը՝ որ, իմ անյոյս դրութեան մէջ, մի մեծ շնորհ չէր : Սորանից յետոյ, երկու տարի անց ընկան միամեանց գերկը կատարեալ երջանկութեամբ :

«Իմ բոլոր դժբաղդութիւններից յետոյ, ասեց որդիս, մի այսպիսի վարձատրութիւնը աւելի է, քան ես կ'համարձակէի յուսալ. այժմ մի մեծ բարիքի տէր հմ ես, թէ և մինչ այժմ անցուցած միջոցը ցաւալի էր. իմ ջերմաջերմ ցանկութիւնը գերագոյն յաջողութեամբ պատկեցաւ » :

— Այո՛, սիրելի Պէօրգ, պատասխանեց նորա սիրուն հարսը. թո՛ղ այդ թշուառականը պահէ իմ հարստութիւնը. եթէ դու երջանիկ ես առանց այդ հարստութեան, ես եւս կ'լինեմ երջանիկ: Ահ, ի՞նչ փոփոխութիւն արեցի ես, փոխանակ մի ամենաչար մարդու, մի քաղցր և մեծարոյ մարդու արժանացայ: Թո՛ղ վայելէ մեր հարստութիւնը, ես կարեմ բարեբաղդ լինել այսուհետեւ ազբատութեան մէջ իսկ:

— Աս ես ձեզ խոստանումեմ, գոչեց երկրատէրը կսկծեցուցիչ ծաղրածութեամբ, շատ լաւ վայելել, ինչ որ դուք արհամարհեցիք:

— Կացէք, կացէք մի բուպէ, միջահասեց Ճենկինսօնը, մին երկու խօսք պակասումէ այդ վաճառաւորութեան մէջ: Ար ինչ վերաբերումէ օրիորդի հարստութեանը, պարոն, դուք երբէք նորա և ոչ մի սուին ձեռնամուխ չէք լինել: Աս մի բան ունեմ ձեզնից հարցանելու, տէր իմ, ասեց նա, դառնալով դէպի Ար Վ իլիամը. «Պ. Թօսնհիլը կարէ՞ր արդեօք սեփականել օրիորդ Աւիլմօթի օժիտը, եթէ նա մի ուրիշն ամուսին էր: — Ի՞նչ հարցում է հարկաւոր մի այդպիսի պարզ խնդրի մասին, — պատասխանեց Ար Վ իլիամը, անտարակոյս է թէ՛ չկարէ՛ — Ինձ վշտացնումէ այդ, ասեց Ճենկինսօնը, որովհետեւ ազնուականը և ես միմեանց հետ որսորդութեան ընկեր լինելով, նա իմ բարեկամութիւնը գրաւել է: Բայց որքան և սիրելի նորան. այնու ամենայնիւ պարտաւոր եմ ձմարտութիւնը սիրելով յայանել թէ՛ նորա դաշնկըք չարժէ և ոչ ծխափողի, ըստ որում նա արդէն ամուսնացած է:

— Դու սուտ ես ասում, իբրև մի ստահակ, պատասխանեց ազնուականը, կատաղած այդ յարձակմունքից. երբէք ես օրինաւոր կերպիւ ամուսնացած չեմ: — Ամենայն խոնարհութեամբ ներողութիւն եմ խնդրում, ասեց Ճենկինսօնը, ամուսնացած էք և ես յոյս ունեմ որ՝ դուք ձեզ երախտապէտ կ'ցուցանեք դէպի ձեր բարեկամ Ճենկինսօնը՝ որ յանձն է առել ձեզ համար մի կին հոգալ: Եթէ այդ ժողովը կրարհիւստի մի քանի բուպէ համբերութիւն ունենալ, անշուշտ սորա ապացոյցը կ'ստանայ»:

Այս խօսքից յետոյ, նա դուրս եկաւ իւր սփորական կայտառութեամբ և մեզ անկարելի եղաւ որ և է կարծիք յօրինել նորա դիտաւորութեանց մասին:

«Թող գնայ, թող գնայ, դռնեց ազնուականը, ինչ արել եմ, արել եմ, բայց այդ յիմարութիւնը իմ անելի բանը չէր. ես երևիայ չեմ որ՝ ինձ ձեռնածուի երևոյթներով վախեցնեն»:

— Չեմ հասկանում, ի՞նչ է անելու այդ մարդը, ասեց Արմ Վիլիամը, դու ցէ՛ մի անարգ խեղկատակութիւն է նորա միտքը: — Վարելի է, պարոն, պատասխանեցի ես, մի ծանրակշիռ բան է ծածկված այդ վարքի տակում: Աչքը որ մտածելու լինիք թէ՛ որքան չարանիւթ հարմար է գործածել Պ. Թօննհիլը անմեղ զոհեր հրապուրելու համար, զարմանալի չէ, եթէ նորանց մէջ գրանպիլ է մի առաւել խորամանկը և կարացել է խաբել նորան: Արքանին է նա կորուսել, որքան ընտանիք կան, որոնք հեծութեամբ զգումեն սորա անարգութիւնը և այն ապականութիւնը՝ որով ծածկիլ է նորանց. այսպէս մտածելով, ես հաւատումեմ թէ՛ նորանցից մինը. . . . Ո՞վ զարմանք, իմ դուստրը չէ՞ որ տեսնումեմ, նա չէ՞ որ շօշափումեմ, նա՛ իմ կեանք, իմ երջանկութիւնը. . . . Այս քեզ մեռած էի համարում Օլիվիա, և ահա կրկին տեսնումեմ, կորած էիր և ահա դանումեմ. . . դու ապրումես, դու կ'ապրես ինձ օրհնելու համար: «Աչ մի քնքուշ տարիածուի եռանդագին խնդութիւնը չէր համեմատվիլ իմի հետ, երբ որ ես անսի իմ երեխին ներս մտնելուս, երբ որ ես նորան սեղմումէի իմ սրտին, նորան՝ որ ուրախութիւնից պապանձված էր երևում: «Ենչուչա, իմ քաղցրիկ, քեզ դարձուցել են ինձ, իմ ծերութեան մխիթարութիւն լինելու: — Յիրաւի է այդ, աղաղակեց Ժենկինսօնը և դուք մեծարանք ցուցէք նորան, որովհետեւ նա ոչ միայն ձեր ազնիւ դուստրն է, այլ և այնչափ արդար և անմեղ է, որչափ, առանց ուրիշների դէմ մեղանչելու, հազիւ թէ ներկայ գտնվողներից մինը կարէր լինել: Դակ որ ինչ ձեզ է վերաբերում, պարոն երկրատէր, այնպէս հաստատ, որպէս դուք այստեղ էք, այդ տիկինը ձեր օրինաւոր կինն է և որպէս զի դուք իմանաք թէ՛ ես ճշմարիտ եմ խօսում, ահա՛ այն իրաւունքը՝ որի վերայ հաստատված է ձեր միաւորութիւնը»:

«Աստուծոց թողութը Արմ Վիլիամին՝ որ կարդեց և տեսաւ որ՝ կատապելլայէս օրինաւոր էր: Այս տեսնումեմ, ասեց Ժենկինսօնը, որ այդ իրողութիւնքը ձեզ զարմացնումեն, մի քանի խօսք միայն բաւական են գործը բացատրելու համար: Այդ անունով միայն ազնուականը՝ որին (մեր մէջն եմ

ասում) բոլոր իմ բարեկամութիւնը նուիրել եմ, շատ անգամ ինձ գործ էր անում իւրեան փոքրիկ ծառայութիւններ անելու: Աս մի անգամ յանձնեց ինձ սուտ հաստատութիւն և սուտ քահանայ բերել այդ օրիորդին խաբելու համար, բայց որովհետև ես նորան մտերիմ բարեկամ էի, ջանքս չ'ինայեցի իսկական հրաման և ճշմարիտ քահանայ բերելու և սորանց միաւորելու բոլոր օրինաւորութեամբ: Բայց զուցէ՛ դուք կարծէք թէ՛ այդ մի վիհանձնութիւն էր իմ կողմանէ, ոչ, ես ամօթով խոստովանուեմ թէ՛ իմ նպատակը այն էր որ հրամանը ունենամ մօտս և ինձ փող հարկաւոր եղած ժամանակը աղնուականին քասկի բերանը բացել տալու համար, իմացնեմ թէ կարող եմ այդ գործածել իմ կամքով:

Խնդութեան աղաղակը լըրուց մեր սենեակը և հաղորդվելով հասարակաց սրահին, բոլոր բանդարկեալներին հրապուրեց, այնպէս որ՝ սորանք ուրախաբնից հիացման մէջ սկսեցին շղթաները շարժել վայրակ գաշնակութեամբ:

Մենքի դէմքերը փայլումէին երջանկութիւնից, Օլիվիայինը նմանապէս զուարճութիւնից կարմրել էր: Յիրաւի նորա համար մեծ ուրախութիւն էր կրկին ստանալ իւր պատիւը, իւր հարստութիւնը և իւր բարեկամներին, զուցէ այդ հանգամանքը օգնեցին նորան, փարատելով իւր տրտմութիւնը, ստողութիւն և զուարթութիւն գտնել: Բայց ո՞վ կարէր ինձնից առաւել ուրախանալ. սրտիս սեղմելով իմ ամենասիրելի երեխին, ես մրաբունս ինքս ինձ հարցնումէի՝ մի՞ զուցէ մի երեւոյթ էր այդ: Ե՞նչպէս կարացէք դուք, ասեցի ես Դեննիմասին, իմ թախծանքը բազմապատկել, սորա մահը ինձ յայտնելով. բայց՝ փոյթ չէ՛, սուրա կրկին տեսութեան երջանկութիւնը լիովին վարձատրումէ իմ չարչարանքը:

— Ինձ դժուար չէ ձեզ պատասխանելը, ասեց նա. ես կարծումէի թէ՛ դուք ուրիշ հնար չունէիք ձեզ այս բանդից դուրս բերելու, եթէ ոչ՝ հնազանդելով Պ. Թօննհիլին և հաճելով դէպի նորա ամուսնութիւնը. բայց դուք երգուել էիք մի այդպիսի բան չ'անել, մինչ զեռ ձեր դուստրը կենդանի է: Արեմն՝ անհրաժեշտ էր, այդ բանը բարեկարգելու համար, ձեզ հաւատացնել թէ՛ նա մեռել էր: Այս համոզել էի ձեր կնոջը օգնել ինձ այդ նենգագործութեան մէջ և մինչև այժմ՝ դիպող ժամ չէինք զրտ-

նում ձեր մոլորութիւնը փարատելու: Գործը ժողովի ընդհանուր  
 ուրախութեան մէջ երկու կերպարանք էին միայն տխուր մնացել:  
 Պ. Թօռնհիլը յանդգնութիւնը ամենեւին թողել էր նորան. նա  
 տեսնում էր իւր առաջնում բացված անարգութեան և աղքատու-  
 թեան վիհը և զարհուրում էր նորա մէջ կործանելուց. վերջապէս  
 նա ընկաւ իւր հօրեղբոր ոտները և կսկծեցուցիչ ձայնով զթութիւն  
 պաղատեց: Ար Վ իլիամը պատրաստէր արացիքով մերժել նո-  
 րան, բայց իմ աղաչանք վեր կացուց նորան և մի քանի բոպէ-  
 լուս մնալուց յետոյ, ասեց՝ «ձեր մոլութիւնը, ձեր յանցանքը,  
 ձեր ապերախտութիւնը բնաւ ներողութեան արժանի չեն, բայց  
 և այսպէս դուք ամենեւին լքված չէք մնալ, այլ կ'ստանաք մի  
 մասնաւոր օգնութիւն, որ բաւական կ'լինի ձեզ, կարօտութիւն-  
 ներից ազատ մնալու համար, այլ ոչ՝ յիմարութիւններ գործե-  
 լու համար: Այս ջահել տիկիներ, ձեր գուգակիցը, կ'ստանայ եր-  
 լորդ մասը այն հարստութեան՝ որ երբեմն ձեզ էր պատկանում,  
 և սորա զթութիւնից պիտի սպասէք այսուհետեւ ձեր վեճակի որ  
 և է թեթեւութիւնը: Այն ինչ Թօռնհիլը պատրաստվում էր իւր  
 շնորհակալութիւնը յայանելու պերճաշուք խօսքերով, Ար Վ ի-  
 լիամը փակեց նորա բերանը և ասեց՝ մի աւելացուցէք ձեր անար-  
 գութիւնը՝ որ արդէն բոլորովին ակներև է: «Այն ժամայն հրա-  
 մայեց նորան դուս գնալ, և բոլոր առաջուայ ծառաներից ընա-  
 րել մինին իւր համար, որովհետև միայն մինն էր նորան թողնու-  
 փում սպասաւորութեան:

Արք որ Պ. Թօռնհիլը գուրս գնաց, Ար Վ իլիամը քաղցր  
 ժպտանք մտնեցաւ իւր եղբորորդու կնոջը և նորան ցանկացաւ  
 ուրախութիւն և երջանկութիւն: Օրիորդ Վ իլմօթը և նորա  
 հայրը նոյնը գործեցին: Այնս գրկեց իւր աղջկան առաւել քնքու-  
 շութեամբ, այնու համար, ինչպէս ինքը ասում էր, որ պարտաւոր  
 կին էր դարձուցել: Մովսէսը և Մովիան կան իւրեանց կարգով  
 մինչև մեր բարերար Ժենկինսօնը՝ որ նմանապէս այդ շնորհը խընդ-  
 րեց իւր համար: Մեր գոհունակութիւնը կարծես թէ չկարէր  
 աւելի լինել: Ար Վ իլիամը՝ որի ամենամեծ բաւականութիւնը  
 բարեգործութիւնն էր, փայլուն դէմքով իւր շուրջն էր նայում:  
 մեր ամենքիս նայեացքը ցողայնում էին նորա ուրախութիւնը, բացի  
 Սոփիա դատերս՝ որ մեզ համար անհասկանալի պատճառով, կա-  
 տարեալ ուրախութեան մէջ չէր երևում:

«Այս կարծումեմ, ասեց Արի Ա իլիամը, երկու անձինք միայն բացառած, բոլոր մնացեալները այտեղ գոհ են և ինձ մնումէ միայն մի արգար գործ գործել: Վուք զիտէք, պարոն, աւելցուց նա, դառնարով զէպի ինձ, դուք զիտէք թէ՛ որչափ պարտաւոր ված ենք մենք երկուքս Գ. Ժանկինսօնից և իրաւացի կ'լինէր որ՝ մենք երկուքս միասին վարձատրէինք նորան: Տարակոյս չունիմ թէ՛ օրիորդ Սովիան կարող է նորան բոլորովին երջանիկ կացուցանել, իւր ձեռը նորան տալով և ես աւելացնումեմ սորա վերայ չինգ հարիւր լուի. այս եկամուտով նորանք կարեն բարեկեցութիւն վայելիլ: Հապճ. օրիորդ Սովիա, ի՞նչ էք կարծում մի այդպիսի ամուսնութեան մասին, — յօժար էք արդեօք»:

Այս գարշեցուցիչ առաջարկութիւնը թախծալից վիճակի մէջ ձգեց խեղճ՝ աղջկան, նա թուլացած իւր մօր գիրկը ընկաւ և կիսաձայն մրմնջումէր, «Չէ՛, պարոն, երբէք չեմ յօժարել:

— Ի՞նչպէս, կրկնեց Արի Ա իլիամը, դուք չէք ուզում Գ. Ժանկինսօնին, ձեր բարերարին՝ որ մի գեղեցիկ ջահել մարդ է, չինգ հարիւր լուի և լաւ յոյսեր ունի: — Այս ձեզ աղաչումեմ, պարոն, պատասխանեց աղջկը, հազիւ պահպանելով խօսելու կարողութիւնը, մի հարկադրէք ինձ աւելի, մի արէք ինձ այդչափ դժբաղդ: — Տեսված է արդեօք այդիսի յամսութիւն, գոչեց Արի Ա իլիամը. մերժել այն մարդուն՝ որ ձեր բոլոր ընտանիքին այդքան պարտաւորել է, ձեզ համար մի քոյր է պահպանել և չինգ հարիւր լուի ունի. ի՞նչպէս է կարելի չցանկալ մի այդպիսի բանի: — Չէ՛, չէ՛, պարոն, երբէք, ասեց աղջկը զայրացած. ես առաւել պատրաստ եմ մնունելու: — Աթէ այդպէս է, կրկնեց Արի Ա իլիամը, եթէ դուք ամենեւին չէք կամում նորանը լինել . . . Գէտք է ուրեմն ես առնեմ ձեզ»: Այս խօսքում զրկեց նորան և իւր սրտին սեղմելով ասեց՝ «Ի՞նչպէս կարացիք դուք, ամենասիրելի և ամենահանձարեղ կին, հաւատալ, թէ ձեր Ռուբէլը ձեզ կ'իտարի, կամ Արի Ա իլիամ թօռնհիլը կ'զաղարի ձեզ սիրելուց, մինչ դուք ձեր սիրտը նորան էիք տուել, թէ և զիտէիք նորա աղքատութիւնը: Վանի տարի է արդէն, ես որոնումեմ մի կին՝ որ առանց իմ հարստութիւնը իմանալու, ինձ արժանաւոր մարդ ճանաչէր: Ի զուր պտուեցի ես մի այդպիսի կին յողողղնների և տգեղների մէջ ևս, բայց այժմ իմ երջանկութիւնը չափազանց է,

որովհետև իմ կինը ոչ միայն երկնային գեղեցկութիւն ունի, այլ և հանձար և իմաստութիւն»։ Սորանից յետոյ դարձաւ նա դէպի Ժենկինսօնը։ «Որովհետև ևս չեմ կարող հրաժարվել այդ չքնաղ օրիորդից՝ որ ինձ զգայակցութիւն է ցուցանում, ուրեմն մնում է ինձ միայն նոյն օժիտը ձեզ առաջարկել, վաղը իմ գործակալը կը հատուցանէ ձեզ հինգ հարիւր լուի»։

Արկին սկսեցինք մենք մեր շնորհաւորութիւնները և Ազգի Թառնհիւր նոյն մեծարանքը ընդունեց, որ ինչ և նորա քոյրը։ Այս միջոցում Ար և իլիամի սպասաւորը եկաւ մեզ սահլու թէ՛ կառքերը պատրաստ էին մեզ պանդոկը տանելու, ուր մեր ընդունելութեան համար ամենայն ինչ կարգադրված էր։ Աինս և ես առաջինն էինք այդ խաւարչտին և ցաւալից բնակարանից դուրս գալուս։ Ահ հանձն Ար և իլիամը հրամայեց քառասուն լուի բաժանել բանդարկեալներին և Պ. Ալիօթը, զրգոված նորա օրինակից, այդ դումարի կէսը բաշխեց։ Յաճումը դիւզացիք ողջունեցին մեզ միարեւրան աղաղակով, նորանց մէջ իմ ժողովուրդից մի քանի ծանօթների ձեռք սեղմեցի, ամենքը մեզ ընդունելութիւն արեցին մինչև պանդոկը, ուր մեզ սպասում էր մեծաճախ հացկերոյթ և ընկերակցիներին առատ կաշունք։

Որովհետև կարողութիւնս ապասել էր այդ օրուայ փափուխակի ուրախութիւններից և ցաւերից, վասն որոյ խակոյն ընթրիքից յետ խնդրեցի ինձ թոյլ տալ հրաժարվել, և ամենքին խրեանց բերկրապատար խնդութեան մէջ թողած՝ այն ինչ մտի իմ սենեակը, գոհարանական օրհնութիւն թափեցի սրտիցս դէպի վերին Մատակարարը ամենայն երջանկութեան և անձկութեան և յետոյ հանդիստ քնեցի մինչև միւս օրը։

ԳԼՈՒԽ 32.

Կատարածք :

Այն ինչ զարթեցի առաւօտը , անդրանիկ որդուս գոի իմ  
 սնարքում : նա եկել էր իմ ուրախութիւնը աւելացնելու այն յան-  
 կարծահաս փոփոխութիւնով՝ որ կատարվել էր իմ վիճակի մէջ :  
 Ազատ կացուցանելով ինձ անցեալ օրուս խոստումիցս զէպի նա-  
 րա կնոջ օգուտը , նա ինձ յայտնեց թէ՛՝ աւանդապահը որին իմ  
 զրամադրուիւր յանձնել էի և որ Ա ծնողներից իւր սնանկութեան  
 (կոտր ընկնելը) պատճառով փախել էր , պահվել է Անվերում և  
 նորա մօտ գտել են աւելի քան որ ինչ նա պարտէր իւր փոխատու-  
 ներին : Իմ որդու մեծանձնութիւնը պակաս չուրախացրուց ինձ ,  
 քան այդ անակնկալ լուրը , բայց ևս տարակուսումէի՝ արդար  
 կլինէր արդեօք նորա առաջարկութիւնը ընդունելը : Մինչ ևս  
 կը աղատումէի այդ բանը , Միր Ա իլեամը մտաւ ներս և իմ տաղ-  
 նապը խմանալով , ասեց թէ՛՝ որովհետեւ որդիս իւր ամուսնութեամբ  
 լաւ հարստութիւն էր ստանում , ուստի անտարակցս պիտէր  
 ընդունելի նորա առաջարկութիւնը : Իւր կողմանէ նա եկել էր ինձ  
 ասելու թէ՛՝ զեռ ևս անցեալ երեկոյին մարդ էր ուզարկել հար-  
 կաւոր վկայութիւններ ստանալու և ժամէ ժամ սպասումէր նորան ,  
 ուստի և յուսով էր որ՝ ևս կ'յօժարիմ ամենքի բարեբաղդութիւնը  
 կնքել այս իսկ առաւօտուն : Մինչ զեռ մենք խօսումէինք , մի ծա-  
 ուայ եկաւ և յայտնեց թէ՛՝ պատգամաւորը զարձեկ է : Արովհետեւ  
 ևս բոլորովին պատրաստ էի , ուստի ցած եկի զէպի ժողովը , ուր  
 ամենքը այնպիսի բերկրութեան մէջ էին , որ բնականաբար բոլորմէ  
 անմեղութիւնից և աշխարհային ստացուածքի ճոխութիւնից :  
 Բայց նորանց ծիծաղը մի այդպիսի ծանրակշիւ հանդէս մօտնա-

լուս ինձ տհաճելի էր, վասն որոյ սկսեցի նորանց խրատել թէ՛ պէտք էր պատշաճ և համեստ դրութիւն պահպանել այդ մեծ խորհուրդը կատարելու ժամանակը և այս պատճառով կարգեցի նորանց համար մի քանի իմ յօրինած բարոյական ճառեր, բայց և այսպէս նորանք ոչ առաւել հեղութիւն ցուցին, և ոչ միաբնորը ժողովեցին: Ահեղեցի գնալուս, յուղարկաւորութեան գլխում լինելով, կրկին տեսի որ՝ նորանք լաւ չէին պահպանում իւրեանց և տրամուլթիւնից փոքր մնաց որ յետ դառնամ: Տաճարում մի նոր դժուարութիւն պատահեց, որ շուտ վճռելու բան չէր երևում, այն է թէ՛ ո՞ր զոյգը պիտէր առաջ պսակել: Որդուս հարսնացուն սաստիկ թախանձումէր որ՝ Ապրի թօռնհիլը առաջ գնայ, իսկ միւսը նոյն յամառութեամբ ասումէր թէ՛՝ երբէք մի այդպիսի անբաղարաժարութիւն չի գործել: Արկու կողմից ևս հակաճառութիւնը պաշտպանումէր հաւասար յամառութեամբ և մարդասիրութեամբ: Աս կանգնած էի, զիբքը առջևումս բաց ձանձրացած այդ բանի երկարութիւնով, ծածկեցի գիրքս և ասեցի, «ես նկատումեմ որ, ոչ որ այստեղ ցանկութիւն չունի ամուսնանալու և աւելի լաւ կլինի, եթէ մենք վերադառնանք տուն, որովհետեւ՝ այդ վէճը, ինչպէս երևումէ, այսօր չէ վերջանալու: Եւրդ յանդիմանութիւնը խելքի բերեց նորանց. Մեր Ալիւսամը և իմ դուստրը առաջ ամուսնացան, իսկ որդիս և նորա սիրուն կինը յետոյ:

Աս պատուիրել էի առաւօտուց մի կտոր ուղարկել իմ պատուելի զբացի Ֆլեմբորտի և նորա ընտանիքի քամակից: Այբ որ մենք դարձանք պանդոկը, ուրախութեամբ տեսնեք որ՝ երկու օրիորդքը կառքից ցած էին դալիս. «Վ. Սենկկինսնը մեծին էր սուել իւր կուսը, իսկ իմ որդի Մովսէսը փոքրիկին. (այժմ միայն ինձ յայտնի եղաւ որ՝ որդիս հակումէր դէպի այդ օրիորդը և ի հարկէ նա կ'ստանայ իմ յօժարութիւնը և իմ օրհնութիւնը, կըր և կամենայ): Սորանից յետոյ իմ ժողովուրդից շատերը այցելութիւն արեցին մեզ և իմ յաջողութիւնը խմանալով, ինձ շնորհաւորում էին: Սորանց մէջ մի քանիսը այն մարդիկն էին, որոնք սպասամբութեամբ ուղումէին կորզել ինձ արդարութեան պաշտօնակալների ձեռնից և որոնց ևս այնպէս սաստիկ յանդիմանել էի: Մեր Ալիւսամը խտուրթեամբ կշտամբից սորանց, բայց տեսնելով նու-

րանց յուզված և ամօթապարտված՝ կէս կէս կիսէ տուեց ամենին որ՝ նորա կենացը խմեն և կրկին ուրախանան:

Մի փոքր անցած՝ կազմեցին պատուական ճաշի սեղան, որ պատրաստել էր Պ. Թօննշիլի խոհարարը: Աւելորդ չեմ համարում ասել թէ՛ առաջուայ երկրատերը այժմ սեղանակից էր և ղել իւր մի ազգականին՝ որ նորան սիրումէր և միայն այն ժամանակ էր առանձին նստեցնում, երբ հասարակաց սեղանի վերայ տեղ չէր լինում այս այն պատճառով որ՝ նորան այդ տանը օտար չէին համարում: Նորա ժամանակը անցնումէր փողածիկ սովորելում և տան տիրոջ զուարճութիւնը արծարծելում, ըստ որում սա տխուր բնաւորութիւն ունէր: Այսու ամենայնիւ Օլեվիա զուտարս միշտ տրամութեամբ էր յիշատակում նորան և ինձ խստովանումէր, թէ և խիստ ծածկարար, թէ՛ քէն չէր պահել դէպի նա, եթէ իւր բարքը ուղղէր:

Այս կրկին դառնումեմ դէպի ճաշը, որովհետեւ չեմ սիրում խտորել: Նրբ որ խօսք վեր եկաւ նստելու, նորէն սկսեցին փոխադարձ մեծարանաց արարողութիւններ զործ ածել. խնդիր գրգռեցին թէ՛ ոչապարէն Օլեվիա զուտարս, իբրև առաջակարգ տիկին, երկու նոր զոյգերից բարձր պիտէր նստէր, բայց Պէտրոյ որդիս կարճ կտրեց այդ վիճը, առաջարկելով ամեն մարդու անորոշաբար իւր տիկինի մօտ նստել: Այդ առաջարկութիւնը ամենքը հաւանեցին, բացի կնոջիցս՝ որ, ինչպէս ինձ երևումէր, բողբոլովին զոհ չէր: Նա անտարակոյս էր՝ նախագահութեան բաւականութիւնն էր ունենալու և սեղանի բարձր գլխում նստած, ամենքին կերակուր էր բաժանելու: Բայց այդ փոքրիկ ահաճութիւնը արգելք չ'եղաւ մեր անպատմելի ուրախութեան: Չգիտեմ՝ արդեօք առաւել պրամիտ և հանձարեղ էինք մենք այժմ, քան սովորաբար, միայն հաւատի է թէ՛ առաւել էինք ծիծաղում, որ մի և նոյն է: Միտս եմ բերում մի ծիծաղաշարժ բան: Նրբոր ծերունի Ալեմօթը Մովսէսի կենացը խմեց, սա այս միջոցին այլ կողմը նայելով, պատասխանեց՝ մեծապէս պարտաւորեցիք ինձ տիկին» և ծերունին աչքով անելով բազմականներին, ասեց՝ «անտարակոյս Մովսէսը իւր սիրունի վերայ է մտածում»: Այս պատշաճաւոր կատակը այնպէս գրգռեց օրիորդ Ֆրեմբորօֆներին որ՝ ես վախեցի թէ՛ ծաղու չ'մեռնէին:

Տաշեց յետոյ, իմ հին սովորութեամբ, խնդրեցի՝ շուտով  
 ժողովել սեղանը, որպէս զի մի անգամ ևս զուարճութիւն վայել  
 լեմ, իմ ընտանիքի հետ միասին, ուրախութեամբ ինձ շուրջ սա-  
 տած տեսնելով: Արկու փոքրիկներս ծնկանցս վերայ էին նստել,  
 իսկ միւսները՝ ամենը իւր ընկերների հետ:

Այլ ևս որ ինչ չունէի ցանկանալու այս աշխարհում. իմ  
 բոլոր հոգսը փարատվել էր, իմ երջանկութիւնը անպատմելի էր.  
 մնումք միայն ցուցանել թէ՛ իմ շնորհակալութիւնը ուրախու-  
 թեան մեջ առաւել և առաւել զեր ի վերոյ էր քան իմ հնազան-  
 դութիւնը թշուառութեան փորձերի մէջ:

ԱԵԲԶ.

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՍԽԱԼՆԵՐԸ .

| Էջ. | «Ի»-ը.                   | «-ը»-իչ.        |
|-----|--------------------------|-----------------|
| 33  | — արժանաւրութիւն . . .   | արժանաւորութիւն |
| 47  | — ընկղմանած . . . . .    | ընկողմանած .    |
| 116 | — եր . . . . .           | էր              |
| 129 | — պոչովատակուս . . . . . | պոչովատակուս    |
| 129 | — յայտարութիւն . . . . . | յայտարարութիւն  |
| 130 | — այնպեղ . . . . .       | այնանղ .        |
| 135 | — հիւնչիւններ . . . . .  | հնչիւններ .     |
| 175 | — ուղուս . . . . .       | որղուս          |
| 171 | — խրախտական . . . . .    | խրատական        |
| 205 | — արգելիլու . . . . .    | արգելիլու .     |



Ա էքՖիլդի Նրէցի տպագրութեան մէջ բազմաթիւ սխալներ են սպրդել և սորանցից մի քանիսը բոլորովին ազաւաղում են պատուական հեղինակի միտքերը, այն հեղինակի՝ որոյ աշխատութիւնը վերոյիշեալ անունով թարգմանված է համարիա ամեն ևւրոպական լեզուներ: Էոգւով չափ ցաւելով այդ անպատեհութեան մասին, պարտաւոր համարեցինք մեզ առանձին տպագրած թերթի մէջ դուրս բերել այդ սխալները և նորանց ուղղութիւնը, որպէս զի իւրաքանչիւր ընթերցող աչաց առաջն ունենայ այդ թերթերը՝ որի մէջ ցուցած են սխալների էջը և տողը:

| Էջ | Կոդ | Սխալ                                   | Ճշգրտում                      |
|----|-----|--|-------------------------------|
| 16 | 26  | որ շատ անգամ է մեր մէջ . . . . .       | որ շատ անգամ տեւում է մեր մէջ |
| 17 | 19  | փոքրիկից ազարակ . . . . .              | փոքրիկ ազարակից               |
| 33 | 31  | արժանւորութիւն . . . . .               | արժանաւորութիւն               |
| 34 | 31  | որ ինձ է վերաբերում . . . . .          | որ ինչ ինձ է վերաբերում       |
| 35 | 29  | խոհեմութիւնը . . . . .                 | խոհեմութեանը                  |
| 37 | 16  | պատմեցին . . . . .                     | պատեցին                       |
| 38 | 2   | ոստերը . . . . .                       | խոտերը                        |
| 38 | 10  | գործիք . . . . .                       | կարծիք                        |
| 83 | 26  | փաղաքշանք . . . . .                    | փաղաքուշները                  |
| 41 | 1   | մի կամ երկու կարող են . . . . .        | մի կամ երկու ժամ կարող են     |
| 43 | 13  | հեռաւորութեամբ . . . . .               | հեռաւորութեան                 |
| 43 | 20  | կերպարանքով . . . . .                  | կերպարանելով                  |
| 47 | 18  | ճաշակեցինք . . . . .                   | ճաշեցինք                      |
| 47 | 20  | ընկղմանած . . . . .                    | ընկողմանած                    |
| 58 | 14  | արկարծական . . . . .                   | յանկարծական                   |
| 59 | 1   | նայուս . . . . .                       | նայում                        |
| 62 | 23  | իւրեանք . . . . .                      | իւրեանց                       |
| 64 | 19  | դորան . . . . .                        | դրան                          |
| 64 | 27  | 28 և մինչ տե . . . . .                 | և մինչ տեսի որ՝ ամենքը ողջ    |
|    |     | սի որ՝ ամենքը ողջ և առողջ են : Ճշմարիտ | և առողջ են, ճշմարիտ           |

| Էջ  | Գրք | Գլխաւ                                  | Գրք                                  | Գլխաւ |
|-----|-----|--|--------------------------------------|-------|
| 65  | 1   | պահելուն . . . . .                     | պահելում                             |       |
| 65  | 18  | զիպվածը . . . . .                      | զիպուածը                             |       |
| 68  | 18  | ընկերուհին . . . . .                   | ընթերցուհին                          |       |
| 68  | 27  | օրիորդներից . . . . .                  | երեք օրիորդներից                     |       |
| 69  | 18  | ընդունակութիւնէ . . . . .              | ընդունակութենէ                       |       |
| 71  | 11  | երկու . . . . .                        | : Երկու                              |       |
| 76  | 15  | մօա . . . . .                          | մօա                                  |       |
| 88  | 14  | նամակի, ուղարկվելու է . . . . .        | նամակի, որ ուղարկվելու է             |       |
| 91  | 22  | տէրունական . . . . .                   | տէրութենական                         |       |
| 94  | 12  | որոնք . . . . .                        | որոնց                                |       |
| 94  | 20  | նորանց . . . . .                       | նորա                                 |       |
| 97  | 5   | զրացոյց . . . . .                      | զրացոց                               |       |
| 97  | 33  | հաւատացրուծ . . . . .                  | հաւատացրուց                          |       |
| 98  | 18  | հեռանում եմ . . . . .                  | հիանում եմ                           |       |
| 98  | 19  | յիմար . . . . .                        | համար                                |       |
| 101 | 21  | թախանձանքին . . . . .                  | թաղձանքին                            |       |
| 102 | 14  | առաջարկաց . . . . .                    | առաջարկած                            |       |
| 104 | 17  | փոքրիկ . . . . .                       | փոքրեր                               |       |
| 107 | 9   | 10 պարզէ . . . . .                     | պարզեւէ է                            |       |
| 107 | 19  | յաջորդներից . . . . .                  | յաջորդներին                          |       |
| 114 | 11  | 12 Օթվայրերը . . . . .                 | Օթվայթները                           |       |
| 114 | 30  | 31 Ղշմարիտը աւսնմ, որ նորանք . . . . . | Ղշմարիտը ասնմ, որ չնմ կարծում նորանք |       |
| 119 | 3   | նոյնպիսի . . . . .                     | սոյնպիսի                             |       |
| 122 | 15  | զժուարանում եմ . . . . .               | զժուարանում եմ իմ                    |       |
| 123 | 1   | և իցէ . . . . .                        | և իցէ իմ                             |       |
| 123 | 12  | Վէքֆելլը . . . . .                     | Վէքֆելլը                             |       |
| 127 | 22  | թող . . . . .                          | և թող                                |       |
| 137 | 28  | ապահով ես . . . . .                    | ապահով ես                            |       |
| 128 | 14  | աշակերտ էին . . . . .                  | աշակերտ լինէին                       |       |
| 129 | 5   | պատրաստվում . . . . .                  | պատաստվում                           |       |
| 129 | 6   | պողովատակուռ . . . . .                 | պողովատակուռ:                        |       |
| 129 | 23  | յայտարութեանց . . . . .                | յայտարարութեանց                      |       |

| Էջ  | ԴՊՆ | ՄԻՄԼ                          | ՄՈՒՆԷ                     |
|-----|-----|-------------------------------|---------------------------|
| 134 | 1   | Սորովհետև . . . . .           | Սրովհետև                  |
| 135 | 3   | վերջեց իջանելի<br>հիւնչիւններ | վերելեց իջանելի հնչիւններ |
| 138 | 28  | տիկիններին . . . . .          | տիկիններն էին             |
| 140 | 10  | նկարի . . . . .               | մի նկարի                  |
| 141 | 4   | քսան և . . . . .              | քսան և մի                 |
| 141 | 20  | ըմբիւր . . . . .              | ըմբիւր                    |
| 143 | 3   | որդու . . . . .               | որդուս                    |
| 143 | 12  | քարշվեց . . . . .             | քաշվեց                    |
| 144 | 7   | ցոյց էր . . . . .             | որ ցոյց էր                |
| 144 | 8   | Վ իմօթի . . . . .             | Վ իմօթի մօտ               |
| 144 | 26  | օգնակալ . . . . .             | օգնական                   |
| 146 | 20  | որ . . . . .                  | որին                      |
| 147 | 16  | նահթէ՛ . . . . .              | նա և թէ՛                  |
| 148 | 22  | է ակն . . . . .               | էակն                      |
| 148 | 29  | ասեցի ևս միայն . . . . .      | ասեցի. ևս միայն           |
| 149 | 23  | Բուչելի . . . . .             | Բուրչելի                  |
| 151 | 25  | առաջարկութեան . . . . .       | այդ առաջարկութեան         |
| 152 | 6   | յանցանքը . . . . .            | քո յանցանքը               |
| 159 | 21  | չկամելով . . . . .            | չկարելով                  |
| 161 | 27  | ժողովել . . . . .             | ժողովվել                  |
| 162 | 3   | հարված . . . . .              | հաշմված                   |
| 162 | 5   | տեղ , իսկ . . . . .           | տեղ իսկ ,                 |
| 163 | 5   | ժողովեցինք . . . . .          | ժողովվեցինք               |
| 165 | 10  | ս . . . . .                   | ևս                        |
| 167 | 23  | բանդարդեալ . . . . .          | բանդարդել                 |
| 168 | 3   | ընկած . . . . .               | ընկած էր                  |
| 173 | 34  | այնպէս , . . . . .            | այնպէս , որպէս            |
| 175 | 12  | ուղուս . . . . .              | որդուս                    |
| 177 | 11  | խրոխտական . . . . .           | խրատական                  |
| 177 | 16  | բարկեցութիւնս . . . . .       | բարկեցութիւնը             |
| 177 | 17  | սորանց . . . . .              | նորանց                    |
| 180 | 17  | մտածելեց . . . . .            | մտածեց                    |
| 182 | 27  | սեպիւր . . . . .              | սեպեր                     |

| Իջ  | ԳԻՆ | ԳԻՆ                      | ԳԻՆ                              |
|-----|-----|--------------------------|----------------------------------|
| 182 | 30  | վաճառումէր . . . . .     | վաճառվումէր                      |
| 183 | 20  | նորա . . . . .           | նորան                            |
| 184 | 24  | դէպքը . . . . .          | դէպքը                            |
| 188 | 14  | յոյս ունեմ . . . . .     | յոյս ունեմ որ չէր                |
| 188 | 15  | հակառակել . . . . .      | հակառակիլ                        |
| 189 | 23  | ենք . . . . .            | էինք                             |
| 189 | 16  | զինվեմ . . . . .         | զինվեմ.                          |
| 190 | 22  | բերանով . . . . .        | բերելով                          |
| 191 | 23  | : . . . . .              | : —                              |
| 192 | 28  | չարչարանք . . . . .      | չարչարանքը                       |
| 193 | 25  | արդարութիւն . . . . .    | անարդարութիւն                    |
| 198 | 1   | մի օրինակ . . . . .      | միօրինակ                         |
| 198 | 9   | գանել . . . . .          | գանիլ                            |
| 200 | 7   | բարեբաղդներին: . . . . . | բարեբաղդներին և դժբաղդ-<br>ներին |
| 202 | 21  | քաղցի . . . . .          | քացի                             |
| 203 | 9   | քցել . . . . .           | քցիլ                             |
| 205 | 21  | սիրեկանները . . . . .    | սրիկանները                       |
| 205 | 34  | արգելելու . . . . .      | արգելելու                        |
| 208 | 31  | կնդունեմ . . . . .       | կընդունեմ                        |
| 210 | 20  | Մխ . . . . .             | Մխ                               |
| 213 | 17  | յանդիման է . . . . .     | յանդիմանէ                        |
| 215 | 34  | ջահել . . . . .          | ջահիլ                            |
| 217 | 22  | պահպանողութիւնն          | պահպանողութեանն                  |
| 217 | 26  | թող . . . . .            | թող գայ                          |
| 218 | 8   | յուզարարութիւն . . . . . | յուշարարութիւն                   |
| 219 | 22  | տարփանաց . . . . .       | տարփանաց                         |
| 221 | 24  | սիրոյ . . . . .          | իմ սիրոյ                         |
| 226 | 28  | պարտաւոր . . . . .       | պատուաւոր                        |
| 226 | 29  | զարձուցել . . . . .      | զարձիլ                           |
| 228 | 19  | ընկերակիցներին . . . . . | ընթերակացներին                   |
| 231 | 22  | էր՝ . . . . .            | էր՝ թէ                           |
| 232 | 6   | որինչ . . . . .          | ոչինչ                            |





150

